ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԸ

Վ. ՎԼԱԴԻՄԻՐՈՎ

ՋԵՄՍ ԿՈՒԿԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏՀՐԱՏ 1936 ՅԵՐԵՎԱՆ

C 36-K
Ձ 1268
10 NOV 2011

ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԸ

910.4
Վ-770

Վ. Ն. ՎԼԱԴԻՄԻՐՈՎ

ՋԵՄՍ ԿՈՒԿԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռուսերենից թարգմանեց
ՀՈՎՀ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1936

12.08.2013

Ա938

Խմբագիր Ա. Առստամյան
Տեխ. խմբ. Տ. Նաչվանիկյան
Սրբագրիչ Հ. Դուլուխանյան

Պետհրատի տպարան
Գլավլիտ 161, պատ. 975,
հրատ. 3364, տիրաժ 4000

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

60926-67

Յենթադրում են, որ կողմնացույցը XIV դարում հնարել է իտալացի Ֆլավիո Ջոյան: Գուցե օգտագործելիս են յեղել շատ ավելի վաղ: Հին նավագնացները — փյունիկեցիները, առևտրական ուղիներ փնտռելով, անցել էին Կարմիր ծովը, պտտել Աֆրիկայի շուրջը և Ջիբրալթարի նեղուցով մուտք գործել Միջերկրական ծովը: Հյուսիսային Յեվրոպայի ժողովուրդները նավարկելով հասել էին Իսլանդիայի, Գրենլանդիայի, Հյուսիսային Ամերիկայի և Արևմտյան Աֆրիկայի ափերը: Հնուց Նեղոսի հովտից և Կարմիր ծովի ափերից դեպի համաշխարհային գանձ հանդիսացող Հնդկաստանն են շարժվել ուղտերի քարավաններ: Յերբ արաբներն ավերեցին Յեգիպտոսը և փակեցին ճանապարհները, իտալական վաճառականների գալերներն[1] սկսեցին լողալ դեպի Սև ծովի ափերը. իսկ ջենովացիներն ամրոցներ կառուցեցին Ղրիմի ժայռերի վրա: Կասպից ծովի, Ինդոս, Յեփրատ գետերի և Պարսից ծոցի ափերին, բուն դրին առևտրական ֆակտորիաներ[2], որոնք լցվեցին հնդկական ադամանդներով, Ցեյլոնի մարգարիտներով, փղոսկրով, չինական մետաքսով, փայտի թանկագին տեսակներով, հացահատիկով, համեմունքներով, անուշահոտ նյութերով և ստրուկներով: Ստրուկների վաճառքն աշխուժորեն ծավալվում էր Սև ծովի ափերին և Միջերկրականի յերկրներում: 1453 թվին Մոհամմեդ II սուլթանի յենիչերիները, հաղթելով իտալացիների դաշնակից Բյուզանդիային, հրդեհում են ջենովացի հաստատիչների բաղա հանդիսացող Պերան ու Գալաթան[3], իսկ արդեն 1475 թվին մարգարեյի[4] կանաչ դրոշը

[1] Իտալական հին առագաստանավ կամ թիանավ: Ծ. Թ.:

[2] Առևտրական ավան, պահեստ, դրասենյակ հեռավոր, խուլ վայրերում: Ծ. Թ.:

[3]. Ստամբուլի (Կոստանդնուպոլսի) թաղամասերը: Ծ. Թ.

[4]. Մահմեդականների մարգարե Մոհամմեդը: Ծ. Թ.

ծածանում է նրանց ամրոցների փլատակների վրա և, դաժանորեն վարվելով «վսեմափայլ» հանրապետության հյուպատոսների հետ, իտալական վաճառականներին վտարում են Սև ծովի ափերից: Ներքին խռովությունները ջենովացիներին խանգարում էին չարունակելու նոր ուղիներ փնտրել դեպի «բախտավոր» Հնդկաստան, թեպետև մի արշավախումբ, որ համարձակություն էր ունեցել բաց օվկիանոս դուրս գալու, հայտաբերում է Մադեյրան, Կանարյան և Ազորյան կղզիները[1]: Ջենովացիների հինավուրց մրցակից վենետիկցիները, որոնք դաշնակից էին՝ Նեղոսի ավազանում նոր ուղիներ հայտաբերած յեգիպտական սուլթանին, իրենց ձեռքն են դցում Արևելքի հետ կատարվող առևտուրը: XV դարի վերջում առևտրական կապիտալը, տպագրության, ռազմական գործի, նավաշինության և նավագնացության բնագավառներում տիրելով նորագույն գյուտերին, ձգտում է գտնելու ծովային նոր, ավելի հարմար ուղիներ դեպի Հնդկաստան և Չինաստան, հայտաբերելու նոր ցամաքներ և կղզիներ, նվաճելու նորանոր ժողովուրդներ: Արիստոտելի և Պտղոմեոսի ուսումնասիրած աշխարհաչափերը պնդում էին յերկրի գնդաձևությունը և շուրջերկրյա ճանապարհորդության հնարավորությունը: XIII դարում Հնդկաստան, Չինաստան և Ճապոնիա այցելած պորտուգալացի Մարկո Պոլոյի տվյալների հիման վրա կռահում էին յերկրի գնդաձևությունը: XV դարում պորտուգալական գիտնականներն արեգակի և բևեռային աստղի ծագելու և մայր մտնելու միջոցով հաստատում են այդ յենթադրությունը:

Շուրջերկրյա ճանապարհորդության հնարավորությունը համարյա ապացուցված էր: Գրքերը, վառոդը և կողմնացույցն արտասովոր հնարավորություններ էին ստեղծում ժողովուրդներ, յերկրներ, ծովեր տիրելու: XV դարի վերջը հայտնի դարձավ նրանով, որ Քրիստափոր Կոլումբոսը հայտնագործեց Ամերիկան, իսկ պորտուգալացի Վասկո-դա-Գաման ճանապարհորդեց դեպի Կալիկուտ[2]: Իսպանական կոնկիստադորների[3] և պորտու-

1. Ատլանտյան օվկիանոսի արևելյան մասում: Ծ. Թ.:
2. Հնդկաստանի արևմտյան ափին: Ծ. Թ.:
3. Իսպանական առաջին նվաճողներն Ամերիկայում՝ XVI դ.: Ծ. Թ.:

գալական վաճառականների կարավելաները[1] սլանում են նոր յերկրներ՝ հրով ու սրով, խորամանկությամբ ու բռնությամբ ստրկացնելու բնիկ ցեղերին՝ իրենց նավերը լիք-լեցուն փողի, արծաթ, թանկագին քարեր, պղպեղ, մեխակ, մշկընկույզ և ստրուկներ բարձելու: Կոլումբոսը Յեվրոպա յե ուղարկում հնդիկներով բեռնավորված տասներկու նավ: Դրանք գերի վերցված «խռովարարներ» էին, որոնք պաշտպանվել էին նվաճողների բռնություններից: Յեկեղեցին սրբագործում էր կենդանի ապրանքի վաճառքը: Կոլումբոսին ուղեկցող հոգևորականներն արդարացնում էին ստրուկների առաքումը դեպի Իսպանիա, ասելով, որ նրանց հոգիներն այնտեղ փրկություն կգտնեն քրիստոնեական հավատն ընդունելուց հետո: Ստրկությունը մուտք էր գործում կապիտալիստական ձեռնարկությունների նոր ձևերով, այն է՝ մեքենաներով (հյութը յեղեգնից գլաններով քամելու) սարքավորված շաքարեղեգնի պլանտացիաներով: Այդ բոլորն արդարացվում էր քրիստոնեության դարձնելու բարձր առաքելությամբ: Հնդիկներն իրենց համար անհասկանալի լեզուներով բերանացի էին անում հավատի ուսմունքն ու աղոթքները: XVI և XVII դարերում Աֆրիկայի արևմտյան ափերում, Հնդկաստանի Մալաբարյան ափերում, Զոնդյան կղզիներում և Հարավային Աֆրիկայում վխտում էին բախտախնդիր վաճառականներ ու զինվորականներ: Հոլանդացիները, պորտուգալացիները, իսպանացիները վիճարկում էին այս կամ այն կտոր հողի, մի փոքր կղզու, ծովախորշի նկատմամբ առաջնության իրավունքը. կռվում էին և՛ մավրերի դեմ, և՛ կղզիաբնակների դեմ, և՛ իրար հետ. Իսպանական և պորտուգալական թագավորները զիջում և իրար միջև ծախում էին կղզիներ, հանքեր, քաղաքներ: Ամերիկայի հայտնագործությունից հետո իսպանացիների և պորտուգալացիների միջև վեճերն այնքան էին սրվել, որ կաթոլիկ յեկեղեցու գլուխ՝ Հռոմի պապ Ալեքսանդր VI ստիպված էր միջամտել հաշտեցնելու անզուսպ ծովագնացներին: Քրիստոսի փոխանորդը

1. Միջին դարերի վերջում իսպանական և պորտուգալական թեթև նավեր: Ծ. Թ.:

ճարպիկորեն դուրս է գալիս ստեղծված դրությունից. Նա սահմանաբաժան գիծ է անցկացնում քարտեզի վրա, բևեռից բևեռ՝ Պաղոմեոսի միջօրեականով և որոշում պորտուգալացիներին՝ իրենցը համարելու այն բոլորը, ինչ վոր նրանք կնվաճեն այդ գծից դեպի արևելք, իսկ իսպանացիներին՝ դեպի արևմուտք։ 1520 թվին պորտուգալացի Մագելլանն աշխարհի շուրջը կատարեց իր առաջին ճանապարհորդությունը։ Նա մկրտում էր բնիկների թագավորներին, պատարագներ մատուցում, խաչեր տնկում լեռնագագաթների վրա, ապակե ուլունքներ փոխանակում վոսկու հետ։ Այդ խիզախ ծովագնացը 1521 թվին սպանվում է Ֆիլիպինյան կղզիների մի կռվում, բնիկների թունավորված նետից։ Արյուն ու վոսկի—ահա սրանք են այդ յերկու դարերի խորհրդանիշները։ Դրանց էությունն Արևմտյան Յեվրոպայի ամենաուժեղ պետությունների գաղութային հարստացումն էր, կուլտուրական զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող վայրենի ցեղերի ստրկացման հաշվին։ Տենդորեն նոր նավաշինարաններ սարքավորող և ծովային նոր արշավանքներ կազմակերպող առևտրական տների և ռազմական մինիստրությունների շահերը նավագնացության և գործիքների բնագավառում, վոր անհրաժեշտ էին նավաղեկավարությանը, նոր գյուտերի պահանջ էին առաջադրում աստղաբաշխությանն ու բնագիտությանը։ Համեմատաբար կարճ ժամանակում արված էին մի շարք գյուտեր՝ ծովային խրոնոմետրը, մանրադիտակը, հեռադիտակը, աստղադիտակը, ծանրաչափը, կատարելագործված կողմնացույցը, խարըսխավոր ժամացույցը և ժամացույցի ճոճանակը, մանոմետրը և ոդապոմպը, գրանիտե մատիտը և ֆոսֆորը։ Տարեցտարի կատարելագործվում էին կառուցվող նավերը, նրանց մասերն ու ռազմական սարքավորումը։ Բազմանում էին նավաշինարանները, աճում էր Յեվրոպայի առևտրական և ռազմական նավատորմերի տարողությունը։ Նվաճված ծովերը քիչ-առ-քիչ բաց էին անում քաղաքական հորիզոններ, ավելի ու ավելի էին ընդարձակում յեվրոպական պետությունների տնտեսական հարաբերությունների շրջանակը և Նոր Աշխարհի քաղաքական նշանակությունը։

Վոսկու տենդը սպանում էր իսպանական և պորտուգալական բախտախնդիրներին։ Դյուրագրգիռ իսպանական կոնկիստադորներին փոխարինում են սառնարյուն և հաշվարկող անգլիացիները, վորոնք իրենց գործարարությամբ ծովերի վրա նվաճում են առաջնություն, հաղթում գլխապտույտ չարաշահությունների, մաքսանենգ առևտրի և ռազմական արկածախնդրությունների մեջ խճճված, իրենց վաղեմի մրցակից հոլանդացիներին։ Սուրճը, հնդիկո-ներկը, յեղեգնի շաքարը, քինաքինան լցվում են անգլիական պարկերի մեջ։

Դեռևս XVI դարի վերջում հոլանդական առևտրական ընկերությունները Հնդկաստանի հետ առևտուր անելու նպատակով մրցում էին իրար հետ՝ նավերի քանակի, յերթևեկության և ապրանքներ գնելու համար։ Կատաղի մրցությունը և գների բնական անկումը քիչ էր մնացել կատարյալ սնանկության հասցնեյին։ Այդ տեղի յե ունենում 1602 թվին, յերբ, վերջապես, քայքայման առաջն առնելու միջոց են գտնում, ստեղծելով Ոստ-ինդիական Միացյալ Ընկերությունը։ Հոլանդական կապիտալը, իսպանական և պորտուգալական առևտրական տների դեմ պայքարելու շնորհիվ, միանում և ամրապնդվում է Հնդկաստանում, Մոլուքքյան կղզիներում և վերջինիս գլխավոր բազա՝ Բատավիա քաղաքում։ Յեվրոպայի և Հնդկաստանի միջև յերթևեկող նավերի թիվը հասել էր տարեկան քառասունի, իսկ այդ նավատորմն սպասարկող նավաստիների թիվը՝ յոթ հազարի։ Ոստ-ինդիական Միացյալ Ընկերությունը, մրցելով Իսպանիայի, Պորտուգալիայի և Անգլիայի առևտրական նավատորմերի հետ, պայքարելով առևտրական և գաղութային տիրապետության համար, տարեցտարի բազմացնելով իր շահույթը, ձեռք է բերում քաղաքական խոշոր նշանակություն։ Սպառազինելով նավերը, նա կարողանում է ստեղծել ռազմական ուժեղ նավատորմ և, դրամ մատակարարելով Հոլանդիայի կառավարությանը, դառնում է մայր յերկրի և գաղութների փաստական տերը։ Քառասուն տարի շարունակ չէր ընդհատվում մրցակիցների դեմ համառորեն մղվող պայքարը, վոր վերջանում է իսպանական և պորտուգալական վաճառականների վրա տարած հաղթանակով և Հնդկական Արշիպելագից նրանց վերջնականապես դուրս մղելով։

Սակայն դեռևս մնում էր ամենավտանգավոր և ուժեղացած թշնամին՝ Անգլիական Ոստ-Ինդիական Ընկերությունը, վորը կազմվել էր Հոլանդականի հետ համարյա միաժամանակ և զավթում էր ավելի ու ավելի ընդարձակ տերիտորիաներ, տարածվում էր Հնդկաստանի Մալաբարյան ու Կորոմանդելյան ափերին և այդտեղից դեպի յերկրի խորքերը՝ Մեծ Մողոլի պետության սահմանները, ընդլայնում էր իր գաղութային տիրապետությունների շրջանակները, մեծացնում առևտրական ու ռազմական նավատորմները: Անխուսափելիորեն բռնկվում է պատերազմ, վորն ավարտվում է Անգլիայի հաղթությամբ, վորով և ամրապնդվում են Անգլիայի գաղութային նվաճումները:

Թուլացած Իսպանիայի և Հոլանդիայի տեղը բռնում է մի այլ խոշորագույն ուժ՝ Ֆրանսիան, վորն ընդարձակ գաղութներ ուներ Հյուսիսային Ամերիկայում և սպառնում էր Անգլիայի ծովերի վրա: 1649 թ. անգլիական հեղափոխությունը խախտում է Ոստ-Ինդիական ընկերության կայունությունը, բաժնետոմսերի գները կատաստրոֆիկ կերպով ընկնում են. իսպանացիների և հոլանդացիների դեմ մղած պատերազմներում Կրոմվելի տարած հաղթանակներն անկարող եյին վերականգնել հավասարակշռությունը: Միայն Ստյուարտների[1] ռեստավրացիայի ժամանակ են ուղղվում գործերը: Բաժնետոմսերի արժեքները Լոնդոնի բորսայում արագորեն բարձրանում են յերկու հարյուր հիսուն տոկոսով: Պառլամենտական ներքին պայքարը պալատները բաժանում էր առևտրական կապիտալի և հողատիրական արիստոկրատիայի ներկայացուցիչների, վաճառականական և կալվածատիրական ներկայացուցիչների. այդ պայքարը համառորեն մղվում էր մի քանի տարի անընդհատ: Միապետական կարգերի լիակատար վերականգնման ձգտող թագավորական կուսակցության նվաճողական տենդենցները պաշտպանություն եյին գտնում խոշոր առևտրական բուրժուազիայի շարքերում և հաղթահարում ազատամտության ձգտող վիգերին[1], վորոնք պահանջում եյին անպայման պահպանել պառլամենտական կարգերի սահմանադրական իրավունքները: Հնդկական գաղութներից ստացված ահագին շահույթներն ամրապնդում են Ոստ-Ինդիական ընկերության քաղաքական դիրքերը. իսկ ամերիկյան գաղութների հարևանությամբ Ֆրանսիայի տիրապետությունների ընդարձակումն սպառնում էր ամենախիստ մրցակցություն:

1686 թվին անգլիական Ոստ-Ինդիական ընկերությունն ստանում է դրամ կտրելու իրավունք, իսկ 1726 թվից ձեռք է բերում բոլոր մնացած արտոնությունները և, դառնալով քաղաքական ամենաուժեղ կազմակերպություն, կռվի յէ բռնվում ֆրանսիացիների հետ: Ոստ-Ինդիան[2] աստիճանաբար անցնում է Մեծ Բրիտանիայի ձեռքը: Տասնութերորդ դարն այն ժամանակաշրջանն է, յերբ անգլիական գաղութային տիրապետությունն ամրապնդվում է Հնդկաստանում, Ավստրալիայում, Ամերիկայում և Խաղաղ ովկիանոսի կղզիներում:

Սևամորթ ստրուկների վաճառքը հսկայական շահույթ էր տալիս: Բրազիլիայի շաքարի պլանտացիաներին բանվորական

---

[1] Ստյուարտներ — շոտլանդական ազնվական տոհմ: 1379 թ. Ստյուարտներից մեկը դառնում է Շոտլանդիայի թագավոր: Յերեք հարյուր տարվա ընթացքում Ստյուարտներն անընդհատ կռիվներ են մղում ֆեոդալական ազնվականության — բարոնների և անգլիական թագավորների դեմ: XVII դարի սկզբին Յակոբ VI (Հակոբ) Ստյուարտը դառնում է Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի թագավոր և, հակառակ Անգլիայի քաղաքական տրադիցիաների, հաստատում միապետի անսահմանափակ իշխանություն. Ստյուարտները, դաշնակցելով անգլիկական յեկեղեցու հետ, թագի իրավունքների համար պայքարում են արիստոկրատների և ժողովրդի դեմ. դրա հետևանքով կազմակերպվում է ոպպոզիցիոն ուժեղ կուսակցություն. 1649 թվին բռնկվում է հեղափոխություն և տապալվում ու գլխատվում է Կառլ I թագավորը: Մինչև 1658 թ. Անգլիան կառավարում էր նախ պառլամենտը, ապա Ոլիվեր Կրոմվելը, վոր ընդունում է լորդ — պրոտեկտորի տիտղոս, փաստորեն վայելում է թագավորական իշխանություն: Կրոմվելի մահից հետո յերկիրը կառավարում է գեներալների զինվորական կլիկը, իսկ 1660 թ. գարնանը պառլամենտը, վորի մեծամասնությունը բաղկացած էր հին կարգի կողմնակիցներից, Կառլ (Չարլզ) II Ստյուարտին հռչակում է Անգլիայի թագավոր: Հետագայում, կաթոլիկության ու բողոքականության պայքարի հետ կապակցելով, առաջանում է թագավորական տոհմերի պայքար, վորն ավարտվում է Անգլիայի այժմյան թագավորական տան հիմնադիր Հաննովերյան կուրֆյուրստ Գեորգ (Ջորջ) I-ի (1714 թ.) գահ բարձրանալով: Ծ. Հ.:

[1] Անգլիական պառլամենտի բուրժուական ազատամիտ կուսակցություն: Ծ. Թ.

[2] Հնդկաստանը: Ծ. Թ.:

ձեռքեր մատակարարելը դառնում է ամենաշահավետ մենաշնորհը: «Նեգրի վաճառքը,—գրում է մի անգլիացի վաճառական,—բորբոքում է վաճառականական ձեռներեցության կրքերը, ծնում է հռչակավոր ծովագնացներ և տալիս ահագին գումարներ»:

1651 թվի նավիգացիոն ակտը[1], որ յեվրոպական ազգերին զրկում է Անգլիայի և նրա գաղութների հետ անմիջականորեն փոխանակություն ունենալու իրավունքից, Ոստ-Ինդիական ընկերությանը փրկում է նրա վտանգավոր մրցակիցներից. այդ օրվանից սկսում է աճել Անգլիայի առևտրական նավերի թիվը, և նրա նավատորմն իր չափերով դառնում է առաջնակարգ: «Հեղափոխական» ռեժիմին ընդդիմադիր միապետական արիստոկրատների կալվածքներից տուրքերի գանձման կարգը, ծովում Հոլանդիայի վրա տարած հաղթանակները և Ֆրանսիայի, Դանիայի ու Շվեդիայի հետ կնքած շահավետ դաշնագրերը հնարավորություն են տալիս մեծացնել նավատորմը: Ոպոզիցիայի դեմ համառ պայքար էր մղում Լորդ-պրոտեկտորը, վորին պաշտպան էր կանգնած իր տնտեսական բարեկեցության պահպանման շահերից դրդված առևտրական բուրժուազիան. այդ պայքարը հնարավորություն էր տալիս քվեարկելու հօգուտ միլիոնների հասնող ռազմական նպաստների: Թագավորական ռազմական նավատորմի կորվետները, ֆրեգատներն ու շլյուպները[2], տարեցտարի ծովի վրայով դեպի աշխարհի բոլոր ծայրերն էյին փոխադրում զինվորներ, թնդանոթներ ու ռումբեր, նյութեր ու բանվորներ՝ կառուցելու ռազմական ամրոցներ և բազաներ, ահ ու սարսափ տարածելու նորանոր ցեղերի մեջ, սպառնալիքներ ստեղծելու գոռոզ հարևանների համար, վորոնք հավակնություն ունեյին նույնպիսի «խաղաղ» միջոցներով նվաճումներ անելու: Թագավորական նավերը հաճախակի ուղարկվում էյին «գիտական» արշավանքների՝ նոր յերկրներ հայտաբերելու, աշխատելով այդ բանում առաջ անցնել ֆրանսիական ու հոլանդական նավերից:

[1] Ծովագնացության վերաբերյալ օրենքը: Ծ. Թ.:

[2] Հին ժամանակներում ծովային ռազմական առագաստանավի տեսակներ: Ծ. Թ.:

Նույն դարի վերջում հասունանում էր սպառազինված ընդհարումը յերկու ամենաուժեղ պետությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի միջև:

Դեռևս XVII դարում Անգլիան փորձեր էր անում խլել Կանադան, վոր պատկանում էր Ֆրանսիային: «Նոր Ֆրանսիան», ինչպես նրան անվանել էր Ժակ Կարտյեն, վորը նավարկելով հասել էր մինչև ս. Լավրենտիոս գետի ակունքները և այնտեղ կանգնեցրել Ֆրանցիսկ I թագավորի դրոշակը,— կառավարվում էր առևտրական ընկերության կողմից: Անգլիական նավերն ապարդյուն գնդակոծում էյին Կվեբեկի[1] ամրոցները:

Վերջապես, 1755 թ. գարնանն Անգլիան պատերազմ է հայտարարում Ֆրանսիային և սկսում հարյուր տարվա ընթացքում աճած իր նավատորմի համար հավաքագրել նավաստիներ, վորպեսզի ուղարկի դեպի ֆրանսիական գաղութների ծովեզերքը: Վալպոլի մինիստրությունը և «լուսավոր» Գեորգ I թագավորը վճռում են, ինչ գնով էլ լինի, վերականգնել անգլիական զենքի փառքը, վորը նսեմացել էր յեվրոպական մայր ցամաքում տեղի ունեցած պատերազմներում: XVIII դարի հիսունական և վաթսունական թվականներին Անգլիան մի շարք հաղթանակներ է տանում և նվաճումներ ունենում Ամերիկայում, Հնդկաստանում, իսպանական գաղութներում: Ֆրանսիական միապետության փառքի մայրամուտը թաղվում է ծագող հեղափոխության ճառագայթների մեջ:

Ազատախոհ փիլիսոփայության փայլը տարածվում է Ֆրանսիայի սահմաններից շատ հեռու: Ազատամիտ գաղափարներից պտտում են մինիստրների ու գիտնականների գլուխները: Հին Յեվրոպան թևակոխում է նոր դարաշրջանի շեմքը:

Մինչ այդ ժամանակ հայտաբերված և հետազոտված էր Հնդկական, Խաղաղ և Ատլանտյան ովկիանոսների կղզիների մեծ

[1] Կվեբեկը XVIII դարում ֆրանսիական գաղութների գլխավոր ամրացված քաղաքն էր Հյուսիսային Ամերիկայի արևելյան ծովեզերքին. 1608 թվին հիմնել են ֆրանսիացիները. 1629 թ. գրավել էյին անգլիացիները, այնուհետև 1632 թ. վերադարձրել Ֆրանսիային: Ծ. Հ.:

մասը։ Անգլիական և ֆրանսիական նավապետները քարտեզները լցրել եյին բազմաթիվ նոր անուններով։ Լոնդոնի Թագավորական ընկերության գիտնական անդամներն այդ ժամանակ լուծում եյին յերկու կարևորագույն հարց՝ 1) արդյո՞ք գոյություն ունի հարավային մայր ցամաք, վորը, շատ հեղինակավոր մարդկանց կարծիքով, անհրաժեշտ եր յերկրագնդի հավասարակշռությունը պահպանելու համար, 2) արդյո՞ք գոյություն ունի հյուսիսային ճանապարհ դեպի Հնդկաստան, այսինքն՝ կա արդյո՞ք մի նեղուց, վորով Ատլանտյան և Խաղաղ ովկիանոսները միացած լինեն իրար հետ։ Այդ յերկու հարցերի շրջանակներում հասունանում եր գիտական միտքը, նիզակներ եյին ջարդվում գիտական ժողովներում, կաբինետներում և լաբորատորիաներում, գրվում եյին գիտական բացատրագրեր, շարադրություններ և տրակտատներ. դրա հետ միասին ծովակալության լորդերը նիստեր եյին ունենում գաղտնի խորհրդակցություններում, ռազմական նոր արշավանքներ ծրագրում և գիտական նպատակների անվան տակ նավեր ուղարկում՝ նավահանգիստներ և ռազմական բազաներ հայտնաբերելու։ Շուկաների և ծովերի վրա տիրապետելու համար մղվող պայքարը կազմել է Անգլիայի կառավարության քաղաքականության հիմնաքարը։

Բրիտանական կատաղած առյուծը սրում եր իր ճիրանները, վորոնք բավականաչափ թաթախվել եյին նվաճված ժողովուրդների արյան մեջ։

ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Յորքշիրի Դյուրհեմ կոմսության մեջ[1], Հիսբորոյից դեպի Ստոքտոն տանող ճանապարհին, այդ յերկու քաղաքներից վեց մղոն հեռավորության վրա, գտնվում է Մարթոն գյուղակը. Հյուսիսային Անգլիայի բնակիչ բանվոր Ջեկ Կուկը իր ընտանիքով տեղափոխվել եր այդ գյուղակը և ծառայության մտել մի ագարակում։ Ջեկն ուներ ինը զավակ։

Նրա վորդի Ջեմսը ծնվել է 1728 թ. հոկտեմբերի 27-ին։ Սևահեր, աշխույժ ու մուգ աչքերով այդ տղան՝ դեռ ութ տարին չլրացած, սովորել եր հաշվել մինչև հարյուր և վանկերով կարդում եր «Աստվածաշունչ»-ը։ Պատվարժան գյուղական վարժուհի միսս Վոլկերը, դրանից բացի, այլ գիրք չուներ։ Ջեմսի ծնողները բարեխղճությամբ աշխատում եյին իրենց տիրոջ համար. այդ եր պատճառը, վոր նրանք լավ համբավ եյին ձեռք բերել տեղի հարուստ ագարակատերերի շրջանում։ Ջեկն ավագ բանվորի պաշտոնով ծառայության է մտնում Այթոնի մոտ գտնվող «Այրի-Հոլմ» ագարակը։ Այստեղ Ջեմսին ուղարկում են դպրոց. իսկ յերբ լրանում է նրա տասներեք տարին, նրան, վորպես աշկերտ, տեղավորում են Ստեթում՝ Վիլյամս Սանդերսոնի արդուզարդի խանութում։

Հայրն ու մայրը հանդիստ եյին իրենց վորդու բախտի նկատմամբ, կարծելով, թե Ջեմսը, յուրացնելով քորոց, կոճակ, ժապավեն վաճառելու և գնորդների հետ վարվելու արվեստը,

[1] Անգլիայի հյուսիսային մասում, Հյուսիսային ծովի արևմտյան ափերի մոտ, Միդլսբորո նավահանգստից վոչ հեռու։ Ծ. Թ.։

ինքը ժամանակի ընթացքում կդառնա ազնիվ առևտրական, խանութպան, հարգելի քաղաքացի և կալպահոլլի ծերացած ծնողների խաղաղ ու անդորր կյանքը:

Սակայն հանգամանքների տարօրինակ բերումով բարեսեր Կուկերի յերազանքներին վիճակված չեր իրականանալ: Միստր Սանդերսոնը, ըստ յերևույթին, շատ եր անուշադիր դեպի իր աշկերտը: Ինչպես յերևում է, գործը գլուխ չեր գալիս, առանց քոթակների և ամսական ռոճիկից վեց շիլլինգ պահելու: Տասնըչորս տարեկան Ջեմսը, վոր ուներ ուժեղ բնավորություն, համառ եր իր ընդունած վորոշումներում. նա, առանց ծնողներին հարցնելու, տիրոջ յերեսին է տալիս նրա հասցրած վիրավորանքները, հեռանում կրպակից և, վորպես յունգա[1], ծառայության մտնում կվակերներ[2] Ջոն ու Հենրի Վալկերների «Ֆրիլով» ածխատար նավի վրա:

Սոեթը ձկնարդյունաբերական խոշոր կենտրոն եր: Նավահանգիստը միշտ լիքն եր լինում ձկնորսական նավերով և ածխահատներով: Ծովը հրապուրում է իր անծայրածիր տարածությամբ. իսկ ծովագնացությունների մասին բազմաթիվ պատմվածքները բորբոքում են մարդու յերևակայությունը: Արդուզարդի խանութում ծառայելու ժամանակ Ջեմսի ձեռքն ընկած գրքերում նկարագրված եր նոր յերկրների հրաշալիքների, ծովագնացների խիզախության, նավաստիների քաջագործության ու վեհանձնության, հեռավոր ծովերի դրավչության մասին, վորտեղ, ո՛վ գիտե, թե ինչ կղզիներ ու ցամաքներ կան: Այդ բոլորը հագեցնում եր Ջեմսի տպավորվող ուղեղը. նրա մեջ աստիճանաբար հղանում է հեռավոր նավագնացություն կատարելու և ծովագնացության գիտությանը տիրապետելու միտքը:

Յունգայի կնքած պայմանագիրը վկայում է, վոր նա պարտավորվել եր բարեխղճությամբ ծառայել պարոնայք Ջոն և Հենրի Վալկերներին, ամբողջ յոթ տարի: Ի՛նչ մի դժվար բան եր Ջեմսի համար նման պայմանագիր ստորագրելը: Մի՞թե կա-

---

[1] Աշակերտ նավազ: Ծ. Թ.:

[2] Քրիստոնեյական աղանդ է, վոր ծագել է Անգլիայում XVII դարի կեսին: Ծ. Թ.:

րելի յե վերադառնալ արդուզարդի խանութի խղճուկ միջավայրը և ելի լսել միստր Սանդերսոնի հայհոյանքները: Բացի այդ, Ջեմսը վճռել եր ընդմիշտ լինել ծովագնաց, սովորել այն ամենը, ինչ պետք է իմանալ ովկիանոսներով նավարկելու համար: Նրա գիտակցության խորքում ծագել եր մի միտք, թե կարող է պատահել, վոր մի որ նավապետ դառնա: Ջեմսը, հավատացած լինելով, վոր իր կատարած քայլը ճիշտ է, առանց տատանվելու, համաձայնվում է ստորագրել նավատերերի բոլոր պայմանները:

Նավարկությունն ածխատար նավի վրա՝ նախ վորպես յունգա, ապա վորպես ծովագնացի, վոչ միայն ամրացնում է Ջեմսի առողջությունը, այլ և տալիս է նրան գործնական շատ ու շատ գիտելիքներ և կոփում նրա կամքը: Ջեմսը ցուցաբերում է ջանասիրություն և հնարագիտություն ու քսանյերկու տարեկան հասակում նշանակվում է ածխատար նավի շկիպեր[1]: Առաջին փուլն անցել եր, պետք եր առաջ շարժվել, ձեռք բերել գիտելիքներ, հասնել՝ իր մինչև այդ դեռևս շատ մշուշապատ նպատակին:

Ֆրանսիային պատերազմ հայտարարելը նրան անակնկալի բերեց: Նրա նավը գտնվում եր Թեմզա գետի վրա: Նավաստիներ հավաքագրող թագավորական սպաների անողոք ու դաժան վարմունքը յերկյուղ է պատճառում քսանյոթ տարեկան շկիպերին: Նա նախ դերադասում է թաքնվել, ինչպես անում են շատերը: Սակայն հետագայում, զղջալով արարքը, մեկնում է Վապինգ քաղաքի հավաքակայանը, ներկայանում «Eegl» («Արծիվ») ռազմանավի սպային և հայտնում, վոր կամենում է, վորպես կամավոր, ծառայության մտնել թագավորական նավատորմը: Վաթսուն թնդանոթով ծանրաբեռնված նավը պատրաստվում եր մեկնելու: Աշնանն այդ նավն անցնում է Հյուգ Պալիսեր նավապետի հրամանատարության տակ. Պալիսերը առաջինը նկատելով Կուկի ընդունակությունները, քաշում է նրան դեպի իրեն և բարեկամանում նրա հետ:

Յորքշիրի բարի քաղաքացիները, հայրենասիրական զգացումներով տոգորված, խնդրեցին պառլամենտի իրենց ներկայացուցչին միջնորդել իրենց քաջարի հայրենակցի համար, վորը

---

[1] Նավապետ: Ծ. Թ.:

կամովին մտել եր նավատորմի կազմի մեջ՝ պաշտպանելու հին Անգլիան: Ըստ յերևույթին, արդուզարդի առևտրականի պատճառած և ընտանեկան ոջախի կրած անարգանքներն արդեն պատկանում եյին անցյալին և այլևս չեյին վրդովեցնելու նրան:

Նավապետ Պալիսերը յերկար նամակ եր ստացել Սկարբորոյից ընտրված՝ պառլամենտի անդամ Ոսբալդեսթոնից, վորը հաղորդել եր Կուկի հայրենակիցների խնդիրը՝ հոգ տանել յերիտասարդ ծովագնացի մասին և ցույց տալ նրան անհրաժեշտ աջակցություն՝ ծառայության մեջ ավելի շուտով առաջ քաշելու համար:

Նավապետ Պալիսերը սիրալիր պատասխանել եր պառլամենտի անդամին, թե ինքը գնահատում ե յերիտասարդ Կուկի տաղանդը, սակայն, դժբախտաբար, չի կարող, հակառակ գոյություն ունեցող որենքների, Կուկին տալ սպայի կոչում, վոր դրա համար դեռևս հարկավոր ե մի առ ժամանակ ծառայել և վոր նա կարող ե փոխադրվել մի այլ նավ, վորպես բոցման[1]:

Այդ նամակագրության արդյունքն այն ե լինում, վոր Կուկը նշանակվում ե «Գրամպուս» նավի պաշտոնյա, սակայն այդ նավի բոցմանը չի հեռանում պաշտոնից, ուստի և Կուկին նշանակում են «Գիրլյանդ» ֆրեգատի վրա, բայց այս նավն ել արդեն ծով եր դուրս յեկել: Հաջորդ որը հրապարակվում ե մի նոր հրաման, վորով Կուկը նշանակվում ե պաշտոնավարելու «Մերկուր» ռազմանավի վրա. այդ նավը մեկնում եր Կանադա՝ միանալու ծովակալ Սաունդերսի նավախմբին, վորն այդ ժամանակ գեներալ Վոլֆի բանակի հետ միասին պաշարել եր Կվեբեկի ամրոցները: Այն չորս տարին, վոր Կուկը անց եր կացրել «Արծիվ» նավի տախտակամածի վրա և լավ վերաբերմունքի արժանացել Նավապետ Պալիսերի կողմից, վորը նրան տալիս եր նավագնացության, աստղագիտության և մաթեմատիկայի գրքեր, ինչպես նաև հասարակ ծովագնացի հետ իսկական բարեկամություն հաստատած, կրթված ու ազատամիտ այդ սպայի յերկար ու բարոյ զրույցները գիտական ու բարոյական ամուր հիմքեր եյին դրել Կուկի մեջ: 1759 թվի գարնանը Ջեմս Կուկը, վորպես կամավոր

---

[1] Ավագ նավաստի: Ծ. Թ.:

Նավապետ Ջեմս Կուկ

Երկրորդ ճանապարհորդության ֆրանսիական հրատարակության գրավյուր Փարիզ 1778 թ.

60926-64

ՊԵՏ ԿԵՆ. ԳՐ-ԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
им. А. Мясникяна

բոցման, «Մերկուր» նավի վրա նույն բարեկամ նավապետ Պալիսերի ղեկավարությամբ մեկնում է դեպի Ամերիկայի ափերը:

Խիտ ունքերի տակ խելացի աչքերը յերկար ու խորը դիտում եյին ծովային հեռուն: Սևահեր ու յերկարահեր փոքրիկ գլուխը համառորեն կախ եր ընկնում քարտեզների ու գրքերի վրա: Բարձրահասակ, վայելչակազմ յերիտասարդ բոցմանը չեր խոնարհվում ուժգին քամու առաջ:

Ցերկրորդ ետապն ել եր պատվով նվաճված:

Կվեբեկը գտնվում է ս. Լավրենտիոս ծոցի խորը ծայրին-այդ ծոցը նեղ ու յերկար տարածությամբ ձգվում է Լաբրադորի ափերի մեջ, համանուն լայն ու ջրառատ գետաբերանի մոտ: Ֆրանսիական մարտիկոսները նավային հրետանիով ռմբակոծելու և Մոնմորանսիի ու Բոպորի[1] ամրոցն ու ճամբարը պաշարած ցամաքային զորքերի գրոհն այդ միջոցով պաշտպանելու համար, պետք եր նավերը մտցնել ջրանցք, վորի խորությունն անհայտ եր: Չհետախուզելով փարվատերը, չեր կարելի մտնել հակառակորդի կրակի տակ, ևս առավել, վոր ջրանցքը գտնվում եր ֆրանսիական զորքի դիրքերի մոտ: Պետք եր թշնամուց աննկատելի հետախուզում կատարել, նրան հանկարծակիի բերելու համար: Պալիսերն առաջարկում է Կուկին՝ հանձն առնել այդ դժվարին և պատասխանատու խնդիրը:

Կուկն առանց տատանվելու ընդունում է այդ առաջարկը: Այդ վոչ միայն պետի հրամանի կատարումն եր, կամ պարտաճանաչություն, այլ մի ստուգում եր, սեփական կամքի, ընդունակությունների, և ամենագլխավորը՝ յուրահատուկ համառությամբ ձեռք բերած գիտության: Նախապատրաստական աշխատանքը կատարված եր, պետք եր կիրառել ձեռք բերած գիտությունը՝ բռնել քննությունը:

Մութը պատում է նավին: Ալիքների վրա մակույկը կարծես տաշեղ լիներ, իսկ մարդն՝ ե՛լ ավելի փոքր: Ալիքները հաջորդում են մեկը մյուսին, տարուբերում մակույկը, առաջ ու յետ տանում: Ահա յետևից ընթացող ալիքը կհեղեղի ու կխորտակի

1. Ֆրանսիական բանակի ծովային և ցամաքային ուժերի հրամանատար: Ծ. Հ.:

նավը: Բայց փոքրիկ մարդն աշխատում է թիերով, կռվում է կատաղի ալիքների դեմ, և մակույկն արագորեն առաջ է շարժվում ու մտնում ջրանցքը, վորտեղ այդպիսի ալեկոծություն չկա, վորտեղ,—ի հեճուկս այն մարդու, վորը մտադիր է իր թշնամիներին խաբել,—խաղաղություն է տիրում: Կղզու ափերը կարծես բարձրանում ու շարժվում են մակույկի վրա. Թիերի ճողփյունը պարզ լսվում է դղասա խավարում.

Վեց գիշեր իրար յետևից աշխատանքն ընթանում է հաջողությամբ: Կուկը գիշերը չափում եր փարվատերի խորությունը, իսկ ցերեկները կարգի բերում թվերը, գծագրություններ անում՝ մանրամասն քարտեզ կազմելու համար: Այդ առաջին քարտեզն եր, վոր նա փորձում եր գծել ինքը: Ուզում եր պատրաստել, վորքան կարելի յե, լավ, մանրամասն և ճիշտ:

Յոթերորդ գիշերն սկսվում է նախորդ գիշերների նման: Սակայն հանկարծ նա լսում է թիերի ճողփյուն. [illegible]Նկատում է մի քանի նավակներ, վորոնք հակառակորդ[illegible]ափին՝ շարժվում եյին դեպի նա: Գիշերվա հանդիսար խա[illegible]ղջ ընթ. Կուկը հասկանում է, վոր նավակները լիքն են «րձրութ[illegible]ֆրանսիական հրամանատարությունը նրանց ու[illegible]ուկի տա բռնելու համար: Մնում եր հույսը դնել սեփական [illegible] վրա և թիավարելով հասնել այն կղզին, վորտեղ անգլիական պահակն եր: Վայրենիները թվով շատ եյին և նրանց թեթև նավակներն առաջ եյին շարժվում արագությամբ:

Կուկը թիավարում է՝ լարելով իր բոլոր ուժերը: Դանդաղաշարժ մակույկը, ցռուկով չփչփացնում եր ջրի մակերեսին, կարծես տեղից չի էլ շարժվում: Հետապնդողների առաջընթաց նավակն ավելի ու ավելի յե մոտենում:

Յերբ Կուկի մակույկը մոտենում է ափին, թշնամու նավակն ել հասնելով դիպչում է մակույկին: «Վայրենիները» աղաղակներով վրա յեն տալիս: Կուկը հազիվ է կարողանում մակույկից դուրս նետվել ափ և ծածկվել ժայռերի յետևը: Բնիկները՝ հաղթանակից ուրախացած, մակույկը տանում են իրենց հետ:

Ծովակալ Սաունդերսը չափազանց զարմանում է, յերբ նավապետ Պալիսերը նրան ներկայացնում է թշնամու դիրքերին մո-

բոցման, «Մերկուր» նավի վրա նույն բարեկամ նավապետ Պա-
լիսերի ղեկավարությամբ մեկնում է դեպի Ամերիկայի ափերը:

Խիտ ունքերի տակ խելացի աչքերը յերկար ու խորը դիտում
եյին ծովային հեռուն: Սևահեր ու յերկարահեր փոքրիկ գլուխը
համառորեն կախ եր ընկնում քարտեզների ու գրքերի վրա:
Բարձրահասակ, վայելչակազմ յերիտասարդ բոցմանը չեր խո-
նարհվում ուժգին քամու առաջ:

Յերկրորդ ետապն ել եր պատվով նվաճված:

Կվեբեկը գտնվում է ս. Լավրենտիոս ծոցի խորը ծայրին-
այդ ծոցը նեղ ու յերկար տարածությամբ ձգվում է Լաբրադորի
ափերի մեջ, համանուն լայն ու ջրառատ գետաբերանի մոտ:
Ֆրանսիական մարտիկոցները նավային հրետանիով ռմբակոծելու
և Մոնմորանսիի ու Բուգոլի[1] ամրոցն ու ճամբարը պաշտպանված
ցամաքային զորքերի գրոհն այդ միջոցով պաշտպանելու համար,
պետք եր նավերը մտցնել ջրանցք, վորի խորությունն անհայտ
եր: Չհետախուզելով ֆարվատերը, չեր կարելի մտնել հակառա-
կորդի կրակի տակ, ևս առավել, վոր ջրանցքը գտնվում եր
Ֆրանսիական զորքի դիրքերի մոտ: Պետք եր թշնամուց աննկա-
տելի հետախուզում կատարել, նրան հանկարծակիի բերելու հա-
մար: Պալիսերն առաջարկում է Կուկին՝ հանձն առնել այդ դըժ-
վարին և պատասխանատու խնդիրը:

Կուկն առանց տատանվելու ընդունում է այդ առաջարկը:
Այդ վոչ միայն պետի հրամանի կատարումն եր, կամ պարտա-
ճանաչություն, այլ մի ստուգում եր, սեփական կամքի, ընդու-
նակությունների, և ամենագլխավորը՝ յուրահատուկ համառու-
թյամբ ձեռք բերած գիտության: Նախապատրաստական աշխա-
տանքը կատարված եր, պետք եր կիրառել ձեռք բերած գիտու-
թյունը՝ բռնել քննությունը:

Մութը պատում է նավին: Ալիքների վրա մակույկը կարծես
տաշեղ լիներ, իսկ մարդն՝ ե՛լ ավելի փոքր: Ալիքները հաջոր-
դում են մեկը մյուսին, տարուբերում մակույկը, առաջ ու յետ
տանում: Ահա յետևից ընթացող ալիքը կհեղեղի ու կխորտակի

1. Ֆրանսիական բանակի ծովային և ցամաքային ուժերի հրամանա-
տար: Ծ. Հ.:

նավը: Բայց փոքրիկ մարդն աշխատում է թիերով, կռվում է կատաղի ալիքների դեմ, և մակույկն արագորեն առաջ է շարժվում ու մտնում ջրանցքը, վորտեղ այդպիսի ալեկոծություն չկա, վորտեղ,—ի հեճուկս այն մարդու, վորը մտադիր է իր թշնամիներին խաբել,—խաղաղություն է տիրում: Կղզու ափերը կարծես բարձրանում ու շարժվում են մակույկի վրա. Թիերի ճողփյունը պարզ լսվում է գիշատ խավարում.

Վեց գիշեր իրար յետևից աշխատանքն ընթանում է հաջողությամբ: Կուկը գիշերը չափում եր ֆարվատերի խորությունը, իսկ ցերեկները կարգի բերում թվերը, գծագրություններ անում՝ մանրամասն քարտեզ կազմելու համար: Այդ առաջին քարտեզն եր, վոր նա փորձում եր գծել ինքը: Ուզում եր պատրաստել, վորքան կարելի յե, լավ, մանրամասն և ճիշտ:

Յոթերորդ գիշերն սկսվում է նախորդ գիշերների նման: Սակայն հանկարծ նա լսում է թիերի ճողփյուն. Կուկը նկատում է մի քանի նավակներ, վորոնք հակառակորդի ափից շարժվում եյին դեպի նա: Գիշերվա հանդիստը խախտող աղմուկից Կուկը հասկանում է, վոր նավակները լիքն են «վայրենիներով». Ֆրանսիական հրամանատարությունը նրանց ուղարկել եր Կուկին բռնելու համար: Մնում եր հույսը դնել սեփական մկանների վրա և թիավարելով հասնել այն կղզին, վորտեղ անգլիական պահակն եր: Վայրենիները թվով շատ եյին և նրանց թեթև նավակներն առաջ եյին շարժվում արագությամբ:

Կուկը թիավարում է՝ լարելով իր բոլոր ուժերը: Դանդաղաշարժ մակույկը, ցռուկով չփչփացնում եր ջրի մակերեսին, կարծես տեղից չի ել շարժվում: Հետապնդողների առաջընթաց նավակն ավելի ու ավելի յե մոտենում:

Յերբ Կուկի մակույկը մոտենում է ափին, թշնամու նավակն ել հասնելով դիպչում է մակույկին: «Վայրենիները» աղաղակներով վրա յեն տալիս: Կուկը հազիվ է կարողանում մակույկից դուրս նետվել ափ և ծածկվել ժայռերի յետևը: Բնիկները՝ հաղթանակից ուրախացած, մակույկը տանում են իրենց հետ:

Ծովակալ Սաունդերսը չափազանց զարմանում է, յերբ նավապետ Պալիսերը նրան ներկայացնում է թշնամու դիրքերի մա-

տիկ փարվատերի ճիշտ չափերի մանրամասն քարտեզը: Զուր չէր, որ ազատամիտ նավապետը նրա առջև այդչափ գովաբանել էր իր տաղանդավոր բոցմանին: Կվեբեկն անձնատուր է լինում. հերթը Մոնրեալինն էր[1]:

Անգլիական նավատորմը շարժվում էր գետի հոսանքին հակառակ, խարխափելով, առանց ստույգ քարտեզի: Ծովային նավերի գետային նավարկությունը դառնում էր վտանգավոր: Ծովակալը հրաման է արձակում Կուկին ուղարկել հետախուզելու գետի հունը: Այս անգամ ինքնուս ծովագնացը շատ ավելի մեծ վստահությամբ է սկսում կատարել այդ աշխատանքը: Ճշտիվ նշանակում է ափերի ամենափոքր վոլորագծերը, նշում է փարվատերը, կղզիներն ու ծանծաղուտները, ընդգծելով նավարկավարման համար առանձնապես վտանգավոր կետերը:

Անգլիական ծովակալը, ղեկավարվելով այդ քարտեզով, նավատորմը մոտեցնում է Մոնրեալի ամրոցներին և օգնում ցամաքային բանակին՝ գրավելու քաղաքը: Ս. Լավրենտիոսի ափերը գետի ամբողջ ընթացքով մաքրվում են ֆրանսիական զորքերից:

Բոցման Կուկի տաղանդի լուրն արագությամբ տարածվում է ռազմանավերում: Քարտեզներ կազմելը շատ քչերին էր հանձնարարվում և հազվագյուտ գործ էր համարվում: Նոր Շոտլանդիայի[2] ափերի մոտ նավատորմի հրամանատար լորդ Կոլվեյլը պահանջում է, որ Կուկը փոխադրվի Հելիֆեքսի[3] ծովախորշում գտնվող «Նորթումբերլանդ» ծովակալի նավը:

Կուկն այդտեղ անց է կացնում յերկու տարի: Իր ձեռքն ընկած մի քանի գրքերը նա ուսումնասիրում է մեծ ուշադրությամբ: Էվկլիդի «Յերկրաչափության տարրերը» դառնում են նրա մաթեմատիկական գիտության հիմքը: Հին ալեքսանդրիա-

[1] Մոնրեալը քաղաք է համանուն կղզու վրա. 1640 թվին հիմնել են ֆրանսիացիները, 1760 թ. նվաճել են անգլիացիները, այնուհետև 1775 թ. ամերիկացիները: Շուտով կրկին անցնում է անգլիացիներին: 1843 թվից դառնում է Կանադայի մայրաքաղաքը: 1852 թ. վոչնչացել է հրդեհից և ապա վերականգնվել: Մայրաքաղաքը փոխադրվել է Կվեբեկ: Ծ. Հ.

[2] Թերակղզի Հյուս. Ամերիկայի արևելյան ափին: Ծ. Թ.:

[3] Քաղաք » » » Ծ. Թ.:

ցու թեորեմները, թվերի, գծերի, ֆիգուրների, մակերեսների և մարմինների հատկության և անհամաչափելի մեծությունների ուսմունքը զարգացնում և վարժեցնում են նրա հետաքրքրասեր միտքը: Պյութագորի և Կոպերնիկոսի գրքերով նա սովորում է յերկնային լուսատուների տեղադրությունն ու շարժումները: Նավագնացության վերաբերյալ ուսումնասիրություններում նկարագրված էր աշխարհի շուրջը Մագելանի կատարած առաջին ճանապարհորդությունը, Հարավային մայր ցամաքը հայտնագործելու համար ծովագնացների ապարդյուն փորձերը, ռուսական նավապետ Բերինգի կասկածելի հայտնագործությունները, թե իբր 1728 թվին նրան հաջողվել է ապացուցել, վոր Ասիայի և Ամերիկայի միջև գոյություն ունի հյուսիսային նեղուց: 1762 թվի աշնանը «Նորթումբերլանդ» նավը ճանապարհ է ընկնում դեպի Նյու-Ֆաունդլենդ կղզին, վորը գրավել եյին ֆրանսիացիները:

Այս անգամ Կուկին հանձնարարում են կազմել Պլանցենցիա նավահանգստի և նրան շրջապատող բարձրությունների հատակագիծը:

Այդ աշխատանքների ընթացքում Կուկը գործ է ունենում Նյու-Ֆաունդլենդի[1] նահանգապետ ծովակալ Գրեվսի հետ: Այդ հին ռազմիկը, մի քանի անգամ հանդիպելով հասարակ բանվորի զավակ զարմանալի ինքնուս գիտնականի հետ, հասկանում է, թե Անգլիայի ռազմական նավատորմի համար վորչափ օգտակար կարող է լինել այդ բնածին տաղանդը: Պալիսերի և յերկու անվանի ծովակալների կարծիքի հետևանքով նահանգապետի մեջ ստեղծվում է բարյացակամ վերաբերմունք դեպի Կուկը:

Հրամանների ճիշտ և արագ կատարումը դուր է գալիս զինվորականներին:

«Զարմանալի» բոցմանն արժանացել էր նրանց հաստատ համակրանքին:

1762 թվի վերջը Ջեմս Կուկը վերադառնում է հայրենիք: Յոթ տարվա բացակայության ընթացքում նա խիստ փոխվել էր. մեկնել էր յերիտասարդ հասակում, իսկ վերադարձին ար-

[1] Հյուս. Ամերիկայի արևելյան ափերի մոտ: Ծ. Թ.:

դեն հասակն առած ուսամարդ եր՝ կռփված նավարկության գործում և ծովային ճակատամարտերում:

Հին Անգլիան ելի նախկին, նահապետական յերկիրն եր, վորտեղ գյուղական խրճիթները մնացել եյին խղճուկ կղմինդրածածկ տանիքներով, իսկ դղյակները՝ ծառախիտ պուրակներով: Գյուղերում տիրում եր թույլ ու թմրած կյանքը, առևտրական նավահանգստներում՝ ծուխն ու յեռուզեռը: Ճանապարհային պանդոկների բարձր բուխարիների մոտ տեղի եյին ունենում քաղաքական միամիտ զրույցներ, իսկ սալոններում՝ պառլամենտի անդամների աղմկալից վիճաբանություններ: Մի կողմից թառամող թղկիի մելամաղձոտ տերևաթափը, մյուս կողմից՝ Լոնդոնի ծանր մառախուղը· Անգլիան իր ըմպելիքներով ու ծխամորճներով, մինիստրներով ու ադմիրալներով, լորդերով ու վաճառականներով նույնն եր, ինչ վոր յոթը տարի առաջ: Կարծես, նրա գործը չեր, թե հեռավոր ու անծանոթ վայրերում ծովեր, գետեր ու կղզիներ կան, վոր հարյուրավոր մարդիկ իրենց կյանքն են զոհում նրա փառքի համար:

Հեռավոր ծովագնացությունից վերադարձած, հոգնած, բայց կյանքը բախտավոր նվաճողի համար Լոնդոնի միգամած աշունը հրաշալի յեր: Պղտոր Թեմզան, վորի վրա մի ժամանակ անհրապույր յերթևեկություն եր կատարում կեղտոտ ածխանավը, թվում եր շատ ավելի լավ, քան Լաբրադորի բոլոր գետերը: Մի՞թե աշխարհում կարող ե լինել ավելի սքանչելի բան, քան անգլիական հրապուրիչ սենյակը, վոր լուսավորված ե բուխարու լույսով, սարքավորված ե կաշվե փափուկ բազկաթոռներով, վորտեղ նստած ծխում են յերկար ծխամորճը և կավե գավաթներից խմում փրփրոտ պորտերը[1]: Մի՞թե ժայռերից ու ջրվեժներից հարյուրապատիկ գեղեցիկ չե անգլիական անդորր ճանապարհը, վորտեղ աջ ու ձախ ընկած են աշնան դեղին ու կարմիր տերևներ, վոր խշշում են փոստատար դիլիժանսի անիվների տակ: Ահա այդպես ե Լոնդոնից Բարկլինգ տանող ճանապարհը: Բարկլինգում ել կան նոր բարեկամներ, վորոնք սիրալիր են և հյուրասեր· այդ Բեթս ընտանիքն ե:

[1] Անգլիական սև գարեջուր: Ծ. Թ.:

Բարկլինգը գտնվում ե Լոնդոնից ընդամենը տասնմեկ կիլոմետրի վրա· Բարկլինգում կան բենեդիկտյան աբբայության հին յեկեղեցի, փոքրիկ տներ, վորոնք ծածկված են գրաքարով, կըրպակներ և պանդոկներ, վորոնց ցուցանակները տատանվում են թեթև քամուց, կան իջևաններ, վորտեղ անվերջ լսվում են ձիերի դոփյուն, կառքերի դղրդոց և դարպասների ճռոց: Բարկլինգում կան տեղական «քաղաքագետներ», վորոնք յեվրոպական բարդ խնդիրները լուծում են, ուտելով տապակած սագ, վիճում են պետական պարտքերի մասին և նույնիսկ կարդում են ազատամիտ «North Briton»[1] թերթը: Սակայն Բարկլինգում ամենից լավը Ելիզաբեթ Բեթսն ե:

Կուկը նրան հավանել ե առաջին հայացքից: Կուկը վայել-



Լոնդոնի մաքսատան տեսարանը Թեմզայի գետափից

չակազմ և առողջ ծովագնաց եր, մասնակցել եր ծովային ճակատամարտերում, խիզախ եր և մեծահոգի, հենց այնպիսին, ինչպիսին պատկերացնում եր Ելիզաբեթն իր կարդացած գրքերի հերոսներին: Նախ զրոսանքներ Ռոդինգի գետափին, ապա,

[1] «Հյուսիսային Բրիտանացի»: Ծ. Հ.:

ժմեռնամուտին՝ ջերմ զրույցներ բարեկամների հետ, խաղաղ յերեկոներին բուխարու մոտ...

Դեկտեմբերի 21-ին արքայության հին յեկեղեցու կամարների տակ հնչում եր հարսանիքի ծիսակատարության ձայնը:

Տաճարի մթնշաղից հետո դրսի սպիտակ ձյունը կուրացուցիչ եր: Ուրախ ճռճռում են սահնակները և զնգզնգում զանգակները: Հնչում է բաժակների և ուրախ բարեկամների ձայնը: Ի՞նչ միտք ունի գնալ անհայտ յերկրներ. ի՞նչ իմաստ՝ բախտ վորոնել հեռավոր ծովերում. չէ՞ վոր բախտը գտնված է այստեղ, հարազատ և սիրելի Անգլիայում. Կուկն այլևս յերբեք չի հեռանա իր կնոջից և յերեխաներից: Բարկինգի անդորրությունն ու բախտավորությունը նա յերբեք չի փոխարինի ծովերի նենգ խաղերի և նավի մրրկահույզ կյանքի հետ: Ո՞վ կհամարձակվի ասել, թե՝ անկայուն է ընտանեկան բախտը, ո՞վ կհամարձակվի պնդել, թե՝ բարեկամներն անհավատարիմ են. առհասարակ, ո՞վ կհամարձակվի արգելել նրան՝ այդ բախտավոր մարդուն մնալ ընդմիշտ տանը, իր Ելիզաբեթի մոտ:

Կուկի վողևորվող բնավորությունն ու առաջին հաջողությունները դարձրել եյին նրան պատանի: Նա անկեղծորեն հավատում եր, վոր այլևս չի մեկնելու Բարկինգից, յերբեք չի հեռանալու կնոջից. կարծում եր, վոր իր ծովային գործունեյության վերջն է, վոր նա հասել է խաղաղ նավահանգստի:

Սակայն ընտանեկան կյանքի ուրախությունը չէր կարող նրա մեջ մեռցնել գիտության ծարավը. նա շարունակում եր պարապել մաթեմատիկայով, աստղագիտությամբ և քարտեզներով: Իր բարեկամների՝ Բեզիսի և Պալիսերի հետ ունեցած զրույցները կրկին ու կրկին նրա մտքերը դարձնում եյին դեպի գլխավոր նպատակը: Նրանք Թագավորական շրջանում գիտնականների մեջ անընդհատ ծագող տարաձայնություններն ու վեճերը Կուկին հաղորդելով, բորբոքում եյին նրա մեջ կարծես մարող կայծը: Նա խաբում եր ինքն իրեն, պնդելով, թե այլևս ծով չի գնալու:

1763 թ. Փարիզի հաշտությամբ Անգլիան Ֆրանսիայից ստացել եր Ամերիկայում՝ Կանադան, Քեպ-Բրետոնը, Սան-Վինցենտ, Դոմինիկո և Տոբագո կղզիները, Աֆրիկայում՝ Սենեգալը, իսկ

Իսպանիայից՝ Ֆլորիդան: Լորդ Կլեյվը, Ոստ-Ինդիական առևտրական ընկերության այդ ներկայացուցիչը, նվաճել եր Բենգալիան, Բեղարն ու Որիսան: Գաղութների քանակն աճում եր:

Անգլիայում 1760 թվականից կառավարում եր յերիտասարդ թագավոր Գեորգ III: Տորիների կուսակցությունը գլուխ եր բարձրացրել: Վիլյամ Պիթը յերկրորդ անգամն եր հրաժարական տալիս: «Թագավորի բարեկամները» պայքարում եյին կուսակցությունների դեմ՝ միապետի անձնական իշխանության համար: Ուժեղանում եր օպոզիցիան: Լորդ Բյուտը, վորը փոխարինել եր Պիթին, յերկերեսանի քաղաքականություն եր վարում, սիրաշահելով ազատամիտ վիգերին[1]:

Ծովակալության լորդերը, վորոնք զբաղված եյին կուսակցական վեճերով, պալատական բամբասանքներով և սեփական գործերի կարգավորման հոգսերով, քիչ եյին մտածում նվաճված յերկրների կառավարման ձանձրալի պարտականությունների մասին: Ծովակալ Գրեյվը, վոր կրկին նշանակված եր Նյու-Ֆաունդլենդի նահանգապետ, մեծ ջանք է թափում համոզելու լորդերին, վոր անհրաժեշտ է կազմել այդ կղզիների մանրամասն քարտեզը: Վոչ վոք գլխի չէր ընկնում, թե ինչո՞վ է մտահոգված անհանգիստ ծովակալը:

Վերջապես ստանալով քարտեզ կազմելու վերաբերյալ հրամանը, նա Կուկին առաջարկում է ուղեկցել իրեն վորպես ինժեներ-աշխարհագրագետ. իսկ Կուկը, վոր յերկու ամիս առաջ յերդվում եր, թե չի թողնելու կնոջը, չի կարողանում իր մեջ հաղթահարել կրկին նավ նստելու և դեպի Ամերիկայի ափերը նավարկելու ցանկությունը: Ծովակալ Գրեյսի հետ ուղևորությունը նրա համար ծովագնացի գործունեյության շարունակությունն եր, նրա կոչման բնական իրականացումը: Բարկինգի բարեբեր գարունը չխանգարեց Կուկին ճիշտ ընտրություն կա-

[1] Տորի — պահպանողական կուսակցությունն եր, վոր կազմվել եր 1679 թվին և պաշտպանում եր միապետության ու անգլիական յեկեղեցու իրավունքները: Վիգ — լիբերալ կուսակցություն, վորը կազմվել եր տորիի հետ միաժամանակ, պաշտպանում եր բողոքական շարժումը և պայքարում թագավորական ինքնակալության դեմ: XVIII դարի վերջում վիգ կուսակցությունն իր մեջ ընդգրկում եր հարուստ կալվածատերերին և խոշոր բուրժուազիային: Ծ. Հ.:

տարելու: Ինչպես և ութ տարի առաջ, նա վճռում է խոկույն:

Կրկին դժվարին խնդիր է դրվում նրա վրա՝ կազմել Ֆրանսիացիներից գրաված Պյեր և Միքելոն[1] կղզիների քարտեզը: Աշխատանքը պետք է ավարտվեր մեկ ամսում. այդ մի ժամանակամիջոց եր, որ բավական եր, որպեսզի Գրեսը զանազան պատրվակներով ճզմեր ֆրանսիական նահանգապետի ֆրեգատի ու գաղթականներով լի այլ նավերի Միքելոն հասնելը: Կուկը, բարեխղճությամբ կատարելով նաև այդ հանձնարարությունը, ամռան վերջին վերադառնում է Անգլիա:

Նյու-Ֆաունդլենդի և Լաբրադորի նահանգապետ ծովակալ Գրեսին փոխարինում է Պալիսերը: Անուղղելի լիբերալը շարունակում է հովանավորել «դարմանալի բոցմանին», պարծենում եր իր կրեատուրայով[2] և անգլիական քարտեզագրության վիճակով մտահոգված եր հարյուրապատիկ ավելի, քան ծովակալության բոլոր լորդերը:

Նա լսել անգամ չեր ուզում, որ իր հետ ուղևորվեր մի որևե այլ ինժեներ: Նախ այն, որ Կուկն արդեն սկսել եր Նյու-Ֆաունդլենդի ափերի գծագրումը. ապա մի ուրիշն այնպես կչփոթեր և այնպիսի քարտեզներ կգծեր, ինչպիսիներն առանց այդ էլ շատ են ծովակալության մեջ և որոնցով ոչ մի փորձված նավապետ չի համարձակվի նավ ղեկավարել, քանի որ այդ քարտեզները լիքն են անճշտություններով ու սխալներով:

Այս անգամ Կուկին տալիս են ծովային ինժեների կոչում, որով նա մտնում է ռազմական ղեկավարության աստիճաններին: Երեք տարվա ընթացքում Կուկն զբաղվում է Լաբրադորի արևելյան ափերի և Նյու-Ֆաունդլենդի մանրամասն քարտեզը կազմելու աշխատանքներով: Ձմռան ամիսներին սովորաբար վերադառնում եր Անգլիա:

Աշխատանքը գրավիչ եր: Քարտեզներ կազմելու հետ միաժամանակ նա զբաղվում եր աստղագիտությամբ: 1766 թ. օգոստոս ամսին Բուրգեո կղզում նա դիտում է արեգակի խավարումը

[1] Հյուսիսային Ամերիկայի արևելյան ափերի մոտ: Ծ. Թ.:
[2] Իր կողմից առաջ քաշած մարդ: Ծ. Թ.:

և գրում գիտական բացատրագիրը, որին հավանություն են տալիս Օքսֆորդի պրոֆեսորները:

Սակայն ամենագրավիչն ու փոթորկոտը կղզու հետազոտությունն եր: Գիտական անդուսպ հարցասիրությունը դրդում եր նրան գնալ ավելի ու ավելի առաջ, յերկրի խորքերը, որտեղ մարդ ոտք չեր դրել: Աննկարագրելի ուրախություն եր պատում նրա ամբողջ եյությանը, յերբ սոճիների և կեչիների անանցանելի անտառի միջից դուրս եր ցցվում մի ժայռոտ լեռնագագաթ, կամ հանկարծ բացվում եր մի արծաթափայլ լիճ: Որսորդների հետ, որոնք յեղջերու և դայլ եյին հետապնդում, ձկնորսների հետ, որոնք փրփրուկ եյին որսում, Կուկն էլ իր հերթին որսում եր լեռներ ու լճեր և լրացնում քարտեզը նոր-րանոր գծիկներով ու անուններով: Յերբեք որսորդն ու ձկնորսը չեն բավարարվի իրենց որսածով, յերբեք հետախուզողը չի բավարարվի իր աշխատանքների արդյունքով: Գիտենալ ավելին, քան գիտես — ահա հարցասեր մտքի անդադար ցանկությունը, անխափան նպատակը:

Կուկը համառությամբ ու տոկունությամբ, աշխատասիրությամբ ու աշխատունակությամբ, նպատակակետին հասնելու անհողդողդ կամքով, քառասուն տարին լրացնելով, ձեռք է բերում նավագնացության գիտությունը: Նավապետ Ջինգը, որը նրա հետ մասնակցել եր ծովագնացությանը, այսպես է գրում իր հիշողություններում. «Նավապետ Կուկի ամուր կազմվածքը և աշխատելու սովորությունը նրան ընդունակ եյին դարձնում դիմադրելու ամենածանր հոգնածությանը և ամենամեծ անհարմարություններին... Սակայն ավելի շատ նա աչքի յեր ընկնում անհողդողդ տոկունությամբ, որով նա ընթանում եր դեպի իր նպատակը: Ոչ միայն արգելքները, հոգնածությունը, վտանգը չեյին կարող նրան զսպել, այլև նա չգիտեր, թե ի՛նչ բան է հանգիստ ու զվարճության սովորական պահանջը: Յերկարատև ու ծանր ճանապարհորդությունների ընթացքում նրա վոգևորությունն ու գործունեյությունը չեն նվազել ոչ մի վարկյան...»

Բնավորության դրական գծերը տրամադրում եյին հոգուտ նրան: «Նրա տեմպերամենտը,—գրում է Սեմուելը — շատ ուժեղ եր, իսկ անձնական կյանքը խիստ չափավոր: Համեստ եր, նուր-

նիսկ ամաչկոտ․ Նրա զրույցը զուրեկան էր, սրամիտ և ուսանելի։ Նա յերբեմն թվում էր խիստ դյուրաբորբոք, բայց նրա բարյացակամ և դյուրահամբույր վերաբերմունքն ուղղում էին այդ պակասությունը․․․»

1767 թիվը մի տարի էր, յերբ կյանքի ու գիտության ամենադժվարին սկզբունքները ձեռք բերելու, ամուր դիրքեր նվաճելու համար նա անցնում է վճռական յերրորդ և վերջին փուլը։ Առաջիկայում նրան սպասում էին դժվարություններ, փորձություններ և հիասթափություններ, սակայն կյանքի իրավունքը նա արդեն նվաճել էր։ Ջեմս Կուկը,—հաղթահարելով աղքատությունը, հետամնացությունը, գիտական մտքի ու բյուրոկրատիկ պայմանավորությունների ավանդական պահպանողականությունը,—ուղղվում է իր ամբողջ կարող հասակով և ամուր ու հաստատ կանգնում իր նավի ղեկի մոտ։

ԱՌԱՋԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Հռոմեյական հավատաքննության․ վանականները 1600 թվին խարույկի վրա այրեցին Ջորդանո Բրունոյին, վորը հանդգնել էր պաշտպանելու Կոպեռնիկոսի թեորիան և պանթեիզմի քարոզները՝ պայքարելու հնացած փիլիսոփայական սիստեմների դեմ։ Կաթոլիկ յեկեղեցին հերետիկոս և կախարդ—սատանայի գործակից էր հռչակում այն բոլորին, ովքեր փորձում էին գիտական սկզբունքներով բացատրել տիեզերքի ծագումն ու կառուցվածքը։ Մինչև Ամերիկայի հայտնագործումը չար հերետիկոսություն էր համարվում հակոտնյաների մասին ուսմունքը։ Քրիստափոր Կոլումբոսը զոհ գնաց հոգևորականների չարագործության։ Հռչակավոր Կոպեռնիկոսի աշխատությունները դատապարտված էին պապի բուլլայով[1] Աստվածաշնչի դեմ ուղղված անաստվածության համար։ Գիտական մեթոդների առաջին ռեֆորմատորներից մեկը—Ռոջեր Բեկոնը XIII դարում պայքար է հայտարարում ընդդեմ սքոլաստիկայի, իր գրքերում խարազանելով և ծաղրելով գիտնական սքոլաստներին՝ «Մաթեմատիկան

[1] Կոնդակ։ Ծ․ Թ․։

սխալմամբ համարում են դժվարին, իսկ յերբեմն նույնիսկ կասկածելի գիտություն, միայն նրա համար, վոր նա դժբախտություն է ունեցել անհայտ լինելու յեկեղեցու հայրերին»։ «Կախարդության» համար դատապարտված գիտնականն իր կյանքի մեծ մասը անց էր կացնում բանտի նկուղներում։

Փորձնական ֆիզիկայի հայր Գալիլեյը սրբազան տրիբունալի կողմից դատապարտված էր ցմահ բանտարկության։ Ուտրեխտի աստվածաբանները 1643 թ․ ցանկանում էին այրել Դեկարտի գրքերը։ Խոլմոգորի դեղջուկ «խելամիտ» Միխայիլ Լոմոնոսովը, վորն ընտրված էր Շվեդիայի և Բոլոնիայի (Իտալիա) ակադեմիաների պատվավոր անդամ, ստիպված էր վոտանավորներ գրել Յելիզավետա զվարճասեր թագուհու հրավառությունների ու տոնակատարությունների համար․ պայքարելով ժողովրդական կրթության համար, նա ամեն տեսակի հարձակումների յեր յենթարկվում խավարամիտ հոգևորականության և տիրող դասակարգերի կողմից։

Ֆեոդալական կարգերի պայմաններում գիտական ամեն մի կենդանի միտք խեղդվում, վոտնահարվում էր աստվածաբանների և փիլիսոփաների կողմից, վորոնք համառորեն կառչել էին հին ու պրիմիտիվ սկզբունքներին։ Ամեն մի գիտնական, վոր հավատում էր գիտության հառաջադիմությանը և ժխտում մտածության սքոլաստիկ մեթոդը, հռչակվում էր հերետիկոս, աստծու թշնամի։

Նոր հայտաբերած յերկրների բնիկներին «ընտանի» դարձնելու մեթոդներն անդադար հարձակման էին յենթարկվում ինտելիգենցիայի ավելի կրթված և ազատամիտ մասի կողմից։ XV—XVI և XVII դարերի հումանիստները ապստամբում էին Աֆրիկայում, Հնդկաստանում, Ամերիկայում և այլ նոր գաղութներում կատարվող դաժանությունների դեմ։ Բնիկների անձի կատարյալ արհամարհանքը, նրանց հետ վորպես գազանի հետ վարվելը, անխիղճ խաբեյությունն ու շահագործումը խրախուսվում էին կառավարության և յեկեղեցու կողմից։ Միաժամանակ գիտնականների մեջ գտնվում էին այնպիսի մարդիկ, վորոնք արդարացնում էին այդպիսի վերաբերմունքը և սուր վիճաբա-

նուլթյուն սկսում «վայրենի» մարդու նկատմամբ մարդասեր և ազնիվ վերաբերմունք քարոզողների հետ:

XVIII դարի վերջում «լուսավոր» Անգլիայում,—որտեղ ֆրանսիական էնցիկլոպեդիստների ուսմունքի հետ միասին յուրացրել էին Մոնտեսկյոյի և Վոլտերի փիլիսոփայությունները, մարդու իրավունքների համար պայքարողների հեղափոխական գաղափարները,—կային գիտնականներ, որոնք կատաղի հակառակորդներ էին շուրջերկրյա ճանապարհորդություններ կատարելուն և նոր յերկրներ հայտնագործելուն: Նրանք ո՛չ միայն չէին պաշտպանում գաղութային քաղաքականության այս կամ այն տեսակետը, այլև պնդում էին, թե շուրջերկրյա ճանապարհորդությունները, որոնց հետևանքով հայտնագործվում են նորանոր ժողովուրդներ, ընդհանրապես վնասակար են մարդկությանը, առանձնապես հայտնագործված ժողովուրդների համար: Նրանք հավատացնում էին, որ վայրենի մարդ լինելն ավելի լավ է, քան քաղաքակիրթ լինելը:

Ո՞րչափ անկեղծ էին այդ յուրատեսակ «մարդասերները» և չէի՞ն արտահայտում արդյոք որևէ դասակարգի թաքուն մտքերը, որոնց ուղղակի հրապարակումը կարող էր առաջ բերել կառավարության բարկությունը: Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, որ գաղութային առաջխաղացման ընդլայնումը, որ այդքան շահավետ էր առևտրական կապիտալին, ծանրանում էր հողատիրական բուրժուազիայի և խոշոր սեփականատեր արիստոկրատների վրա: Տարեցտարի աճող հարկերը և ամեն տեսակի տուրքերը,—որ գանձվում էին նավատորմ կառուցելու, ռազմական կասկածելի արշավախմբեր կազմակերպելու և գաղութներում կայազորներ պահելու համար,—քայքայում էին վաղուց հողի վրա հաստատված խոշոր սեփականատերերին, որոնք չէին կարող հաշտվել վաճառականների նվաճողական ախորժակների հետ:

Հողատիրական դասակարգի հետ այս կամ այն կերպ կապված գիտնականների մի մասը ծառայում էր նրա շահերին, առաջ էր քաշում ամեն տեսակի հիպոթեզներ և տեսություններ, ամեն կերպ պայքարում էր, այսպես կոչված, առաջավոր ինտե-

լիգենցիայի դեմ, որն ուղիներ էր փնտրում գիտության զարգացման համար և տվյալ դեպքում պաշտպանվում էր կառավարության և արդյունաբերողների կողմից, քանի որ վերջիններիս համար գործիք էր ծառայում նվաճողական դիտավորությունները հետապնդելու գործում:

Նյուտոնի համաշխարհային ձգողականության օրենքը ջախջախում է աստվածաբանական այն հայացքը, ըստ որի հոգևոր ուժերն են ներգործում բնության յերևույթների վրա: Քննադատությունը հարկադրում է ճանաչել բնական յերևույթների, այն է՝ մոլորակների և գիսաստղերի շարժման, ովկիանոսների մակընթացության ու տեղատվության խիստ օրինաչափություն սահմանող նոր տեսությունը: Աստղադիտակը, որ փոխարինել էր աստրոլյաբիային[1], հնարավորություն է տալիս ճշտել աստղաբաշխական դիտողությունները: Մոլորակների շարժումն այդ դիտողությունների ամենասիրելի առարկան էր: Աստղաբաշխները կազմում էին աստղերի մանրամասն ցուցակներ: Մաթեմատիկոսները մշակում էին յերկնային մարմինների շարժման ճիշտ հաշվարկման մեթոդները: Հին ժամանակների աստղաբաշխական տեսությունները, որոնք ծաղկել էին XVI դարում և խախտված էին առաջին իսկական բնագետների՝ Տիխո-դե-Բրագեյի, Կեպլերի, Գալիլեյի և Դեկարտի ուսմունքներով, XVIII դարում ժխտվում են վերջնականապես:

1768 թվին Լոնդոնի թագավորական ընկերությունը որոշում է կազմակերպել աստղաբաշխական արշավախումբ, որը պետք է դիտեր Վեներա մոլորակի անցումն արեգակի սկավառակի վրայով: Այդ պետք է տեղի ունենար մի տարուց հետո և պետք է դիտվեր Խաղաղ ովկիանոսի Ընկերության կղզիներում[2]: Լորդ Շելբուրն այդ առթիվ թագավորին ներկայացնում է մանրամասն զեկուցագիր, մատնանշելով, ի միջի այլոց, այն հետաքրքրությունը, որ Յեվրոպայի այլ միապետները ցուցաբերում են նման արշավախմբերի նկատմամբ: Այդ մատնանշումն իր ազդեցությունն է ունենում, և Գեորգ III անմիջապես տալիս է իր համաձայնությունը: Թագավորական ընկերությանը մնում

[1] Միջնադարյան աստղաբաշխական գործիք: Ծ. Թ.:

[2] Այդ անունը 1769 թ. տվել էր Կուկը: Ծ. Հ.:

եր նշանակել աստղաբաշխ դիտողներ և արշավախմբի պետ։ Ընտրված եր Թագավորական ընկերության անդամ, գիտնական աշխարհագրագետ և աստղաբաշխ Դելրիմպլը, վոր հայտնի յեր Հարավային ծովի ճանապարհորդությունների վերաբերյալ աշխատություններով։ Սակայն Ծովակալության առաջին լորդը կտրականապես հրաժարվում է արշավախմբի և նավի ղեկավարությունը հանձնել մի մարդու, վորը ծովագնաց չի յեղել։ Նա, վորպես օրինակ, նշում եր նախընթաց արշավախմբերի փորձը, յերբ նավաստիները հրաժարվել են յենթարկվել աստղաբաշխին։ Այդ պատճառով լորդը մեծ վեճ է ունենում Դելրիմպլի հետ, վորի հետևանքով կարող եր վիժել արշավախմբի կազմակերպումը, յեթե չմիջամտեր Ծովակալության քարտուղար Ստեֆենսը. վերջինս համոզում է լորդին անպայման նշանակել մի ուրիշ պետ, վորն ավելի՛ փորձված լինի ծովային գործում և, առանց տատանվելու, մատնանշում է Թագավորական նավախմբի նախկին բոցման, Նյու-Ֆաունդլենդում յեղած լոծեններ-աշխարհագրագետ Ջեմս Կուկին։ Դեռևս մի տարի առաջ դոկտոր Բեվիսը նրան ներկայացրել եր, վորպես «լավ մաթեմատիկոսի և փորձառու ծովագնացի»։ Ստեֆենսն իր կողմից ավելացնում է, վոր Կուկին շատ լավ ճանաչում է Նյու-Ֆաունդլենդի նահանգապետ սեր Հյուգ Պալիսերը։ Վերջինս գործադրում է բոլոր միջոցները, վորպեսզի պաշտպանի Կուկի թեկնածությունը։ Վերջապես մայիսի 25-ին Կուկը նշանակվում է արշավախմբի պետ՝ լեյտենանտի աստիճանով։ Պալիսերի հետ միասին Կուկը շրջագայում է Թեմզայի նավաշինարանները և ընտրում յերեք հարյուր յոթանասուն տոնն տարողությամբ մի առագաստանավ։

Նավն անվանում են «Յեռանդ» («Endeavour»)։

Թագավորական ընկերության նախագահ կոմս Մորթոնի հրահանգներում ասված եր վոչ միայն Վեներայի վերաբերյալ դիտողություններ կատարելու, այլև Խաղաղ ովկիանոսը մանրակրկիտ հետազոտելու մասին։

Կուկն անմիջապես ձեռնարկում է նավի սարքավորման ու արշավախմբի կազմակերպման գործը։ Հավաքագրում է ութսունչորս մարդ, ձեռք է բերում մեկ ու կես տարվա պաշար, նավի վրա դնում է տասը թնդանոթ և տասներկու հրացան։

Արշավախմբին մասնակցում են Գրինիչի աստղաբաշխ Չարլզ Գրինը, բուսաբան դոկտոր Սոլանդերը, վիրաբույժ Մոնդհաուզը, յերիտասարդ ենտուզիաստ Ջոզեֆ Բենքսը և նկարիչ Պարկինսոնը։

Մայիսի 27-ին Դեպթֆորթում Կուկն ստանձնում է նավապետի և արշավախմբի պետի պաշտոնը։ Հունիսի 30-ին նավն ընթանում է Թեմզայով և հասնում Պլիմուտ, վորտեղից օգոստոսի 26-ին դուրս է գալիս Ատլանտյան ովկիանոս և սեպտեմբերի 13-ին խարիսխ ձգում Մադեյրա կղզու ափերի մոտ. այդտեղ տեղի յե ունենում մի տհաճ միջադեպ, վորը մասամբ թունավորում է ճանապարհորդության սկիզբը։ Պորտուգալական ծովափնյա հրետանին չի պատասխանում «Յեռանդ» նավի վողջույնին։ Կուկը, համարելով այդ բրիտանական դրոշակի վիրավորանք, հրամայում է կրակ բաց անել ծովափնյա ամրոցի վրա։ Այդ ռմբակոծությանը միանում է նավահանգստում գտնվող անգլիական ֆրեգատը։ Քիչ եր մնացել խոշոր ընդհարում տեղի ունենար. յերիտասարդ նավապետի դյուրագրգռությունը քիչ մնաց քաղաքական կոնֆլիկտի պատճառ դառնա։ Ժամանակին ուշքի գալով, յերկու կողմերն էլ աշխատում են կոծկել այդ միջադեպը, վորի մասին նույնիսկ վոչ մի հիշատակություն չկա ճանապարհորդական նկարագրության մեջ։

Կուկը վճռում է Մադեյրա կղզուց գնալ Ռիո-դե-Ժանեյրո։ Մի ամբողջ ամիս խաղաղ նավարկում են։ Աստղաբաշխ Գրինի սրախոսությունները և Բենքսի տարօրինակ վողևորությունը աշխուժացնում եյին ծովագնացության միապաղաղությունը։ Փայլող ձկները գրավում եյին բնագետների ուշադրությունը։

Ռիո-դե-Ժանեյրոյում տեղի յե ունենում անսպասելի դիմավորում։ Պորտուգալական փոխարքան խորամանկ մարդ է դուրս գալիս։ Նա ասում է, վոր չի ըմբռնում անգլիացիների ճանապարհորդության նպատակը։ Անկարելի յե, վոր սպառազինված նավը խաղաղասիրական նպատակներ հետապնդեր։ Վո՞րտեղ է տեսնված, վոր նավի վրա թնդանոթներ դրվեն հենց այնպես, ի դեպ, իսկ ռազմական համազգեստ հագած անգլիացիները ճանապարհորդեյին ով գիտե, թե ուր՝ միայն նրա համար, վոր դիտակով նայեն ինչ-վոր մի աստղ։

Կուկը, պահպանելով քաղաքավարության բոլոր կանոնները, աշխատում է պորտուգալացուն համոզել, վոր իր ճանապարհորդությունն ունի խաղաղասիրական նպատակ: Գիտնականները, իրար ընդհատելով, բացատրում են նրան մոլորակի շարժումը: Սակայն փոխարքան այնպես էր ձևացնում, վոր իբր վոչինչ չի հասկանում, թեպետ և հավաստիացնում էր, վոր իրեն համար էլ շատ հետաքրքիր կլինի դիտել, թե ինչպես է «բևեռային աստղը հարավային բևեռ անցնելու»:

Արշավախմբի խելամիտ պետը վորոշում է փոխարքայի հետ այլևս չվիճել և ջրի ու մթերքի պաշար վերցնել: Յերբ Յեվրոպա վերադարձող իսպանական առագաստանավի նավապետը Կուկին առաջարկում է իր ծառայությունները՝ Անգլիա նամակ տանելու վերաբերյալ, Կուկը Ծովակալության առաջին լորդի համար պատրաստում է մանրամասն տեղեկագիր, վորի պատճենը հանձնում է փոխարքային, վորպեսզի վերջնականապես ցրի չափից դուրս խորամանկ պորտուգալացու կասկածները:

Դեկտեմբերի 5-ին «Յեռանդը» շարժվում է:

Ծովախորշից դուրս գալու պահին նավն անսպասելի հրետանային ռմբակոծության է յենթարկվում Սանտա-Կրուզ ամրոցից: Կուկը հրամայում է իսկույն կանգ առնել և մակույկով մարդ է ուղարկում իմանալու հրաձգության պատճառները: Պարզվում է, վոր ամրոցի պետը թույլտվություն չի ստացել անգլիացիներին բաց թողնել: Կուկն ստիպված է լինում կրկին բանակցություններ վարել փոխարքայի հետ:

Կուկը գլխի յե ընկնում, վոր խորամանկ կառավարիչը յերեկվա նամակով հայտնած իր սիրալիր բարեմաղթություններով հանդերձ, դիտմամբ չի տեղեկացրել ամրոցի պետին՝ հույս ունենալով խորտակել «Յեռանդը» կամ, առնվազն, ծանր վնասվածք պատճառել նրան:

Փոխարքայի անհարմար պատասխանը, թե իր կարգադրությունը ստորադրյալների անփութության պատճառով ժամանակին չի հաղորդվել ամրոցի պետին, պետք էր ընդունել բավարար: Կուկը չէր կարող անհաջողության մատնել իր խիստ կարևոր նպատակը: Նա վճռում է նշանակություն չտալ փոխարքա-

յի տգեղ վարմունքին և հանգիստ շարունակել իր ճանապարհը:

Մեկնելուց մի քանի որ առաջ անգլիացիք դիտում են այդտեղի վոսկու հանքերը:

Ահագին քանակությամբ սևամորթ ստրուկներ տանջվում ու մահանում էյին ծանր աշխատանքի, կլիմայի անտանելի պայմանների, վատ սննդի, ամենագլխավորը, սպիտակ տերերի վայրենի վերաբերմունքի պատճառով: Յուրաքանչյուր տարի պորտուգալական կառավարությունը գնում էր քառասուն հազար նեգր, վորոնք ամբողջովին վոչնչանում էյին հանքերում: Յերբեմն Բրազիլիայում կարիք էր լինում նեգրերի, դրա համար էլ Հարավային Ամերիկայի այլ վայրերից նրանց քշում էյին այնտեղ:

Կուկն իր որագրում արդահատությամբ է արտահայտվում պորտուգալացիների վարմունքի մասին, աշխատում է համոզել ընթերցողներին, վոր հանքատերերը դաժան են, մինչդեռ մոռացության է տալիս իր հայրենակիցներին, վորոնք իրենց գաղութներում պորտուգալացիներից վոչնչով չէյին տարբերվում: Նեգրերն արժանի չեն այդպիսի տմարդի վերաբերմունքի. Նրանք նույնպիսի մարդիկ են, ինչպես և բոլորը. յեթե նրանք բարեխղճորեն աշխատում են իրենց տերերի համար, ապա վերջիններս պարտավոր են նրանց հետ վարվել վորպես ազնիվ աշխատավորների, և վոչ թե վորպես անասունների հետ: Կուկը միայն այդ էր համարում անարդար և անկեղծորեն վրդովվում, պահանջելով վերացնել այդ վարմունքը:

Կյանքը նավի վրա չափած-ձևած էր՝ առավոտից յերեկո, հերթափոխությունից հերթափոխություն, նախաճաշից մինչև ճաշ, ճաշից մինչև ընթրիք: Յերբ նավը կանգ էր առնում վորևէ ծովախորշում, գիտնականներն շտապում էյին ափ իջնել,—հավաքում էյին հազվագյուտ բույսեր, ուսումնասիրում էյին շրջակայքը և բնիկներին:

Կուկը ղեկավարում էր նավի ամբողջ կյանքը: Պահանջելով կարգադրության կանոնավոր, ճշտիվ և արագ կատարումն, ինքը խստապահանջ էր նաև իր նկատմամբ:Նավի վրա բոլորն էլ գնահատում էյին այդ: Նավաստիները, լավ իմանալով նրա անցյա-

ը, հանձին նրա տեսնում եյին արդարամիտ պետի, վորն անդադար աշխատում ե: Յերբեմն դյուրագրգիռ եր, սակայն միշտ ել հավասար բոլորի հետ... «Կարելի յեր նրան մեղադրել չափազանց խստապահանջության մեջ, սակայն նրա բարկությունը շատ շուտով զինաթափ եր արվում բնական բարեսրտության շնորհիվ...»: Բացի այդ, նավաստիները, վորոնք քանիցս մասնակցել եյին բազմաթիվ այլ ծովագնացությունների, առաջին անգամն եյին տեսնում մի նավապետի, վորն այնքան հոգ եր տանում իրենց սննդի և առողջության մասին: Այդ բոլորը տրամադրում եր հոգուտ նրան: Ծով դուրս գալու առաջին որից նրանք զգում են հմուտ, հաստատուն և խստապահանջ պետի ղեկավարությունը:

Նավի ղեկավարման աշխատանքին հաջորդում եր գիտական աշխատանքը: Կուկն անդադար կատարում եր աստղաբաշխական և նավագնացության դիտողություններ. վորոշում եր նավի կանգառումների և անցման աշխարհագրական լայնությունն ու յերկայնությունը, նշում եր կողմնացույցի ցուցումները, հաշվում եր մակընթացության և տեղատվության ժամանակն ու չափը, կազմում եր նավային որագիրը և ճշտությամբ գրի առնում ճանապարհորդությունը: Նա մանրամասնորեն գրի յեր առնում բոլոր անհրաժեշտ տվյալները, զոհաբերելով բնության գեղեցկության նկարագրությունները, թողնելով այդ իր ուղեկիցներին. նա ճիշտ եր գտնում, վոր իր առաջ խնդիր եր դրված վո՛չ թե գեղեցիկ գիրք գրել անհայտ յերկրների հրաշալիքների մասին, այլ կազմել ընդարձակ և ճիշտ բացատրագրեր, վորոնք առաջին հերթին ոգտակար լինեն իր նման նավապետներին, քանի վոր նրանք են պատասխանատու նավի բարեհաջող ղեկավարման համար:

Որը որին, ժամը ժամին տետրերի եջերը լրացվում եյին մանրակրկիտ տեղեկագրերով, ստույգ թվերով և գիտական նշումներով, հաճախ շատ սխալ ուղղագրությամբ:

«Չպետք ե մոռանալ,—ասում ե նա իր ընթերցողներին,— վոր այդ որագիրը մի այնպիսի մարդու շարադրություն ե, վորը դպրոցներում յերկարատև կրթություն չի ստացել, բայց պատանեկան հասակից միշտ ել յեղել ե ծովագնացության մեջ...»

Առանձնապես ուշագրավ ե, յերբ Կուկի որագիրը համեմատում ենք նրա յերկրորդ ճանապարհորդության ուղեկից՝ Գեորգ Ֆորստերի որագրի հետ, վորը հրատարակչի քմահաճությամբ զետեղված ե առաջինի հետ մի գրքում: Ահա ինչպես ե գրում Ֆորստերը.—

«... Ամբողջ գիշերը լուսինը փայլում եր ջինջ յերկնքում և իր արծաթափայլ շողերով լուսավորում ծովի հարթ մակերեսը. մինչդեռ հեռվում նա մեր առջև բացում եր սքանչելի տեսարան, վորը կարծես ստեղծված եր հավերժահարսի ձեռքով...»

Կուկը գրում ե.

«... Թեպետ և ճանապարհի այդ ուղղությունից յես չեյի սպասում վորևե հաջողություն, սակայն համառորեն ընթանում եյի դեպի հարավ մինչև ամսի 12-ի առավոտյան ժամը յերեքը, յերբ մեզ կանգնեցրեց քամու դադարը (շտիլը) հար. լ. 58°56′ և արևել. յերկ. 13° 26′ վրա: Մի քանի ժամից հետո փչեց արևմտյան քամին, վորի շնորհիվ յես նավն ուղղեցի դեպի արևելք»:

Կուկի նախորդները համարում եյին, վոր դեպի Խաղաղ ովկիանոս նավարկելն ավելի ապահով ե Մագելանի նեղուցով:

Կուկը հերքում ե այդ կարծիքը. նա «Յեռանդ» նավն ուղղում ե դեպի Հրո յերկրի և Հոռն հրվանդանի շուրջը: Յերեսուն յերեք որից հետո նա արդեն Խաղաղ ովկիանոսումն եր, Մագելանի նեղուցից յերեք և կես աստիճան ավելի հյուսիս: Մինչդեռ նախորդ ճանապարհորդները, անցնելով նեղուցով, դրա վրա կորցնում եյին մոտ յերեք ամիս: Այդպիսով, Կուկը պահպանում ե իր մարդկանց ուժը, նվազեցնում նավի վնասները, իսկ աշխարհագրական լայնության և յերկայնության ճիշտ հաշվառումով սահմանում ամենակարճ և ապահով ուղին: Ամբողջ փետրվարին նավն ընթանում ե բաց ծովում: Շուտով յերևում են անհայտ կղզիներ, վորոնք այս ու այն կողմ ցրված եյին ովկիանոսում: Ժամանակը կարճ եր: Կուկը, կղզիները նշանակելով քարտեզում, անցնում ե առաջ: Դեռ ելի յերեք ամիս շարունակ «Յեռանդն» ընթանում ե դեպի արևմուտք՝ Ընկերության կղզիները, դեպի իր նպատակակետը:

Մի տարվա ընթացքում Կուկը դիտում և ուսումնասիրում է իր ստորագրյալներին: Յուրաքանչյուր նավաստու, յուրաքանչյուր զինվորի բնավորությունը, նրանց դրական և բացասական գծերը ճշտությամբ հայտնի էյին նրան: Նրանց մեջ կային բարեխիղճ, ազնիվ մարդիկ, կային նաև տաք գլուխներ, վորոնք դժվարությամբ էյին յենթարկվում կարգապահությանը, վորոնք կանգառումներում վայրենի վերաբերմունք էյին ցուցաբերում բնիկների նկատմամբ: Կային բարեսիրտ անձինք, բայց բնավորությամբ թույլ, վորոնք սիրում էյին ի չարը գործ դնել վոգելից խմիչքները և սաստվում էյին խիստ հանդիմանությամբ: Կային և նախորդ ծովագնացություններում յերես առած, խիզախ տղաներ. դրանք սովոր էյին սանձարձակությունների և խրախուսվում էյին իրենց նման նավապետների կողմից, վորոնք նավարկել էյին Հարավային ծովում՝ վաճառականների առագաստանավերում և բնիկների հետ վերաբերվում էյին հին կոնկվիստադորների կանոնների համաձայն, այն է՝ յեվրոպացիք իրավունք ունեն կողոպտել «վայրենիներին»: Կուկը, հաշվի առնելով այդ, կազմում է հատուկ կանոններ, կարդում իր նավի մարդկանց և պահանջում անշեղ կատարել, սպառնալով խախտման դեպքում գործադրել խիստ պատիժներ:

«1. Աշխատել բոլոր միջոցներով սիրաշահելու հնդիկներին[1] և նրանց հետ միշտ վարվել միանգամայն մարդավայել:

2. Նշանակվում է մի կամ յերկու մարդ, վորոնք պետք է հնդիկներից գնեն պարեն, պտուղ և այլն. սպաները, նավաստիները և նավի այլ անձինք իրավունք չունեն վորևէ փոխանակություն կատարել առանց հատուկ թույլտվության:

3. Ափում աշխատանքի դրված պաշտոնյաներից վոչ վոք իրավունք չունի հեռանալ իր պոստից. յեթե զինվորները, բանվորները կամ նավաստիներն անփութության հետևանքով թույլ տան, վոր բնիկներն իրենցից զենք կամ գործիք գողանան, ապա ծովային կանոնների համաձայն, վոչ միայն կգանձվի հափշտակված առարկայի արժեքը, այլև այդպիսիները կպատժվեն, նայած թե ինչպես կպահանջի առիթը:

4. Տուգանքի կենթարկվի նա, ով կթագցնի փոխանակությունը կամ ձեռնամուխ կլինի նավին պատկանող և փոխանակության յենթակա վորևէ առարկայի:

5. Ամեն տեսակ յերկաթե և պղնձե իրերը, հագուստեղենը, կամ նման անհրաժեշտ իրերը կարելի յե փոխանակել միայն պարենով:

Ստորագրված է՝ Ջ. Կուկ»:

1769 թվի հունիսի 13-ին «Յեռանդը» խարիսխ է ձգում Ընկերության կղզիներից ամենամեծի՝ Տահիտի[1] կղզու ծովախորշում: Դեռևս յերկու որ առաջ կապույտ մշուշում յերևացել էր կղզու գծագիրը: Տեղացող անձրևը մերթ ծածկում, մերթ բաց էր անում կղզու ատամնավոր լեռնագագաթը: Պայծառ արևի տակ կղզին փայլում էր բազմերանգ գույներով: Կղզու բազմաթիվ ծովախորշերն ու հրվանդանները ծածկված էյին տերևախիտ անտառներով. այդ անտառների միջից աչքի էյին ընկնում կարմրավուն բազալտե ժայռերը: Ուշադրություն է գրավում կորալլային ռիֆը, վորը պաշտպանում էր կղզին ծովի ալիքներից: Կղզու և ռիֆերի միջև ձգված էր ծովի հարթ տարածությունը, վորտեղ արտացոլվում էյին կանաչազարդ լեռներն ու ծովափնյա ուղղաշարք կոկոսի բարձր արմավենիները:

Առաջին որից Կուկը սկսում է ափ տեղափոխել աստղաբաշխական գործիքները և նրանց պահպանության համար ամրոց կառուցել:

Բենքսը սարքում է վրան, վորի շուրջն իսկույն հավաքվում են հետաքրքրասեր բնիկները: Դրանց մեջ կային այնպիսիները, վորոնք առաջներում տեսել էյին ոտարերկրացիներ: Կուկն զգուշություն է պահպանում. նա աշխատում է բնիկներին հավատացնել, վոր հարմար տեղ է փնտրում միայն մի քանի որով գիշերելու համար: Նավի վրա մնացած հրետանավորներին կարգադրում է թնդանոթների յերախը դարձնել դեպի ափ: Ով գի-

1 Կոլումբոսի ժամանակվանից այդպես են կոչվել Ամերիկայի բնիկները. այդպես են կոչվում նաև բոլոր նոր հայտնագործվող յերկրների բնիկները: Ծ. Խ.:

1 Կուկի որագրերում և կենսագրություններում այդ կղզին անվանվում է «Ո—Տահիտի»: Այդ անունը Կուկը իմացել է բնիկներից մայիսի 10-ին: Ծ. Խ.:

տե, թե ի՛նչ կարող են անել արտաքուստ բարեսիրտ թվացող այդ վայրենիները:

Կուկը, ծովափին՝ սպայի հրամանատարության տակ տասներեք զինվոր թողնելով, իր ուղեկիցների հետ գնում է շրջակայքը դիտելու:

Անտառը տարածվում էր մինչև ծովափ: Հեղձուցիչ քաղցրահամ օդը գլուխ էր պտտեցնում: Հացի ծառի մեծ պտուղների ծանրությունից լայնատերև ճյուղերը թեքվել էին գետին: Պտուղների, ծաղիկների, ճյուղերի և դրանց հետ խճճված լիանների քաոսը փակել էր նրանց ուղին: Մեծ դժվարությամբ առաջ էին շարժվում այդ խայտաբղետ ու կենդանի պատնեշի միջով: Օդը տաք էր և խոնավ:

Սոլանդերի և Բենքսի աչքերը պտտում էին: Նրանք վազում էին մերթ այս, մերթ այն կողմ, դեպի չտեսնված բույսերը, ծաղիկները, պտուղները: Գրինը սրախոսում էր բուսաբանների գմայլանքի առթիվ:

Հանկարծ բոլորն էլ կանգ առան և ուշի ուշով լսեցին: Ծովափից լսվում էր անկանոն հրաձգություն: Ստիպված են շուտով վերադառնալ:

Շփոթված սպան զեկուցում է Կուկին, որ բնիկներից մեկը գաղտագողի մոտենում է պահակին և, նրանից խլելով հրացանը, փախուստի դիմում: Այդ ժամանակ սպան անհրաժեշտ է համարում կարգադրել կրակ բաց անելու և հափշտակող բնիկն սպանվում է:

Պարզվում է, որ սպան այնքան էլ ճիշտ չի պատմում դեպքը: Բնիկին իրոք սպանում է հետապնդողը, բայց մյուս զինվորները կրակում են կղզիաբնակների վրա, որոնք հավաքվում են ոտարերկրացիներին նայելու համար, և ինչ որ զարմանալի պատահականությամբ չեն վիրավորում և չեն էլ սպանում ոչ ոքի: Ամբոխը ցրվում է: Գետնին միայնակ ընկած է մնում սպանվածի դին, և խավարում է այդպես հաջող սկսված առաջին օրը:

Կուկն անչափ զայրանում է: Սպայի այդ անմիտ արարքը և զինվորների անգութ վարմունքը բարկացնում են նրան: Մի՞թե կարելի չէ հենց առաջին անգամից գործադրել այդպիսի խիստ

միջոց: Ապա ո՞ւր մնաց իր կարգադրությունների յենթարկվելը: Կուկը, խստագույն հանդիմանություն անելով սպային, սպառնում է զինվորներին ծեծել, յեթե նրանք կրկնելու լինեն նման խայտառակություն:

Նրա բարկությունը, ինչպես միշտ, շատ շուտով անցնում է, և նա աշխատում է յերկու կողմերին էլ բացատրել կատարած սխալը: Բնիկների նկատմամբ Կուկը կրկնակի զգուշություն է պահպանում. չի թույլատրում ծառեր կտրտել, առանց բնիկների համաձայնությունն ստանալու: Ծառերը հարկավոր էին ամրոց կառուցելու համար: Ամրոցը պաշտպանված էր մարտկոցներով: Բնիկները յերկչոտությամբ, բայց միաժամանակ հետաքրքրությամբ, ոգնում են նյութերը փոխադրելուն:

Անցնում է մի քանի որ. Կուկն այս անգամ ստիպված է լինում կարգը պահպանել ավելի խիստ միջոցներով:

Նավի մսագործը կամենում է մեխերը փոխանակել քարե կացնով: Դրա համար նա ձեռք չի քաշում մի բնիկ առաջնորդի կնոջից: Բայց այդ կինը մերժում է փոխանակությունը: Մսագործը կացինը խլում է կնոջ ձեռքից և դանակը բարձրացնում նրա վրա: Բենքսը, որ տեսել էր այդ տեսարանը, պատմում է Կուկին: Յերբ առաջնորդն իր կնոջ և ուրիշ բնիկների ուղեկցությամբ նավ է բարձրանում, նավապետը կանչել է տալիս մսագործին, պարզում նրա արարքը և հրամայում տեղն ու տեղը պատժել մեղավորին: Մսագործի շապիկը հանում են, իրեն կապում կայմից և մտրակում: Բնիկները արտասվում են և խնդրում վերջ տալ պատժին, բայց Կուկն անողոք է մնում:

Մարմնական պատիժը համարվում էր խախտված կարգապահության վերականգնման միակ միջոցը: Կուկը բարձր էր բոլորից, սակայն նա բարձր չէր իր ժամանակի բարոյականությունից: Նույնը կարելի չէ ասել նաև կրոնական հարցերի վերաբերյալ: Կուկը միամտաբար կարծում էր, թե վայրենի ժողովուրդների լուսավորման, քաղաքակրթման միջոցներից մեկն էլ նրանց քրիստոնյա դարձնելն է: Նա ստիպում էր պատարագներ անել բնիկների մոտ, որոնք կրկնում էին ոտարազգի աղոթողների շարժումները, առանց հասկանալու այդ շարժումների նպատակը. բայց նրանք աշխուժանում էին, յերբ տեսնում էին սարքված

չուկան, փոխանակության առարկաները,—իսկույն հասկանում էյին, վոր մեխերն ավելի առավելություն ունեն, քան ապակե ուլունքները։ Նրանց պրիմիտիվ բանականությունն իսկույն ըմբռնում էր այն բանը, վորը կյանքում նրանց համար իրոք օգտակար էր։

Հունիսի 1-ին Կուկն իր ուղեկիցներին բաժանում է յերեք խմբի։ Յերկու խումբը նա ուղարկում է մոտակա կղզիները, իսկ ինքը յերրորդ խմբի հետ մնում է Տահիտի կղզում։ Այդպիսով, մոլորակի շարժման դիտողության սխալները կարելի կլիներ հետագայում ուղղել։

Խիտ մառախուղը ծածկել էր յերկինքը։ Բայց ամսի 3-ին յերկինքը մաքրվում է բոլորովին և դիտողություններն անցնում են չափազանց հաջող։

Յուրաքանչյուրը կազմում է համապատասխան աղյուսակ և հաշվում է դիտողության տեղի աշխարհագրական լայնությունն ու յերկայնությունը։

Սկզբնական արտաքին շփումը և Վեներայի յերևալը արեգակի վրա տեղի յե ունենում առավոտյան ժ. 9, 25′,42″։

Հաջորդ ներքին շփումը և անջման սկիզբը—կեսօրին ժ. 3, 14′,8″։

Յերկրորդ արտաքին շփումը և անջման վերջը—կեսօրին ժ. 3, 14′,10″։

Դիտողության կետը՝ հար. լայնության 17° 29′ 15″[1]։

Ճանապարհորդության գլխավոր նպատակն իրականացված էր[2]։

Ամսի 5-ին մեծ հանդիսավորությամբ տոնում են անգլիական

---

[1] Այդ աղյուսակը Տահիտի կղզում կազմել է Գրինը։

[2] Վեներա (Արուսյակ) մոլորակն արեգակի սկավառակի վրայով 243 տարվա ընթացքում անցնում է միայն 4 անգամ, քանի վոր 243 տ. կազմում է մոլորակի 152 սինոդիկ պտույտը։ Վեներայի անցումն Անգլիայում առաջին անգամ դիտել են 1639 թվի դեկտեմբերի 4-ին Հորրոկսում և Կրաբտրիյում։ Վեներան արեգակի սկավառակի վրայով անցնում է հունիս և դեկտեմբեր ամիսներին 8, 122, 8, 105 տարիներ միջանկյալ։ Վեներայի այդ անցումը հնարավորություն է տալիս հաշվելու արեգակի, այսպես կոչված, պարալլաքսը, այսինքն՝ յերկնային բոլոր տարածությունների միավորը։ Արեգակի սկավառակի վրայով Վեներան մեկ էլ անցնելու յե 2004 և 2012 թվականներին։

թագավորի ծննդյան օրը։ Զբոսնում են կղզում, գտնում են տեղական շրջիկ յերաժիշտներ, վորոնք նվագում էյին շվի և թմբուկ. նրանց ստիպում են ցույց տալ իրենց արվեստը։ Թմբուկ նվագողները հանպատրաստից յերգ են հորինում անգլիացիների պատվին։

Կուկը շարունակում էր իր «մարդասիրական» փորձերը։ Նա նպատակ է դնում վերացնել զանազան իրերի ամենօրյա հափշտակումը տեղացիների կողմից։ Նա պահակներին խստիվ արգելում է կրակել գողերի վրա, նույնիսկ փուչ փամփուշտներով։ Ճիշտ է, այդ կարգադրության գլխավոր դրդապատճառն այն էր, վոր միայն վառոդով կրակելը կարող էր թուլացնել բնիկների սարսափը հրազենքից։

Սակայն նրա բոլոր ջանքերը,—բացատրել բնիկներին գողության վնասն հենց իրենց համար,—ապարդյուն էյին անցնում։ Վերջապես նա փորձում է մի նոր միջոց։

Բնիկների քսան մակույկը վերադառնում է ծովից լիքը ձըկնով։ Կուկը հրամայում է բռնել մակույկները և տանել ամրոց. նա ձկնորսներին հայտարարում է, վոր յեթե գողացած իրերը չվերադարձնեն, այրելու յե նրանց մակույկները։ Բնիկները վերադարձնում են գողացած յերկաթի մի մասը և պահանջում վերադարձնել իրենց մակույկները։ Կուկը մերժում է։ Հաջորդ օրը բնիկներից վոչ վոք չի գալիս. «մարդասեր» նավապետը ծանր կացության մեջ է. ձուկը շոգից կարող էր փչանալ։ Կամ պետք է հրաժարվեր իր խոսքից, կամ թե սովի մատներ թերևս անմեղ մարդկանց։

Կուկն ընտրում է միջին ճանապարհը. թույլատրում է վերցնել միայն ձուկը, իսկ մակույկները պահում է։ Արդյունքն ե՛լ ավելի վատթար է լինում. բնիկները թափվում են ձկան վրա, խլում ով ինչքան կարող է, առանց նկատի առնելու, թե ո՛վ է վորսի տերը։ Այնուամենայնիվ նրանք պահանջում են վերադարձնել մակույկները։ Կուկն իրեն հանգստացնում է ասելով, թե բնիկները պարզապես չեն կարողանում հաստատել, թե իրոք ո՛վ է գողը, իսկ գողացած իրերն էլ հավանորեն թաքցրել են այլ կղզիներում։ Ինչ և է, պետք էր ընդունել, վոր բնիկների բա-

բոյականությունն ուղղելու վերոբերյալ իմաստուն կերպով ծրագրած փորձը կատարելապես վիժել է:

Լինում էին դասալքության դեպքեր, յերբ մի նավաստի կամ զինվոր, գրավվելով բնիկների անհոգ կյանքով, փախչում էր նավից և անհետանում: Նման դեպքերում Կուկը բռնել էր տալիս բնիկների առաջնորդներից մեկին, կամ մի քանիսին և հայտարարում, թե նրանց բաց չի թողնի, մինչև վոր չվերադարձնի դասալիքը: Սակայն ամեն անգամ այդ չէր հաջողվում. բնիկները համառորեն առաջադրում էին իրենց հակապահանջը՝ յեթե առաջնորդներին, այդ դեպքում միայն կհանձնեն դասալիքին: Կամա ակամա պետք էր տեղի տալ:

Արշավախմբի գիտական աշխատանքը դրականապես հաջող էր ընթանում: Կուկը և Բենքսը մակույկով շրջագայել էին կղզին և վորոշակի պարզել նրա չափերը: Ապա Բենքսն անցել էր գետի վերին հոսանքը և հայտաբերել լեռան հրաբխային ծագման հետքերը: Ամրոցի շուրջը և անտառային բացատներում նա ցանում է ձմերուկի, նարնջի, կիտրոնի սերմեր, վոր իրենց հետ բերել էին Ռիո-դե-Ժանեյրոյից:

Բազմաթիվ սերմեր են բաժանում կղզիների բնիկներին, ցույց տալով, թե ինչպես պետք է ցանել և ինչպիսի հողում:

Տահիտի հասնելու որից արդեն յերեք ամիս էր անցել. պետք էր մտածել վերադառնալու մասին:

Կացինները, մեխերը, դանակները, ապակե ուլունքները փոխանակել էին մեծ քանակությամբ դանազան տեսակի պարենով: Աստղաբաշխական և աշխարհագրական տվյալները, բնիկների սովորությունները, կղզիների բուսական ու կենդանական աշխարհը մանրամասն նկարագրված էին արշավախմբի յուրաքանչյուր մասնակցողի կողմից:

Կղզու գլխավոր քուրմ Տուպիան ցանկություն է հայտնում մեկնել անգլիացիների հետ: Կուկը ուրախ է այդ վստահության համար. նա համաձայնվում է իր հետ վերցնել այդ ծերունուն, վորը լավ էր ճանաչում մոտակա կղզիները և իմանում բնիկների լեզուն ու սովորությունները: Այդպիսի մարդը կարող էր շատ օգտակար լինել:

Հուլիսի 13-ին նավերը շարժվում են տեղից: Ճանապարհոր



Ընկերության կղզիների բնիկների պիրոգները (մակույկները)

բնիկները լաց են լինում․ անգլիացիների հեռանալո՞ւ, թե՞ քուրմից բաժանվելու, գուցե ուլունքների և մեխերի առթիվ:

Տուպիան Կուկին սովորեցնում էր կղզիների անունները, բացատրում էր, թե վո՛րտեղ կարելի կլինի ձեռք բերել խոզեր, կամ թռչուններ․ յերբեմն ջերմեռանդ աղոթում էր, խնդրելով իր աստծուց քամի, յերբ առանց այն էլ յերևում էր, վոր քամի յե բարձրանալու:

Կանգ եյին առնում կղզիների մոտ․ կենդանիների պաշար եյին վերցնում․ ծանոթանում եյին տեղական իշխանների հետ: Կուկը կատարում էր բոլոր անհրաժեշտ ծեսերը․ անունով փոխանակվում կղզու իշխանի հետ․ յեթե իշխանի անունը Որեե յեր, ապա տեսակցության ժամանակ Կուկը կոչվում էր նրա անունով, իսկ իշխանը Կուկեե: Գրինն այդ առթիվ ի հարկե, սրախոսում էր:

Կուկը մոռացության չէր տալիս Անգլիայի շահերը: Բաժանվելով իշխաններից, նա նրանց հանձնում էր անագե դրոշմեր․ փորագրված մակագրությամբ՝ «Նորին բրիտանական մեծության «Յեռանդ» նավ, լեյտենանտ Ջեմս Կուկի հրամանատարությամբ․ Հուաեն, 1769 հուլիսի 16»:

Այդպիսով ամրապնդվում էր անգլիացիների իրավունքը կղզու հայտաբերման առաջնության նկատմամբ:

Յերեք շաբաթվա նավարկումը կղզուց կղզի տաղտկալի յեր: Յեղանակը փոփոխական էր՝ մերթ քամի յեր բարձրանում, մերթ խաղաղ յեղանակ, մերթ մառախուղը ծածկում էր ցամաքը: Կորալյային խութերի պարիսպը կարող էր ծակել նավի կողերը:

«Ձանձրալի և ծանր նավարկություն»․ այսպես է գրել Կուկն իր օրագրում: Նա վճռում է ընթանալ ուղղակի դեպի Հարավ, մինչև մայր ցամաք հասնելը այլևս չփնտրել նոր կղզիներ:

Օգոստոսի 25-ին նավի վրա տոնում են Անգլիայից մեկնելու տարեդարձը:

Քառասուն յերկու օր անընդհատ ընթանում են բաց ծովում: Միապաղաղ նավարկությունը գեղազարդվել էր հորիզոնի վրա յերևացած գիսաստղի շնորհիվ: Գիսավոր հրեղեն հրեշի գեղեցիկ թռիչքը տևեց մոտ հինգ ժամ, ուրախություն պատճառելով աստղաբաշխներին և սարսափ Տուպիային, վորը ծունկ էր չոքել իր

աստծու առաջ, նա օգնություն էր աղերսում պատահարի դեմ, վորը մեծ սպառնալիք պետք է լիներ իր թողած բնիկների համար:

Հոկտեմբերի 6-ին յերիտասարդ նավաստի Նիկոլայ Յունգը, վոր սովորաբար կայմի վրա յեր բարձրանում, առաջինն է տեսնում ցամաքը:

Դանդաղորեն մոտենում էր և աճում լեռնաշղթաների զանգվածը․ կղզու ափերը ձգվում եյին հեռու դեպի հյուսիս և հարավ:

Ուղևորների մեծ մասը այն կարծիքին էր, թե դա վաղուց փնտրվող Հարավային ցամաքն էր, վորը քարտեզների վրա պայմանական կերպով նշանակված էր լինում Terra Australis Incognita [1] անունով:

Կուկը հրամայում է մակույկն իջեցնել և մեկնում է ծովափը հետազոտելու փոքրիկ գետի հոսանքով: Յերևացող բնիկները, վորոնք նմանվում եյին տահիտցիներին, հենց սկզբից թշնամաբար են վերաբերվում․ թեպետև, ըստ յերևույթին, հասկանում եյին այն բոլորը, ինչ նրանց ասում էր Տուպիան, բայց չեյին ուզում խաղաղ հարաբերություն հաստատել և սպառնում եյին նիզակներով:

Վոչ մի հաշտարար նշանով չի հաջողվում համոզել նրանց: Այդ դրությունը տևում է մի քանի օր: Բնիկները մերթ նիզակներ են նետում մոտեցողներին, մերթ փորձում են փախցնել մակույկը․ այդ բանի համար նրանցից շատերը կյանքից զրկվեցին․ վերջապես, Կուկի համբերությունը հատում է և նա հրամայում է բռնել նավարկող մակույկի մեջ յեղած յոթ բնիկներին․ սրանք շուտափույթ փախուստի յեն դիմում: Նրանց վախեցնելու համար Կուկը հրամայում է կրակ բաց անել նրանց գլխի վրայից: Փախչողներն անսպասելի կերպով կանգ են առնում և քարերով, նետերով ու թիերով անասելի քարկոծում իրենց մոտեցող մակույկը, վորի մեջ էր նաև Կուկը: Անգլիացիք ստիպված կրակում են նրանց վրա: Բնիկներից չորսն սպանվում է, իսկ յերեքը բռնվում են:

---

[1] «Անհայտ Հարավային Յերկիր»:

Կուկի կենսագիրը փորձում է իր հռչակավոր հայրենակցի այդ արարքը արդարացնել նավապետի դյուրագրգիռ բնավորությամբ և բնիկների անսպասելի դիմադրությամբ: Թեպետ այդ խոսքերի հետ նա մեջ է բերում Կուկի օրագրից մի հատված, վորը նրան ամենևին չի արդարացնում:

«Իհարկե, հնդիկներն արժանի չեյին մահվան, այն պատճառով, վոր չեյին կամենում վստահանալ իմ խոստումներին և մոտենալ իմ մակույկը, յեթե նույնիսկ չկասկածեյին վորևէ վտանգի վրա. սակայն իմ նպատակն եր՝ ուսումնասիրել նրանց յերկիրը, և այդ նպատակը յես կարող եյի գլուխ բերել յերկու յեղանակով՝ ուժով, կամ նրանց բարյացակամությունը գրավելով: Յես արդեն փորձել եյի նվերների ուժը, սակայն ապարդյուն. իմ միակ ցանկությունն եր խուսափել ամեն տեսակի թշնամանքից և մի քանի հնդիկներ վերցնել իմ մակույկը, վորպեսզի այդ միջոցով համոզեմ, վոր մենք չենք կամենում նրանց չարիք պատճառել և կարող ենք նրանց բախտավորությանը նպաստել: Ուստի, իմ դիտավորությունները դատապարտելի չեն: Ճիշտն ասած, այդ կռվում, վորը յես ամենևին չեյի նախատեսել, մենք կկարողանայինք կատարյալ հաղթանակ տանել, առանց մի կաթիլ արյուն թափելու: Սակայն նման հանգամանքներում, յերբ հրաման է տրված կրակել, վոչ վոք չի կարող վոչ սահմանափակել վտանգը, վոչ էլ սահմանել նրա արդյունքները»:

Կուկը զղջում է իր կատարած արարքի համար: Չե՞ վոր կարելի չեր կրակելու հրաման չտալ: Բռնված և նավ տարված բնիկները, ինչպես յերևում է օրագրերից, վոչ վոքի էլ պետք չեյին. առնենք այն վայրը, վորտեղ տեղի եյին ունենում զույգ կռիվներ և սպանություններ, Կուկը շուտով թողնում է և հեռանում: Մարդասերը յերբեմն ավելի քան «բորբոքվող եր»:

Կուկն ամենևին չի հավանում այդտեղի բնիկների ռազմատենչ բնավորությունը. նա վճռում է, առանց կանգ առնելու, շարժվել դեպի հարավ: Յերբ նավին մակույկներով մոտենում են զինված բնիկներ, հրամայում է կրակել թնդանոթներից և դրանով սարսափ տարածում վայրենիների մեջ:

Վեց ամսվա նավարկությունը վերջնականապես համոզում է Կուկին, վոր այդ յերկիրը յերբեք էլ Հարավային Ցամաքը չի:

Հրատ մոլորակի ուղեգծի դիտողությունը, վորը նոյեմբերի 9-ին գրի յե առել Գրինը, և դիտողության կետի աշխ. լայնությունն ու յերկայնությունը, վոր ճշտել եր Կուկը, հաստատում են այդ համոզմունքը: Բացի այդ, ակներև է դառնում, վոր այդ այն յերկիրն է, վորը 1642 թվին հայտնագործել եր հոլանդացի Աբել Տասմանը. վերջինս մոտեցել եր այդ յերկրի արևելյան ափերին:

Նավարկության ընթացքում բնիկների վարմունքը շարունակ թյուրիմացություններ եր առաջացնում: Սպաներն ու նավաստիները, գրգռված լինելով այդպիսի անբարյացակամ վերաբերմունքից, խախտում եյին հնազանդության կանոնները և ըստ իրենց ըմբռնման վարվում գողերի և մեղավորների հետ: Կուկը այդպիսիներին ծեծել եր տալիս և նավանկուղում նստեցնում, սակայն շուտով կորցնում եր հաստատակամությունը և յերբեմն զգում, վոր նրանց վարմունքի վատ օրինակ եր տալիս հենց ինքը: Բնիկների հետ ընդհարումները տեղի եյին ունենում համարյա ամեն մի կանգառման ժամանակ: Կուկի ազատամիտ մտադրությունները յուրաքանչյուր անգամ ջախջախվում եյին «վայրենիների» համառության և նավաստիների վրեժխնդրության շնորհիվ:

Գոնե այդպես է նկարագրում նա իր օրագրում, ամբողջ մեղքը վերագրելով բնիկներին կամ թե նավաստիների անսանձ բարքերին: Միանգամայն պարզ է, վոր յեթե նավում տիրեր խստագույն կարգապահություն և դրա գործադրության համար լինեյին բավականին միջոցներ, նավաստիների վարմունքը հազիվ թե կարողանար պատճառ ծառայել այդպիսի ընդհարումների: Կուկը, խոսելով իր ձեռնարկած խիստ միջոցների մասին, շտապում է հանգստացնել «զգայուն» ընթերցողներին և համոզել, վոր այդ միջոցներն անխուսափելի եյին: Չե՞ վոր նա չի կարող հիշատակել ծովակալության գաղտնի հրահանգները, վորոնցով նրան հանձնարարված եր անխնա լինել «վայրենիների» հետ, յեթե նրանք դիմադրություն ցույց տան: Նա չեր կարող բացարձակ հայտարարել, վոր իր «գիտական» ճանապարհորդությունը ծովային մինիստրության համար ռազմա-ծովային բազայի հետախուզումն է ու կայանների ամրապնդում, ռազմական նավա-

տորմի նոր ուղիներ հարթում, նոր յերկրների «խաղաղ» նվաճման սկիզբը, ի փառս բրիտանական կապիտալի:

Կուկը զինվոր չեր, նվաճող չեր, նա չար էլ չեր. նա պարզապես ճանապարհորդ-ծովագնաց եր, այնպիսի ճանապարհորդ, վորը բարեխղճությամբ կատարում եր իր պետերի դիրեկտիվները. մի մարդ, վորը պարտաճանաչություն եր զգում իրեն ուղարկողների առջև և անպայման համակիր եր իշխանության նպատակներին, քանի վոր մեծացել ու կրթվել եր վորոշ միջավայրում և իր վրա կրում եր այդ միջավայրի կնիքը: Չնայած արտակարգ ընդունակություններին, առաքինի բնավորությանը, վորով նա տարբերվում եր ուրիշներից, չնայած ինչ վոր անորոշ իդեալի փնտրումներ և «բարի» ձգտումն ունենալուն, այնուամենայնիվ, նա չեր կարող ամբողջովին կտրվել իր դասակարգի լիբերալություն անող զինվորականների ու գիտնականների, այսպես կոչված, առաջադեմ ինտելիգենցիայի ընդհանուր մասսայից. ամեն տեսակի մարդասիրական, փիլիսոփայական ուսմունքներ քարոզելը վերջիվերջո ծառայում եր թագավորական կառավարությանը և այդ նույն ինտելիգենցիայի հետ կապված առևտրական բուրժուազիայի շահերին:

Բնիկների տեղեկությունները, Տասմանի և իր սեփական յենթադրություններն այն համոզման եյին բերում, վոր այդտեղ գոյություն պետք ե ունենա նեղուց. այդ նեղուցով յերկիրը բաժանվում եր յերկու մեծ կղզիների: Հենց այդ մտքով էլ Կուկն ուղղություն ե տալիս իր հետախուզումներին:

Հունվարի 22-ին, բարձրանալով մի բարձր լեռան գագաթ, նա տեսնում ե նեղուցի սկիզբը. նեղուցը նեղ հաշտի նման ձգվում եր անտառոտ ժայռերի միջև. իսկ նրանից արևելք՝ կրկին ծովը... Այլևս կասկածանքի տեղ չկար: Հարկավոր եր անցնել այդ նեղուցով:

Բացի գեղեցիկ, հսկայական ծառերից, վորոնք պետքական եյին կայմի համար, այդ յերկիրը աղքատ եր ուրիշ անհրաժեշտ իրերից: Բացի շներից ու մկներից, այլ կենդանիներ, նույնիսկ մժեղներ չեյին յերևում: Միայն ծովն եր հարուստ ամեն տեսակի ձկներով, վոր առատորեն վորսում եյին սնվելու համար:

Հիասթափվելով բնիկների հետ հարաբերությունները կանո-

նավորելու խնդրում, Կուկը վճռում ե ամրապնդել իր հայտնագործությունները: Նա բուրգեր ե կազմում քարերից, դրանց գագաթը զարդարում ե դրամներով, փամփուշտներով, ապակե ուլունքներով: Մի ծովախորշում կանգնեցնում ե յերկու սյուն և վրան գրում իր նավի անունը, որն ու տարեթիվը: Ամրացրած սյուները մեծ հանդիսավորությամբ հանձնում ե մի բնիկ-ծերունու, վորը խոսք ե տալիս պահպանել այն և ցույց տալ ամեն մի նավապետի, վորը նավով կայցելի այդ ծովախորշը: Սյուներից մեկը, վոր ամրացված եր բարձր բլուրի վրա, զարդարված եր բրիտանական դրոշակով և այդ վայրին էլ տրված եր Շարլոտ Թագուհու անունը: Թագավորի անունից Կուկը այդ յերկրները հայտարարում ե Անգլիայի սեփականություն: «Ավարտելով բոլոր այդ ձևականությունները,—գրում ե Կիպիսը,—անգլիացիք մի հին գինով խմում են Թագավորի կենացը: Այնուհետև դատարկ շիշը տալիս են այն ծերունուն, վորն ուղեկցել ե նրանց մինչև լեռան գագաթը. ծերուկն, ըստ յերևույթին, շատ եր գոհ մնացել նվերից»:

Կենսագիրը, լրացնելով հանդեսի նկարագրության եջը, խնդրում ե ներողամիտ լինել նավապետի վարմունքի համար: Նրան, կարծես, դուր չի գալիս իր ազատամիտ հերոսի այդ հավատարմությունը: Վերջացնելով նկարագրությունը, ավելացնում ե.—

«Փիլիսոփան կարող եր, գուցե, հարց տալ, թե պարոն Կուկն ի՞նչ իրավունք ուներ Անգլիայի Թագավորի անունից տիրանալ մի յերկրի, վորտեղ ապրում եյին մարդիկ, վորոնց նախնիները հաստատվել եյին այդտեղ շատ հին ժամանակներից: Ամենալավ պատասխանը, վոր կարելի յեր տալ այդ հարցին, այդ այն ե, վոր պարոն Կուկը այդ հանդեսը սարքել եր վո՛չ թե միայն հնդիկների համար, վոչ էլ մտադրություն ուներ զրկելու նրանց վորևե բնական իրավունքից, այլ միայն և միայն ցանկացել եր կանխել յեվրոպական այլ ծովագնացների ներխուժումը, վորոնք հետագայում իրենից հետո կարող եյին այնտեղ գնալ և ցանկանալ իրենց պետությունների ոգտին յուրացնել այդ վայրերը. իսկ այս դեպքում նրանք չեյին կարողանա հենվել հայտնագործման առաջնության վրա»:

Ուղեկիցներից մի քանիսը շարունակում էին պնդել, վոր ընթանում են Հարավային Ցամաքի ափերով։ Կուկը, վստահ լինելով, վոր այդ սխալ է, նավն առաջ է տանում։ Սպաներին տախտակամած հրավիրելով, համոզում է նրանց իր վորոշման ճշտության մեջ։

Այդ դեռ քիչ էր. նա «Յեռանդը» անց է կացնում նեղուցով, դուրս է գալիս նրա արևելյան մուտքի մոտ, պտտում է Հարավային կղզու շուրջը և ընթանում արևմտյան ափերով։ Ծովախորշերը, գետերը, հրվանդանները և կղզիները անվանում է իր բարեկամների, ծովային պետերի անուններով. ցցում է սյուներ և պարզում դրոշակներ՝ նավի և Գեորգ III անուններով։

Այդ կղզիները, վորոնց հայտնագործման պատիվը պատկանում էր բացառապես Կուկին (բացի այն ափը, վորը Տասմանը տեսել էր նավից), անվանում է Շտատների Յերկիր[1]։

Վերջանում էր մարտ ամիսը։ Ժամանակն էր արդեն վերջնականապես մշակել Անգլիա վերադառնալու ուղին։

Կուկը շատ էր կամենում վերադառնալ Հոռն հրվանդանի մոտով, վորպեսզի մի անգամ էլ փորձ անի փնտռելու Հարավային Ցամաքը։ Բարեհուսո հրվանդանի մոտով ընթանալը տաղտկալի կլիներ։ Ճանապարհը շատ էր ծանոթ և չէր խոստանում վորևե նոր հայտնագործություն։ Սակայն Հոռն հրվանդանին կհասներ միայն ձմռանը։ Նավը փոթորիկների հետևանքով շատ էր քայքայվել. մարդիկ հոգնած էին, պարենը սակավ։ Այնուամենայնիվ նա տրամադիր էր դեպի այդ վերջին հնարավորությունը։ Գո՞ւցե իրենք սպաներն առաջարկեն ընթանալ հենց դեպի հարավ-արևելք։ Հույսը քիչ էր։ Կուկը վճռում է ժողով գումարել։ Սպաները, մի մարդու պես, առաջարկում են անհապաղ ընթանալ դեպի արևմուտք՝ Նոր Հոլանդիայի ափերը[2], ապա դեպի հյուսիս, Հնդկաստանի ափերով։ Վորևե դժվարության դեպքում փնտռել այն յերկիրը, վոր հայտնագործել է Կվիրոսը[3]։

[1] Ի պատիվ Ընդհանուր շտատների (պառլամենտի)։ Այդ արշիպելագը, վոր հայտնագործել է Կուկը, հետագայում անվանվել է Նոր Զելանդիա։ Ծ. Հ.։

[2] Այժմ Նոր Ուելսը (Ավստրալիայում)։ Ծ. Հ.։

[3] Ֆերդինանդ Կվիրոսը իսպանական ծովագնաց էր XVII դարի սկզբին։

Ապրիլի 27-ին խաղաղ յեղանակին նավը քիչ էր մնացել խորտակվեր։ Ջրի ուժեղ հոսանքը նավը մղում է մինչև Նոր Հոլանդիայի ծովափնյա ժայռերը։ Վերջին րոպեյին փչում է ուժեղ բրիզ (քամի), վորը հնարավորություն է տալիս հաջողությամբ դուրս գալ այդ դրությունից։

Մեկ ամսից անցնում են Այծեղջեր (հարավային) արևադարձը։

Հունիսի 10-ին ամբողջ որը յերևում էին կղզիներ և զառիվայր ավազուտ ծանծաղուտներ։ Խորությունը բավականաչափ էր, քամին հրաշալի. իսկ գիշերն էլ գեղեցիկ էր և լուսնկա։ Յերեկոյան ժամը իննին, ըստ սովորության, հավաքվում են ընդհանուր նավասենյակ ընթրելու։ Բոլորի տրամադրությունն էլ շատ լավ էր։ Չե՞ վոր տուն էին վերադառնում։ Վերջին ժամանակներս թախծոտ դարձած նավապետը հանաքներ էր անում և ծիծաղում։ Գրինը լավ տրամադրության մեջ էր։ Նա սրախոսում էր սպաների և հենց Կուկի վերաբերյալ, վորը բարեհոգաբար էր ընդունում այդ սրախոսությունները։ Վերհիշում էին, թե ինչպես մի կղզում Բենքսը վերադարձել է փշերով ծածկված և մոծակներով կծոտված։

Հանկարծ ներս է մտնում բոցմանը և զեկուցում, վոր ջրի խոր տեղը կորցրել է։ Բոլորը վազելով բարձրանում են տախտակամած և յուրաքանչյուրը բռնում է իր տեղը։ Մի քանի րոպեյից հետո պարզվում է, վոր տագնապն անտեղի չեր, վոր նավն անցել է ծանծաղուտների մոտով։ Բոլորը ցրվում են նավասենյակները՝ քնելու։

Ժամը 11-ին Կուկն արթնանում է տախտակամածի վրա կատարվող շարժումից, աղմուկից և սպաների անկանոն կարգադրություններից։ Դուրս վազելով, տեսնում է սարսափելի տեսարան՝ նավը ծանծաղուտում նստել, թեքվել է մի կողմ, և ուժեղ ալիքը նրան զարնում է քարերին։ Ափը մոտ էր։ Յերբ չափում են խորությունը, պարզվում է, վոր նավը նստել է ստոր–

Հարավային Ցամաքը փնտռելու նպատակով, հայտնագործում է Նոր Հեբրիդյան կղզիները, վոր նա անվանել էր Ս. Հոգու կղզիներ։ Նկարագրել է իր ճանապարհորդությունը (հրատ. Ամստերդամում 1613 թվին)։ Ծ. Հ.։

ջրյա ժայռի վրա: Ջրի յերեսին լողում եյին նավի կցանների և փողնափայտի կտորներ: Դրությունն ուղղակի հուսահատական եր: Ամեն մի րոպե ջուրը կարող եր ներհոսել և խորտակել նավը: Բացի այդ, շուտով պետք է սկսվեր տեղատվությունը. ուստի նավը թեթևացնելը ժամանակի վատնում կլիներ: Նավի վողնուցը ճռռում եր. ժայռը սղոցում եր նավի տակը: Ջուրը ներս եր հոսում նավի նկուղը: Ժամանակը պետք եր հաշվել վայրկյաններով:

Կուկը մի ակնթարթում ըմբռնում է դրության եյությունը:

Թնդանոթներից վեցը, յերկաթեղենը, ավելորդ բեռը, լիքը և դատարկ տա՛կառները, գամերի կապոցները, ամաններով յուղը—այդ բոլորը նետում են ծով:

Պոմպերն աշխատում են նավանկուղում:

Ամեն մեկն իր տեղումն է: Նավաստիները, զինվորները, սպաները, գիտնականները, նավապետը — բոլորն էլ աշխատում են վորպես մի մարդ: Վո՛չ մի շփոթություն, վո՛չ մի աղմուկ, վո՛չ մի վատ խոսք,—դրա համար կգործադրվի անողորմ պատիժ: Այդպես եր մինչև լուսաբաց:

Ցամաքը շատ եր հեռու: Մակույկներում բոլորի համար տեղ չկար. մինչև մի խումբը ծովափ կհասներ, մյուսները ովկիանոսում կուլ կգնային:

Կուկը հանգիստ է. նրա աչքերը փայլում են. մազերն ալեկոծում է քամին. ձայնը խրոխտ է և խիստ:

Կեսօրին միանգամայն խաղաղ յեղանակ է. կարծես թե դադար է. մակընթացությունը նավը տեղից չի շարժում, չնայած ծով եր նետված հիսուն տոնն բեռ: Յերկու պոմպն էլ ահա տասներեք ժամ է, ինչ աշխատում են առանց դադարի:

Սկսվում է տեղատվությունը: Ջուրն ավելի ուժեղ հոսանքով է լցվում նավանկուղ: Հաջորդ մակընթացությունը կլինի տասներկու ժամ հետո: Աշխատեցնում են և յերկու այլ պոմպ: Ժամը իննին նավը մի քիչ բարձրանում է: Սակայն, յերբ հատակն անջատվի ժայռից, ծակված տեղն էլ կբացվի. այն ժամանակ հնար չի լինի ներս հոսող ջրի առաջն առնել:

Ժամանակը չե զանազան խորհրդածություններ անելու: Կուկը կարգադրում է ձիգ տալ խարսխային ճոպանի միջոցով:

Նավը տնքոցով և ճռռոցով պոկվում է ժայռից: Ժամը տասն է: Մի ամբողջ որ է՝ աշխատում են անընդհատ: Մարդիկ ուժասպառ յեղած, ընկնում են թաց տախտակամածի վրա, վեր կենում, կրկին աշխատում, կրկին վայր ընկնում:

Ներհոսումը մերթ ավելանում է, մերթ պակասում, մերթ զրկում է վերջին հույսից, մերթ ուժ ներշնչում: Խարիսխներից մեկը պոկվում է: Բաց են անում առագաստները և ժամը տասնըմեկին ընթանում դեպի ափ: Սակայն չի հաջողվում ծակված տեղը գտնել: Այդ ժամանակ յերիտասարդ շտուրման[1] Մոնդհաուզը առաջարկում է բացված անցքը փակելու մի միջոց, վորը նա տեսել եր մի առևտրական նավի վրա գործադրելիս. նա վերցնում է մի մեծ առագաստ, վրան կարում վուշ և բուրդ, քսում վոչխարի և տավարի թրիք. այնուհետև այդ առագաստը պարաններով քաշում են նավի տակը և փռված ձևով կպցնում նավին: Վուշը և բուրդը լցվում են ծակված տեղը, իսկ առագաստը ձյութոնի նման կպչում է հատակին: Ջուրը միանգամից դադարում է ներհոսել: Աշխատեցնում են միայն մեկ պոմպը:

«Յեռանդ» նավը բարեհաջող կերպով կանգ է առնում ծովախորշում:

Կուկն առանձնանում է իր նավասենյակում և օրագրում գրում հետևյալը.

«... Ամեն մեկն իր հոգու տերն եր: Ամեն մեկը գործադրում եր իր բոլոր ուժերը՝ համբերությամբ և գիտակցությամբ. չեր նկատվում անմիտ. իրարանցում, սարսափ, կույր և անհուսալի ճնշվածություն»:

Անհաջողությունները հետապնդում եյին: Նավի վրա սկսվում է ընդհանուր հիվանդություն: Առաջինը հիվանդանում են Տուպիան և Գրինը: Ամրակազմ տահիտցին խելացիորեն ձուկ եր վորսում և թարմ ձկնով իր ուժերը պահպանում: Գրինը, չնայած վիրաբույժի ջանքերին, որեցոր վատ եր զգում իրեն: Սպասածին հակառակ, առաջին ծովախորշն անհարմար եր նավը նորոգելու համար: Ուժասպառ յեղած, հիվանդ նավաստիներն աշխատում

[1] Նավապետի ոգնական: Ծ. Թ.:

եյին, առանց մի վայրկյան դադարի։ Թվում եր, թե վերջ չի լինելու այդ ծանր ծովագնացությանը։

Կուկն ամբողջ ժամանակ արտաքուստ հանգիստ եր։ Նա լինն որ ևս պայքարեց համառ տարերքի հետ, իր հետ։ Ցերբեմն թվում եր, թե ահա հոգնածությունը կհաղթահարի նրա կամքի վերջին մնացորդը։ Բայց այդ չեր կարելի ցույց տալ։ Նավաստիները, զինվորները — վո՛չ վոք չպետք է նկատի թուլության հետքն անգամ։

Վերջապես «Ցեռանդ» նավը հաստատապես կանգ է առնում մի ավազուտ ծանծաղուտում։ Կարելի յեր նավը նորոգել և հիվանդներին ափ դուրս բերել։ Վորսում են աղավնիներ, գտնում են խմելու ջուր։ Պարզվում է, վոր ժայռից պոկվել եր մի ահագին քար և ներս մտել ծակված տեղը՝ առաջատի հետ միասին։ Հենց այդ եր փրկել նավը։

Կուկը հիվանդ Գրինի հետ միասին անմիջապես սկսում է աստղաբաշխական դիտողությունները. դիտելով Յուպիտերը (Լուսնթագը), վորոշում են նրա տեղը՝

հար. լայն. 15° 26′
արևմտ. յերկ. 214° 42′ 30″

Սպաներին հանձնարարված եր կատարել ծովեզերքի նկարահանումը։

Հիվանդներին տալիս եյին յերեքական փունտ թարմ ձուկ։ Խոտերից և սխտորից ճաշ եյին պատրաստում։ Չնայած անտանելի շոգին (ջերմաչափը ստվերում ցույց եր տալիս 87°)[1], այնուամենայնիվ մարդկանց ուժերը վերականգնվում եյին։

Նավապետը հոգ եր տանում հիվանդների մասին և աշխատանքը տալիս առողջներին։ Ինքն առավոտից յերեկո ղեկավարում եր նավի նորոգման աշխատանքները, ուղղում եր աստղաբաշխական դիտողությունները, չափում եր ծովի խորությունը, մշակում եր հետագա ճանապարհի պլանը։ Նրա յեռանդը գերազանցում եր մյուսներից։

Հազիվ թե կարելի լիներ կասկածել, թե Կուկն անկեղծորեն չեր հոգ տանում հիվանդ և հոգնած նավաստիների մասին։ Մի-

[1] Ըստ Ֆարենհայտի։ Ծ. Հ.։

այն Լոնդոնում նստած փիլիսոփայության դոկտորը կարող եր իր փքուն գովասանքները պարուրել այսպիսի ֆորմալ ֆրազով.

«... Այդ զգույշ ղեկավարը ճիշտ է նկատել, վոր նավապետը այդպիսի ճանապարհորդություններում շահագրգռված է յերբեք չշեղվել նման կանոններից»։

Ամսվա վերջին յերևում են բնիկներ։ Նրանք ավելի բարեսիրտ եյին, քան Նոր Զելանդացիք։ Մերկ եյին, քթին և ականջներին հագցրած եյին մազերից հյուսած օղեր և ապարանջաններ. Նրանք շատ շուտ եյին ընտելանում և նույնիսկ նավ բարձրանում ու հետաքրքրությամբ դիտում ամեն ինչ։ Սակայն բնիկների յերկրորդ խումբը, վորը գալիս է մի քանի որից հետո, պահանջում է, վոր բռնած կրիաներն իրենց տան։ Մերժումն առաջ է բերում դժգոհություն. Նեղացած բնիկները խարույկներից վերցնում են կիսավառ փայտեր և խոտը հրդեհում։ Վառվում են մի քանի վրաններ և այլ իրեր։ Նավորդներն ստիպված են լինում հրացանները կրակել։ Բնիկները, վախենալով, փախուստի յեն դիմում։ Սկսում են վառվել ծառերը. գիշերը հրդեհը տարածվում է շրջակա լեռներում մի քանի մղոն շառավիղով։ Ոգոստոսի 3-ին շարժվում են տեղից. Նավագնացությունը շատ եր դժվար։ Ծանծաղուտների և ստորջրյա ժայռերի պատճառով հաճախակի կանգ եյին առնում և խարիսխ ձգում։ Ամբողջ ժամանակ առաջից ընթանում եր մակույկը, վորը չափում եր ծովի խորությունը։

Կուկը, խորհրդակցելով քոցմանի և սպաների հետ, վճռում է հեռանալ ցամաքից. այդ ճիշտ միջոց եր։ Բայց ծովում «Ցեռանդ» նավն ընթանում է անարգել կերպով։

Կուկը շարունակում եր իր գիտական աշխատանքները։ Այժմ նա իր առաջ խնդիր եր դրել հետազոտել, թե հնարավո՞ր է արդյոք անցնել Նոր Հոլանդիայի[1] և Նոր Գվինեայի արանքով։ Նա նավին ուղղություն է տալիս դեպի հյուսիս-արևմուտք։

Ոգոստոսի 22-ին նեղուցը հայտնագործվում է։ Բացված եր դեպի Հնդկական ովկիանոսը տանող ուղին։ Նոր Հոլանդիայի հյուսիսային հրվանդանում Կուկը պարզում է անգլիական դրո-

[1] Ավստրալիայի։ Ծ. Թ.։

հակ, այդ յերկիրը անվանելով Նոր Ուելս: Հրացաններից և թնդանոթներից յերեք համազարկ են տալիս:

Ավստրալիա մեծադույն կղզին, 7·650·000 քառ. կմ. տարածությամբ, վոսկեհանքերով, եվկալիպտի անտառներով, արգավանդ հողերով, ջրառատ գետերով և «հնդիկների» եժանագին աշխատող ձեռքերով դառնում է Մեծ Բրիտանիայի թագավորի սեփականությունը:

Յերկու շաբաթ անց յերևում են Նոր Գվինեայի ափերը: Կուկը, «Յեռանդ» նավին ուղղություն տալով դեպի արեմուտք, առանց կանգ առնելու, ընթանում է նեղուցով:

Կուկն ուղղում եր հին քարտեզների անճշտությունները, տեղափոխում կղզիները, յերկարացնում կամ կրճատում նրանց ափերը: Առաջին քարտեզները կազմել են վոչ-ծովագնացները, վորոնք չգիտեյին քարտեզագրական գիտությունը, չեյին կարողանում հաշվել կոորդինատները: Նրանց կիսադրագետ ու խառնիփնթոր նկարագրությունների հիման վրա, առաջին քարտեզագետները գծել են քարտեզներ, վոր նույնպես ճշգրիտ չեյին:

Անցնելով Տիմոր կղզու մոտով, նկատում են հոլանդացիների տներ, վոր շրջապատված եյին կոկոսի արմավենիներով, տեսնում են վոչխարների մեծ հոտեր: Նավի անձնակազմը պահանջում է այդտեղ կանգ առնել. բոլորն ել ուրախ խռնվել եյին տախտակամածի վրա: Կենդանություն եյին ստացել նիհար դեմքերը, առկայծում եյին աչքերը: Ամբողջ նավագնացության ընթացքում նավաստիներն առաջին անգամն եյին դժգոհ նավապետից, վոր չի կամենում կանգ առնել այդ կղզու մոտ:

Կուկը գերադասում է մի այլ կղզի—Սավան: Այդտեղ նրանց հաջողվում է չափավոր գներով ձեռք բերել վոչխար, խոզ, հավ, ձու, կոկոսի ընկույզ, կիտրոն, սոխ և մի քանի հարյուր գալլոն արմավենու գինի. այդ հանգամանքն առաջացնում է տեղական հոլանդական առևտրական դրասենյակի ղեկավարի նախանձը:

Հոկտեմբերի 2-ին մոտենում են Ճավայի ափերին:

Տաք և խոնավ շղարշի միջից լեռների վրա կապույտին եյին տալիս անտառները. արմավենու և բամբուկի անտառները ձըգ-

վում եյին լանջերին. ակացիի և արմավի ծառերի մեջ ծածկված եյին հոլանդական գաղթականների տները: Ծովափին ծաղկում եյին բազմապիսի և բազմերանգ ծաղիկներ: Ծոցի մուտքի մոտ կանգնած եյին հոլանդական յերկու առևտրական նավ: Կուկն այդ նավերից մեկի մոտ է ուղարկում լեյտենանտ Հիքսին: Մեծ ցանկություն կար տեղեկություն ստանալ Անգլիայի մասին: Լեյտենանտը պատասխանի փոխարեն բերում է մի գրություն, վոր ստորագրել եր հոլանդական Ոստ-Ինդիական ընկերության քարտուղարը. այդ նամակում նահանգապետի անունից պահանջ եր դրված պատասխանել մի շարք հարցերի: Կուկն իր արժանապատվությունից ցածր է համարում լրացնել ամբողջ հարցաթերթիկը: Նա պատասխանում է կարճ և կտրուկ՝ «Յեռանդ» նավ, Անգլիա, Կուկ»:

Յերկուհարյուրամյա արյունահեղությունների հետևանքով սուլթանները հպատակվում են, Ոստ-Ինդիական վաճառականներն ազատվում են մրցակից-յեվրոպացիներից և հնարավորություն ստանում խաղաղ նիրհել Բատավիայի բարձերի վրա, վոր պատրաստված եյին հոլանդական ձևով. նրանք անվերջ հաշվում եյին վոսկին, ստրուկները, համեմունքները և Ճավայի բազմաթիվ այլ հարստությունները:

Մարդ վերհիշում է ֆրանսիական փիլիսոփայի[1] հեգնական խոսքերը, թե «Շաքարը շատ թանկ կլիներ, յեթե այն բույսը, վորից նա արտադրվում է, չմշակվեր ստրուկների ձեռքով»:

Կուկը թնդանոթների համազարկով վողջունեց Բատավիային և մարդ ուղարկեց նահանգապետին հաղորդելու, վոր նրա մոտ մնացել է միայն յերեք հատ թնդանոթ. Ընկերության Խորհրդին խնդրեց, վոր իրեն թույլ տրվի նավահանգստում «Յեռանդ» նավի վնասվածքը զննել և նորոգել:

Յերեկոյան դեմ սկսվում է փոթորիկ, կայծակ ու վորոտ՝ սոսկալի հեղեղով: Նավերն ալեկոծվում են և անձրևով հեղեղվում: Կայծակը խփում է հոլանդացու մոտ կանգնած փոքր կայմին: Կայմը ջարդ ու փշուր է լինում: «Յեռանդ» նավը փրկվում

---

[1] Մոնտեսկյու — «Օրենքների վոգին»: Ծ. Հ.:

է Կուկի նախազգուշության միջոցով․ նա նավի վրա սարքում է շանթարգել։

Դեռևս Բարկլինգում յեղած ժամանակ Կուկը կարդացել և լսել էր ամերիկական պատգամավոր Ֆրանկլինի շանթարգելի մասին։ Ինչպես միշտ, «խելացի» գլուխներ են լինում, վորոնք վիճարկում են այդ նոր գյուտի օգտակարությունը։ Կուկը միշտ էլ հետաքրքրվում էր այդ լուսավոր ամերիկացու աշխատանքով ու վիճակով։ Տպագրիչ-բանվորը,— վորն իր աշխատանքն ու գիտությունը գործադրում էր գրադարաններ կազմակերպելու, մաթեմատիկական ու գիտական այլ գրքեր տպագրելու, իր տպած գրքերը ժողովուրդի մեջ տարածելու, վորը հայտնագործություններ էր անում և փիլիսոփայական տրակտատներ շարադրում,— գրավում էր Կուկի ուշադրությունը։ Կուկը գնահատել էր Բոստոնի փիլիսոփայի արտակարգ տաղանդը և տասնհինգ տարվա մեջ առաջինն էր, վոր իր նավի վրա գործադրեց շանթարգելը։

Յերբ Կուկը դիմում է հոլանդական հաստափորներին, խնդրելով դրամական օգնություն ցույց տալ իրեն, նրանք բացեիբաց հրաժարվում են զանազան պատրվակներով, թե չեն կարող դրամով աջակցել անհայտ մի ծովագնացի, նույնիսկ վոչ-զինվորական նավապետի, վորը, առանց վորևէ առևտրական լուրջ նպատակի, նավարկում է անընդհատ կղզիների շուրջը՝ յերկնային լուսատուներ վորոնելու համար։ Հարկավոր էր զգույշ լինել բրիտանական մրցակիցների նկատմամբ։ Ով գիտե, թե ինչ բաներ է հետապնդում Անգլիան Բատավիայի վաճառականների բարեկեցության դեմ։

Ուշիմ վաճառականներն իսկույն զգացին գիտական արշավախմբի իսկական նպատակը։

Կուկն ստիպված է լինում Գեորգ Թագավորի անունից կնքված պաշտոնական գրագրություն սկսել նահանգապետի և Ընկերության խորհրդի հետ։

Բատավիայի կլիման ճակատագրական է լինում Կուկի ուղեկիցների և «Յեռանդ» նավի անձնակազմի համար։ Մեկը մյուսի յետևից հիվանդանում են ամենավատթար տրոպիկական մալարիայով։ Տահիտցիների դժբախտ քուրմը, վոր սկզբում շատ էր

ուրախացել մեծ քաղաք տեսնելու հույսով, չի դիմանում կյանքի նոր պայմաններին և անսովոր սննդին։ Ընդախտը վերջ է տալիս նրա կյանքին։ Մալարիան քայքայում է Բենքսի և Սոլանդերի առողջությունը։ Վիրաբույժ Մոնգհաուզը վախճանվում է, թողնելով Կուկին առանց իր լուսավոր օգնության։ Առողջ եյին մնացել միայն տաս հոգի։

Կուկն զգում էր, թե ինչպես տենդը տիրում է նաև իրեն, ճիշտ է, ավելի թույլ, քան ուրիշներին։ Նրա ամուր օրգանիզմը և նախազգուշության համար ձեռք առած բոլոր միջոցները չեյին թողնում, վոր հիվանդությունը հաղթի։ Կուկը պայքարում էր հիվանդության դեմ այնպես, ինչպես նա պայքարում էր ծովի դեմ, մարդկանց կյանքի համար։ Լարելով իր կամքը, հաղթահարում էր հիվանդությունը։ Առավոտից մինչև յերեկո ղեկավարելով նավի նորոգումը, նա միայն մի խնդրով էր մտահոգված՝ վորքան կարելի յե շուտով դուրս բերել «Յեռանդ» նավն այդ թունավոր վայրից։

Այդ «յերկնային արքայությունը» լիքն է վտառողջ գոլորշիացումներով, նեխված վարակով, մահվան հոտով։ Վոչ թշնամու ռումբերը, վոչ էլ ովկիանոսի փոթորիկները չեյին կարող համեմատվել այդ անողոք և ամեն րոպե հետապնդող մահվան հետ։

Յոթ հոգի մեռել եյին, քառասուն հիվանդ էլ իր հետ տանում էր «Յեռանդը»—Բատավիայից։ Նավն առաջ էր շարժվում․ նրա վրա լսվում էր տնքոց ու զառանցանք․ նրա վրա տիրող անսովոր խաղաղ կյանքը սարսուռ էր ազդում։ Վտառողջ նավաստիները, նիհար ու գունատ դեմքերով, խոր ընկած աչքերով, աշխատում եյին թուլացած և հոգ տանում հիվանդների մասին։

Կուկը շարունակում էր պայքարել։ Նա ամեն տեսակ միջոցներ էր գտնում հիվանդության առաջն առնելու։ Բժիշկ չլինելը նրան ստիպում էր հասկանալ, թե ի՛նչը կարող էր հիվանդության առաջն առնել կամ թեթևացնել այն։ Ջրի մեջ կիտրոն եյին մրլում և նավանկուղում, վորտեղ պարենն եյին պահում, քացախ եյին շաղ տալիս։

Անցնում է մի ամիս։ Մի ամիս ևս և, յեթե հաջողակ քամի լինի, նավը կհասնի Բարեհուսո հրվանդան։ Մինչդեռ մարում

էին կյանքեր, հիվանդանում էին տղաները, նավաստիները, զինվորները: Յուրաքանչյուր առավոտ նավապետին զեկուցում էին նոր հիվանդի կամ մահացածի մասին:

Գիշերները, յերբ նա դուրս էր գալիս հերթափոխությունն ստուգելու, տեսնում էր, թե ինչպես լապտերի աղոտ լույսի տակ շարժվում էին յերկու նավաստու ստվերներ. նրանք դժվարությամբ քարշ էին տալիս ինչ վոր ծանր բան. ապա լուռ ու մունջ, տարուբերելով, ձգում էին ծովը, և լսվում էր ջրի ճողփյունը: Այնուհետև ստվերները խաղաղ չքանում էին մթության մեջ: «Էլի մեկը»:

Մեկ ու կես ամսվա ընթացքում Բենքսի բարեկամներ Սպորինգը և նկարիչ Պարկինսոնը, սիրելի ու խոհուն Գրինը, յերիտասարդ Մոնքհաուզը,—այն մարդը, վորը Նոր Հոլանդիայի ափերի մոտ բոլորին փրկեց կատարյալ կործանումից,—հին բոցմանը, հյուսներից մեկը, յերկրորդը, խոհարարը, վուշագործը, կրտսեր յենթասպան... «Մեկ, յերկու, յերեք... տասնհինգ, քսան, յերեսուն... Ո՞վ է մնացել. մեկ, յերկու, յերեք»... Նավը, վորպես մի ահագին մութ դիակառք, շարժվում է դեպի հյուսիս. նա իր հետ արտասուքների և անսահման վշտերի մի «թեթև» բեռ է տանում դեպի հայրենիք—մայրերի, կանանց, բարեկամների համար:

Մարտի 15-ին մոտենում են Բարենհուսս հրվանդանին:

Կրկին պետք է բանակցել նահանգապետի հետ, կրկին թույլտվություն խնդրել հիվանդներին ափ իջեցնելու և նոր մահ տեսնելու: Տաղտկալի և զուր անցնում է էլի՛ մի ամբողջ ամիս:

Յերբ «Յեռանդ» նավը հասնում է ս. Ելենա կղզու ափերը, լրանում է արևելքից դեպի արևմուտք կատարած ճանապարհորդության շուրջյերկրյա ուղին:

Նավահանգստումն էին Անգլիական Օստ-Ինդիական ընկերության տասներկու առևտրական նավերը և Պորտլենդ ռազմանավը: Նրանց հետ միասին կմեկնեն դեպի Անգլիա: Մեկնում են և ճանապարհորդության վեցերորդ օրը «Յեռանդն» սկսում է յետ մնալ: Նավի առագաստներն ու սարքը ուժասպառվել էին մարդկանց նման: Կուկը կանգնեցնում է «Պորտլենդ» նավը և

նավային ժուռնալն ու տղաների օրագրերը հանձնում նրա նավապետ Էլիոտին:

Տասներկու «փախստականներն» ավելի ու ավելի էին առաջ անցնում:

Թվում էր, թե «Յեռանդ» նավն այլևս ուժ չունի առաջ շարժվելու: Ահա «Պորտլենդ» նավն էլ չքացավ յերկնագույն հորիզոնում:

Նավասենյակում Կուկի մոտ տենդից մահանում էր առաջին լեյտենանտ Հիքսը: Մի շաբաթ անց, Հիքսի փոխարեն նշանակված Չարլզ Կլարկը նավաստիներին շարքի յե կանգնեցնում տախտակամածի վրա: Լեյտենանտ Հիքսի մարմինը դուրս են բերում և ծովը ձգում:

1771 թվի հունիսի տասներկուսին Կուկը Դիլում, վոտք է դնում անգլիական հողի վրա:

ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ՅԵՎ ԹՇՆԱՄԻՆԵՐ

Այս անգամ Անգլիան այնքան էլ հովվերգական չթվաց, վո՛չ էլ այնքան հմայիչ, ինչպես ընտանեկան բախտավորության առաջին օրերին էր, յերբ դրա շնորհիվ աշխարհը պատած էր սանտիմենտալ շղարշով: Ուրախալի յեր վերադառնալ Լոնդոն, լինել ընտանեկան օջախում, վորը պայծառանում էր կնոջ ժպիտով, մանուկների թոթովանքով: Ավագ տղան, Ջեկն արդեն ութ տարեկան էր: Ուրախալի յեր կրկին տեսնել բարեկամներին, վորոնք քիչ էին փոխվել այդ յերկու տարում: Սակայն ճանապարհին կրած փորձությունները և նվաճած փառքն ստիպում են ավելի ուշադիր դիտել շրջապատը, ավելի աչալուրջ նայել կյանքին, ավելի լուրջ գնահատել իրականությունը, ավելի խորն ուսումնասիրել կատարածը, շատ բան վերանայել և վերափոխել թե՛ իր մեջ և թե իր հարաբերություններում:

Ավելի առաջ տեղ հասած տեղեկագրերը, վոր ուղարկված էին Բատավիայից, աստղաբաշխական դիտողությունների փայլուն արդյունքները, խիստ արժեքավոր նյութերը, վոր հավաքել էին գիտնականները, Նոր Զելանդիայի հայտնագործումը, նրա նկարագրությունն ու քարտեզները, Նոր Հոլանդիայի կղզի

լինելու վերաբերյալ ապացույցները, վորով ջախջախված եր մեծամասնության հիպոթեզը, թե նա Հարավային Ցամաքի մի մասն ե, օրագրերը, վորոնք վկայում եյին նավի հմտորեն ղեկավարումը, նավապետի խիզախությունը, հնարագիտությունը և հոգատար վերաբերմունքը, սպաների և նավաստիների գնահատականները, վորոնց մեջ փառաբանված եր ղեկավարը,—այդ բոլորի շնորհիվ, Կուկը շուտով առաջին տեղն ե գրավում ծովագնացների և նավապետների շարքում, իսկույն նրա վրա յե բեվեռվում Յեվրոպայի ամբողջ գիտական աշխարհի, թագավորների, մինիստրների հայացքը, հազարավոր մարդկանց ուշադրությունը, վորոնք գրավվում եյին ճանապարհորդությունների և նոր հայտնագործած ցեղերի կենդանի նկարագրություններով: «Ամբողջ Յեվրոպան, վորը,—ինչպես գրում ե Կաստերը,—մեծ ուշադրությամբ հետևում եր նրա հայտնագործություններին, ահագին հետաքրքրությամբ կարդում եր այդ մասին ընդարձակ տեղեկագրեր»:

Գիտական ընկերություններում նրա մասին խոսում եյին այլևս վոչ թե վորպես «լավ մաթեմատիկոսի», այլ վորպես ականավոր աստղաբաշխի, Ծովակալության մեջ—վորպես փորձված նավապետի, հասարակության մեջ—հերոսի, հռչակավոր անգլիացու, իսկ պալատում—վորպես յեվրոպական բոլոր միապետների նախանձի առարկայի:

Ճարպիկ հրատարակիչները, վորոնք չարաշահում եյին քաղքենիների ճաշակը, շահի հոտն առնելով, գրախանութները լցնում են ճանապարհորդության վերաբերյալ զանազան չափի, արժեքի և ճաշակի կեղծած օրագրերով և նկարագրություններով: Գրքերի բորսան ձգտում եր գները բարձրացնել: Ահագին գումարներ եյին առաջարկվում իսկական օրագրերի համար: Կուկի բարեկամ դոկտոր Հաուքսվորթին,— վորն զբաղված եր նրա օրագիրը հրատարակության համար կարգավորելու գործով,— դեռ աշխատանքը չտեսած, առաջարկում եյին հազար ֆունտ ստերլինգ, մի գումար, վորն այն ժամանակվա համար հսկայական եր: Մի ինչ վոր անձ կարողանում ե ճարպկորեն ընդօրինակել «Յեռանդ» նավի վրա մահացած նկարիչ Սիդնեյ Պարկինսոնի

օրագիրը և լույս ընծայել շքեղ հրատարակությամբ, գրավյուրներով և քարտեզներով: Ընդօրինակող գրչակը չափից անցել եր և այնքան սխալներ արել, այնքան խեղաթյուրել փաստերը, այնքան շփոթել տարեթվերն ու թվական տվյալները, վոր կառավարությունն անհանգստացած լինելով արգելք ե դնում այդ գնայուն ապրանքի վրա:

Փառքը ծնել եր բազմաթիվ պաշտոններ և վաճառվող շողոքորթություն:

Պաշտոնական բարյացակամության շրջապատում շատ պարզ աչքի յեն ընկնում թշնամիների դեմքերը: Կառավարության դեմ օպոզիցիա կազմողը հողատեր արիստոկրատներն եյին: Նրանք թագավորի գաղութային «ձեռնարկությունները» համարում եյին իրենց շահերի կործանում, լավ գիտեյին Ծովակալության կողմից Կուկին տրված գաղտնի հրահանգների բովանդակությունը, վոր վերաբերում եր ամեն ինչի և առնչություն չուներ գիտության հետ: Դրանք այն գիտնականներն եյին, վորոնք զանազան փիլիսոփայական սիստեմների ու հիպոթեզների դիմակի տակ ծածկել եյին նույն այդ քաղաքական օպոզիցիայի դեմքը, օպոզիցիա, վորը ձգտում եր վիժեցնել լորդ-մինիստրների «գիտական» ձեռնարկումները:

Կուկի թշնամի բանակի այդ յերկու գլխավոր ուժերը, թեպետ և շատ ավելի թույլ եյին նրա «բարեկամներից», վորոնք բարձր դիրք ունեյին և՛ Ծովակալության մեջ, և՛ պալատում, այնուամենայնիվ քիչ արգելքներ չեյին հարուցում, վորոնց հաղթահարումն այնքան ել հեշտ չեր: Քաղաքական խմբակցությունները հայտնի ճանապարհորդին դարձրել եյին իրենց հարձակումների նշանակետ:

Գուցե, միակ իսկական բարեկամներ եյին մնում Պալիսերը (վորը Ծովակալության մեջ իրոք բռնում եր առաջին տեղերից մեկը), դոկտոր Հաուքսվորթը, Բենքսը և Սոլանդերը: Նրանք Կուկի հետ միասին անցել եյին նրա կյանքի ուղին, չեյին կրում իրենց վրա ամենաթույլ կեղծավորության բիծն անգամ, ընդհակառակը, նրա հայացքների ու շահերի պաշտպանությունն ապացուցել եյին ինքնազոհությամբ: Յեթե չլինեյին այդ չորսը, Կուկը բոլորովին միայնակ կմնար այդ ծախու զգացմունքների և

քաղաքական ինտրիգների խորամանկորեն հյուսված շրջապատում:

Զրպարտություններն ու անհիմն պատմությունները ծնունդ էյին առնում գիտնականների ընկերության շրջանում: Ծովակալության առաջին լորդի վերաբերմունքից վիրավորված Դելրիմպլն ընդմիշտ անբարյացակամություն է պահպանում դեպի Կուկն ու նրա բարձրաստիճան հովանավորողները: Օգտվելով ոպոզիցիոն կուսակցության ազդեցիկ դիրքից և նրան սիրաշահելով, պայքար է մղում Ծովակալության ծրագրած նոր արշավախմբերի պլանների դեմ և ամեն տեսակ սուտ ու սխալ միջոցներով ճգնում նսեմացնել, վոտնատակ տալ Կուկի հաջողությունները: Օգտվելով արշավախմբի բացակայությունից, նա ամեն կերպ աշխատում է նախօրոք վարկաբեկել այն: Օգտագործում է ամեն մի չստուգված լուր, ամեն մի բամբասանք և անմիջապես կազմում մի ամբողջ հատոր՝ հերքելու այդ գիտական արշավախմբի օգտակարությունը, մերկացնելու նրա աննպատակահարմարությունը: Մերթ գիտության բարձունքներից քննադատում, հերքում է Կուկի սկզբունքները, մերթ ընկնում է ամենաստոր ու նողկալի ստերի, սրախոսությունից զուրկ պամֆլետների գիրկը և այդպիսով ծաղրում Կուկին և նրա գիտնական պաշտպաններին: Մի շարք այդպիսի պամֆլետներ ուղղված էյին դոկտոր Հաուքսֆորթի դեմ, վորն ազնվորեն պաշտպանում էր իր բարեկամի կատարած ծառայությունները: Դելրիմպլն ագահորեն իր ձեռքն է գցում ամեն մի փոքր փաստ, վորն այսպես կամ այնպես կարող էր վնաս պատճառել ատելի «նորելուկի» հեղինակությանը: Նա հյուսում է բարդ ինտրիգներ, վորոնց վոստայնի թելերով պետք է պատեր Կուկի բոլոր բարեկամներին: Նա չէր կարողանում ներել Բեվլիսին, վորը Կուկի մասին դրական տեղեկություն էր տվել Թագավորական ընկերությանը: Չէր կարողանում ներել Հաուքսվորթին, նրա գրած գրքերի և տված զեկուցումների համար: Իր գիտական աշխատություններում ծաղրում է «լավագույն մեթամետիկոսի» չնչին հայտնագործությունները, «գյուղական բանվորի զավակին», վորը հայտնագործել է մի քանի կղզի և յերևակայում է, թե յերկրորդ Կոլումբոսն է: Իր հերյուրանքները հասցնում է այն աստիճանի,

վոր Կուկին մեղադրում է նավ ղեկավարելու անկարողության մեջ: Յերբ Անգլիայում լուր է ստացվում, թե Նոր Հոլանդիայի ափերի մոտ նավը լուրջ վնասվածքներ է ստացել, Դելրիմպլը վերսկսում է իր չարանենգ ու բորբոքված հարձակումները՝ «Յեթե 1770 թվի հունիսի 10-ին «Յեռանդ» նավը քիչ է մնացել վոր խորտակվի, ապա այդ տեղի յե ունեցել միայն և միայն նավի վատ ղեկավարման պատճառով»: Նա համառորեն պաշտպանում էր Հարավային Ցամաքի մասին պարզապես հնացած և խունացած հիպոթեզը, միայն թե Կուկին հակառակ լինի: Օգտագործելով իր դիրքն ու կապերը, աշխատելով սիրաշահել «խաղաղ» տրամադրված խոշոր հողատերերին, նա կառավարությունից պահանջում էր թույլ տալ Դե-Լա-Բոշի և Դյուկլո-Գյուվոյի՝ 1675—1753 թ. թ. և Բուվեյի՝ 1732 թ. հայտնագործած յերկրներում կազմակերպել հատուկ պետություն: Նա պնդում էր, վոր այդ յերկրները Հարավային Ցամաքի հյուսիսային ծայրամասերն են. ծրագրելով նոր ժողովուրդների կառավարման և բնական հարստությունների շահագործման ուտոպիկ-անմիտ պլանը, հաշվում էր այն օգուտները, վոր Անգլիան կստանա, յեթե արշավախումբ կազմակերպելը հանձնարարվի իրեն. խնդրում է, վոր իրեն նշանակեն արշավախմբի ղեկավար: Նամակներ է գրում լորդ-կանցլերին, օգտագործում է պալատում ունեցած կապերը, և իր նախանձոտ դիմումներում հասնում է այն աստիճանի, վոր նույնիսկ բարեկամները ծիծաղում են նրա վրա, նրա նախագիծը անվանելով «ամենավատ պետության լավագույն օրինակ»:

Դելրիմպլը միայնակ չէր: Նրա թիկունքում կանգնած էր գիտնականների հետադեմ մասը, վորը պարփակվել էր հին գիտության փոշոտ ավանդությունների մեջ, նորելուկներ և կարյերիստներ, վորոնք օգտագործում էյին ամեն մի միջոց՝ հասնելու գիտական աստիճանների և դիրքի, մինչդեռ դրա համար չունեյին վո՛չ իրավունք, վո՛չ գիտություն, վո՛չ էլ փորձ. Նրանց թիկունքում կանգնած էր նաև վաճառվող հրապարակախոսների մասսան, վորն իր գրիչը ծախում էր նախահեղափոխական ռեժիմի կողմնակիցների օգտին, նոր լուսավոր սկզբունք-

ների, նոր սոցիալ-քաղաքական հորիզոններ բացող կենդանի գիտական մտքի թշնամիների ոգուն:

Անգլիայում այդ ժամանակ տեղի էին ունենում քաղաքական խռովություններ և մինիստրական ճգնաժամեր: Վիլյամ Պիթը, վորին արժանացրել էին լորդի կոչում և կոմս Չաթամի տիտղոս, կորել էր իր կապը վիգերի հետ և կարճ ժամանակով կրկին իշխանության գլուխ անցել: Հիվանդության պատճառով նա կրկին հեռանում է պաշտոնից: Յերկիրը կառավարում է դուքս Գրաֆթոնը, վոր կողմնակից էր թագավորի արտոնություններն ընդարձակելուն և ձգտում էր թուլացնել կուսակցությունների ազդեցությունը: Ամերիկայում և Հնդկաստանում գաղութների տեր դարձած մետրոպոլիան աղքատանում էր. տորիների մինիստրությունը և հողատեր արիստոկրատիայի պառլամենտական օլիգարխիան քայքայում են յերկրի ֆինանսական սիստեմը: Քաղաքական կաշառակերությունը հասցրել էր ճգնաժամի: Պետական պարտքերը հասել էին հարյուր վեց միլիոն ստեռլինգի: Գրենվիլի մինիստրությունը դիմում էր արտակարգ միջոցների և վախ ներշնչում ոպոզիցիային: Նոր հարկերն ու տուրքերը խեղդում էին գաղութներին: Հաճախակի բռնկվում էին խռովություններ և ապստամբություններ: Ներմուծման տուրքերը բարձրացնելու հետևանքով, ամերիկյան գաղութներում խմորումը տարեց տարի ուժեղանում էր:

Տիրող կարգերի դեմ ընդհանուր դժգոհությունը սպառնալի չափեր էր ընդունում: Գեորգ III թագավորը, վոր հիվանդագին ցնորքներով էր տարված, ավելի շատ հոգ էր տանում Հաննովերյան տոհմի փառքի մասին, հղփացած էր ֆրանսիացիների վրա տարած հաղթություններով, յերևակայում էր, թե ինքը Յեվրոպայի առաջին միապետն է և իր համար անսահմանափակ իշխանություն էր պահանջում: Փարիզյան հաշտությունը, վոր դիվանագիտական գրությունների, պառլամենտական որենքների և թագավորական հրովարտակների թղթի վրա փայլուն տեսք ուներ, իրականության մեջ չէր արդարացրել հայրենասերների փառատենչ հույսերը: Կիսախելագար թագավորի «բարեկամները» քայքայել էին յերկիրը՝ անգլիական ժողովուրդը մատնելով քաղցի և աղքատության:

Համայնքների պալատի փայլուն հռետոր, նախկին լորդ-կանցլեր և պետական կնիքի հսկիչ, յոթնասունական թվականներից պետության գլուխ անցած լորդ Նորթը, վոր թագավորի սիրելին էր և տորի կուսակցության պարծանքը, դառնում է Անգլիայի բախտի տնօրինողը, Գեորգ III-ի խելագար ծրագրների հլու կամակատարը. նա մի գործիք էր արիստոկրատների ձեռքին, վորոնք պայքար էին մղում պառլամենտի սահմանադրական արտոնությունների և ժողովրդի իրավունքների դեմ:

Վորպես այդ քաղաքականության բնական արձագանք ուժեղանում է իռլանդական հեղափոխական միությունների գործունեությունը, վորը դեռ հնուց ուղղված էր կալվածատերերի, յեկեղեցու և Լոնդոնի ատելի կառավարության գործակալների ճնշումների դեմ, աճում է դժգոհությունն ու խմորումն ամերիկական վերաբնակիչների, ազատամիտ բուրժուազիայի և առաջադեմ մտավորականության մասսայի մեջ: Յերբեմն լսվում են խիզախ ձայներ, վորոնք պահանջում են սահմանել որինական կառավարչություն, անխախտ պահպանել սահմանադրությունը, հարգել մամուլի ազատությունը, վերացնել արտակարգ որենքներն ու տուրքերը, հեռացնել իշխանությունից հետադեմ մինիստրներին:

Լիբերալ թերթերը տպում են քաղաքական հանդուգն պամֆլետներ, վորոնք ուղղված էին կառավարության և պալատականների դեմ: Թագավորին վիրավորանք հասցնելու համար մինիստրական հրամանով ձերբակալված և Տաուեր բանտը նետված Համայնքների ստորին պալատի անդամ, « North Briton» լրագրի հրատարակիչ Ուիլքսի գործը դժգոհության մեծ փոթորիկ է առաջացնում: Դատարանն ստիպված է լինում արդարացնել ազատամիտ հրապարակախոսին, սակայն կառավարության հետապնդման պատճառով, նա մի առ ժամանակ մեկնում է Ֆրանսիա. վերադառնալուց հետո, կրկին ձերբակալվում է և բանտ նետվում, չնայած վոր յերեք անգամ ընտրվում է պառլամենտի անդամ:

Վաթսուն ութ թվականին « Public Advertiser »[1] լիբերալ ժողովածուի մեջ լույս են տեսնում «Յունիուսի Նամակները»,

1 «Հասարակական տեղեկատու»: Ծ. Հ.:

փայլուն լեզվով և խիզախ բովանդակությամբ: Երգիծաբանը իր թունավոր սլաքներն ուղղելով Գրաֆթոնի մինիստրության դեմ, հանդգնորեն մերկացնում է տորիական մինիստրի քաղաքականությունը, զայրանում ու չարությամբ ծաղրում է կառավարության գլուխ կանգնած մարդուն:

«Հայտնի մարդկանց[1] նախնիք համարվողների արժանիքները հետագա սերունդներին հնարավորություն են տալիս հասնելու ծայր աստիճան անառակության: Օրինակ, ձերդ վողորմածության նախնիները չեն թողել առաքինության վորևէ անհարմար օրինակ, նույնիսկ իրենց օրինական սերնդի մեջ, և դուք հաճելի հնարավորություն ունեք դիտելու ձեր տոհմի փայլուն անցյալը և տեսնելու, վոր տոհմային տարեգրքում չի պահպանվել առաքինության վորևէ հետք: Դուք, միլորդ, ձեր ծագման մասին ունեք շատ ավելի համոզեցուցիչ ապացույցներ, քան վորևէ ամուսնական փաստաթուղթ. կան բնավորության ժառանգական գծեր, վորոնց շնորհիվ այնպես պարզ է աչքի ընկնում հայտնի տոհմը, ինչպես և ցայտուն դիմագծերը: Կարլ I ապրեց և մեռավ վորպես կեղծավոր մարդ. Կարլ II-ն էլ յուրահատուկ կեղծավոր էր և արժանի յեր նույն եշաֆոտին[2]: Հարյուր տարի հետո, հանձին ձերդ վողորմածության, մենք տեսնում ենք նույն բնավորությունը հարություն առած և ամբողջացած: Մռայլ եք և յերկչոտ, անկրոն և ցոփ կյանքի տեր մարդ. դուք վարում եք Կարլ II-ի կյանքը, չլինելով բարի ընկեր և, թերևս, մեռնեք նրա հոր մահով, սակայն առանց նահատակի փառք ձեռք բերելու... Բոլոր յերկրներում էլ ժողովրդական մասսաները համբերող են մինչև վորոշ աստիճան...»:

Յունիուսի դեմ բանակռիվ մղող հետադիմական հրապարակախոսները պարտություն եյին կրում. հասարակական կարծիքն ամբողջովին խիզախ պամֆլետիստի կողմն եր: Յունիուսը հեղափոխական չեր: Նրա սահմանադրական հայացքներում արտացոլվում եյին լիբերալ բուրժուազիայի համոզմունքները, այն է՝ պետության արիստոկրատիկ ձևին տալ դեմոկրատիկ բովանդա-

[1] Լորդ Գրաֆթոնը իր ցեղը կապում եր Կարլ II թագավորի վորդու հետ: Ծ. Հ.:

[2] Գլխատման գործիք: Ծ. Թ.:

կություն: «Public Advertiser»-ի բազմաթիվ ընթերցողներն անհամբեր սպասում եյին Յունիուսի նոր «Նամակներին»: Լորդ Գրաֆթոնը ստիպված եր հեռանալ պաշտոնից: Չարախինդ ռեակցիան, բոլոր իր թշնամիներին, նույնիսկ լորդ Չաթամին, պամֆլետի հեղինակ կասկածելով, իր բարկությունը թափում է ժողովածույի հրատարակիչ Վուդֆոլի վրա: Օգտվելով թագավորին ուղղած Յունիուսի դիմումից, Վուդֆոլին դատի յեն տալիս մյուս հրատարակիչների հետ միասին, վորոնք արտատպել եյին նամակը, և բանտն են ձգում: Նամակների հաջողությունն է՛լ ավելի յե աճում: Տուն չկար, վորտեղ չկարդային Յունիուսին: Անհայտ հեղինակի խորհրդավորությունը հետաքրքրություն եր բորբոքում:

Կուկը ուրիշների հետ միասին կարդում և համակրում եր խիզախ խոսքերին:

«Ձեր ամբողջ կյանքի դժբախտությունը, կառավարության դեմ ուղղված բոլոր պարսավանքների, ինչպես նաև նրա հետ պատահած բոլոր չարիքների գլխավոր պատճառն այն է, վոր դուք յերբեք չեք ունկնդրել ճշմարտության ձայնին, մինչև վոր պատեհություն չի յեղել լսելու այն հենց ժողովրդի բերանից...»

Յունիուսը չի վախենում ուղղակի թագավորի յերեսին ասել իռլանդացիների, ամերիկյան գաղութների, սպառնացող ըմբոստությունների մասին սառնեցուցիչ ճշմարտություններ:

«... Անունների սոսկ տարբերությունը չի կարող յերկար ժամանակ մոլորեցնել մեզ: Ստյուարտների անունը մեր արհամարհանքն է գրգռում միայն. սակայն նրանց սկզբունքները, զինված լինելով միապետի իշխանությամբ, մեզ համար դառնում են սարսափելի: Միապետը Ստյուարտների արարքներն ընդօրինակող պետք է նախազգուշացվի հենց Ստյուարտների օրինակով և յեթե պարծենում է, թե թագի նկատմամբ իր վայելած իրավունքները հաստատուն են, ապա չպետք է մոռացության

տա, վոր յեթե մի հեղափոխություն նրան այդ թաղն է պարգևվել, մյուսը կարող է յետ խլել...[1]

Յեվ իրոք, Անգլիան ամենևին հովվերգական չեր:

Դեռևս առաջին որերին Կուկին լուր են բերում այն մասին, վոր Դելրիմպլը դավեր է նյութում, վոր թագավորական ընկերության մի քանի անդամներն անբարյացակամ վերաբերմունք են ցուցաբերում, և վոր իր անունը պաշտպանելու համար ձանձրույթով պետք է հանդես գա ինքն անձամբ: Ծառայության պատրաստ յերկրպագուները չողոքորթության խունկ եյին ծխում, ձանձրացնելով դատարկ հարց ու փորձերով, անմիտ խոսակցություններով: Իսկական բարեկամներն զգուշացնում եյին խույս տալ ավելորդ արտահայտություններից, նրան սովորեցնում եյին սալոններում և ժողովներում ընդունված, սակայն նրա համար դժվարին, նրան վոչ հատուկ և ատելի դիվանագիտական վոչ անկեղծության գիտությունը: Մատնանշում եյին Ծովակալության կամ թագավորական ընկերության այս կամ այն անձը, վորը, նրանց կարծիքով, վտանգավոր եր: Պարզվում եր, վոր այն մարդիկ, վորոնք իրենց ծագման կամ բարձր դիրքի համար արժանացել եյին Կուկի վստահությանը, վոչ այլ ինչ եյին, յեթե վոչ խարդախ, բամբասող, նախանձ և կարյերիստ:

Առաջին իսկ որից ստիպված եր պայքար սկսել՝ պաշտպանելու իր հայացքներն ու համոզմունքները, վոր ձեռք եր բերել յեռամյա ճանապարհորդության ծանր փորձով: Պետք եր առաջ շարժվել անբարյացակամության ու խութերի մոտով, ամեն մի բոպե վտանգ զգալով, թե կփշրի իր նավը նախանձի, բամբասանքների և քաղաքական ինտրիգների ալիքների տակ ծածկված ժայռով:

---

[1]) Ջոն Թայլորի հետազոտությունները «Յունիուսը հայտնի և կենդանի անձնավորություն է» գրքի մեջ (1916) ապացուցել են, վոր «Յունիուս» անվան տակ ծածկված է յեղել պառլամենտի անդամ, Պիթտի քարտուղար Ֆիլիպ Ֆրենսիսը:

Յունիուսի նամակների ժողովածուն տպագրված է յեղել «Public Adv.»-ում 1772 թվին: Հետագա հրատարակությունները յեղել են 1797 1812, 1813, 1822, 1850 և 1873 թ. թ.: Այդ նամակները թարգմանված են շատ լեզուներով, բացի ռուսերենից: Միայն «Պարբերական մամուլն Արևմուտքում» գրքի մեջ (СПБ. 1904, եջ 418—426) համառոտակի շարադրված է նրանց բովանդակությունը: Ծ. Հ.

Ըստ Հոմերոսի յերկիրը ովկիանոսով ողակված մի տափակ հարթ շրջան եր: Աշխարհի կենտրոնն եր Միջերկրական ծովը և Թրակիան՝ կղզիների արշիպելագով. ծովում Կիպրոսն է և Կրետեն: Ծովի մյուս ափին Յեգիպտոսն է՝ Նեղոսով, վորը Փյունիկիան անջատում է Լիբիական անապատից: Նրանից հարավ, աշխարհի ծայրին՝ անհայտ յեթովպացիների և պիգմեյների ցեղերն են: Ովկիանոսի մուտքի մոտ հսկում են Սկիլլայի և Խարիբդեյի անառիկ ժայռերը. Սկիլլան և Խարիբդեն, հավերժահարսեր են, վոր աստվածների բարկության հետևանքով քար են դառել:

Հերոդոտը, վոր մեր տարեթվից առաջ, V դարի կեսերին հետևում եր փյունիկեցիների ուղևորություններին, Արաբիան բաժանում է Լիբիայից, բացվում է դեպի ովկիանոս տանող անցքը, գծում է քարտեզի վրա Եվքսինյան Պոնտոսը, Կովկասը, Սկյութիան և Յեվրոպայի լեռները, գծում է Բորիսթեն, Տանայիս, Տիգրիս և Յեփրատ գետերը և ցամաքն ընդարձակում է մինչև Հնդկաստան:

Պտղոմեոսը, մեր տարեթվից մի դար առաջ, առաջինն է լինում, վոր քարտեզի վրա անց է կացնում աշխարհագրական աստիճանացանցը և հստակորեն նշանակում Միջերկրական ծովի յերկրները. հյուսիսում ցամաքը հասցնում է մինչև Սկանդինավյան թերակղզու ափերը, արևելքում՝ մինչև Չինաստան, նրանից դեպի հարավ, Հնդկական ովկիանոսը պարփակում է անհայտ Հարավային Ցամաքով՝ միացած Յեթովպիայի և Լիբիայի, այն է՝ Աֆրիկայի հետ:

XVI դարի վերջում Որտելիուսը,—ճիշտ գծելով Յեվրոպան, Աֆրիկան, Հնդկաստանը և Չինաստանը,—նշում է նաև Ամերիկայի հարավային և հյուսիսային մասերը, Ճապոնիայի կղզիները, Հնդկական ովկիանոսը, Ֆիլիպինները, սակայն անորոշ, տափակ է թողնում Ասիայի, Ռուսաստանի և Սկանդինավյան թերակղզու հյուսիսը: Հրո Յերկիրը նա պատկերացնում եր վորպես Հարավային Անհայտ յերկրի հյուսիսային ծայրը. իսկ այդ

ցամաքը բռնել է ամբողջ հարավային կիսագունդը՝ մինչև Այծեղջեր (հարավային) արևադարձը:

XVII դարում հոլանդացիները կատարելագործում են քարտեզները:

Աստղագետ Կասինին կազմում է աղյուսակներ, վորոնց միջոցով չափում են աշխարհագրական յերկայնությունները: Մերկատորի քարտեզների շնորհիվ նավերը կատարում են շուրջյերկրյա ճանապարհորդություններ: Աշխարհագրական աստիճանացանցը վերջնականապես գործածությունից դուրս է մղում կողմնացուցային «վարդերը»: Հյուսիսը քարտեզի վրա նշանակում են վերևում և վոչ թե ներքևում, ինչպես այդ անում եյին միջին դարերում: 1648 թվին Պասկալի հնարած ծանրաչափը հնարավորություն է տալիս նախատեսելու փոթորիկներն ու խաղաղ յեղանակները: Բաֆֆինը և ռուս ծովագնացներ Բերինգը, Լոժկինը և Պերմյակովը ճանապարհ են բացում հյուսիսային բևեռային շրջանագծից հյուսիս: Միայն հարավային կիսագունդն է, վոր մինչև XVIII դարի վերջը մնում է անորոշ, սպիտակ, խորհրդավոր « Australia Incognita»-ն:

Դեռևս մարտ ամսին Բարեհուսո հրվանդանից Կուկը նամակ էր ուղարկել Թագավորական ընկերությանը, իր գրությանը կցելով Հարավային ծովի մակընթացությունների և տեղատվությունների աղյուսակը, վորը նա կազմել եր «Յեռանդ» նավի վրա կատարած դիտողությունների համաձայն: Այն ընդարձակ տեղեկագիրը, վորը ներկայացրել եր ճանապարհորդությունից վերադառնալուց հետո, Թագավորության ընկերության խորհրդի կողմից ընդունվել եր վորպես արժեքավոր գիտական աշխատանք: Արեգակի սկավառակի վրայով Վեներայի անցման վերաբերյալ ամենաճշգրիտ տվյալները հիմք եյին ծառայել Գրինիչի աստղադիտարանի աշխատանքների համար: Ժողովածուները և «հնդիկների» կենցաղի ու սովորությունների վերաբերյալ օրագրերը լույս են սփռում մինչ այդ խիստ վիճելի հարցերի վրա: Կուկի անցած ուղիները հնարավորություն են տալիս ճշտելու ովկիանոսների քարտեզները, առասպելական Հարավային Ցամաքը յետ շպրտելով ե՛լ ավելի հեռու, դեպի բևեռ: Քարտեզի սպիտակ մասերը լցվում են ջրերով կամ կղզիներով: Յերկրի աշ-

խարհագրական պատկերացումը կրկին զգալիորեն փոփոխվում է:

Հարավային Ցամաքի հարցը քննության և վիճաբանությունների նյութ է դառնում Թագավորական ընկերության և Ծովակալության նիստերում: Կուկն իր տեղեկագրերով փայլուն կերպով ապացուցում է առաջադրվող հիպոթեզների սնանկությունը: Դելրիմպլի և նրա կողմնակիցների ծիծաղաշարժ թեորիաները ջախջախված եյին վերջնականապես: Սակայն դրանով դեռևս չեր լուծվում հարցը. Կուկը վոչ մի անգամ չի ժխտել Հարավային Ցամաքի գոյությունը. նա միայն այն եր ասում, վոր այդ ցամաքն, ըստ յերևույթին, կա, սակայն ինչ-վոր հեռու պետք է լինի, բևեռային շրջանագծից ե՛լ հարավ, սառույցներով ծածկված: Մինչդեռ նրա վրա ծիծաղում եյին: Գիտնականների խելամիտ մասը համաձայնվում եր նրա հետ և պահանջ դնում նոր արշավախմբով կազմակերպել նրա ղեկավարությամբ. գրավիչ հիպոթեզով տարված փիլիսոփաները հակվում եյին դեպի վորձով ստուգելու առաջարկը: Ծովակալության լորդերը, վորոնք միշտ էլ համակրությամբ եյին վերաբերվում Կուկին, Պալիսերի և այլ բարեկամների ազդեցության տակ, տեսնում եյին ռազմական արշավանքների կրկին բացվող հեռանկարները: Կրակոտ հայրենասերները յերազում եյին Մեծ Բրիտանիայի նորանոր հաղթանակների մասին: Գեորգ III քաջալերում եր միապետական դավերը և գրավվում եր գլխապտույտ մտքով՝ յերկու-յերեք նավով նվաճել հսկայական մի ցամաք, վորը նրան կտար մեծ փառք և հեքյաթային հարստություններ:

Ինչպես մի ժամանակ Լորդ Շելբուրնը կարողանում է նրան համոզել, վոր անհրաժեշտ է դեպի Ընկերության կղզիներն արշավանք կազմակերպել, այդպես էլ այս անգամ Ծովակալության առաջին-լորդ Ջոն Մոնտեգյու կոմս Սենդվիչն ապացուցում է Հարավային Ցամաքը հայտնագործելու համար նավեր ուղարկելու անհրաժեշտությունը: Չե՞ վոր բոլոր այլ թագավորների և յերկրների փառքը կնսեմանա Գեորգ III և Անգլիայի փառքի փայլուն շողերում: Դրանով վերջ է տրվում դժգոհների դավերին և արշավանք կազմակերպելու ինչպես և Կուկին ղեկավար նշանակելու հարցը լուծվում է թագավորական գրչի մի շարժումով:

Այդ դժվարին և պատասխանատու աշխատանքում սկսվում

էր ամենադժվարին մասը՝ նավերի ընտրությունն ու սարքավորումը, նավաստիների հավաքագրումը, Ծովակալության կողմից սպաների նշանակումը: Այդ բոլորն առաջ էր բերելու անխուսափելի վեճեր և դավեր միևնույն դերիմպլիականների կողմից, վորոնք պարտված էին միայն կիսով չափ և չէին ցանկանում անձնատուր լինել:

Կուկի առաջ ծառացել էր բարդ խնդիր՝ հաղթահարել այդ անտանելի արգելքները, ըստ հնարավորին խուսափելով դրանցից, վորպեսզի ամբողջովին նվիրվի հարկավոր աշխատանքին: Մինչդեռ հաղթահարելն անհրաժեշտ էր անպայման, քանի վոր այդ աշխատանքի նպատակը շատ էր հրապուրիչ և մեծ:

Առաջին ճանապարհորդության փորձը հիմք էր ընդունված բոլոր տեսակի պատրաստությունների համար: Առաջին հերթին Կուկն զբաղվում է նավերի ընտրությամբ (վորոշված էր արշավախմբի համար վերցնել յերկու նավ). այդ խնդիրը բավականին բարդ էր, քանի վոր գոյություն ունեցող նավերը հարմարեցված չէին նման ծովագնացությունների համար:

«Այդ նավը պետք է կառուցված լինի այնպես, վոր կարողանա հեշտությամբ մոտենալ ծովեզերքին. նա պետք է լինի այնպիսի մեծության, վոր հարկավոր դեպքում նորոգելու համար կարելի լինի նրան վստահորեն և հարմարությամբ թեքել կողքի վրա: Ռազմական նավերը, վորոնք իրենց վրա կրում էին քառասնական թնդանոթներ, ֆրեգատները, Օստ-Ինդիական ընկերության նավերը, առևտրական յեռահարկ մեծ նավերը, Հյուսիսում կառուցվող զանազան տեսակի նավերը և նույնիսկ ածխավաճառքի համար կառուցվող նավերը զուրկ են անհրաժեշտ առավելություններից: Վերջապես, հարկավոր է ընտրել ձևն ու չափը, վորոնց շնորհիվ փորձառու ծովագնացը կկարողանար էլ ավելի խիզախ ու հաջող կատարել իր ստացած հրահանգները»:

Ձեր կարելի հաշվի չառնել փորձառու նավապետի կարծիքը: Ծովակալությունը հրաման է արձակում գնել այն նավերը, վոր կմատնանշի Կուկը: Շրջագայելով նավահանգիստները, Հուլլում նա ընտրում է յերկու նավ, վորոնք կառուցված էին «Յեռանդի» նման և նույն վարպետի ղեկավարությամբ: Մեկը, վոր չորս հարյուր վաթսուն յերկու տոնն տարողություն ուներ, անվանում են «Վճռականություն» («Resolution»), իսկ մյուսը, վոր յերեք հարյուր վաթսուն տոնն էր, «Ձեռնարկություն» («Adventur»): Դեպֆորթի և Վուլվիչի նավահանգիստներում սկսում են այդ նավերը կահավորել, սպառազինել և սարքավորել:

1771 թվի նոյեմբերի 28-ին Կուկը նշանակվում է «Վճռականություն» նավապետ՝ թագավորական նավատորմի հրամանատարի և արշավախմբի ղեկավարի աստիճանով: Նավապետ Ֆյուրնոն, վորը յեղել էր հեռավոր ծովագնացություններում, նշանակվում է «Ձեռնարկություն» նավի վրա: Կուկի հրամանատարության տակ կար հարյուր տասներկու մարդ, դրանցից քառասուն հինգը նավաստի, իսկ տասներկուսը՝ զինվորներ: Ֆյուրնոյի հրամանատարության տակ — ութսուն մեկ մարդ, վորից՝ յերեսուն յերեքը նավաստի, ութը զինվոր: Նրանք բոլորն էլ նշանակված էին Ծովակալության կողմից՝ Կուկի ընտրությամբ. Կուկը նրանց ճանաչում էր նախորդ ծովագնացությունների ժամանակվանից, բացի տասը կամավորներից, վորոնք մասնակցում էին արշավանքին հոժարակամ:

Կուկը պնդում է, և կոմս Սենդվիչն էլ նրան աջակցում է, վոր յերկու և կես տարվա համար տրվի լավագույն սարքավորումը և կենսամթերքների պաշարը: Առաջին ճանապարհորդության փորձն ստիպում է առանձին ուշադրություն դարձնել բարելավելու սնունդը և նավերին հայթայթելու հակալնդախտի միջոցներ, այսինքն թթու կաղամբ, մանանեխ, տաբլետներով բուլյոն, գազարի մարմելադ, գարեջրի խաշ, գարեջրի հյութ, գարեջուր և այլն: Վարսակը փոխարինել էին ցորենով, իսկ բուսական յուղը՝ շաքարով:

Կուկը միշտ էլ հետաքրքրվում էր լնդախտի դեմ պայքարելու հարցով: Իր օրագրերում և տեղեկագրերում նա մեծ տեղ է հատկացնում այդ հակամիջոցների պատրաստման, գործադրության, նրանց ներգործության ու պահպանման մանրամասն նկարագրությանը:

Յուրաքանչյուր նավի տրվում է մեկ հատ քսան տոննանոց առագաստային նավակ՝ հետախուզումներ կատարելու և մարդկանց փրկելու համար: Բառնում են նաև ձկնորսական պարագաներ՝ սովի դեպքում օգտագործելու համար:

Կուկն աշխատում ե առավոտից մինչև ուշ գիշեր: Նա ինքն անձամբ ե ղեկավարում նավերի սարքավորումն ու բեռնավորումը: Հետևելով ամեն մի մանրամասնության, նա աշխատում եր կատարելագործված դարձնել իր նավերը, վորպեսզի հարմար և դիմացկուն լինեն ամեն տեսակի պատահարի ժամանակ: Ուշադրություն տալով աշխատանքներին, նա հաշվի յե առնում ամեն մի մանրամասնություն և ստուգում առաջին ճանապարհորդության փորձով:

Կուկի հարաբերությունները Ծովակալության առաջին լորդի հետ արտաքուստ շատ լավ եյին: Կոմս Սենդվիչը լուսավորված արիստոկրատ եր, Կարլ II սիրելի ծովակալի սերնդից, ճանապարհորդ եր, ազատամիտ-հնագետ, ականավոր դիվանագետ, վոր մասնակցել եր Բրեդի և Ախենի վեհաժողովներին. պետական գործերից ազատ ժամանակ զբաղվում եր Իտալիայում, Թուրքիայում և Յեգիպտոսում կատարած իր ճանապարհորդությունների նկարագրությամբ, Կուկին հովանավորում եր իր ազնվական ծագման և պաշտոնական դիրքի բարձունքներից: Զբաղվելով գիտություններով և գեղարվեստով, ազատամտություն անելով, նա այնուամենայնիվ կողմնակից եր օրինականության, խստիվ պահպանում եր արիստոկրատիայի արտոնությունների աստիճանականությունը, լավ իմանալով, թե ինչը կարելի յե թույլատրել ստորադրյալների հետ հարաբերություն ունենալիս, նույնիսկ յեթե նրանք սովորական մարդիկ չլինեյին: Կուկը նման չեր անգլիական նավատորմի այլ ծովագնացներին. նա հայտնի յեր հայտնագործության և ծովագնացության ասպարեզում կատարած ծառայություններով, գիտական աշխատանքներով, իր անունով, վորը հռչակ եր ստացել թե' Հին և թե' Նոր Աշխարհում: Թագավորն ինքը պարծենում եր, վոր այդպիսի հպատակ ունի. սակայն առաջին ճանապարհորդությունից վերադառնալուց հետո, յերբ Կուկը նշանակվում ե թագավորական նավատորմում և խնդրում ե իրեն տալ կապիտանի աստիճան, կոմս Սենդվիչը մերժում ե, ասելով, վոր դա կարգի խախտում ե և հակասում ե ծովային ծառայության օրենքներին. նա Կուկին ներկայացնում ե հրամանատարի աստիճանով, թեպետև տարբերությունը միայն անվանական եր:

Կուկը նեղացել եր: Կենսագիրը բացատրում ե այդ նրա ազնվությամբ. «Իր արժանիքների մաքուր զգացումով նա բավարար չափով վարձատրված չեր համարում իրեն: Կուկը ռազմանավերում եր մեծացել, ուստի և նշանակություն եր տալիս աստիճանին, վորը մեծ տեղ ուներ նրան շրջապատող հասարակության աչքում: Լինելով իր ժամանակի և իր շրջապատի մարդ, նա այդ մերժումը ստորացուցիչ եր համարում: Այդտեղ կար նաև դեպի արիստոկրատը տածած հակակրանք, վոր նա աշխատում եր թաքուն պահել, և վիրավորված ինքնասիրություն, վորը միշտ ել մասամբ տուժում եր, միշտ զգայուն եր անբարյացակամության ամենափոքր նշանի դեպքում:

Սակայն կոմս Սենդվիչն ել, վորը տարված եր արշավանքի պլաններով և, նախազգալով, վոր ճանապարհորդության հաջողության դեպքում իր անունն ել հռչակվելու յե մասնակիցների անվան հետ, նույնպես ամեն կերպ աշխատում եր հոգ տանել նավերի սարքավորման մասին: Հաճախում եր նավաշինարանները, միջնորդում եր սպաներ և գիտնականներ նշանակելու մասին, գործադրում եր իր դիվանագիտական տաղանդի և իր բարձր դիրքի ամբողջ ուժը: Նա Ծովակալության մեջ պնդում ե, վոր Կուկի հետ ուղարկվի նաև նկարիչ Վիլյամ Հոջսը և աշխատում եր արշավանքը կազմակերպել լավագույն կերպով, ծովային տեխնիկայի և գիտական նվաճումների վերջին խոսքով:

Նույնիսկ վիրավորված Կուկն իր օրագրում նշում ե կոմսի ջերմ վերաբերմունքը. «Միլորդ Սենդվիչը բարեհաճել ե ուշադրությամբ հետևել արշավանքի կազմակերպման գործին. Նա ժամանակ առ ժամանակ այցելում եր նավերը, անձամբ տեսնելու, արդյոք, կատարում են նրա մտադրությունները և բավարարված ե՞նք, արդյոք, մենք»:

Թագավորական ընկերության դիմումի համաձայն, պառլամենտը մեծ գումար ե բաց թողնում գիտական աշխատանքներ կատարելու և հավաքածուները լրացնելու համար: Բնական գիտությունների պրոֆեսոր Յոհան Ռայնհոլդ Ֆորստերը և նրա վորդին, աստղաբաշխներ Վիլյամ Ուելսը և Վիլյամ Բեյլին արշավախմբի մեջ եյին նշանակված Թագավորական ընկերության և Աստղաբաշխական դեպարտամենտի կողմից, վորոնք մասնա-

կարարել էին նոր գործիքներ, Կենդալի և Առնոլդի ծովային ճշտիվ խրոնոմետրներ (ժամանակաչափ)։

Կուկը գոհ էր կատարված ընտրությամբ։ Վարրինգթոնի պրոֆեսորի գիտնականությունը նրան վաղուց հայտնի էր։ Այդ տարօրինակ մարդու մասին շատ հետաքրքիր լուրեր էին տարածված և միաժամանակ բոլորն էլ միաձայն պնդում էին, որ նա ականավոր փիլիսոփաներից և հռչակավոր նատուրալիստ Լիննեյի աշակերտներից մեկն է։ Ֆորստերի «տարօրինակությունն» այն էր, որ նա աչքի էր ընկնում անսովոր դյուրագրգռությամբ և ծայրահեղ ինքնասիրությամբ. դրա շնորհիվ նա անհամար, երբեմն ծաղրական դրության մեջ էր ընկնում, անդադար ընդհարումներ էին տեղի ունենում նրա և այլ անձանց միջև, որոնցից նա կախումն ուներ իր պաշտոնում։ Նրա գիտնականությունը շատ մեծ էր։ Լինելով Կուկին հասակակից, նա կատարելապես տիրապետում էր տասնյոթ լեզուների։ Լինելով պաստոր, նա տեղ էր գրավել իր ժամանակի լավագույն աստվածաբանների առաջին շարքում։ Նա հռչակ էր ստացել, որպես Արևելյան Պրուսիայի բուսական աշխարհի հետազոտող և նկարագրող։ Ռուսական ներկայացուցիչը Դանցիգում Եկատերինա II թագուհու անունից նրան հրավիրել էր Ռուսաստան, այնտեղ աշխատելու. 1765 թվից նա ուսումնասիրել էր Վոլգայի ստորին հոսանքի աշխարհագրական առանձնահատկությունները և այդ երկրի սոցիալ-տնտեսական դրությունը։ «Տարօրինակությունները» ստիպում են նրան տեղափոխվել Անգլիա, իսկ մեծ հռչակն ու գիտական աշխատանքներն արժանացնում են նրան Վարինգթոնի համալսարանի ամբիոնին։

Նրա որդի Գեորգը դուր էր գալիս Կուկին իր երիտասարդ խանդավառությամբ, աշխույժ մտքով և գիտության ծարավով։ Այդ ապագա գիտնականը, Կասսելի և Վիլնայի պրոֆեսորը, հեղափոխական էր և դարի վերջում մահանում է Փարիզում, որպես քաղաքական տարագիր։ Նա համակրանք է վայելում ծանոթության առաջին իսկ օրից։ Կուկը նրա մեջ տեսնում և զգում էր հոգու այն չարժող հատկությունները, որոնք մի ժամանակ կյանքում նրան հաղթանակներ են տվել, տեսնում էր այն կայծը, որ դրդում էր գիտությանը տիրելու, այն ուժը, որը

ջախջախում է արգելքները և տանում դեպի լուսավոր նպատակներ։

Այդպիսի ուղեկիցները հաջողության առաջին նշաններն էին։

Բուսաբանությունը, կենդանաբանությունը և մարդաբանությունը, որոնք իրենց ծագումով պարտական են բոլոր գիտությունների հայր Արիստոտելին, հորացել և մոռացության էին տվել միջնադարյան վանքերի աստվածաբանական դպրոցներում և սքոլաստների ճգնավորական ուղեղներում։ Ծագած լինելով IV դարում նախքան մեր տարեթիվը և I դարում, շնորհիվ Պլինիուս Ավագի աշխատությունների, դրանք աստիճանաբար թառամում են և իրենց խղճուկ գոյությունը քարշ տալիս ուղիղ մինչև XVI դարը։ Թեոֆրաստի և Թովմա Աքվինացու գիտական աշխատությունները միայն թույլ փորձեր էին բնական գիտությունները մեռյալ կետից առաջ շարժելու համար։ Դրանք նույն Արիստոտելի աշխատությունների թարգմանությունները կամ փոփոխություններն էին, որոնց մեջ դատողությունները հիմնված էին նույն «Առաջին Շարժիչ» գաղափարի վրա։

Միայն «Մեծ հայտնագործությունների դարաշրջանում», Հնդկական և Խաղաղ օվկիանոսներում կատարած հայտնագործությունների, փիլիսոփայական նոր հոսանքների ծագման և աստղաբաշխության բնագավառում նոր գյուտերի հետ միասին մեծ հետաքրքրություն է առաջանում նաև դեպի բնական գիտությունները։ Ճանապարհորդները, միսիոնարները, բժիշկներն սկսում են հավաքածուներ կազմել Հնդկաստանի և Ամերիկայի չտեսնված բույսերից. իրենց ճանապարհորդությունների օրագրերում նկարագրում են կենդանիների նոր տեսակները, մարդկանց նոր ցեղերը։ Իտալիայում, Հոլանդիայում և Ֆրանսիայում կազմակերպվում են բուսաբանական այգիներ։ Չտեսնված կենդանիներով լցվում են թագավորական գազանանոցները։ Հանդես են գալիս խոշոր նատուրալիստներ՝ Կոնրադ Հեսները — «գերմանական Պլինիուսը», չքավոր գիտնականը, որն ահագին հռչակ է ստանում հին լեզուներից կատարած թարգմանություն-

ներով, կենդանաբանության և բուսաբանության վերաբերյալ աշխատություններով և պրոֆեսորի կոչում ձեռք բերում Ցյուրիխում. Տուռնեֆորը,—որը վերջնականապես ապացուցում է յերկրի բուսական աշխարհի միակերպության վերաբերյալ միջնադարյան հասկացողությունների սնանկությունը,—գրում է «Բուսաբանության տարրերը» յեռահատոր աշխատությունը, վորի մեջ առաջին անգամն է բույսերը դասավորում ըստ տեսակների, և դնում բնական գիտությունների հետագա զարգացման հիմքը: Գիտությունների ակադեմիաներ և գիտական ընկերություններ են հիմնվում Փարիզում, Լայպցիգում, Բոլոնիայում, Ոքսֆորդում: XVIII դարի սկզբին հավաքածուներ սիրող ճանապարհորդները կազմում են ընտիր հերբարիումներ, իրենց աշխատանոցները զարդարում են սպիրտած կենդանիներով և միջատների հավաքածուներով: Պետրոս Մեծի թանգարանը սարսափ է ազդում ռուս հնադավաններին, վորոնք թքում և յերեսներն յեն խաչակնքում «հակաքրիստոնյա ցարի սատանայական փորձություններից». ցարը նույնպես մտադրություն ուներ ստեղծել իր Ակադեմիան:

Շվեդացի Կարլ Լիննեյը և ֆրանսիացի Ժորժ Լեկլերկ կոմս դը-Բյուֆոնը զարգացնում են բույսերի տեսակների մասին Տուռնեֆորի ուսմունքը, գործադրում են դասակարգման նոր սկզբունքներ և բույսերի ու կենդանիների ուսումնասիրությանն ու նկարագրությանը հաղորդում են ճշտություն, պարզություն և հստակություն: Այսպես, օրինակ, Լիննեյը գործադրում է տեսակների համար յերկյակ անվանացանկը (բինար նոմենկլատուրա), վորով պարզեցնում է ուսումնասիրությունը, նաև հիմնում է մի նոր սիստեմ, վորը գիտական աշխարհում առաջացնում է աշխույժ հետաքրքրություն, վիճաբանություններ, հանդիպական սիստեմներ, բոլոր յերկրների գիտնականների խոշոր գիտական աշխատությունների յերկար շարք: Բնական գիտությունները ձեռք են բերում լիակատար իրավունքներ:

Պատրաստությունները տևում են չորս ամիս, և միայն 1772 թվի ապրիլի 9-ին են նավերը դուրս գալիս Դեպֆորթից: Հար-



Լոնդոնի քաղաքի մասը

կավոր էր նախ գնալ Պլիմութ և այնտեղ ստանալ Ծովակալության հրահանգները: Ճանապարհին ուշանում են ռազմական սարքավորման պատճառով. բարձում են վառոդ ու թնդանոթներ, տեղավորում են զինվորներին: Պլիմութի նեղուցն են մտնում հուլիսի 3-ին, հանդիպում են կոմս Սենդվիչի նավին. կոմսը շրջագայում էր նավաշինարանները. Նրա հետ էր նաև Հյուգ Պալիսերը: Թնդանոթային 17 կրակոցով «Վճռականություն» նավը ողջունում է Ծովակալության առաջին լորդին:

Հրաժեշտ տալով բարեկամին և մի քանի ողորմածաբար տրված ցուցումներ լսելով ղեկավարից, որը գոհունակությամբ լի, զիջողաբար իրեն էր վերագրում նավերի փայլուն դրությունը, Կուկը նավերը տանում է Պլիմաթ: Զանազան ձևականությունների քաշքշուկները մի շաբթից ավելի ուշացնում են մեկնումը: Կուկն անգործ չի մնում: Նա համոզում է իր ուղեկիցներին ափ իջնել, գնալ դիտելու անագի հանքերում կատարվող աշխատանքները:

Դեռևս հին ժամանակներից, հազվագյուտ հանքի շնորհիվ, հռչակ էյին ստացել Կոռնվալլիսի մայլ ու լերկ բլուրները, որտեղ պահպանվել են դրուիդների քարե կառուցվածքների և միջնադարյան բարոնների դղյակների ավերակներ: Այդտեղ մնացել են բեկորներ յեկեղեցական սեղաններից, որոնք արյունոտվել են աստվածներին մատուցած մարդկային զոհերի արյունով, մնացել են ավերակներ ֆեոդալական ամրոցներից, որոնք իրենց շուրջը վասալների համար սով ու մահ էյին տարածում. մինչդեռ այդտեղ այժմ ծովից ծով աճել են արդյունաբերական ահագին ձեռնարկություններ, որոնք թանկարժեք հանքաքարը արդյունահանում են հարյուրավոր բանվորների ձեռքերով. բանվորները շաբաթական մի քանի շիլլինգով ահագին քանակությամբ վոսկի յեն հայթայթում իրենց տերերին, որոնք հայտնի յեն Լոնդոնի Սիթիյում և խաղաղ զբաղվում են ալատամտությամբ, բազմելով իրենց առևտրական գրասենյակների փափուկ բազկաթոռներում:

«Մենք բավարարեցինք մեր հետաքրքրությունը, և «Պոլդայնի ու Բենվիլնի» ահագին հանքերի տեսքը մեր մեջ առաջ բերեցին հիացմունք և բավականություն». այդպես է գրում Ֆորստերը:

Հուլիսի 13-ին, առավոտյան ժամը 6-ին «Վճռականություն» և «Ձեռնարկություն» նավերը խարիսխ են հանում և, անցնելով Եդիսթոնի հայտնի փարոսի մոտով, դուրս են գալիս բաց ծով:

Ինչպես չորս տարի առաջ, այժմ էլ նավապետը նույն ուղիով իր նավերը տանում է դեպի ովկիանոսային նենգավոր հեռուները, դեպի անհայտ յերկրներ ու ժողովուրդների մոտ, ընդառաջելով փոթորիկների ու ալեկոծությունների, զրկանքների ու հիվանդությունների, սպասելով առաջիկայում փայլուն հայտնագործություններ կամ հիասթափությունների մթնշաղեր, գուցե մահ, գուցե փառք, դեպի ծաղկած անանուն կղզիներ, դեպի համր ու սպիտակ տարածություններ, որոնք խորհրդավոր լռություն են պահպանում սառույցների տակ:

Քնքույշ ամուսինը, հավատարիմ ընկերը կրկին թողնում է իր հարազատներին, որոնց համար անհայտ է բաժանվելու ժամանակամիջոցը:

Հին Անգլիայի մգապատ լեռները յերկար ժամանակ կապտավուն տեսքով հրաժեշտ եյին տալիս հեռացող նավերին:

ՅԵՐԿՐՈՐԴ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ

«Ագարակատերերն ստանում են արտադրանքի միայն չորս տասնորդականը. արտադրանքի մեկ քառորդը նրանք վճարում են հողատերերին, մեկ տասներորդը՝ թագավորին, մեկ տասներորդը՝ հոգևորականությանը: Այդպես ուրեմն աշխատելով ուրիշների համար և ոգտվելով այդքան չնչին շահով, նրանք քիչ են բարելավում հողի մշակումը: Զնայած ճնշումներին, նրանք, այնուամենայնիվ, գոհ են և ուրախ: Նրանք թեթևացնում են իրենց աշխատանքը յերգերով. յերեկոները հավաքվում են զանազան խրճիթներից և պարում զիթառի նվագակցությամբ»:

Յերիտասարդ Ֆորստերը խնայում է իր օրագրի ընթերցողների զգայունությունը: Ճանապարհորդական գրքերի և սենտիմենտալ վեպերի սիրահարները կմորմոքվեն խեղճ գաղթականների վիճակի առթիվ,—որոնք ինչ-որ հեռավոր Մա-

դեյրա կղզում խաղողի վազեր են մշակում,—և կսրտաշարժվեն «գեղջուկների» ուրախ պարի գեղեցիկ տեսարանով՝ հեքյաթային բնության ծոցում, մրտենու, փշաթփերի ու վայրի վարդերի բանաստեղծական ստվերի տակ: Այդ զգույշ տողերի միջից ո՞չ կնկատի Մադեյրա կղզու բատրակների քրտինքն ու արյունը:

Գեղեցիկ են հնչում կղզու պորտուգալական կառավարիչների անունները՝ «կորեհիդոր», «պրովեդոր», վորոնք հանդիսանում են քրիստոսի միաբանության մեծ վարպետ՝ Պորտուգալիայի թագավորի գործակալները:

Կղզու վաթսուն հազար բնակչությունից հազար յերկու հարյուրը կաթոլիկ քահանաներ են, հարյուր տասնմեկը՝ Ֆրանցիսկյան վանականներ, յերեքհարյուրը՝ կույսեր—ութ վանքում ու կուսանոցներում: Յեպիսկոպոսը, վորն ստանում եր յերեք հազար ֆունտ ստերլինգ յեկամուտ, և նահանգապետը, կղզու քաղաքացիական և ռազմական ղեկավարը, վորը գանձում եր դրանից վոչ պակաս գումարներ,—հանդիսանում եյին տեղական բարձր իշխանությունը:

Մադեյրայի վողկույզների թանկարժեք հյութը հռչակել եր տվել կղզին ամբողջ աշխարհում: «Մադեյրական Մալվազիայի» անուշահոտ «վունքը» յուղալի թռչնեղենից կամ քիչ տապակած ռոստբիֆից հետո միատեսակ հաճույք է պատճառում և՛ հոլանդական վաճառականին, և՛ անգլիական լորդին, և՛ ֆրանսիական մարկիզին և՛ ռուս ազնվականներին:

«Գյուղական բնակիչների ժուժկալությունն ու չափավորությունը չափազանց է. Նրանք սնվում են հացով, սոխով, կամ այլ արմատներով և քիչ են միս ուտում: Նրանք մեծ ատելություն են տածում դեպի ապուրը. ասած կա չքավոր մարդու մասին. «նա սոխոված ապուր է ուտում»: Նրանք խմում են սովորական ջուրը և մի խմիչք, վորը նրանք պատրաստում եյին մզած խաղողի հետ ջուր խառնելով: Դրանից ջուրը դառն համ է ստանում, բայց այդ համը յերկար չի պահպանում: Նրանք հազիվ խմում են մի քանի կաթիլ գինի, վորը պատրաստում են իրենց ձեռքերով և վորը հռչակ է տալիս իրենց կղզուն: Խաղողի մշակությունը նրանց գլխավոր զբաղմունքն է: Քանի վոր արդյունաբերության այդ ճյուղը սակավ աշխատանք է պահանջում, ուս-

տի և նրանք տարվա մեծ մասը մատնված են անգործության: Ըստ յերևույթին, պորտուգալական կառավարությունն անհրաժեշտ միջոցներ չի ձեռք առնում յերկրի համար վտանգավոր այդ անհոգության դեմ: Վերջերս նա հրաման է արձակել ձիթենիներ տնկել այն շրջաններում, վորոնք խիստ չորային են և անհարմար են խաղողի մշակության համար. սակայն նա չի մտածել օգնություն հասցնելու հողագործներին և չի խոստացել նրանց վորևե վարձատրություն, վոր դրդեր հաղթահարելու դեպի նորույթներն ու աշխատանքը տածած ատելությունը»:

Դոն Անտոնիո դե Սան—Պերեյրան—Մադեյրայի նահանգապետը շատ սիրալիր վերաբերմունք է ցույց տալիս ճանապարհորդներին. կղզու վրա անցկացրած ամիսը հանգստի օրեր եյին: Ջրով ու գինով լցնում են պաշարը. Օգոստոսի 1-ին արշավախումբն առաջ է շարժվում: Կապույտ ծովախորշի ափին սպիտակ ամֆիթատրոնի նման տեղավորված հյուրասեր քաղաքի ծովեզերյա ամրոցներից թնդանոթային հրաժեշտ է տրվում:

Մի քանի օրից հետո, հեռվում յերևում են Կանարյան կղզիները—հին ժողովուրդների «Insulae fortunatae» վորոնք Կարթագենի վաճառականներից հետո մոռացության եյին տրված մինչև XVI դարը, յերբ իսպանական անվանի ծովագնացները կրկին գտնում են այդ «բախտավոր կղզիները»:

Կուկը նավերին ուղղություն է տալիս դեպի Կանաչ հրվանդանը: Ջրի պաշարը չի բավականացնի մինչև Բարեհուսո հրվանդանը. մինչև այնտեղ պետք է գնալ յերեք ամիս:

Ճանապարհը ծանոթ է և միապաղաղ ընթանում է արևադարձային բարեբեր խաղաղության պայմաններում: Գիտնականները դիտում եյին թռչող ձկներ, դելֆիններ, թռչուններ:

«Այդ միապաղաղ օրերին,—գրում է Ֆորստերը,—մենք անցկացրինք արևադարձերի միջև, վորտեղ յերկինքը, քամին ու ծովը միշտ ել լավ եյին և զուրեկան. մարդու ուշադրությունն եր գրավում ամենաչնչին պարագան, վորը կարող եր միտք զբաղեցնել»:

Յերկարատև [illegible] կայունության հետ է համեմատում ովկիանոսը, վորտեղ ուժեղ, մեծ ձկները՝ ծովի այդ ան-

սահման կառավարիչները կուլ եյին տալիս փոքրերին, ճնշված ստորադրյալներին։

Նավապետի դատողությունները այդչափ փիլիսոփայական չեն։ Նա իր ազատ ժամերին հոգ է տանում նավի անձնակազմի առողջության, կենսամթերքների պահպանության մասին, հորինում է ամեն տեսակի նոր միջոցներ՝ փրկելու խոնավությունից քրտնող և ժանգից փչացող մետաղե իրերը, ծուխ է տալիս նավը վառոդով, մաքրել է տալիս քացախով, փորձում է նոր յեղանակով զանազան հյութերից և ջրից գարեջուր պատրաստել։ Քամու ուղղության և ուժի, նավի ընթացքի վերաբերյալ կարճ նշումների հետ միատեղ, որագիրը լցնում է գարեջրի հյութի խմորման մասին գործնական դիտողություններով։ Գրությունների ժլատությունը վկայում է ժամանակի խնայողության, անդադար աշխատանքի, դեպի իր գործն ու անձը ցուցաբերած անշեղ խստության որեցոր ժամ առ ժամ դեպի իր գլխավոր նպատակն ուղղված, լարված ուշադրության մասին։ Որվա նկարագրություններն են—աշխարհագր. աստիճանների թվերը, նավի ընթացքի և ուղղության նշանները։ Բնության նկարագրություններն են—ծովեզերքի գծագրությունը, ծովախորշի խորությունը, ալիքի ուժը, ծովի հատակի հատկությունները։

Պորտո-լա-Պրայան Սանտ-Յագո կղզու նավահանգիստն է։ Կանաչ հրվանդանի արշիպելագը պատկանում է Պորտուգալիային։ Լիսաբոնի վաճառականները բուն են դրել զառիթափ ժայռի վրա, վորը պաշտպանված է ամրոցով։ Կանաչ հրվանդանի կղզիների առևտրական մենաշնորհը պատկանում է նրանց։ Բնիկները սակավաթիվ են, աղքատ և սոված։ Առևտրական ընկերությունը քամում է նրանց վերջին հյութը... «Այդ ընկերությունը ճնշում է բնիկներին և վաճառում նրանց ամենաանպետք ապրանքներ՝ ամենաթանկ գներով»։ Հաճախակի յերաշտը նրանց մատնում է մշտական սովի։ «Թվում է, վոր այդ դժբախտությունների փորձն արգելում է բնիկներին վայելելու ամուսնության բարիքը, և նրանք զգուշանում են իրենց զավակներին ժառանգություն թողնել աղքատության ու սովության սարսափները։

Կուկը խոժոռում է, տեսնելով մոխրագույն ու քարքարոտ ափերը, արեգակի խանձած, անհրապույր բլուրները։ Պահպանելով ավանդական քաղաքավարությունը, նահանգապետից թույլտվություն է խնդրում ջրի պաշար վերցնելու. բայց թնդանոթով վողջունում է միայն այն ժամանակ, յերբ պորտուգալական իշխանությունը հավաստիացնում է փոխադարձ վողջույնի վերաբերյալ։ Վաճառականական ամրոցը ատելություն է տածում և թնդանոթային տասնմեկ պայթյունին պատասխանում է ինը պայթյունով։ Նահանգապետը ներողություն է խնդրում և վըստահեցնում, վոր թյուրիմացություն է այդ։ Յերկու կողմն էլ բավարարվում են։

Պորտո-Պրայայից հետո սկսվում է ինն շաբաթվա նավագնացություն։ Վաթսունյերեք որ անընդհատ ջուր և յերկինք։ Տեղի եյին ունենում հորդառատ անձրևախառն փոթորիկներ, դրանց հաջորդում եր խաղաղ յեղանակ, վոր խեղդում եր անտանելի տոթով։ Ջերմաչափը կեսորին ցույց եր տալիս 79°—82°։ Վորսում եյին ձկներ, մրրկահավեր։ Նավաստիները զվարճանում եյին կապիկներով, վոր նրանք գնել եյին Սանտ-Յագոյում։ Ժամանակն անցնում եր դանդաղ, սպառնալով միապաղաղություն։

Կուկը շատ լավ գիտեր, թե ինչ է նշանակում արևադարձային գոտում նավարկել։ Նրան ծանոթ եր թունավոր շոգը, վոր մարդկանց սպանում եր տենդով, վարակում կենսամթերքները, տաղ բերում տրամություն, հայրենիքի կարոտ, և կոտրում մարդկանց կամքն ու համբերությունը։ Նա հիշում եր «Յեռանդ» նավի վերջին վերադարձը։ Արևադարձային գոտու խաղաղ յեղանակի տոթը հարյուրապատիկ սարսափելի յեր ամենաուժեղ փոթորկից։

Փորձը Կուկին սովորեցրել եր զգույշ լինել։ Բայց որագրի մեջ նավագնացության վերաբերյալ նշումներն ընդհատվում են տագնապալից մի գրանցմամբ. «Քսան յոթին մենք բանակցեցինք նավապետ Ֆյուրնոյի հետ. Նա մեզ հաղորդեց, վոր իր նավի վրա մահացել է կրտսեր սպաներից մեկը։ Այդ ժամանակ մեր նավի վրա վոչ մի հիվանդ չկար, թեպետ անձրևը, վոր տաք կլիմայում շատ հիվանդություններ է առաջացնում, մեզ մեծ անհանգստություն պատճառեց։ Մեր առողջությունը պահպանելու

համար համաձայն այն մի քանի դիտողությունների, վոր արել էյին սեր Հյուզ Պալիսերն ու Նավապետ Կեմփբելը,—յես ձեռք էյի առել բոլոր անհրաժեշտ նախազգուշական միջոցները. կարգադրում էյի ուշադրություն անել, նավը չորացնել, տախտակամածների միջև կրակ անել, ներսի սենյակները ծխել, անձնակազմին ստիպում էյի անկողինը դուրս բերել, սպիտակեղենը լվանալ և չորացնել ամեն հարմար առիթի: Այդպիսի նախազգուշական միջոցներն արհամարհելու դեպքում նավից վատ հոտ է գալիս, օդը փչանում է և հիվանդությունները անպակաս են լինում, առանձնապես տաք և խոնավ օրերին»:

Անգլիական նավատորմի նավապետներն ու միրքարուժները առիթ չեն բաց թողնում «Փանտոպյերին» ծաղրելու: Դեյրիմպլի գործակիցները ամենուրեք գինետների շրջանում ծիծաղում էյին Կուկի «բուժիչ գյուտերի» վրա, վոչ մի գործնական նշանակություն չտալով նրա փորձերին: Ինչ մի կարգին բան կարող է հորինել այդ «Թերուսը», վոր հավակնություն ունի բժշկագետներից ավելի գիտենալու:

Կուկը նավաստիների շրջանում խոշոր հեղինակություն ուներ: Նրա ճանապարհորդությունների մասնակիցների կամ ուսումնասիրողների վոչ մի գրության մեջ հիշատակություն չկա նավի անձնակազմի վորևէ ըմբոստության մասին, մինչդեռ նման ըմբոստություններ շատ հաճախ էյին տեղի ունենում այլ ծովագնացների նավերում: Աշխարհ տեսած նավաստիներն առաջին իսկ օրից ճանաչում էն, թե ո՞վ է իրենց հրամանատարը, և իսկույն վորոշում էն, թե ինչ վերաբերմունք պետք է ունենան նրա նկատմամբ: Լինում էյին, իհարկե, թույլեր, վորոնք ավելի հեշտ էյին յենթարկվում արտաքին անբարենպաստ պայմաններին, ավելի վատ էյին դիմանում նավարկության դժվարություններին, շոգին, կամ ցամաքի յերկարատև բացակայությանը: Սակայն միշտ էլ Կուկի հմուտ միջամտությունը ժամանակին վերջ էր տալիս այդ վտանգավոր տրամադրություններին:

Հոկտեմբերի 29-ին տեսնում են Բարեհուսո հրվանդանի մոտ Սեղանաձև լեռները:

XV դարի վերջին պորտուգալացի Բարթոլոմեոս Դիազը Աֆրիկայում գտնում է հին յեգիպտացիների հայտաբերած հարա-

վային հրվանդանը: Վասկո-դա-Գաման Հնդկաստան գնալու ժամանակ անցնում է նրա մոտով:

Հարյուր հիսուն տարի անընդհատ լեռնային ահագին զանգվածի ժայռոտ քիթը, անմարդաբնակ հրվանդանը մռայլ պահակի նման կանգնած էր յերկու ովկիանոսների սահմանագլխին,—դեպի Հնդկաստան տանող մեծ ճանապարհի ուղեդարձում, վորտեղից դուռ էր բացվում դեպի Արևելքի հարստությունները՝ հայտնագործությունների փառքի, նոր յերկրների նվաճման համար, կամ թե դեպի հայրենի յերկիրը—հարազատ օջախը՝ վտանգներից ու հիվանդություններից ապաստավելու համար, ովկիանոսային հոսանքների հանդիպման տեղում, վորտեղ արևելքից և արևմուտքից փչող քամիները, ընդհատվելով, առաջացնում են աղմկահույզ փոթորիկներ: Հարյուրավոր տարիներ փրկության փարոսը դիմավորել ու ճանապարհել է վաճառականների և նվաճողների նավեր, վորոնք ալեկոծված սրտով դիտել էն յեղել նրա գրանիտե մութ գագաթները: Պորտուգալիայի թագավորն անվանել է նրան Բարեհուսո հրվանդան, իսկ նավաստիները՝ Փոթորիկների հրվանդան:

XVII դարում հոլանդացի Վան-Ռիբեկը, վոր մասամբ բժիշկ էր, մասամբ վաճառական, այդտեղ հիմնում է գաղութ, հաշվի առնելով այն, թե ինչ օգուտներ կքաղի հոլանդական Ոստ-Ինդիական ընկերությունը և թե ինքը, յեթե այդտեղ ստեղծեն պլանտացիաներ և ցանքեր: Այդ ժամանակվանից այդտեղ առաջացել է ընկերության խոշոր նավահանգիստ, ընդարձակ քաղաք, ամրոց, կազմվել է հազար հինգհարյուրանոց կայազոր, չորս հազար հոգուց բաղկացած միլիցիոն բանակ, կա նահանգապետ՝ վարչական լրիվ հաստիքով. այդ մի վայր է, վորն առևտրական բազա յե հանդիսանում Միդելբուրգի և Բատավիայի միջև, և վորտեղ նավերը նորոգվում, հանգիստ են առնում, այդտեղ բուժվում են ծովագնացության անխուսափելի ուղեկից լնդախտից ու տենդից տառապող բազմաթիվ հիվանդներ:

Իր նավերն առանց վնասվածքի և կատարյալ առողջ մարդկանցով հասցնելով այդտեղ, Կուկն իր օրագրում պարծանքով գրում է հետևյալ տողերը.

«Հոլանդական Ոստ-Ինդիական ընկերության յերկու նավ

Մեդելբուրգից Կապշտադտ են հասնում մեկնից յերեք կամ չորս որ հետո: Դրանցից մեկի վրա չորս կամ հինգ ամսվա նավագնացության ընթացքում լնդախտից և զանազան վարակիչ հիվանդություններից մահանում է հարյուր հիսուն մարդ, իսկ մյուսի վրա՝ քառասուն մեկ: Ափ իջնելուց հետո, նրանք հիվանդանոց են ուղարկում մեծ քանակությամբ սոսկալի վիճակում գտնվող հիվանդներ: Պետք է նշել, վոր այդ նավերից մեկը Պորտո-Պրայա յեր յեկել մեկնից մի ամիս առաջ, իսկ Բարեհուսո հրվանդան եր հասել՝ մեկնից յերեք որ հետո»:

Առաջին փորձի հաջողությունը թևավորում է Կուկին և ապացուցում նրա բոլոր յենթադրությունների ճշտությունը: Թո՛ղ ծիծաղեն անգլիական բժիշկները, թող ցեխ շպրտի «մեծարգո» դոկտոր Դելրիմպլը: Վո՛չ վոք սարսափելի չէ, յեթե փորձը հաջողակ է: Դեմքի ի՞նչ արտահայտությամբ նրանք կտեղեկանան, վոր չորս ամսվա նավագնացության ընթացքում չի հիվանդացել և վո՛չ մի նավաստի:

Փռելով քարտեզը, Կուկը յերկարորեն դիտում եր Հարավային բևեռի մոտ այն բաց տարածությունը, վորն անվստահաբար գծված եր տատանվող գծով: Քարտեզագրի ձեռքը յերևակայությանն է ուժ տվել, յերբ գծել է հարավային կիսագունդը, վորովհետև քմահաճ կերպով ընդարձակել է անհայտ յերկրի խորհրդավոր սահմանները:

Գուցե Կուկին է վիճակված առաջինը գծելու անհայտ ցամաքի ափերը և իր նավերի անունով կոչելու նոր ծովախորշերը, խախտելու սառցապատ յերկրի համառ լռությունը:

Շտապեցնում եր նաև մի այլ հանգամանք. այդտեղի նահանգապետ բարոն Պլետտենբերգը հաղորդել եր, վոր ֆրանսիական յերկու նավ կես տարի առաջ հարավային լայնության 48°-ի վրա հայտնագործել են մի յերկիր և վոր «Ֆորտյուն» նավի նավապետն ուղարկվել է Ֆրանսիա՝ այդ հայտնագործության վերաբերյալ տեղեկագրերով[1]: Մարտ ամսին ֆրանսիական յերկու այլ նավ Մարիոն նավապետի հրամանատարությամբ կանգ են առել Բարեհուսո հրվանդանի մոտ և ապա ուղղվել դեպի հարավ՝ նոր յերկրներ փնտռելու համար:

Կուկին ալեկոծում եր մի միտք՝ իսկ յեթե ֆրանսիացիք առաջինը հասնեն Հարավային Ցամաք. աչքին յերևում եր մի դրոշ, վորը վոսկե շուշաններով և խարխախով ծածանվում է բարձր ժայռի վրա: Կուկը խնդրում է անգլիացի Բրանդտին, վորի տանը իջևանել եր, միջնորդել շուտափույթ կերպով կենսամթերքներ մատակարարելու համար: Սիրալիր հայրենակիցը, վոր հնուց Կապշտադտի բնակիչ եր, լավ ճանաչում եր ամեն ինչ և բոլորին, լավագույն հարաբերություններ ուներ տեղական իշխանության հետ, անմիջապես սկսում է փնտռել հարկավոր մարդիկ և ամեն կերպ աջակցում է արշավախմբի հայթայթման գործին: «Յերբ նա շտապ միջնորդություններ եր կատարում, այդ ժամանակ նավաստիները նորոգում եյին նավի սարքը, իսկ հյուսները խծծելով կալնում եյին նավի կողերն ու տախտակամածը»: Նոր ներկած նավերն այնպիսի տեսք ունեյին, ինչպիսին նրանք ունեյին Պլիմուտից մեկնելու որը:

Բնագետները ջերմորեն սկսում են իրենց «վորսը»: Յերկիրը լիքն եր կենդանիների և բույսերի նոր, հետաքրքիր, յերբեք չտեսնված տեսակներով: Գեորգ Ֆորստերը գանգատվում եր, վոր ժամանակի սղության պատճառով նրանք չեն կարողացել հետազոտել յերկրի խորքերը, վորտեղ կան այնպիսի խիստ հազվագյուտ կենդանիներ, ինչպես վիթն է և վայրի գոմեշը:

Գերմանացի, հոլանդացի և ֆրանսիացի գաղթականներն զբաղվում են հողագործությամբ՝ յերկրի տեր հանդիսացող հոլանդական Ոստ-Ինդիական ընկերության աննկուն հսկողության ներքո. այդ ընկերությունն է դատավճիռներ կայացնում և օրենքներ սահմանում: Արգելված եր բնակություն հաստատել իրարից մոտ տարածության վրա, հարկվում եյին ծանր հարկերով. ամեն կարգի արգելքներն ու սահմանափակումներն իջեցնում եյին տնտեսության արդյունավետությունը, գաղթական-

[1] Իվ Ժոզեֆ դե-Կերգելենը (1745—1797), ֆրանսիական նավատորմի այդ փոխ-ծովակալը ճանապարհորդություն է կատարել Խաղաղ ովկիանոսում և 1772 թվին հայտնագործել մի կղզի, վորը կոչվել է նրա անունով: Կերգելենն իր ճանապարհորդությունը նկարագրել է «Voyages dans les mers Australes et des Indes» գրքում (1782): Ծ. Հ.

ներին հնարավորություն չեյին տալիս կատարելագործել և զարգացնել հացահատիկների և խաղողի մշակությունը։ Ուռճանում եյին նահանգապետի գրպանները․ նա յուրաքանչյուր հարյուր գալլոն գինուց ստանում եր տասը դոլար, չհաշվելով ռոճիկը, բնակարանը, այգիները և այլն։ Նույնն եր նաև փոխ-նահանգապետը, խաղաղարարությամբ զբաղվող փաստաբանապետը, և այլ բարձր աստիճանավորները—խորհրդի անդամները, վորոնք կառավարում եյին յերկիրը։

Գեորգ Ֆորստերն այն կարծիքին եր, վոր յեթե յերկիրը պատկաներ Միացյալ Նահանգների Հանրապետությանը, կլիներ առատ և ծաղկած, մինչդեռ այդ հնարավոր չե ներկա պայմաններում։

«Վաճառականական ընկերությունն ավելի շատ շահ ստանալու համար բարվոք ե համարում, վոր ինքը տիրի այստեղի հողերին և գաղթականներին ամրացնի հողին, վորպեսզի նրանք շատ չհարստանան և շատ չուժեղանան»։

Բնիկ հոտենտոտները քշվում են յերկրի խորքերը․ նրանց մասին շատ քիչ բան գիտեն և քիչ են նրանցով հետաքրքրվում․ Բուշմենների ցեղերը, վորոնք թափառում եյին մոտակայքում, կիսավայրենի յեն, ապրում են վորսորդությամբ և գողությամբ։ Յեվրոպական գաղթականները նրանց իրավունք չեն տալիս պահել անասուններ, վորոնք մեծ քանակությամբ արածում եյին անծայրածիր մարգագետիններում։ Դրանք, նրանց կարծիքով, մարդիկ չեյին, այլ կիսանասուն, վոր պիտանի յեն միայն աշխատանքի համար։ Սոված վայրենին հաճույքով գնում եր ագարակատեր գաղթականի մոտ և դառնում նրա ստրուկը, դրստար, պահապան շունը, վոր պաշտպանում եր նրա հոտը, դառնում եր եժանագին բանվորական ուժ։ Գաղութի ամբողջ կյանքի առանցքն եր կազմում գինու և հացահատիկների առևտուրը, այդ մթերքների արտահանումը դեպի Բատավիա և Յեվրոպա։ Հոլանդական վաճառականը Կապշտադտի թագավորն եր․ նա յեր կարգավորում շուկայի գները, այսինքն այդ յերկրի ամբողջ կյանքը։

Մալայեցիները, բենգալացիները, նեգրերը, հոտենտոտները, տաք կղզիների և ցուրտ լեռների բնակիչները պետք ե յենթարկվեն խաղաղ նվաճողին, վորը նրանց հայրենի հողերն ե

խլել։ «Քաղաքակիրթված» յեվրոպացիների թնդանոթների ու հրացանների դեմ անզոր եր բնիկների փայտե վահանը։ Հոլանդական վաճառականներն իրենց հետ Կապշտադտ եյին բերել իրենց սովորությունները՝ կառուցում եյին աղյուսե տներ, անց եյին կացնում ջրանցքներ, դրանց ափերին տնկում ծառեր․ նրանք իրենց հետ բերել եյին նաև կրոնական անհամբերատարությունը։ Լյութերական քահանաներին արգելված եր կրոնական ծիսակատարությունը․ այդ պատահական կերպով կատարում եյին դանիական և շվեդական քահանաները, վորոնք գալիս եյին անցնող նավերով։ Իսկ հավատի և աշխատանքի սովորությունների հետ վո՛չ վոք գործ չունի․ դա մի դատարկ բան ե, վորի մասին չարժե նույնիսկ մտածել։

Բնագետները շրջագայում եյին մոտակա վայրերը, վորսում թռչուններ, բռնում ձկներ և մողեսներ․ Հոջը նկարում եր քաղաքի և հրվանդանի տեսարանները։ Կուկն առավոտից մինչև յերեկո հետևում եր նավաշինարանում կատարվող աշխատանքներին, անձնակազմի սնվելուն, կենսամթերք հայթայթելուն։ Հանգստի ժամերին նա այցելության եր գնում պաշտոնական անձանց և խոշոր վաճառականների մոտ, վորոնք ոտարերկրյա կապիտանին զվարճացնում եյին յերեկույթներով, պարերով և քնար նվագելով, մի բան, վորին լավ հմուտ եյին նրանց կանայք և աղջիկները․ զբոսնում եյին գեղեցիկ այգիներում, սարքում եյին փարթամ ընթրիքներ հրաշալի գինիներով, վորոնց վազկույները բերված եյին Պարսկաստանից, Բուրգունդիայից և Մադեյրայից։ Սակայն այդ պաշտոնական այցելություններն էլ կատարվում եյին, գլխավորապես, այն նպատակով, վոր արագացվեր մեկնումը․ այդ մարդկանցից եր կախված նավի նորոգումն ու պարենի մատակարարումը։

Յերեք շաբաթվա ընթացքում, վոր անց եյին կացրել այդտեղ հյուրասեր Բրանդտի ընտանեկան շրջանում, Կուկն ե՛լ ավելի յե մերձենում իր ուղեկիցների հետ։ Այդ գիտնականները, վոր իրենց կրթությամբ շատ ավելի բարձր եյին նրանից, զգում եյին նրա ընդունակությունների արտակարգ ուժը, գիտության հարցերում նրա անսովոր ինտուիցիան։ Նա ճշտիվ, համառոտ և պարզ կերպով արտահայտում եր իր մտքերը․ գիտությունը, վոր

ձեռք եր բերել ընթերցանությամբ ու փորձով, խորն եր և հիմնավոր: Գյուղական տղան, ածխահատ նավի սևաթաթախ յունգան աճել, մեծ մարդ եր դառել:

Կուկը հաշտ եր Ֆորստեր–հոր հետ, և չնայած պրոֆեսորի տարօրինակություններին, նրանց միջև վո՛չ մի անգամ տեղի չի ունեցել վորևե միջադեպ: Ըստ յերևույթին, փոխադարձ դյուրաբեկությունը բնավորությունը ղինաթափ եր անում նրանց. իսկ Կուկի անհրաժեշտ լինելն ու հմայիչ բարությունը հաղթահարում եյին կռվասեր գիտնականին: Դեպի գիտությունը տածած սերը կատարելապես հաշտեցնում եր նրանց, և դարձնում բարեկամներ: Յերբ Ֆորստերը Կապշտադտում հանդիպում ե Լիննեյի հռչակավոր աշակերտ դոկտոր Սպարմանին, նրան հորդորում ե, վոր Կուկը նրան էլ վերցնի իրենց հետ: Սպարմանը չվեղացի յեր, ուստի Կուկը սկզբում համառորեն հրաժարվում եր անգլիական նավի վրա օտարահպատակ մարդ վերցնել:

«Պարոն Ֆորստերը... վստահ լինելով, վոր նա իրեն չափազանց օգտակար կգտնվի ճանապարհորդության ժամանակ, համառորեն խնդրում եր ինձ, համոզելով, նավի վրա վերցնել այդ օտարերկրացուն: Յես համաձայնվեցի վերջապես և նա մեկնեց մեզ հետ, վորպեսզի օգնի պարոն Ֆորստերին նրա աշխատանքների ժամանակ...»

Նոյեմբերի 22–ին, կեսօրվա ժամը յերեքին նավը վերցնում ե խարիսխը: Ծովախորշում թնդում ե թնդանոթային հրաժեշտը: Ցերեկոյան դեմ դուրս են գալիս բաց ծով, վորտեղ սկսվում ե անձրև տեղալ և քամի փչել:

ԴԵՊԻ «ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՆՀԱՅՏ ՑԱՄԱՔԸ»

Թիվ	Հարավ. լայն.		Արևել. երկ.		[illegible]		Ջերմաչափ	Ծանրաչափ		Քամի, յերկինք. նմուշներ.
1772	0′		0′		0′		0′	P′		
Նոյեմբեր										
24	35	25	17	54			63½	29	10	Ամ-Հր.Ամ և Հ.-Ար.Յերկինքը պարզ.
25	37	15	16	35			64	30		Հ.-Ար. դեպի Ար. Զով հաջողակ քամի
26	39	40	16	23			69	29	80	Հ.Հս.Ար. Զով քամի յերկինքը ամպած
27	40	4	16	52	18	30	52	30		Հր-Հր.Լավ քամի.

Սա այն սովորական աղյուսակն ե, վոր կազմվում եր ճանապարհին օրեցօր: Առաջին գրքի եջերից մեկն ե, այն ծովի մասին, վորտեղ դեռևս չի յեղել վոչ մի նավ: Այն ծովը, վորը հայտնի աշխարհը բաժանում ե թերևս նոր, սքանչելի, հեկայական աշխարհից:

Զորս օրն անցնում ե հանգիստ: Մրրկահավերը լողում են նավի յետևից: Մի սպիտակ թռչուն աղահությամբ ընկնում ե կարթով ձգած մսի վրա և թրփրտալով, վորպես ծանր բեռ, կախ ընկնում կարթից:

Կուկը նախազգուշության համար նավաստիներին վաղօրոք տաք հագուստ ե բաժանում, արգելում լվացվել խմելու ջրով, պահակ դնում ջրի ամանի մոտ, հրամայում գործադրել Իրվինգի թորիչ մեքենան: Այդ աշխարհագրական լայնության վրա նավարկելու պայմանները վոչ վոքի հայտնի չեն: Պետք ե պատրաստ լինել ամեն տեսակի պատահարների: Աղյուսակի առաջին հանգիստ գրած տողերը չեյին կարող նկարեցնել փորձառու ծովագնացի զգաստությունը: «Լավ քամին» կարող ե փոխվել մեծ աղետալի անշարժության կամ փոթորկի:

Դեռ մի օր չանցած, կասկածները հաստատվում են. սկսվում ե չտեսնված փոթորիկ, տեղում ե անձրև ու կարկուտ, ալեկոծությունը թափահարում ե նավը: Տախտակամածի վրա, նավասենյակներում և նավանկուղներում կատարվում ե անսովոր բան՝ գլորգլոր տակն ու վրա յեն լինում տակառները, շշերը, ջարդ ու փշուր ե լինում ամանեղենը: Ալիքները կատաղությամբ թափվում են նավի վրա, նավը շպրտում վեր, նետում անդունդ, կրկին ընդգրկում և ծրագրած ճանապարհից շեղում, առաջ մղում հեռո՛ւ, հեռո՛ւ դեպի արևելք: Քամին հառաչում եր, սուլում, վոռնում: Անզոր տաշեղի նման նավը յերերվում եր փոթորկոտ ծովի վրա: Մրրկահավերի յերամները մեծ աղմուկով ճախրում եյին օդում, կարծես քամին եր նրանց քշել բերել, կարծես ագահորեն արյունաթաթախ վորսի եյին սպասում նրանք: Այդ աղմուկի հետ եր խառնվում նավանկուղներից հրնչող վողբը՝ վոչխարները, խոզերը և սագերը սատկում եյին կրարանցման և խավարի մեջ: Մարդիկ հազիվ եյին քայլում,

դողում էին ցրտից, քամու և անձրևի տակ: Քամին հանգցնում էր անզոր լապտերները և ձեռքերից վար ձգում:

Մի գիշեր նավի ցուկամասում գտնվող պահեստը ջուր է լցվում: Մթության մեջ չեն կարողանում իսկույն գտնել ծակված տեղը: Ջուրը դուրս են թափում պոմպերի միջոցով: «Բոլորին էլ,—գրում է Գեորգ Ֆորստերը,—տիրում է սարսափ, վորն ավելի յե սաստկանում գիշերվա խավարի շնորհիվ»:

«... Քամին ուղղությունը փոխում է դեպի Ամ. և Հար.—Ամ.,—գրում է Կուկը,—և 29-ին ուղղվելով դեպի Ամ. և Հս.-Ամ. սաստկանում է և փոթորկի վերածվում. փոթորիկը մեղմ յեղանակի փոքր ընդհատումներով շարունակվում է մինչև դեկտեմբերի 6-ը՝ յերբ մենք գտնվում եյինք հարավային լայնության 48° 41′ և արևելյան յերկարության 18° 24′ վրա:

Չնայած ընդհանուր իրարանցմանը, նավապետն անվեհեր ու հանգիստ է: Բանավոր հրամանը հնչում է խիստ և խրոխտ: Ցրտահար նավաստիներն ստանում են գինու և գարեջրի լրացուցիչ բաժին: Կուկին ամենից շատ տրտմություն է պատճառում անասունների կորուստը, վորն սպառնում է կրճատել մսեղեն կերակուրը:

Դեկտեմբերի 7-ին թևատներ են տեսնում, իսկ 10-ին՝ առաջին սառցապատ սարը: Այդ սառցե սարերի գոյացումն առաջ էր բերում զանազան յենթադրություններ և վիճաբանություններ: «Յերբ մենք հանդիպեցինք այդ առաջին սառույցին,—գրում է Գեորգ Ֆորստերը,—մենք միայն յենթադրություններ կարող եյինք անել նրա գոյացման մասին. բայց յերբ պտտեցինք աշխարհի շուրջը և չգտանք Հարավային Ցամաքը, վորի գոյությունը հավատում եյին Յեվրոպայում, մեզ հավանական է թվում, վոր սառույցը գոյանում է ծովում. այդ միտքն էլ ավելի յե ճշմարիտ թվում մի շարք կատարված փորձերից հետո, յերբ մարդիկ իմացել են, վոր աղի ջուրը կարող է սառչել»: Այդպես էր գիտնականների մեծամասնության կարծիքը, վորը պահպանվել է շատ տարիներ:

Կուկը, տեսնելով ովկիանոսում լողացող սառցե վիթխարի սարերը, առաջինն է լինում, վոր հայտնում է իր համոզմունքը, թե դրանք գոյացել են ցամաքի վրա, վոր այդ ցամաքը պետք է

գտնվելիս լինի Հարավային բևեռի մոտ և ծածկված լինի ձյունով ու սառույցներով: Այդ սարերի տեսքն իսկ հաստատում էր նրա նախկին յենթադրությունները: Այդչափ պարզ յենթադրությունը,—վոր հարյուր հիսուն տարի հետո միանգամայն ճշտվել է Ռոալդ Ամունդսենի և կապիտան Սկոթտի խիզախ հետախուզումների շնորհիվ, վոր հաստատել է հռչակավոր անգլիացի նավապետի կարծիքը,— ինչ-ինչ պատճառներով չէր ընդունվում գիտնականների կողմից. վերջիններս աշխատում եյին ապացուցել այդ կարծիքի սնանկ լինելը: Նույնիսկ Ճանապարհորդության» մեկնաբանողն անհրաժեշտ է համարում ժխտել Կուկի կարծիքը. «Պարոն Ֆորստերի ասածին յես պետք է ավելացնեմ այն, վոր կապիտան Կուկը ճանապարհորդական օրագրի մեջ մի քանի անգամ նշում է մեծ ցամաքի մասին, վորն իբր թե շատ մոտ է գտնվում հարավային բևեռին, քանի վոր նրան թվում է, թե այդտեղ գոյացած սառույցը պետք է կպած լինի սկզբնական միջուկին: Այդ կարծիքը ճշմարտանման չի թվում, ևս առավել վոր ամենափոքր ավազաթումբը բավականաչափ կլիներ դրա համար»:

Լեռներն անընդհատ ավելանում եյին թվով և մեծանում իրենց չափերով: Նավարկումը ժամեժամ դառնում էր դժվարին, պետք էր խուսանավել այդ շարժվող ժայռերի միջև և շարունակ փոխել նավի ընթացքն ու ուղղությունը: Ջերմաչափի սնդիկը մերթ բարձրանում էր, մերթ խիստ իջնում: Մառախուղն ստիպում է նավերին չհեռանալ իրարից, վորպեսզի ձյան և անձրևի մառախլապատ միջավայրում չկորցնեն իրարու: Նավի առագաստներն ու սարքը սառցակալվել եյին: Կետն ու թևատները, վորոնք ավելի հաճախ եյին հանդիպում, հույս եյին տալիս, թե ցամաքը շատ մոտ է, մինչդեռ խորաչափը չէր հասնում ծովի հատակին: Սակայն բոլորին թվում էր, թե Թլպատման հրվանդանը, վորն այդ ժամանակվանից յերեսուն յերեք տարի առաջ հայտնագործել էր Բուվեն, Անհայտ Ցամաքի յենթադրյալ ծայրն է:

Կուկը, վոր մի պահ յենթարկվել էր ընդհանուր տրամադրության, շուտով համոզվում է, վոր այդ սխալանք է, և դրությունն այլ կերպ է գնահատում. Նա ըմբռնում է սպառնացող

վտանգը և զգուշանում նավին ընթացք տալ դեպի սառույցները: Ծովի մեջ խաղաղ տեղ ընտրելով կանգ է առնում (դրեյֆ է անում) և իմաց տալիս նավապետ Ֆյուրնոյին, որ նրան սպասում է իր մոտ: Յերկու նավապետների տեսակցությամբ վճռվում է արշավանքի հետագա բախտը: Կուկն անհնարին էր համարում սառույցների միջով առաջ ընթանալը և նավերին ու մարդկանց վտանգի յենթարկելը՝ ինչ որ յերևակայական միրաժներ հետապնդելու համար: Պետք է աշխատել ընթանալ դեպի արևելք, սառույցների յեզրերի մոտով, ապա դեպի հարավ անցք փնտրելու համար: Բացի այդ, մառախուղներում և նավի ուղղությունը փոփոխելու պայմաններում նավերը շատ հեշտ կարող են իրար կորցնել: Նկատի ունենալով այդ հնարավորությունը, Կուկը Ֆյուրնոյին առաջարկում է յերեք օր պտտել իրարու կորցրած տեղում, ապա գնալ Նոր Զելանդիա և այնտեղ սպասել «Վճռականության» նավին:

Անտարկտիդայի[1] սահմանների մոտ, այնպիսի պայմաններում, որոնց ամենևին հարմարված չեյին նավերն ու նավային անձնակազմը, յերբ չկային համապատասխան քարտեզներ և որևէ ցուցումներ, չորս ամսվա նավարկությունն իսկական հերոսություն, չտեսնված յերևույթ էր ճանապարհորդությունների պատմության մեջ: Մինչ այդ նավաստիներից յերկու թե յերեք հոգի եյին յեղել Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսում[2]. իսկ սպաներից և գիտնականներից ո՛չ մեկը չէր տեսել ծովերում լողացող սառույցներ. Նավապետերն առաջին անգամն եյին աշխատում այդպիսի պայմաններում: Նավերի ուղղության անհնարին փոփոխումները, մշտական մառախուղը, ցածր բարեխառնությունը, սառցասարերի և սառցադաշտերի մշտական վտանգն առաջացնում եյին ծովագնացության ամենադժվարին խնդիրներ, որ հնարավոր էր լուծել միայն յենթադրաբար, առնասրտությամբ, դեպի իրեն և իր մարդկանց տածած վստահությամբ: Կուկն առաջինն էր ճանապարհ հարթում ապագա ծովագնացների և հետազոտողների համար: Բաղքենու հետաքրքրության տեսակետից այդ միապաղաղ և անգույն նավա-

[1] Հարավային ցամաքի: Ծ. Թ.

[2] Հյուսիսային բևեռային ծովում: Ծ. Թ.

գնացությունն իր նվաճումներով և հաջողություններով ամենանշանավորն է յեղել թե՛ ծովագնացության և թե՛ գիտական բնագավառում: Աստղաբաշխական դիտողությունների, օդերևութաբանական տվյալների և նավային կարգ ու կանոնի մանր փաստերի վերաբերյալ համեստ գրությունները մեր ժամանակվա համար հնչում են յերբեմն թույլ և թվում չնչին: Բայց յեթե նկատի առնվի, որ այդ համեստ դիտողությունների և տվյալների վրա յե գիտությունը կառուցել իր հետագա բոլոր հետախուզումները, որոնց շնորհիվ ծովագնացության կարևորագույն ճանապարհներ են բացվել Հարավային բևեռին հասնելու, Հարավային բևեռային ծովը և Անտարկտիկան աշխարհագրորեն ճշտիվ ուսումնասիրելու համար, որ կենդանաբանությունը հարստացել է կենդանիների մի շարք նոր տեսակներով, որ մարդկությունն առաջ է շարժվել գիտական նոր նվաճումներ ձեռք բերելու, հենվելով այդ մի խումբ խիզախ մարդկանց որինակի վրա,—ապա պարզ կլինի, թե ո՛րչափ մեծ նշանակություն ունեն այդ կիսագրագետ-ինքնուս նավապետի «չնչին» գրությունները:

«Ջերմաչափը ցույց էր տալիս 30°-ից մինչև 34°, յեղանակը շատ է մառախուղային, տեղում է անձրև ու ձյուն, ցուրտը ճնշում էր մեզ շատ ավելի, քան ջերմաչափն էր ցույց տալիս, ցրտից գանգատվում էր նավի ամբողջ անձնակազմը: Վորպեսզի նավաստիները կարողանան դիմանալ ցրտին, յես կարգադրեցի հաստ կտորով յերկարացնել նրանց թևքերը (քանի որ կարճ եյին և չեյին ծածկում ձեռքերը) և, բացի այդ, պատրաստել տվեցի տաք գլխարկներ, որ նրանց շատ ոգնեցին»:

Յեթե Կուկը հոգ էր տանում նավաստիների մասին, նկատի ունենալով, որ նրանք իրեն համար պետքական մարդիկ են, ապա նա միշտ էլ գնահատում էր նրանց աշխատանքը, և ինչպես իր առաջին ճանապարհորդության ժամանակ, այնպես էլ այս անգամ, շարունակ նշում է նավագնացության ամենադժվարին պայմաններում նրանց ցուցաբերած հերոսական տոկունությունը:

«Առանձնապես ցավալին այն էր, որ սառույց էր պատում նավի առագաստներին, սարքին և ճոպաններին, և անկարելի յեր

վինում ձեռ տալ նրանց, առանց խիստ ցավ զգալու: Նավի անձնակազմը հաղթահարեց այդ դժվարությունները հաստատակամությամբ և տոկունությամբ, դիմացավ խիստ ցրտին շատ ավելի լավ, քան ես սպասում էի»:

Կուկը շատ քիչ է գրում իր մասին, քանի վոր բավականանում է համառոտակի գրություններով, քաշվում է գիտական և փիլիսոփայական ընդարձակ դիտողություններ անելուց: Այն չինծու և սովորական ֆրազները, վոր նրա հասցեյին գործ եյին ածում նրա կենսագիրները,—վորոնք դեռևս Կուկի կենդանության ժամանակ գովասանքներ եյին շռայլում և պնդում նրա, վորպես մարդու և պետի, բարձր հատկությունները,—ինչպես նաև նրա մահից հետո արտասանած գովաբանական ճառերն ու դամբանականները,— վորոնք վկայում եյին ստորադրյալների կողմից դեպի նրան տածած «անկեղծ և լիակատար վստահությունն ու մտերմությունը», իրենց նավապետի հանդեպ սպաների և նավաստիների արտահայտած հիացմունքը,— այդ բոլորը չեն կարող թաքցնել նավի վրա գոյություն ունեցող կյանքի իրական պատկերը, վորն այնքան էլ իդեալական չեր, ինչպես այդ թվում եր Կուկի թունդ պաշտողներին և այն մարդկանց, վորոնք իրենց դիրքով չեյին կարող այդ այլ կերպ պատկերացնել:

Իհարկե, Կուկը չեր պատկանում զինվորական սովորական նավապետների ընդհանուր շարքին. նա չեր վախենում պետի արժանապատվությունը վար դցել, յերբեմն հավասարվելով նավաստիներին, հաշվի առնելով նրանցից մեկի կամ մյուսի փորձն ու հմտությունը. Նա նույնիսկ կարողացել եր նրանց ներշնչել նպատակի ընդհանրությունը և աշխատանքի գիտակցական գնահատումը: Նա նույնիսկ փորձել է մերձեցում ստեղծել սպաների և նավաստիների միջև, հարկավոր դեպքերում մեղմել նրանց աստիճանների տարբերությունները: Սակայն այդ բոլորն էլ արմատացած ավանդության պայմաններում կրում եր կատարյալ անճարակության և պարզության բնույթ: Միանգամ ընդմիշտ սահմանված կանոնադրություններն ու կանոնները, վորոնք մտել եյին մարդկանց ուղն ու ծուծը, չեյին կարող ստիպել սպաներին իջնել իրենց դասակարգային վեհության բարձունքներից մինչև նավաստիների մասսան և ձուլվել այդ մասսայի հետ: Կա-

նաչ բաճկոնը և յեռանկյունաձև գլխարկը հաստատում եյին տվյալ գերադասությունը. սպաները, վորքան կարելի յե, իրենց հեռու եյին պահում նավաստիներից, վորոնք միշտ էլ համարվում եյին նավանկուղի մարդիկ, ստորադաս բանվորական ուժ, վորը չի կարող բարձրանալ և հավասարվել իրենց աստիճանին՝ տգիտության և գռեհկության պատճառով:

Նավաստիներն ապրում եյին առանձնացած, ճնշված եյին, անվերապահորեն յենթարկվելով պետերին, վախ զգալով մարմնական պատիժներից, խարխափում եյին խավարում, նրանց արթնացած գիտակցությունը զսպում եյին ամենախիստ միջոցներով: Կուկի հանդեպ յեղած վերաբերմունքի մեջ նկատվում եր նրանց խեղճությունը. նրանք հաճախ հավատում եյին Կուկի անկեղծ հոգատարությանը՝ անսովոր հատկություններ վերագրելով նրան. նրանց վրա ազդում եյին հուշակավոր նավապետի մասին հայրենիքում լսած պատմությունները, նրա մանկության և պատանեկության մասին հեքյաթները. նրանք գիտեյին, վոր Կուկը ծագումով նման է իրենց, ուստի և տարբերվում է այլ պետերից: Յերբ Կուկը մեղավորներին պատժում եր ծովային կանոնագրքի բոլոր կանոններով, հրամայում եր մտրակել կամ փակում եր նավի մութ նկուղում, նրանք այդ բոլորը տանում եյին լռությամբ, լավ գիտենալով, վոր այլ նավերում այլ նավապետներ նրանց ավելի խիստ կպատժեյին: Նավում տիրող ամբողջ կարգ ու կանոնը նույնն եր, ինչ վոր թագավորական նավատորմի այլ նավերում: Նավաստիների և նավապետի միջև ահագին տարածություն կար, ուր տեղ եյին բռնել բազմաթիվ ուրիշ պետեր, սկսած բոցմանից, վորն որինակելի ծառայողի համբավ ուներ և չեր խնայում իր բռունցքն ու նավաստիների մեջքը, մինչև ավագ լեյտենանտը, վորը ծովային ծառայության անխախտ կանոնների միջով մաղում եր ազատամիտ նավապետի մեղմ հրամանները:

Կուկը չի կարողացել հաղթահարել այդ բաժանող տարածությունը, և թեպետ ուրիշներից ավելի մեղմ եր, սակայն նավաստիների վրա նայում եր պետի աչքերով, վորն անհամեմատ բարձր է կանգնած նրանցից, գնահատում եր նրանց վորպես նավի համար անհրաժեշտ ուժ, պահպանում և հոգ եր տանում

նրանց մասին, վորպեսզի հաջողությամբ իրագործի իրեն տրված առաջադրությունը:

«Հինգ որ շարունակ բավականին պարզ եր: Բացի նախորդ դիտողություններից, վոր մեզ այդպիսով հաջողվում ե կատարել, այդ լավ յեղանակը մեզ համար շատ օգտակար եր և չափազանց տեղին, քանի վոր անձնակազմը, ունենալով նավում խմելու շատ ջուր կամ սառույց (միևնույն ե թե ջուր), հնարավորություն ե ունենում լվանալ և չորացնել սպիտակեղենն ու հագուստը. այդ նախազգուշությունն անհրաժեշտ ե վորքան կարելի յե հաճախ գործադրել յերկարատև ճանապարհորդությունների ժամանակ»:

Հունվարի 17-ին անցնում են հարավային բևեռային շրջանագիծը արևելյան յերկայնության 39° 35′ վրա, իսկ որվա վերջը նավերը հասնում են հարավային լայնության 67° 15′-ին:

Կուկը, բարձրանալով միջնակայմը, տեսնում ե մի ահագին սառցադաշտ, վորն անծայրածիր տարածվում եր դեպի հարավ: Ամառը[1] վերջանալու վրա յեր. սառույցների միջով անցնելն անհնարին եր: Կասկածելի յեր, թե կարելի կլինի սառույցների շուրջն անցնել արևելքից. նա վճռում ե ընթանալ դեպի հյուսիս, արդեն անցած վայրերը, մանավանդ վոր բարձրացած ուժեղ քամին ստիպում ե զգուշանալ սառույցների մոտիկությունից և իջեցնել առագաստները: Խիտ մառախուղն ու ձյունը դանդաղեցնում եյին նավի ընթացքը: Սառնամանիքը սաստկանում եր, ջուրը նավում սառչում ե: Ալիքները բարձրանում և զարնվում եյին նավին ավելի ուժգնորեն. գիշերվա դեմ սկսվում ե անձրևախառն ու ձյունախառն փոթորիկ: Խիստ փոփոխվող քամին մերթ առաջ եր մղում նավերը, մերթ թողնում ալեկոծ ովկիանոսի քմահաճույքին: Կուկը մերթ թույլատրում եր «Ձեռնարկության» նավին մոտենալ, մերթ հեռանալ, նայած յեղանակի դրությանը. նա այդպես եր վարվում, հույս ունենալով մի պարզ որ հայտնագործել ցամաքը: Քամին պատառոտում եր առագաստները, և կատաղած վրա տալիս, մերթ այս, մերթ այն

[1] Հարավային կիսագնդի բարեխառն գոտում ամառը լինում ե դեկտեմբեր, հունվար, փետրվար ամիսներին: Ծ. Թ.

կողմից: Որեցոր մարում ե ցամաք գտնելու հույսը: Փետրվարի 1-ին քամու ուղղությունը հաստատվում ե դեպի հյուսիս-արևելք, ստիպելով ընթանալ այդ ուղղությամբ: «Քանի վոր այդ ժամանակ մենք գտնվում եյինք հար. լայն 48° 30′ և արևել. յերկ. 58° 7′ վրա, մոտավորապես Մորիս կղզու զուգահեռականի վրա, ուստի և յես հույս ունեյի գտնել այն ցամաքը, վորը, ինչպես ասում են, հայտնագործել եյին ֆրանսիացիները 1772 թվի հունվարին. չգտնելով նրա հետքն անգամ, յես ուղևորվեցի դեպի արևելք»:

Նավապետ Ֆյուրնոն հավատացնում եր, թե ցամաքը պետք ե շատ մոտ լինի, նկատի ունենալով ճայերի և մրրկահավերի յերևալն ու ծովի դրությունը: Սակայն Կուկը չեր հավատում դրան. նրա դիտողություններն այլ բան եյին վկայում. բացի այդ, յեթե այդ ցամաքը նույնիսկ գոյություն ունենար, ապա չեր հանդիսանալու Հարավային Ցամաքի հրվանդանը, ինչպես պնդում եյին Անգլիայում և Ֆրանսիայում: Այդ բավական եր, վորպեսզի չմնային աշխարհագրական այդ լայնության վրա: Այնուամենայնիվ Կուկը զիջում ե Ֆյուրնոյին և յերեք որ շարունակ նավերին ուղղություն տալիս դեպի արևմուտք և հյուսիս-արևմուտք. դրանից հետո կրկին դառնում են դեպի արևելք: Ամեն մի պարզ որ օգտագործվում եր անկողինները չորացնելու, նավի սենյակներն ու նկուղները մաքրելու և ծուխ տալու համար:

Ութ ամսվա ծովագնացության ընթացքում տեղի չի ունենում նավի վորևե փչացում կամ մարդկանց հիվանդություն: Կուկի նախազգուշական միջոցներն ու յենթադրությունները արդարանում են ամենափայլուն կերպով: Կարելի յեր մի անգամ ևս հանդգնել անցնելու հարավային բևեռային շրջանագիծը: Նավաստիներն առողջ եյին և կուշտ, տրամադրությունը բարձր: Այդ անզգույշ, չափազանց հանդուգն միտքը հանգիստ չեր տալիս Կուկի գիտակցությանը: Խոհեմությունը դեն եր մղում այդ մտադրությունը. ժամանակ եր խույս տալու բևեռային ձմեռվանից, վորը հայտնի յե սաստիկ ցրտերով, մառախուղներով, խավարով, փոթորիկներով. պետք եր խույս տալ սառույցներում ձմեռելուց, անսովոր պայմաններից, վորոնք ուժերից վեր, ահագին

պարտականություն եյին դնում մարդու վրա: Կուկը չի ծածկում, վոր ցանկություն ուներ նավերը կրկին ուղղել դեպի հարավ՝ սառույցները, դեպի Անհայտ Ցամաքն անցք փնտրելու համար: Սակայն նոր հանգամանքները, թեպետ և մռայլեցին այդ զարմանալի ուղևորությունը, այնուամենայնիվ յետ դարձրին բախտի անիվը և փրկեցին Կուկին վտանգավոր քայլ անելուց, համառ և խիզախ մարդու, գուցե, ճակատագրական վճիռն իրականացնելուց:

Փետրվարի 8-ի որը մառախլապատ եր և ծանր. ցածր ամպերը սողում եյին ծովի վրա և ծածկում լույսը. շուրջն ամեն տեղ տիրել եր խիստ միգամածությունը: Յուրաքանչյուր ժամ կրակում եյին թնդանոթից. կրակոցը լսվում եր շատ խուլ, իսկույն կլանվում եր մառախուղի մեջ: Վոչ մի պատասխան: «Ձեռնարկություն» նավը լուռ եր. նա ծածկված եր մութ ամպերի մեջ: Որն ընթանում եր շատ անհանգիստ: Կուկը հրամայում ե կրակել յուրաքանչյուր կես ժամը մի անգամ: Մշուշը չարագուշորեն լուռ եր: Հաջորդ որվա պարզ յեղանակին տեսնում են, վոր ծովի վրա վոչինչ չկա: «Ձեռնարկություն» նավը չկար: Տեղից չեն շարժվում. կրակում են ամբողջ գիշերը, հրավառություն են անում: Անցնում ե ելի մի որ: Բոլորին տիրում ե միայնակության ու անջատման ահավոր զգացմունքը: «Նավի ամբողջ անձնակազմը,—գրում ե Ֆորստերը,—ճնշված եր ակամա բաժանման պատճառով. մենք չեյինք կարողանում նայել ովկիանոսին, առանց վշտի, քանի վոր այդ անհայտ և հեռավոր ծովում մեր նավը լողում եր միայնակ. մինչ այդ՝ յերկրորդ նավի ներկայությունը մեղմում եր մեր անհանգստությունը և ուրախություն պատճառում»:

Կուկը հանգիստ եր. նա նախատեսել եր «Ձեռնարկության» կորստի հնարավորությունը, ուստի և նավապետ Ֆյուրնոին վաղորոք տվել եր բոլոր անհրաժեշտ դիրեկտիվները: Դեպի հարավ գնալու վորոշումը խախտված եր: Դեռևս մի քանի որ ել Կուկը նավին ուղղություն ե տալիս դեպի հարավ-արևելք, ապա դեպի հարավ, կրկին դեպի արևելք: Նա, կարծես թե, պայքարում եր իր դեմ, ճնշելով իր մեջ ծագող անզուսպ ձգտումները: Պարզ որերը, թեռաների և մրրկահավերի առատությունը գրավում եյին

մոտակա ցամաքի խաբուսիկ հնարավորությամբ: Սառցե լեռները, ցուրտ քամին և մառախուղն ստիպում են խելքի գալ և փոխել նավի ուղղությունը: Հյուսիսափայլը, վոր յերկնակամարի վրա ծավալել եր հրեղեն ֆանտաստիկ շողերը և ծածկել աստղերը, կանչում եր դեպի սառույցներից դենը տարածվող հեքյաթային յերկրները: Կուկը, պայքարելով ծովի դեմ, զգուշությամբ ընթանալով սառցե կղզիների միջով, մառախուղի մեջ, ձյան և անձրևի տակ, նավը հասցնում ե մինչև հարավ. լայն. 60° 52′-ը: Ինչ վոր անհանգիստ խոյանք եր տիրել մինչ այդ խելացի մարդուն: Առանձին համառության կարճատև բռնկումը պատասխան եր ծրագրի չավարտելու առթիվ դժգոհությանը: Այդ ժամանակվա որագրի մեջ հաճախ կարելի յեր կարդալ տխուր խոսքեր. «Այդ տեսարանի գեղեցկությունը հիացմունքով և սարսափով եր լցնում մեր հոգին»:

«Ձեռնարկության» կորուստն ու տարերքի ուժը վերջապես կոտրում են նավապետի համառությունը: «Այդքան աննպաստ հանգամանքները և դրանց միացած տարվա այդ յեղանակի մութ գիշերները արգելք յեղան իրականացնելու ընդունած վորոշումս՝ մի անգամ ևս անցնել հարավային բևեռային շրջանագիծը»:

Կուկը, մի կողմ թողնելով դեպի հարավ գնալու մտադրությունը, այնուամենայնիվ դանդաղում եր և մի քանի որից հետո կրկին փորձում փոխել նավի ուղղությունը: Այդ արդեն վերջին թույլ փորձն եր բնությանը հաղթահարելու համար:

Հար. բևեռային շրջանագծի մոտ քառասուն չորս որվա նավարկությունն ունենում ե գիտական մեծ նշանակություն, ապացուցում ե, վոր աշխարհագր. այդ լայնության վրա գոյություն չունի վորևե ցամաք: Քարտեզում սխալ տարածությունն ել ավելի յե յետ քաշվում դեպի հարավ և ծածկվում կապույտ ջրերով: Այդտեղ յերբեք չեր կարող լինել Հարավային Ցամաքի վորևե հրվանդան: Այդ մասին եյին վկայում ծովային հոսանքները, ովկիանոսի չափված խորությունները, մագնիսային սլաքի շեղումները:

Մարտի 17-ին Կուկը վերջնականապես վորոշում ե փոխել ուղղությունը դեպի հյուսիս և ընթանալ դեպի Նոր Զելանդիա՝ «Ձեռնարկություն» նավը գտնելու և իր անձնակազմին հանգիստ

տալու համար: Աշխարհագրական յերկայնության ութ աստիճանի տարբերությունն անմիջապես բարձրացնում է օդի բարեխառնությունը, բարելավում յեղանակը և վերականգնում անձնակազմի լավ տրամադրությունը: Հաջողակ քամին արագ առաջ է մղում նավը. մարտի 25-ին առավոտյան հորիզոնի վրա յերեվում է Նոր Զելանդիայի արևմտյան հրվանդանը: Իսկ հաջորդ օրը ցերեկվա ժամը յերեքին «Վճռականություն» նավը խարիսխ է գցում «Մթին» ծովախորշում:

«... Հարյուր տասնյոթ օրվա ճանապարհորդության ընթացքում մենք անցել ենք յերեք հազար վեց հարյուր վաթսուն լյո[1] և յերբեք ցամաք չենք տեսել...»:

Կուկը կրկին հպարտությամբ հայտնում է ընթերցողներին, վոր սխալվում են նրանք, ովքեր կարծում են, թե նավում այդ ժամանակամիջոցում յեղել է լնդախտով հիվանդ մարդ: Գարեջրի հյութը, թթու կաղամբը և բուլյոնը կատարել եյին իրենց դրական գործը:

Օրագիրը կրկին ընդունում է իր սովորական խաղաղ բովանդակությունը: Նոր Զելանդիայի կղզիներում Կուկն իրեն զգում է ինչպես տանը: Անզգույշ վոգևորության անցողիկ խոյանքը փոխարինվում է տնտեսավարական գործիմացությամբ:

Կուկը կրկին սկսում է զբաղվել մանր հոգսերով. կարգավորում է նորոգումները, կենսամթերքի մատակարարումը, սպաների հետ մշակում է հետագա չվացուցակը և «Ձեռնարկության» վորոնումը: Ցամաքի և ջերմության առաջացրած ընդհանուր ուրախությունը միախառնվում է անսահման վստահության նավապետի հանդեպ. սակայն վոչ վոքի մտքով չեր անցնում, վոր միայն նա ինքն է դժգոհ իրենից:

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ

Յեվրոպացիներից դեռևս վոչ վոք ափ չեր իջել այդտեղ: Փոկերը հանգիստ պառկած եյին քարերի վրա և տաքանում եյին արևի տակ: Թռչունները վորսորդներից չեյին վախենում, թողնում եյին, վոր մարդիկ շատ մոտենան իրենց և նույնիսկ նըստում եյին նրանց հրացանների վրա:

Սպիտակամորթները պատերազմ են հայտարարում ծովեզերքին: Կառուցում են ճամբար, աստղադիտարան, սարքում են հյուսների և տակառագործների համար վրաններ, վառում են խարույկներ, կտրատում են ծառերը և սկսում թռչուններ վորսալ: Ծովի դարավոր սովորական ձայնին, անանցանելի անտառների օրորող խաղաղությանը միախառնվում են մարդկային անսովոր ձայներ, կրակոցներ, յերգեր:

Պարապ ժամերը լրացնում եյին վորսով: Գիտնականները և սպաները, Կուկի գլխավորությամբ, շուրջկալում են բադերին, փոկերին, ձկներին: Միատեսակ կերակրով ձանձրացած ստամոքսը հատուցում եր պահանջում: Ծովափնյա ժայռերի վրա սարքած ճաշկերույթները հարստացվում եյին ընտիր կերակուրներով՝ «cancero marii» — ձկան ինչ վոր նոր տեսակով: Փոկի տապակած սիրտն ու թոքերը, գարեջրով թարմացրած թռչնեղենը բավարարում եյին նավաստիների ախորժակը և հաճույք պատճառում:

Կուկն սկսում է իր սովորական փորձերը՝ գարեջուր է յեփում կանադական յեղևնու խառնուրդով. դրանից ստացվում է հրաշալի խմիչք, վորը փրկում է մարդկանց՝ ծովեզերքին գոյացող վատառողջ խոնավությունից: Հայր ու վորդի Ֆորստերները և Սպարմանը շտապում են անտառ, վորտեղից վերադառնում են, բերելով մեծ քանակությամբ բույսեր, ծաղիկներ, քարեր: Հոջսը նկարում է ջրվեժի մի տեսարան: Ցամաքի և հանգստի պատճառած ուրախությամբ հատուցվում են կրած նեղությունները: Նավում կյանքը միանգամից ստանում է սովորական բնույթ. նավասենյակներն ու տախտակամածը առավոտից դատարկվում են. ամեն ինչ դուրս է բերվում ծովափ, նույնիսկ նավային կատուն, վորը յերկրի շուրջը սրտաշարժ ճանապարհորդություն է կատարում, դուրս է գալիս ծովեզերք՝ թռչուններ վորսալու. այդ թռչունները զարմացած մահանում են նրա ճանկերի մեջ:

Բնիկները մոտենում են վոչ-միանգամից՝ նրանք վախենում են տարօրինակ սպիտակամորթ մարդկանցից. Նրանք բութ հայացքով նայում են կացիններին ու մեխերին, վոր սպիտակամորթ-

[1] Յերկարության ֆրանսիական չափ է, վորը հավասար է մոտ 4½ կմ.—: Ծ. Թ.

ները թաղնում էին ձողերից և կեղևից շինած խրճիթների կամ լքած պիրոգների[1] մոտ:

Կուկը բնիկների նկատմամբ գործադրում էր իր սովորական միջոցները՝ մոտենում էր նրանց, ձեռքին բռնած կանաչ ճյուղ կամ սպիտակ թուղթ, գրկում էր բնիկներից մեկին և նվիրում հասարակ զարդեր: Այդտեղի բնիկները նման էին տահիտցիներին՝ նույնպես մուգ մարմին, սև և խուճուճ մազեր, ոծված դարչնահոտ յուղով: Կուկը փորձում է նրանց տահիտերեն: Գուցե, հասկանում են: Հետզհետե բարեկամություն է հաստատվում: Բնիկ կանայք չափազանց շատախոս են. նրանք մեծ արագությամբ շարում են անհասկանալի բառեր:

Մի քանի օր հետո, յերբ բնիկները գալիս են ընտանիքներով հանդերձ, Կուկը դուրս է գալիս նրանց ընդառաջ, ուսին քցած թիկնոցի նման ինչ-որ կտոր. Նա գրկախառնվելով մոտ յեկած նոր զելանդացու հետ, հանում է թիկնոցը և քցում հյուրի ուսերին: Այդ դուր է գալիս բնիկներին: Յերեխայի նման հետաքրքրասեր նորզելանդացիները զննում են նավը, ձեռք են տալիս ամեն ինչ, խնդրում են զանազան իրեր, զարմանքով նայում են անծանոթ, մլավող աղվամազ կենդանուն: Ի նշան կատարյալ բարեկամության, նրանք իրենց հագուստի տակից հանում են կաշվե տոպրակիկները և միջի դարչնահոտ յուղը քսում սպիտակամորթների վիզն ու մազերը: Նրանց շատ էին դուր գալիս կացինները և մեխերը, որ նվիրում էին ոտարերկրացիները:

Բնիկների հետ հարաբերության հարցը Կուկը միշտ էլ համարել է ամենաբարդ և դժվարին հարցերից մեկը: Մեղմ և մարդասեր վերաբերմունքը հաճախ դրական արդյունք չէր տալիս. բնիկների, առանձնապես նորզելանդացիների թշնամանքը դեպի նա և նրա ուղեկիցները հիմնովին խորտակում էն նրա մարդասիրական ծրագրները: Նա բարկանում է, քանի որ ընդհանուր լեզու չէր գտնում նրանց հետ:

Առաջին ճանապարհորդության ժամանակ հաջողությամբ գործադրած փորձերն այժմ կրկնելիս ցանկալի արդյունքներ չէին տալիս: Բնիկներին կրթելու առաջվա մարդասիրական գաղա-

[1] Բնիկների մակույկները: Ծ. Թ.

Նոր զելանդացիների ռազմական յեվ վորսորդական զենքերը

փարները տեղի չեն տալիս սովորական գաղութարարների հայացքների, անգլիական փորձված ծովագնացների ամենասովորական միջոցների առաջ: Այդ տեսակետից Կուկը չի բարձրացել իրեն կրթող իր իսկ դասակարգի զարգացման մակարդակից, այն դասակարգի, վորի առաջադրանքներն եր նա կատարում: Վերջիվերջո ուժի գործադրությունը, բռունցքը կամ հրացանը միակ իրական զենքն եր նրա ձեռքում: Արտասովոր հնարավորությունների վերաբերյալ պատրանքներն աստիճանաբար ցրվում են:

Ճիշտ է, Կուկն ինքն էլ զգում եր իր անճարակությունը և զանգատվում եր այդ առթիվ: Նա խիստ կերպով դատապարտում եր իր նախորդներին, սակայն ինքն էլ կատարում եր նույն սխալները: Ինչ վոր անորոշ պրիմիտիվ մտքեր եյին ծագում նրա ուղեղում, բայց չեյին ձևավորվում ու վորոշվում, վորպեսզի կարողանար լուծել այդ խճճված խնդիրը: Որագրի մեջ նկատվում է կռահումի այդ անվստահությունը, անճարակությունը, մտքի անկատար լինելը:

«Դժվար է իմանալ, թե ի՛նչն է ստիպել յերեք կամ չորս ընտանիքի (կարծում եմ, դրանից ավելի չեն յեղել) հեռանալ ուրիշ մարդկանց հասարակությունից... Քանի վոր... յեթե նրանք բանականություն ունեն, ապա ինչո՞ւ չեն միանում և մի հասարակություն կազմում, յեթե միայն այդպիսի միացումը բնական է և՛ մարդկանց, և՛ կենդանիների համար»:

Կուկն ամեն կերպ աշխատում եր ընիկներին կապել հողին. ցույց եր տալիս կացնի գործադրության ձևը, կտրտել եր տալիս անտառները և ստեղծում բաց տարածություններ, ցանել եր տալիս բազմապիսի բանջարեղեն, յերկար ու ձիգ բացատրում եր կարտոֆիլի, գազարի մշակման յեղանակները և այլն: Ծովեզերքին թողնում եր վոչխարներ և խոզեր, բայց յերբեք չեր կարող վստահ լինել, վոր իրեն հասկացել են և գնահատել:

Կուկն իր այդ ձգտումներով միայնակ եր: Ուղեկիցները չեյին աջակցում նրան. Նրանք հոռետեսությամբ եյին վերաբերվում նրա այդ բարի ձեռնարկումներին. սակայն չեյին համարձակվում բացորոշ քննադատել նրան, սահմանափակվում եյին մի քանի խոսքերով, վորոնց մեջ մասնակի շեշտում եյին նավապե-

տի բարի ձգտումները. խոսելով իրենց գիտական հաղթանակների մասին, նրանք չեյին հավատում, թե ընիկները կկարողանան յուրացնել նստակյաց կյանքի սովորույթներն ու քաղաքակիրթ տնտեսության հարմարությունները: Փշերը շուտով կսպառեն մեր ձեռքով տնկած ոգտակար բույսերը. շուտով կվերանան մեր աշխատանքի բոլոր հետքերը և այս ծովափը կընդունի իր նախկին քաոսային տեսքը»:

Սակայն Կուկը հավատում եր, կամենում եր հավատալ, վոր քաղաքակրթությունը հաղթանակ կտանի կղզու ընիկների վայրենության վրա: Նա համառորեն շարունակում եր տարածել կուլտուրական սկզբունքները, մեղադրում եր ինքն իրեն, վոր բավականաչափ չի ըմբռնում, այնքան էլ խոր չի ուսումնասիրել ընիկների սովորություններն ու կենցաղը: Դրանից են բխում հաճախ յեզրակացություններն ու ցավալի սխալները. «վորքա՜ն ենք մենք հակված սխալ կարծիքներ ունենալ այս ժողովուրդների մտադրությունների մասին և վերագրել նրանց այնպիսի սովորություններ, վորոնց մասին նրանք ամենևին չեն էլ մտածել»:

Կղզիների շրջագայությունը նոր հարուստ նյութ է տալիս՝ համապատասխան քարտեզ կազմելու համար: Կուկը ծովախորշերին և կղզիներին տալիս եր իր ուղեկիցների անունները, կամ թե այն կենդանիների անունները, վոր շատ եյին պատահում այդտեղ: Սկսվում եր ձմեռը. մառախուղն ավելի հաճախակի յեր պատում կղզիների ափերը. ցուրտ անձրևն ստիպում եր ծածկված մնալ նավում: Ծովեզերյա ծառերի դեղնած տերևները թափվում եյին: Մշտական խոնավությունն սպառնում եր հիվանդություններ առաջացնել: Պետք եր որ առաջ հեռանալ այս տեղերից:

Մայիսի սկզբներին Կուկը հիվանդանում է: Նրան բռնում է տենդը, վորին ուռուցք է առաջանում: Կուկը դժվարանում է քայլել: Ինչպես միշտ, այս անգամ էլ Ֆորստն է պատմում այդ մասին. ինքը Կուկը սահմանափակվում է մի քանի խոսքերով, վոր գրի յե առնում ի միջի այլոց. «Հիվանդությունն ստիպում է ինձ մնալ նավի վրա»: Յեվ ինչպես Բատավիայում, այնպես էլ այժմ, նա աշխատում է մոռացության տալ իր հիվանդությու-

նը, հաղթահարել այն, լրացնել ժամանակը, վորպեսզի քիչ մտածի նրա մասին, իսկ վոր գլխավորն է, թուլության նշույլ անգամ ցույց չտալ իր ստորադրյալներին: Մնալով նավի վրա, նա լեյտենանտներին ուղարկում է հետախուզել՝ ծովախորշից հարմար ելք գտնելու համար. մնալով նավաստիների հետ, սովորում է նրանց մաքրել, տեղափոխել և ծուխ տալ նավի տախտակամածն ու նկուղները: Յերեկոյան դեմ սկսվում է ուժեղ փոթորիկ. նավապետն ամբողջ գիշեր քամու և անձրևի տակ կանգնած էր վոտի վրա: Հիվանդության մասին մտածելու ժամանակ չկար: Իր բոլոր յերկարատև ճանապարհորդությունների ժամանակ Կուկը վոչ մի անգամ նավի ղեկավարությունն ուրիշին չի հանձնել. յերբեք նավաստիները չեն տեսել մեկին, վոր փոխարինած լիներ նավապետին:

Կուկը նավն ուղղում է դեպի Թագուհի Շառլոտտայի նեղուցը. նա հույս ուներ այնտեղ հանդիպել «Ձեռնարկություն» նավին: Ճանապարհին «Վճռականություն» նավը շրջապատվում է ծովային հողմերով: «Մեր դրությունը,—ասում է Ֆորստերը,— բնության այդ յերևույթի ամբողջ ժամանակամիջոցում չափազանց տագնապալից էր. այդ սյունաձև մրրիկը ծովի և ամպերի միացումն էր և մեզ պատճառում էր հիացմունք ու սարսափ. մեր նավաստիները, նույնիսկ ավելի փորձվածները, չեյին իմանում՝ ի՛նչ անել. նրանց մեծ մասը հեռվից տեսել էր նման յերևույթ, բայց յերբեք շրջապատված չէր յեղել բոլոր կողմից այնպես, ինչպես այժմ էր. մինչդեռ մենք գիտենք կործանարար հետևանքների սոսկալի նկարագրություններ, յերբ գլանաձև մրրկի մեջ է ընկնում նավը»: Բարեբախտաբար մահացու սյուներն անցնում են կողքով: Կուկը վերհիշում է Ֆալկոնեյի ծովային բառարանում կարդացած տողերը. «Այդ բացատրությունները վերցված են գլխավորապես հռչակավոր դոկտոր Ֆրանկլինի փիլիսոփայական աշխատություններից»: Նավապետն իր բազմագիտությամբ յետ չէր մնում գիտնականներից: Ֆորստերները չեյին կարողանում բացատրել ծովային մրրկի ծագման պատճառները և նույնպես հիշատակում են Ֆրանկլինին:

Մայիսի 18-ին վաղ առավոտյան հնչում է թնդանոթի ուրախ կրակոցը. «Ձեռնարկություն»-ը առաջինն է նկատում «Վճռականություն» նավին: «Պետք էր մեր վիճակում լինել, զգալու մեր ուրախության չափը»: Մեկուկես ամիս «Ձեռնարկություն»-ն սպասել է իր ընկերոջը: Յերկու և կես ամիս էր անցել անջատման որից: Նավապետների սրտաշարժ տեսակցությունը տեղի է ունենում նույն յերեկոյան, յերբ «Վճռականություն»-ը, ազատվելով թեթև քամուց և մակընթացությունից, մակույկներն ուղարկում է խարիսխներով և մոտենում «Ձեռնարկությանը»: Նորից սկսվում է յերկու նավերի համերաշխ կյանքը, վորը արիություն է հաղորդում բոլորին:

Կուկի առաջին միտքն է լինում անմիջապես հեռանալ Նոր Զելանդիայի ափերից, վորոնք բավականաչափ ուսումնասիրված եյին յերկու կողմից էլ: Վան-Դիյեմենի Յերկիրը[1], վորը գտնըվում է դեպի արևմուտք և հետաքրքրում էր Կուկին, հետազոտված էր նավապետ Ֆյուրնոյի կողմից. նա համարյա թե ապացուցել էր այդ յերկրի կղզիական դիրքը, այսինքն, այն, ինչ վոր յենթադրում էր Կուկը՝ հակառակ շատ շատերի, վորոնք պնդում եյին, թե այդ յերկիրը Նոր Հոլանդիայի մասն է կազմում: Ուստի հարկավոր էր մեկնել դեպի արևելք և հետազոտել այն տարածությունը, վորը գտնվում էր քառասուն մեկ և քառասուն վեցերորդ զուգահեռականների միջև: Կուկն իր մտադրությունների մասին հայտնում է Ֆյուրնոյին և առաջարկում անմիջապես պատրաստություններ տեսնել մեկնելու համար:

Հարցը վերաբերում էր նույն Հարավային Ցամաքին, վորն ըստ յենթադրության պետք է գտնվեր Նոր Զելանդիայի և Հարավային Ամերիկայի միջև: Խաղաղ ովկիանոսի աշխարհագրական միջին լայնություններում դեռևս չէր յեղել վո՛չ մի նավ: Կուկի առաջին ճանապարհորդության շնորհիվ պարզվում է, վոր այդ Անհայտ Յերկիրը Նոր Զելանդիայի մոտ չի գտնվում, բայց դեռ չէր ապացուցված նրա չլինելը: Այժմ Կուկն իր առաջ խնդիր է դնում՝ պարզել Խաղաղ ովկիանոսի միջին լայնություն-

[1] Տասմանիա կղզին 1642 թվին հայտնագործել է Տասմանը և ի պատիվ Բատավիայի նահանգապետի անվանել է այն՝ Վան-Դիյեմենի Յերկիր: Տասմանիայի կղզիական դիրքը վերջնականապես ապացուցել է Բասսը 1758 թվին: Ծ. Թ.

ներում անարգել նավարկության հնարավորությունը. գեթ այդ էր նրան թելադրում «Վճռականության» անցած ուղին:

«... Ենթադրելով, որ իմ փորձերը կարող են վոչ մի հաջողություն չունենալ, ես նկատի ունեի գեթ մեր հետնորդներին հաղորդել, որ կարելի չե նավարկել այդ ջրերում և հայտնագործություններ անել նույնիսկ ձմռան ամիսներին»:

Նեղուցում կանգ առնելը տևեց քսան օր: Կուկն այդտեղ ցանել է տալիս բանջարեղեն: Այդտեղ արդեն բանջարանոցներ էր ստեղծել նաև նավապետ Ֆյուրնոն: «Ես այցելեցի,— ասում է Կուկը,—զանազան բանջարանոցներ, որտեղ նավապետ Ֆյուրնոն ցանել էր տվել ամեն տեսակի բանջարեղեն. դրանք բոլորն էլ ծաղկած վիճակում էին և շատ օգտակար կլինեն բնիկներին, եթե նրանք պահպանեն և հոգ տանեն այդ բանջարանոցների մասին»: Այնուհետև Կուկը կարգադրում է անտառում բաց թողնել եզ և արու վոչխար, այծ, խոզ և վարազ: Նա հույս ուներ, որ դրանք բազմանալով, կապահովեն բնիկներին թարմ սնունդով և շահավետ տնտեսությամբ:

«Երեսուն բնիկներ այցելեցին մեզ և մեզ համար բերեցին մեծ քանակությամբ ձուկ, որը փոխանակեցինք մեխերով և այլ իրերով: Այդ նոր զելանդացիներից մեկին ես տարա Մոտուար և ցույց տվեցի կարտոֆիլի մի քանի թուփ, որ այդտեղ ցանել էր «Ձեռնարկության» նավի բոցման պարոն Ֆանկենը: Ըստ երևույթին, այդ կարտոֆիլը պետք է որ աճեր. բնիկը, տեսնելով այն, այնքան հիացած էր, որ իր կամքով սկսում է փորել թփի շուրջը յեղած հողը: Այնուհետև նրան տարանք ուրիշ բանջարանոցներ և ցույց տվինք շաղգամը, գդումը, գազարը և այլ արմատապտուղներ, որոնք կարտոֆիլի հետ իրոք էլ ավելի օգտակար են լինելու նրանց համար, քան ինչ որ մենք էինք ցանել: Մենք շատ հեշտ էինք բացատրում նրանց այդ արմատապտուղների մասին, համեմատելով առաջուց ծանոթ բանջարեղենի հետ»:

Առևտուրն ընթանում է շատ աշխույժ: Նավաստիներն այնքան են տարվում փոխանակությամբ, որ սկսում են փոխանակել իրենց հագուստեղենը, փոխարենը հասարակ բաներ ստանալով: Կուկն ստիպված միջամտում է և խնդրում հյուրերին հեռանալ նավից: Հրաժեշտ տալիս Կուկը կատարում է Ծովակալության հրամանը, բնիկներին բաժանում է պղնձե վոսկեջրած կրծքանշաններ, որոնց մի երեսին փորագրված էր թագավորի գլուխը՝ հետևյալ մակագրությամբ «Գեորգ III, թագավոր Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի[1] և Իռլանդիայի». մյուս երեսին՝ երկու ռազմական նավ՝ «Վճռականություն» և «Ձեռնարկություն», որ մեկնել են Անգլիայից 1772 թվի մարտ ամսին»[2]:

Բնիկները վաճառում էին հասարակ բաներ և որսի արդյունքը: Կուկը վճռում է նավապետ Ֆյուրնոին տալ հետագա ուղևորության գրավոր չվացուցակը:

Հունիսի 7-ին երկու նավն էլ հեռանում են Նոր Զելանդիայի ափերից, ընթանալով հարավ-արևելքի ուղղությամբ: Հասնելով արևելյան երկարության 133° 7′-ին, Կուկը նավերի ուղղությունը փոխում է դեպի հյուսիս, մտադրություն ունենալով մուտք գործել այն կղզիների շրջանը, որոնք ծանոթ էին առաջին ճանապարհորդությունից: Լնդախտ հիվանդության նշանները, որ առանձնապես սաստկացել էր «Ձեռնարկության» նավում, ստիպում են շտապել դեպի արևադարձ, կլիմայի փոփոխման կապակցությամբ:

Երկու ամիս շարունակ նավագնացությունն ընթանում էր միապաղաղ: Սակայն այդ միայն ապացուցում էր Կուկի ենթադրությունների ճշտությունը, որ աշխարհագրական այդ լայնության վրա վո՛չ մի ցամաք չկա:

Եթե հիվանդներ չլինեին, Կուկը, իհարկե, կրկին կդարձներ նավերը դեպի հարավ, ցամաք փնտրելու համար: «Այդ հարցն այնքան կարևոր էր, որ չէր կարելի անլուծելի թողնել այն...»:

Հյուսիս, Տահիտի ընթանալու ժամանակ նա կազմել էր դեպի հար. բևեռային շրջանագիծ գնալու նոր ուղևորության պլանը: Հաջորդ ամառ այդ պլանը, ինչ գնով էլ լինի, պետք է գլուխ բերվեր:

Օգոստոսի սկզբին մուտք են գործում պասսատ քամիների գոտին. այդ քամիները նավերն արագորեն մղում են դեպի արևադարձ: Բարեխառնությունը հասնում է 80°-ի: Նորից վերա-

[1] Այդ ժամանակ Անգլիան տիրում էր Ֆրանսիայի հյուսիսային մասին: Ծ. Թ.

[2] Սկզբում ծրագրված էր նավերը ճանապարհ գցել մարտ ամսին: Ծ. Հ

նում են տաք գլխարկներն ու հագուստը, նորից արևն այրում է անտանելի կերպով: Կանաչատես կղզիներ, թռչող ձկներ, ճայեր, դելֆիններ—այդ բոլորը Կուկի համար ծանոթ տեսարան էր դեռևս առաջին ճանապարհորդությունից: Կղզիներից շատերը տակավին հետազոտված չէին և ճիշտ չէին գծագրված քարտեզներում: Սակայն չէր կարելի դանդաղել: «Յես այդ ժամանակ շատ ավելի ցանկություն ունեի գնալ Տահիտի կղզին, քան թե նոր հայտնագործություններ անել»:

Օգոստոսի 15-ի յերեկոյան յերևում են վաղուց բաղձալի ափերը: Տաղտկալի ճանապարհը վերջանում է: «Մենք,—գրում է Ֆորստերը,—անցկացրինք բախտավոր գիշեր, առավոտյան հույսով. մենք վճռեցինք մոռացության տալ հոգնածությունը և հարավային կլիմայի խստությունը. մեր սրտերին պատած թախիծը ցրվում է: Հիվանդության և մահվան ստվերը մեզ այլևս չէր սարսափեցնում»: Հաջորդ օրվա պարզ առավոտը և Տահիտի կղզու լեռների ու բլուրների փարթամ բուսականությունն ստիպում են յերիտասարդ գիտնականին գրել իր օրագիրը գրեթե չափածո: Նավաստիները խմբովին դուրս են վազում տախտակամածը և ուրախությամբ նայում մոտեցող ափերին, վորտեղ արմավենու անտառների միջից յերևում եյին բնիկների խրճիթները: Մի քանի պիրոգ ընթանում են «Վճռականությանն» ընդառաջ. դրանց մեջ կանգնած են մերկ մարդիկ՝ ձեռքին բռնած լայն տերևներ. նրանք անհասկանալի բացականչություններ են անում: Ծովեզերքին հավաքվում է բնիկների ամբոխը: Պիրոգների միջից մարդիկ տերևները հանձնում են Կուկին, վորպես հաշտության սիմվոլ: Դրա փոխարեն նրանք ստանում են մեխեր, ուլունքներ, մեդալիոններ: Նրանք ճանաչում են Կուկին և հարց ու փորձ անում նրա առաջին ճանապարհորդության ուղեկիցների մասին: Յերբ հաշտության տերևներով զարդարում են միջնակայմի բարձր ծայրը, ծովափից դեպի նավն են ուղղվում բազմաթիվ պիրոգներ, վորոնք լիքն եյին բնիկներով: Կես ժամից հետո, նավի տախտակամածը ծածկված էր մեծ քանակությամբ կոկոսի ընկույզներով, բանանով, հացի ծառի պտուղներով, կտորեղենով, քարե կացիններով, ձկներով և բազմապիսի այլ իրերով: Ծովի ամբողջ տարածության վրա, նավից մինչև ծովափ, վխտում եյին բնիկների պիրոգները. «այդ մի նոր տեսա-

կի տոնավաճառ էր»: Յերկուստեք ուրախությունն արտահայտվում էր բնիկների աղմուկով, նավաստիների աղաղակներով ու ծիծաղով, տախտակամածի վրա վազվզոցով, թիակների ճողփյունով…

Սակայն չի հաջողվում ծովափին մոտենալ. քամու հանկարծակի դադարը և խիստ ալիքներն սպառնում եյին նավը զարնել խութերի կամ -դցել ծանծաղուտը: Փորձում են խարիսխ ձգել, ալիքները սարսափելի ուժով խփում եյին նավի յետևի մասին, իսկ նավի վողնուցն էլ կպչում էր ծովի հատակին: Այն ժամանակ Կուկը հրամայում է նավից ծով իջեցնել բոլոր մակույկները և նավը քաշանով առաջ տանել: Բարեբախտաբար, ծովափից փչած քամին ողնում է ուժասպառ յեղած թիավարներին: Այդպիսով, հաջողակ սկսված օրը քիչ էր մնացել սարսափելի պատահարով վերջանար: Կրկին նավապետի տոկունությունը և անհողդողդ վստահությունն են փրկում դրությունը:

Արևը անխնա կերպով այրում էր (ստվերում 90° էր): Գիշերը տեղի յե ունենում ամպրոպ, վորն արդեն ուշ էր՝ նավը խորտակելու համար:

Հաջորդ առավոտյան «Վճռականություն» և «Ձեռնարկություն» նավերը խարիսխ են ձգում Ոաիտի-Պիա ծովախորշում:

ՅԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ

«… Յես այնքան եյի խոցված նրա վարմունքով, վոր յերբ նա քիչ հեռացավ, յես յերկու անգամ կրակեցի նրա գլխավերևը: Այն ժամանակ նա դուրս ցատկեց պիրոգից և արագորեն սկսեց լողալ: Յես իջեցրի մակույկը, վոր բռնեմ նրա պիրոգը. բայց հենց վոր մեր մարդիկ մոտեցան ծովափին, տահիտցիներն սկսեցին քարկոծել նրանց…»

Կուկի մոտ հյուր յեկած բնիկներից մեկը համարձակվում է ծածկաբար վերցնել մի ինչ-վոր իր և փորձում է աննկատելի կերպով փախչել: Կուկը «խոցված էր»: Նա չէր կարողանում իրեն զսպել այդպիսի դեպքերում: Ցարգում էր մեղմ վերաբերմունք և զգուշություն, սակայն հակասում է ինքն իրեն, քանի

վոր հաճախակի կրակ է բացում բնիկների վրա: Արդյունքը— թշնամական վերաբերմունքն է անգլիացիների դեմ:

«Քաղաքակիրթ եվրոպացիների տեսակետով հանցագործ կղզիաբնակները գողություն չեյին համարում մի վորևէ իրի յուրացումը, վորը նրանց դուր է գալիս իր փայլով կամ անսովոր տեսքով: Առաջացած բախումների գլխավոր պատճառն այն էր, իհարկե, վոր անգլիացիները չեյին կամենում հաշվի առնել բնիկների պարզամիտ մտածողությունը, նրանց սոցիալական կարգերի նախնական տոհմային կենցաղը, եվրոպացիների հասկացողություններից տարբեր կյանքի ցեղական պայմանները: Վո՛չ Կուկը, վո՛չ էլ նրա սպաները չեյին կարող հրաժարվել իրենց սովորական տեսակետից: Բոլոր բնիկներն էլ հո անբասիր ազնիվ չեյին. բայց և չէր կարելի ընդհանրացնել ու բոլորին անխտիր գողեր անվանել, ինչպես իրենց օրագրերում անում են բոլոր ճանապարհորդները. էլ առավել չէր կարելի խիստ միջոցներ գործադրել այն մարդկանց նկատմամբ, վորոնք եյապես մեղավոր չեյին: Անգլիացիների հանդեպ առաջացած ատելությունը հասկանալի յե. սկզբում վստահող բնիկները հետագայում դառնում են թշնամիներ, վորոնք զգում են «սպիտակամորթների» իսկական եյությունը, նրանց թալանչիական-նվաճողական նպատակները:

Նույն օրագրերում ասված է, վոր գիտնականները և նկարիչ Հոջսը նույն օրը, յերբ Կուկի և «հնդիկների» միջև ծագում են թյուրիմացություններ, կղզում թափառում եյին անզեն, և բնիկներից վոչ մեկը մտադիր չէր նրանցից վորևէ իր հափշտակել. ավելին, նրանք ամեն կերպ աջակցություն եյին ցույց տալիս անգլիացիներին, անկեղծորեն ուշադիր և բարյացակամ եյին նրանց նկատմամբ:

Հարավային բևեռային շրջանագծից դեպի հարավ յերկրներ հայտնագործելու խնդիրը վոչ մի րոպե չէր վերանում Կուկի մտքից: Կղզիների վրա չորս ամիս կանգ առնելը միայն ժամանակավոր հանգիստ էր: Առևտուրը կարգավորելու համար պետք էր այցելության գնալ տեղական թագավորներին, պարգևել նվերներ, հյուրասիրել ճաշկերույթներով, կատարել վոչ-այնքան դուրեկան յուրատեսակ ծիսակատարություններ:

Նավապետ Ֆյուրնոյի հետ միատեղ Կուկը համբերությամբ տանում էր ամեն տեսակի հարգոյաձևեր՝ ընդունելություններ, փոխադարձ հանդերձավորումներ, անունների փոխանակումներ և այլն: Խիստ հսկելով բնիկների հանդեպ նավաստիների ունեցած վերաբերմունքի վրա, նա կանոնների ամենաչնչին խախտման համար նավաստիներին պատժում էր բոլորի աչքերի առաջ: Նկուղում փակելը և մտրակելն այնքան խիստ եյին, վոր սարսափ եյին ազդում նույնիսկ «վայրենիների» վրա: Կուկն ինքն էլ խոստովանվում է, վոր «բնիկներն այնքան եյին վախեցել, վոր գիշերը փախել եյին իրենց տներից, և սարսափը տարածվել էր ծովափից մի քանի մղոն հեռու»: Այդ խստություններն արդարացվում եյին քաղաքակրթություն տարածելու և նավային կարգապահություն պահպանելու անհրաժեշտությամբ: Նավաստիներն այդ ընդունում եյին վորպես սովորական պատիժ, մինչդեռ բնիկներն այդ համարում եյին սպիտակամորթների անգթություն, վորը նրանց մեջ առաջացնում էր բնական վախ:

Առևտուրը կարգավորվում է: Նավապետը լեյտենանտներին զինված խմբերով ուղարկում է կղզու զանազան մասերը. նրանք այնտեղ ուլունքները, շապիկները և մեխերը փոխանակում եյին խոզերով, թռչուններով և պտուղներով: «Նրանք խոզը կամ վորևէ թռչուն փոխանակում եյին ամեն մի անպետք բանի հետ»: Այդպես է Կուկի խոստովանությունը: Նավերը լցվում եյին կենդանիներով: Կղզուց մեկնելու ժամանակ Կուկն անպայման տեղական թագավորիկին հանձնում էր պղնձե մեդալիոններ՝ նավերի անվան և տարեթվի մակագրությամբ:

Հուահենե կղզում նավապետ Ֆյուրնոն նավի վրա յե վերցնում մի յերիտասարդ բնիկի, վորը ցանկություն է հայտնում ուղեկցել անգլիացիներին: Նրա անունն էր Ո-Մաի: Վայելչակազմ, գեղեցիկ յերիտասարդը հարուստ բնիկներից էր, ուներ ընդարձակ հողեր և, յեթե չէր պատկանում կառավարող դասակարգին, ապա այն դասակարգերից էր, վորի արտոնություններն եյին՝ լինել տղրուկ, բանեցնել ծառաներ, ունենալ լավ տներ և սնվել լավ կերակրով:

Յերիտասարդ Ո-Մաիի կարճատև պատմությունն ուսանելի յե: Մի կողմից, այդ պատմությունը մի ավելորդ անգամ ևս

ցույց է տալիս Կուկի հայացքները, իսկ մյուս կողմից՝ Լոնդոնի հասարակության վերաբերմունքն անփորձ «հնդիկի» նկատմամբ, և այն «կուլտուրական» ազդեցությունները, որ ներգործել էին այդ պարզ «վայրենու» վրա։ Կուկը շատ էր անհանգստանում, որ Օ–Մային այնքան էլ տիպիկ չէ, վորպեսզի հնարավոր լիներ նրանով ճիշտ գաղափար տալ բնիկների մասին. Նրա կարծիքով, այդ յերիտասարդն այնքան էլ ազնվացեղ և գեղեցիկ չէր։ Սակայն այդ բնիկի վարվեցողությունը շատ շուտով հանգստացնում է նավապետին. «Իրեն պահելու ձևերի շնորհիվ, նա դուրեկան էր լավագույն հասարակության մեջ. Հպարտության ազնիվ զգացմունքն ստիպում էր նրան խուսափել այն մարդկանցից, վորոնք ծագումով ցածր էին իրենից... և քանի վոր նա ուրախությամբ սովորում էր իրեն հովանավորող մեծազարմ մարդկանց ձևերը, հակումներն ու վարմունքը, այդ պատճառով էլ նա համեստ էր և զուսպ»։ Լոնդոնում կոմս Սենդվիչն աշխույժ մասնակցություն է ցուցաբերում յերիտասարդ տահիտցու վիճակի նկատմամբ. Նա նրան իր հետ տանում է Թագավորին ներկայացնելու։ Օ–Մայի առաջ լայնորեն բացվում են բարձր դասակարգի սալոնների դռները։ Լեդիները և լորդերը «հնդիկին» անվերջ հրավիրում են ճաշկերույթների և ընթրիքների, կանչում են հյուրեր՝ այդ տարօրինակ մարդուն ցույց տալու համար։ Ճանապարհորդական ֆանտաստիկ վեպեր ու ընտանեկան կախարդության ձեռնարկներ կարդացած և դեպի զանազան կարգի միստիկ ուսմունքները հակում ունեցող զգայուն կանայք Օ–Մային տալիս են «արեգակի քուրմ» կոչումը. Նրա անձը շրջապատում վոգևորության պսակով, իրենց յերևակայում ի դեպ ստեղծած առանձնահատուկ պաշտամունքի հետևորդներ։ Օ–Մային շրջապատված էր բազմաթիվ յերկսեռ յերկրպագուներով, վորոնք նրան տանում էին սալոնից սալոն, կրկնում էին նրա արտասանած անհասկանալի խոսքերը, վոր բացատրում էին մութ ու խորհրդավոր մարգարեյության բարձր իմաստով։

Յերկու տարվա ընթացքում այդ թուխ «վայրենին» հուզում էր բարձր դասակարգի կանանց յերևակայությունը, ծառայում վորպես շքեղ խաղալիք, վորով զվարճանում էր ունայնությունից ձանձրացած բարձր ու թմրած դասակարգը. վերջապես մեկը

մյուսի նման տոնակատարությունները ձանձրացնում են այդ «վայրենուն», վորը վոչ մի օգտակար բան չի սովորել այդ սպիտակամորթներից։ Նա ցանկություն է հայտնում տուն վերադառնալ։ Ծանրաբեռնվելով ընծաներով, վորոնց մեջ աչքի էին ընկնում յերաժշտական արկղը և էլեկտրական մեքենան, նա Կուկի հետ միասին վերադառնում է Տահիտի։ Թե՛ Ծովակալության առաջին լորդը, թե Բենքսը, թե՛ դոկտոր Սոլանդերը,— վոր մասնակցություն էր ունեցել Օ–Մայի հովանավորության գործում,— և թե՛ Կուկը վո՛չ մի բան չէյին արել, վորպեսզի այդ տահիտցու ուշադրությունը դարձնեն բնիկներին օգտակար յեվրոպական կուլտուրայի վորոշ ճյուղերի վրա։ «Ընթերցողները գուցե, կկարծեն,—ասում է Գեորգ Ֆորստերը,—թե նա իր հետ նավի վրա յեր վերցրել իր հայրենակիցներին իրոք օգտակար առարկաներ։ Յես ինքս այդ հույսն ունեյի, սակայն հուսախաբվեցի։ Դրանում մեղավոր էր ինքը Կուկը։ Նա Օ–Մային կտրել էր նավաստիների հասարակությունից, մինչդեռ նրանց հետ նա ճանապարհին շատ լավ էր ապրում։ Կուկը Կապշտադտում (Քեփթաունում), նրան հագցնելով յեվրոպական հագուստ, դուրս է բերում բարձր հասարակության մեջ, ներկայացնում բարձրաստիճան մարդկանց և առևտրական ընկերությունների հարուստներին։ Խելացի և անհոգ տահիտցին իսկույն ըմբռնում է իր այդ դրության շահավետությունը, հաջողությամբ ընդօրինակում է բարձր դասակարգի մարդկանց ձևերը, հայտարարում է, վոր ինքը ծագումով Թագավորական տոհմից է և մեծ վոգևորությամբ ընդառաջում է Լոնդոնի այլասերված հասարակության անզուսպ զվարճություններին ու գայթակղեցուցիչ վայելքներին։ Կուկն այդ բանում, անկասկած, մեղավոր էր. բայց ինչո՞ւ։ Բացատրությունն, ըստ յերևույթին, Կուկի յուրատեսակ «հայրենասիրությունն» ու վոգևորությունն էր։ Այն ժամանակ ուժնից, յեթե վոչ ազնվականությունից և հարուստ բուրժուազիայից էր կախված հասարակական կարծիքը։ Ո՞վ կարող էր արժանավայել կերպով գնահատել տահիտցիների բոլոր հատկությունները։ Ի՞նչ իմաստ ուներ Օ–Մային թաքցնել նավաստիների և արհեստավորների շրջանում, վորտեղ նա կմնար անհայտության մեջ. այդ կերպ նա չէր կարող հասկացողություն տալ

էր հայրենակիցների մասին, վորոնք, Կուկի կարծիքով, կարիք ունեյին հենց բարձր հասարակության և այն մարդկանց ուշադիր վերաբերմունքի, վորոնք արշավախմբեր եյին ուղարկում դեպի անհայտ կղզիները: Հարկավոր եր, ինչ գնով ել լինի, ապացուցել այդ մարդկանց, վոր հեռավոր կղզիների բնակիչները իրենց նման մարդիկ են. պետք եր հերքել և ջախջախել այն կարծիքը, թե նրանք «դաղանակերպ վայրենիներ են» և չեն կարող յուրացնել յեվրոպացիների քաղաքակրթությունը: Կուկը կատարյալ գիտակցությամբ եր Ո–Մաիին տալիս անգլիացու արտաքին փայլ, հագցնում յեվրոպացու զգեստ, սովորեցնում լավ շարժուձևեր. նա անկեղծորեն հավատում եր դրա օգտակարությանը, իրեն հատուկ կրքոտությամբ իդեալականացնում եր իր գործողությունները և ուրախանում ու պարծենում եր ձեռք բերած հաջողություններով: «Յես չգիտեմ, կգտնվեր արդյո՞ք մի այլ բնիկ, վորը կարողանար ձեռք բերել բոլորի համակրությունը... Յես չեմ լսել, վոր Անգլիայում յեղած յերկու տարվա ընթացքում... նա յերբևէ ցուցաբերած լինի ամենափոքր ցանկություն խախտելու համեստության խիստ սահմանները»: Այդ, ինչպես և մնացած սխալանքները բացատրվում են այն շրջապատի վոգով, վորտեղ ինքը Կուկը ապրել եր և կրթվել:

Կուկն առաջին անգամ հենց Ո–Մաիից ե տեղեկացել, վոր Ընկերության կղզիների բնակիչները մարդկային զոհաբերություններ են անում, վոր զոհի ընտրությունը կախումն ունի գլխավոր քրմից, վոր վերջինս հեռանում ե տաճարի խորքը և այնտեղ զրույց ունենում աստվածության հետ, նրանից իմանում ե, թե ներկաներից ով ե դատապարտվում մահվան: Քուրմը, դուրս գալով ժողովրդի առաջ, հաղորդում ե աստվածության կամքը: Ո–Մաին միամտաբար ավելացնում ե, վոր հարկավոր ե լավ հարաբերություններ ունենալ քրմի հետ, քանի վոր նա իր դժկամությամբ կարող ե աստվածության կամքը դարձնել այն մարդու դեմ, վորը չի սիրաշահել քրմին: Պարզ ե, թե ինչ եյին հետապնդում քրմերը, վորոնք իրենց հոգևոր հոտը պահում եյին սարսափի տակ: Կուկը չեր կամենում հավատալ այդ բանին, ինչպես և չեր հավատում մարդակերության վերաբերյալ զրույցներին. մի դեպք ապացուցում ե նրան, վոր այդ իրոք մի

Տահիտցի Ո-Մաին

սարսափելի ճշմարտություն է: Նոր Զելանդիայի ծովափին գտնվող սպաները տեսնում են քիչ առաջ սպանված յերիտասարդի գլուխն ու փորոտիքը, ձողի վրա ցցած սիրտը, ձողն էլ ամրացված պիրոգի ծայրին: Լեյտենանտ Պիկերսհիլը մի մեխով գնում է այդ գլուխը և բերում նավ, վորտեղ մի կտոր միս կըտրում են, խորովում և, վորպես փորձ, առաջարկում մի Նոր զելանդացու, վորը մեծ բավականությամբ ուտում է: Յերբ այդ մասին պատմում են Կուկին, չի հավատում իր ականջներին: «Այդ արյունաթաթախ գլխի տեսքը և հենց նոր տեղի ունեցած զզվելի տեսարանի մանրամասնությունները սարսափեցրին ինձ և զայրույթ առաջացրին այդ մարդակերների դեմ: Բայց յես այդ չարիքը համարում եյի անբուժելի. հետաքրքրասիրությունն իմ մեջ գերակշռում է բարկությունից և, կամենալով լինել շատերի կողմից կասկածելի համարված փաստի վկան, հրամայեցի ելի մի կտոր կտրել, խորովել և տանել տախտակամած: Դեռ նոր եյին առաջարկել այդ զարշելի կերակուրը, մեկ էլ տեսա մարդակերներից մեկը զարմանալի ագահությամբ կերավ այն»: Կուկը կտրականապես հերքում է այն յենթադրությունը, թե մարդակերությունը սովի հետևանք է: Նոր Զելանդիայի ծովեզերքը հարուստ է ձկներով, թռչուններով, շներով, վոր կարող են բավականաչափ սնունդ մատակարարել նրանց. դեռ չհաշված պտուղներն ու բանջարեղենը: Վո՛չ նա սպանված թշնամուն ուտելու հին սովորությունն է համարում այդ չարիքի պատճառը: Նոր զելանդացիները, չշփվելով այլ ժողովուրդների հետ, պահպանել են այդ հին ավանդությունը, քանի վոր այդ չեյին համարում դատապարտելի. չե՞ վոր թշնամին ևս այդպես կվարվեր: Կուկը հիշում է այն անվստահությունը, վոր արտահայտել եյին մարդակերության մասին իր առաջին ճանապարհորդության նկարագրության մեջ արած յենթադրության առթիվ: Այժմ կասկածանքի տեղիք չկար: «Ինչ պատճառ էլ վոր լինի, յես կարծում եմ, ակնհայտ է, վոր նրանք հաճույքով են ուտում մարդկային միսը»: Պիկերսհիլը Լոնդոն է տանում այդ գլուխը, վորն իր տեղը գտնում է թագավորական ընկերության անդամ սըր Ջոն Հունտերի հավաքածու իրերի կոլեկցիայում: Այդ գլուխն այնտեղ չորացել և սևացել է, կորցրել իր սարսափելի տեսքը, դառնալով թանգարանի սովորական եքսպոնատ. նա չարունակաբար գրավում է նատուրալիստների կասկածոտ հետաքրքրությունը:

Այդ 1773 թվի նոյեմբերին եր, յերբ շրջագայելով Տահիտի և Միության կղզիները, մնալով Միդելբուրգ և Ամստերդամ կղզիներում, Նոր հայտնագործած կղզին անվանելով Հերվեյի—կոմս Բրիստոլի[1] անվամբ, ժողովելով ծովագնացության, աստղաբաշխական և այլ կարգի բավականաչափ տեղեկություններ ու դիտողություններ, ուսումնասիրելով զանազան ցեղերի բնիկ ժողովուրդների կենցաղն ու բարքերը, Կուկը խաղաղ ովկիանոսում ավարտում է առաջին շրջանը և կրկին խարիսխ ձգում Շառլոտա թագուհու նեղուցում:

Յերբ նավերը մոտենում եյին Նոր Զելանդիայի ափերին, վրա յե տալիս փոթորիկը, պատառոտում է առագաստները և քիչ է մնում խութերին զարնելով ջարդ ու փշուր անի նավերը: Գիշերը մառախուղ ժամանակ քամին տանում է «Ձեռնարկություն» նավը, և «Վճռականություն» նավը կրկին մնում է միայնակ: Այս անգամ նավերը չեն գտնում իրար: Կուկը հանդիպման վայրի համար չեր պայմանավորվել Ֆյուրնոյի հետ: Ափերի հետախուզումը և թնդանոթային պայթյունները մնում են անհետևանք: Կուկն այլևս հույս չի ունենում հանդիպելու ընկերակցին, ուստի վճռում է միայնակ ընթանալ դեպի հարավ, կրկին դեպի բևեռային շրջանագիծը: Նա տեսնում եր նավաստիների կայտառությունը, գիտեր վոր պատրաստ են կրելու նոր դժվարություններ: «Նավի անձնակազմն այդ ճանապարհին այնպիսի արիություն է ցուցաբերում, կարծես մի ամբողջ նավատորմ եր ուղեկցում»: Կուկի գիտնական ուղեկիցները համակարծիք չեյին նրա լավատեսությանը և սկսում են քրթմնջալ դժվար ու տաղտկալի ծովագնացության առթիվ: Գեորգ Ֆորստերի օրագրում դրսևորվում է մեծամասնության իսկական տրամադրությունը: Նա գանգատվում է, վոր բոլորն էլ թուլություն եյին զգում անդադար հոգնածությունից և վատ կերակրվելուց: Այդտեղ նա բաց արտահայտվում է, վոր «սպաներին հատկացված ընտիր մթերքների սակավ պաշարն այլևս չի բավականացնում և մեզ

[1] Ծովակալության լորդերից: Ծ. Հ.

սկսում են կերակրել գրեթե սովորական նավաստիների նման»․ վոր «նոր յերկրներ հանդիպելու հույսը չքանում է» և, վերջապես, «զրույցների սովորական նյութերը սպառված եյին։ Առջևը պատկերում եյին նոր սարսափներ, վտանգներ և տաղտկալի միակերպություն»։ Այդ ավելորդ անգամ ապացուցում է, վոր միայն ինքը Կուկն եր անհողդողդ տոչորվում անուրջներով, չնայած բոլոր խոչընդոտներին։ Թող փնթփնթան իր ուղեկիցները։ Ինքն ու նավաստիները դեռևս կդիմանան շատ և շատ փոթորիկների, ալեկոծությունների, ցրտի ու քաղցի․ յեթե իրենց մեջ կա արիության գեթ մի կաթիլ, ապա կկատարեն իրենց պարտքը մինչև վերջ, ինչքան էլ զոհաբերություն պահանջի այդ։ Ծրագրված խնդիրը պետք է ստանա իր լուծումը։

Սակայն Կուկի տրամադրության մեջ նկատվում է յերկվություն, և նա այլևս այնպես խաղաղ ու հավասար չեր, ինչպես թվում եր։ Լինելով ծածկամիտ և զսպված, նա իրեն թույլ չեր տալիս, Ֆորստերի նման, արտահայտել անբավականության զգացմունքներ և գանգատներ։ Ինչպես միշտ, այս անգամ էլ նա ցույց չեր տալիս, թե սրտի խորքում համակրում է ընդհանուրի տրամադրությանը․ համենայն դեպս հասկանում եր ուղեկիցներին ալեկոծող զգացմունքները։ Ստորադրյալների առաջ, ամենից բարձրը՝ պարտականության զգացմունքն եր․ չե՞ վոր նրանք չպետք է նկատեյին նրա թուլությունը։ Գործը չպետք է տուժի ինչ-վոր անձնական, վոչ-վոքի չվերաբերող ապրումներից։ Դեկտեմբերի 6-ին «Վճռականություն» նավը գտնվում եր հարավ․ լայն․ 51°-ի վրա, այսինքն՝ Լոնդոնի հակոտնյա զուգահեռականում։ Այդ հանգամանքն ստիպում է բոլորին մտքով սուրվել դեպի հայրենիք։ Ֆորստերը բաց չի թողնում առիթը սենտիմենտալ ֆրազայով արտահայտելու իր ապրումները․ «Մեր ընտանիքների մասին հիշողությունները և հասարակության կարիքը շրթունքներից հառաչանք են դուրս կորզում, ում սրտում կար վորդիական կամ հայրական սեր»։ Նույն միտքը, սակայն խիստ զսպված ձևով, արտահայտված է Կուկի օրագրում․ «Հաջորդ օրը, յերեկոյան ժամը ութ և կեսին մենք գտնվում եյինք մեր լոնդոնյան բարեկամների հակոտնյա լայնության, այսինքն՝ ամենահեռավոր տարածության վրա»։

Նավը կրկին ընթանում եր մառախուղի ու լողացող սառցե կղզիների միջով, անընդհատ փոխում եր ընթացքը, ուղղվելով մերթ դեպի հյուսիս, մերթ դեպի արևելք, մերթ դեպի հարավ։ Արեգակը գրեթե մայր չեր մտնում․ դրանով իսկ նա օգնում եր նավապետին․ սակայն անընդհատ լարված աշխատանքը, ցուրտն ու խոնավությունը քայքայում եյին նրա առողջությունը․ օրեցոր ուժերը նվազում եյին, իսկ հիվանդության նշանները զորեղանում։ Կուկը հաղթահարում եր իրեն, բոլորից ծածկելով իր վատթար տրամադրությունը։ Ծննդյան տոնի նախօրյակի գիշերը նա սպաների համար ավանդական ճաշկերույթ է սարքում։ Նավաստիներին բաժանում է պուդինգի[1] և ոգու կրկնակի բաժին։ Նա հանաքներ է անում, ծիծաղում է, աշխատում է ամեն կերպ բարձրացնել տրամադրությունը։ Նրան հաջողվում է վստահություն և արիություն ներշնչել ստորադրյալներին։ Հոդացավով և մասամբ ընդախտով տառապող դժգոհ Ֆորստերը գանգատվում է նավաստիների անհոգ ուրախության վրա, նրանց կողմից վտանգներ արհամարհելու, «բարձր հակումներից» զրկվելու վրա։ Չարասրտորեն սրախոսում է նրանց մասին․ «Քանի վոր նրանց ողի չեր տրված, այդ պատճառով նրանք ծննդյան տոնը կատարեցին վորպես բարի քրիստոնյաներ»։

Հարավ․ լայն․ 66°-ի վրա սառցե սպիտակ դաշտերը կանգնեցնում են նավը։ Կուկը վճռում է ընթանալ դեպի հյուսիս՝ մինչև 50°-ը և ապա կրկին փորձել բախտը։ Այդպիսով, նա հույս ուներ, վոր, յեթե չհաջողվի առաջ անցնել դեպի հարավ, ապա օվկիանոսի այդ ամբողջ չհետազոտված մասով անցած կլինի բոլոր ուղղություններով և այդտեղ յեղած յերկրներն անպայման կհայտնագործվեն։ Հունվարի վերջին[1] կրկին ընթանում են դեպի հարավ և նույն դժվարություններով հասնում հար․ լայն․ 70° 1'-ին։ Առջև տարածվող սառցե համատարած դաշտն անշարժ և ահեղ արգելք եր հանդիսանում բոլոր հնարավորությունների համար։ Կուկը հասնում է իր նպատակին՝ յեթե գոյություն ու-

---

1 Անգլիական քաղցր կերակուր։ Ծ․ Թ․

2 Հունվարը հարավային կիսագնդում ամռան ամիս է և համապատասխանում է մեր հուլիս ամսվան։ Ծ․ Թ․

ներ Հարավային Ցամաք, ապա շատ հեռու, սառույցներով ծածկված և նավերի համար անմատչելի: «Քանի վոր յես ձգտում եյի բոլոր նախկին ծովագնացներից ավելի հեռու գնալ, վորից դենը մարդ չի կարող անցնել, այդ պատճառով յես չեյի ցավում, վոր հանդիպեցի այդ խոչընդոտին. Թեկուզ վերջինս նվազեցնում եր վտանգներն ու հոգնածությունը, վոր անխուսափելի յեն հարավային բևեռային ծովերում կատարվող ծովագնացությունների ժամանակ»:

Արշավանքի գլխավոր խնդիրը լուծված եր: Սակայն Կուկը համարում եր, վոր մինչև վերջ օգտագործված չի լինի բոլոր հնարավորությունները, յեթե այժմ, յերբ կա մթերքի պաշար և նավն ու անձնակազմն էլ լավ վիճակում են,—չհետազոտի Խաղաղ օվկիանոսի արևելյան մասը, վորտեղ իրենից առաջ յեղել են այլ ծովագնացներ և անճիշտ ու անկատար են վորոշել իրենց հայտնագործած յերկրների տեղագրությունները: Նա անհրաժեշտ եր համարում ուղղել այդ սխալները, «առաջ մղելով նավագնացության, աշխարհագրության և բնագիտության նվաճումները»: Նա վճռում է 100-րդ միջօրեականով՝ ընթանալ դեպի հյուսիս՝ փնտռելու այն կղզիները, վոր հայտնագործել եյին Հուան Ֆերնանդեսը, Դեվիսը, Կվիրոսը և Բուգանվիլը:

Կուկը, քարտեզում ուղղելով իր նախորդների կատարած սխալները, միաժամանակ անաչառ եր նրանց աշխատանքների գնահատման խնդրում: Իր օրագրում նա բազմիցս առաջարկել է ընթերցողներին ծանոթանալ դեպի Խաղաղ օվկիանոս կատարած ճանապարհորդությունների մասին ժողովածվի հետ, վոր հրատարակել եր Դելրիմպլը և հաճախակի հիշատակում է իր այդ անբարյացակամ մարդու գիտական հետազոտությունները: Նա իրոք վոր արդարամիտ եր և գիտական դատողությունները յերբեք չեր շփոթում իր անձնական գործերի հետ, վոր վերաբերում են միայն իրեն: Նա վորոշ հարցերում ընդունում եր Դելրիմպլի, ինչպես և այլ գիտնականների հեղինակությունը: Գիտության մեջ չպետք է տեղ գտնեն անձնական հաշիվները: Այդ կանոնը նա գործադրում եր միշտ, և այդ պատճառով նրա հաղորդագրություններն ու զեկուցումները, ի տարբերություն շատ ուրիշների, լիարժեք են:

Ցրտից դեպի շոգը տեղի ունեցած խիստ փոփոխությունը վերջնականապես կոտրում է օրգանիզմի համառ դիմադրությունը: Սկսվող լնդախտն ընդունում է մաղձի հիվանդության բնույթ: Կուկը, իհարկե, կամենում եր բոլորից ծածկել իր տկարությունը, կարծելով, թե առաջվա նման կհաղթահարի հիվանդությունը: Անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու փոխարեն, նա իրեն ձևացնում եր կատարելապես առողջ, և շարունակում եր ուտել այն ամենը, ինչ ուտում եյին մյուսները: Աղ դրած հին միսը, փչացած ջուրը, յերեք ու կես ամսվա անդուլ աշխատանքը նրան հալից գցեցին: Նա ստիպված պառկում է անկողին և դեղեր ընդունում, վոր առաջացնում է փսխում. դրանից նա ե՛լ ավելի յե հյուծվում: Տիրում է խրարանցում: «Շուտով,—գրում է Ֆորստերը,—նա սկսում է զկռտալ, վորը տևում է ավելի քան քսան չորս ժամ և ստիպում է մեզ վախենալ նրա կյանքի վերաբերմամբ: Փորձում են բոլոր դեղերը, բայց բոլորն էլ անօգուտ: Մի ամբողջ շաբաթ նրա կյանքը վտանգված եր»: Այս անգամ Կուկն իր հիվանդությանն ինքն էլ է հատկացնում մի քանի տող, թեպետ այդ գրության մեջ նա հիշատակում է նավային վիրաբույժ Պատտենի բժշկական տաղանդի մասին, նավը դեկավարող ավագ լեյտենանտ Կուպերի լավ աշխատանքի մասին և, վերջապես, սրախոսում է Ֆորստերի սիրած շան առթիվ, վոր մորթում և յեփում են նրա համար. Նա գրում է. «Այդ կերակուրը, վորից կհիվանդանային յեվրոպացիներից շատերը, ինձ ույժ տվեց և արագացրեց իմ ապաքինումը. խիստ ճշմարիտ է, վոր օրենքները փոփոխվում են կարիքից»: Միայն մարտի սկզբին, յերբ «Վճռականություն» նավը մոտենում է Զատկվա կղզու ափերին, Կուկը և նրա ուղեկիցները, մեծ քանակությամբ ձկներ վորսալով, կարողանում են այդ թարմ սննդով վերականգնել իրենց ույժերը: Ցամաքի տեսքը և թարմ կենսամթերքի պաշար ձեռք բերելու հույսը, ինչպես միշտ, այս անգամ էլ բարձրացնում են բոլորի տրամադրությունը: Բաց ծովում, ցուրտ և մառախլապատ յեղանակին, առանց թարմ սննդի, վտանգավոր նավագնացության հարյուր օրն ընկել եր անցյալի գիրկը:

«... Քանի վոր մենք նրան նկատեցինք Քրիստոսի հարության

հանդիսավոր որը, ուստի և նրան անվանեցինք Իստեր-այլենդ, կամ Զատկվա կղզի...»: Կուկը հիշում էր Բերենսի այդ խոսքերը՝ նրա «Փորձված հարավային մարդը» գրքում, հիշում էր հոլանդական ծովակալ Ռոգեվելենի նավային օրագրի շատ անգամ կարդացած տողերը. նա էլ իր նման 1772 թվին փնտրել է Հարավային Ցամաքը և միայն մեկ օր է անցկացրել այս կղզում[1]: Նկարագրությունները ճիշտ էին. լերկ ու մութ ժայռեր, անհրապույր ափեր, ծառերից ու թփուտներից զուրկ, առանց բնակության հետքերի, ստորերկրյա կրակի մռայլ ստեղծագործություն՝ լավայով ծածկված քաոս, հրաբխից ժայթքած քարեր և բազմաթիվ տարօրինակ արձանաձև սյուներ, կարծես քանդակած ահագին դեմքերով, յերկար ականջներով, ծուռ քթերով, գլուխներին անհասկանալի ահագին գլանաձև քարեր: Ահագին հսկաները կարծես կպած էին իրենց տակի կառուցած քարե պատվանդաններին: Մեռած ու դատարկ աչքերը կարծես խմաստուն և սուր հայացքով նայում էին ծովին. Նուրբ և փակ շրթունքները կարծես լռությամբ հավիտյանս պահում էին դարավոր գաղտնիքը, իրենց կերտվածքի չլուծված իմաստը, հազարամյա խավարում մոռացված անունները: Կուկը դիտակով նայում է այդ տարօրինակ արձաններին և նրանց ահագին ստվերի տակ վխտող մի քանի բնիկների: Աչքը զուր է հարմար ծովախորշ փնտրում. ժայռերը հավասար պատի նման յեզրում են կղզին: Գիշերվա մութը լուսավորվում է արձանների մոտ վառած կրակով: Արդյո՞ք բնիկները զոհաբերություն են անում իրենց աստվածներին, թե՞ պարզապես կերակուր են պատրաս-

[1] Կառլ Ֆրիդրիխ Բերենսը, այսինքն՝ Ռոգեվելենի ուղեկիցը, իր ճանապարհորդությունը նկարագրել է «der wohlversuchter Südländer» գրքում (leipzig 1738»): Յակոբ Ռոգեվելեն (1669) հոլանդական ծովակալն է. 1721 թ. ճանապարհ է ընկել հարավային կիսագնդում նոր յերկրներ հայտնագործելու համար: Հասել է հար. լայն. 62°-ին: Հայտնագործել է Զատկվա կղզին և Պոլինեզիայի ու Ավստրալիայի մի շարք այլ կղզիները: Հայտնագործված նոր յերկրների տեղագրության սխալ վորոշումը նսեմացնում է նրա հայտնագործությունների նշանակությունը: Իր նկարագրած ճանապարհորդությունները հոլանդերեն հրատարակված են Դորդրեխտում: Ծ. Հ.

տում: Առեղծվածային կղզին չի կամենում ընդունել ոտարերկրացիներին: Նա խարխափում է խավարում, և միայն կրակի բոցով կենդանացած քարե հսկաների սոսկալի դեմքերն են կարծես հանդիսավորությամբ պահպանում հառաչող ովկիանոսը:

Զատկվա կղզու բնիկները այնքան էլ խորհրդավոր չէին, ինչպես թվում էր: Կարճահասակ և թուլակազմ, դեմքով ու բարբառով տահիտցիներին նման, միայն այն տարբերությամբ, վոր ականջաբլթակները յետ էին քաշված մինչև ուսերը: Դրանով նրանք աշխատում էին նմանվել քարե հսկաներին, գուցե յերկյուղածություն զգալով ոտար, վոչ-սեփական ձեռքով քանդակած աստվածների առաջ: Խորհրդավոր էր նաև այն, թե ինչպես է այդ հեռավոր կղզին ընկել տահիտցիներին մերձավոր այդ ցեղը: Ստորերկրյա ցնցումների ի՞նչ ուժ է ստեղծել կամ կործանել Խաղաղ ովկիանոսի կղզիները, դարերի ընթացքում փոփոխել յերկրագնդի դեմքը, վոչնչացրել ժողովուրդներ, խորտակել ցամաքներ, կործանել պետություններ, մնացած հատ ու կտոր ցամաքի վրա խնայել ու փրկել մարդկության մնացորդներ, վորոնք պատահաբար պահպանվել են ծովի մեջտեղում մնացած ժայռոտ բեկորների վրա և այլասերվել կիսաանասնական խղճուկ վիճակում:

Կուկի ուղեկիցներն (ինքը շատ էր թույլ, վորպեսզի կարողանար հետևեր նրանց), ափ իջնելով, սկսում են փնտրել ջուր, փայտ և թռչուններ: Բայց մեռած կղզին չկարողացավ վորևե բան տալ, բացի կեղտոտ, նեխված, կիսաաղի և գարշահոտ ջրից, վորը գոյացել էր ջրհորում, նաև մասամբ բանջարեղենից: «Վոչ մի բան չպետք է դրդի նավերին կանգ առնելու այս կղզու ափերի մոտ,—գրում է Կուկը,—բացի այն դեպքերից, յերբ նրանք սոսկալի աղետ են կրում»:

Մարմինները նկարազարդած բնիկները փնթփնթում էին կիսատահիտական բարբառով, բանջարեղենն ու փայտե արձանիկները փոխանակում էին կտորով, ուլունքներով. Նրանք գողանում էին անգլիացիների գլխարկներն ու թաշկինակները:

Կուկին նույնիսկ չի հաջողվում պարզել կղզու իսկական անունը: Ոդիդեյը հավատացնում էր, վոր բնիկները նրան անվանում են Տեապի: Կուկն ստիպված է քարտեզում թողնել այն ա-

նունը, որ այդ կղզուն տվել եր հոլանդական ծովակալը. Նա միայն ճշտում ե տեղագրության վերաբերյալ տվյալները: Կուկը վճռում ե շուտով հեռանալ այդ անհրապույր ափերից, որոնք խիստ ժլատությամբ են փոխհատուցում կրած բոլոր նեղությունները. Նա վճռում ե ընթանալ դեպի Մարկիզյան կղզիները, յեթե ճանապարհին որևե այլ յերկիր չպատահի:

Այնուամենայնիվ նավի ղեկավարությունը նա չի հանձնում մի ուրիշին՝ ինքն ե ղեկավարում նորոգման զանազան աշխատանքները և կատարում աստղաբաշխական դիտողությունները: Կվիրոսի հետ միատեղ 1595 թվին Մարկիզյան կղզիները հայտնագործող իսպանացի Մենդանայի քարտեզի անճշտություններն ստիպում են նորից փնտրել ամենակարճ ուղին և քարտեզում նշել նոր թվեր [1]: Նավապետի առանձնասենյակի սեղանի վրա փռված գրքերի և քարտեզների-օգնությամբ առավոտից մինչև յերեկո գիտնականների հետ քննության եյին առնում այն, թե դեպի ուր լավ կլինի նավին ուղղություն տալ, ստուգում եյին աշխարհագրական լայնություններն ու յերկայնությունները: Հին քարտեզներում որեցոր կատարվող ուղղումներով կղզիները փոխադրվում են դեպի իրենց իսկական տեղը: «Հիմա որ շարունակ մենք անցնում եյինք զանազան վայրերով, որտեղ աշխարհագրագետները նշանակել եյին այդ կղզիները»: Վերջապես, ապրիլի 6-ին կամավոր Գուդը առաջինը տեսավ այդ կղզին: Դա մի կտոր ցամաք եր, որն աննկատելի յեր մնացել Մենդանայի համար: Կուկն այդ կղզին անվանեց Գուդ:

Կուկը հաշվի չեր առել իր ուժերը. Նա չեր պաշտպանվում արևից, ուստի վատթարացրեց իր հիվանդությունը: Մարկիզյան կղզիների շրջագայության ամբողջ վեց օրվա ընթացքում նա իրեն շատ վատ եր զգում: Բացի այդ, սնունդը դեռևս չեր կանո-

[1] Ալվարո Մենդանա դե Նեյրա—իսպանացի ծովագնաց, 1568 թվին ճանապարհորդել ե Խաղաղ օվկիանոսում, մեկնելով Պերուից: Նա հայտնագործել ե Սողոմոնյան կղզիները: Կվիրոսի հետ 1594 թվին կատարած իր յերկրորդ ճանապարհորդության ժամանակ հայտնագործել ե մի խումբ կղզիներ, որոնք նրա հետագա անունով կոչվել են Մարկիզյան: Այդ խմբին են պատկանում հետևյալ հինգ կղզիները՝ Մագդալինա, Սան-Պեդրո, Դոմինիկա, Սանտա-Կրիստինա և Գուդ, որ հայտնագործել ե Կուկը: Ն. Թ.:

նավորված: Վերջնական նպատակ եր կազմում ելի նույն Տահիտին՝ հանգստի և մատակարարման այդ փորձված բազան: Մարկիզյան կղզիները, ինչպես հետագայում նաև Հարթ կղզիները, հանդիսանում եյին քարտեզների ստուգման կայան և նրանց ափերի գծագրության ու կյանքի համառոտ ուսումնասիրության կետ: Վատ ինքնազգացողությունը, որն առաջին անգամն եր թունավորում նրա կյանքը, խանգարում եր աշխատանքները, խայտառակ կերպով դուրս պրծնում և չեր յենթարկվում կամքի ուժին, բարկացնում եր Կուկին և առաջացնում անտեղի գրգռվածություն: Բնիկները, որ առաջին կայանում մոտեցել եյին պիրոգներով, հավաքվում են նավի տախտակամածի վրա: Ջղայնացած Կուկը դժկամությամբ եր լսում անտանելի գոռգոռոցը: Ափ իջնելիս նա նախազգուշացրել եր սպաներին. «Դուք պետք ե լավ հսկեք նրանց, այլապես առանց այդ նախամիջոցի, նրանք կըսկսեն գողություն անել»: Այդ ասելով, նա իջնում ե մակույկ, և հենց այդ միջոցին նրան զեկուցում են, որ բնիկներից մեկը տախտակամածից գողացել ե յերկաթե գործիքը և պիրոգում փախչում ե դեպի ափ: Կուկը չի կարողանում իրեն զսպել. Նա հրամայում ե կրակ բացել. յերրորդ գնդակը տեղն ու տեղը սպանում ե «գողին»: Որագրի մեջ ասված ե, որ ամբոխի աղմուկը խանգարում ե սպային, ինչպես հարկն ե, լսել հրամանը, որով արգելված եր սպանություն կատարել. բայց Ֆորստերի որագիրը, կարծես, այս անգամ ել մերկացնում ե նախամտածված արարքը: Նա պատմում ե, որ Ոդիդեյը լաց յեղավ, թե ինչպես «մի չնչին բանի համար մարդն սպանում ե մարդուն»: «Նրա ցավակցությունը,—լրացնում ե նա,—պետք ե ստիպի ամաչել քաղաքակրթված նավաստիներին, որոնք հաճախ խոսում են մարդասիրության մասին, բայց իրենց սրտում խղճահարություն չեն զգում»:

Նավապետի ջղայնությունը հասնում ե այն աստիճանի, որ նա մի անգամ խփում ե մի նավաստու, որը վատ եր կատարում ինչ-որ աշխատանք. այդ կրկին առաջացնում ե ներկա գտնվող բնիկների զարմանքը: Նրանք ցույց են տալիս Կուկի վրա և գոչում՝ «Նա խփում ե իր մերձավորին»: Ըստ յերևույթին, «վայրենիները» հիմար չեյին: Հավանորեն, Կուկն ինքն ել

գոհ չէր իր արածից, երբ տահիտցին թարգմանում է նրան այդ խոսքերը: Ֆորստերը այդ բացատրում է Մարկիզյան կղզիների բնակչության քաղաքական և սոցիալական հետամնացությամբ. «Նրանք դեռևս չեն հասել քաղաքակրթության այն վիճակին, որին հասել են տահիտցիները. Նրանք չեն տարբերում աստիճանների տարբերությունները, ուստի նրանց քաղաքական սահմանադրությունը չի ընդունել վերջնական միապետական ձև»:

Կուկն այդ մասին ոչինչ չի ասում: Եվ ինչի մասին խոսել, երբ նա ինքն այդ օրերին իրեն համարում էր ավելի վատ, քան մի որևէ ֆլիբուստյեր[1], որը ճանաչում է ծովահենների օրենքը, ավելի վատ, քան իսպանական կոնկիստադորը, որն այրում էր հնդիկների գյուղերը: Զզվելի հիվանդությունը խանգարում էր իրեն քայլելու, մթագնում էր ուղեղը, ծալվում էին ոտքերը, շրջապատը ծածկվում էր դեղին բծերով: Կուկը ծայրաստիճան լարում էր իր կամքը: Նա չէր թողնում, որ հիվանդությունը տեր դառնա և իրեն դարձնի խղճուկ: Այդ չպետք է լինի յերբեք: Նա հաղթահարում էր ցավը բոլոր յեղանակներով, ճնշում էր դյուրագրգռությունը, իր ուշադրությունը գրավում էր ուժգին աշխատանքներով: Շրջապատողներն աստիճանաբար տեսնում են, որ նա դառել է նախկին գործունյա, խաղաղ ու խստապահանջ նավապետը և առավոտից յերեկո զբաղված է նավային տնտեսությամբ ու գիտական դիտողություններով:

Այդ կղզիների բուսականությունը, կենդանական աշխարհը, բնիկների կենցաղը շատ քիչ էին տարբերվում Տահիտիից: Կուկը և նրա գիտական ուղեկիցներն այլևս միտք չունեին մնալու այդ կղզիներում: Կուկը, այդ կղզիներից վերջինի՝ Սանդա Կրիստինայի ծովախորշը «Վճռականություն» անունով կոչելուց հետո, նավն ուղղում է դեպի Հարթ կղզիները կրկին նույն նպատակով՝ այսինքն տեղի քարտեզը ճշտելու նպատակով:

Կորալյին խութերով շրջապատված և կոկոսի արմավենիների անտառներով հարուստ Հարթ կղզիների արշիպելագն անցնելուց հետո, «Վճռականություն» նավն ընթանում է դեպի Տահիտի և խարիսխ է ձգում Մաղավայի ծովախորշում:

[1] Ծովահեններ, որոնք հայտնի էին XVII և XVIII դարերում: Ծ. Թ.

Տահիտցուն ընտելացնելու փորձը Կուկին հաջողվել էր միայն կիսով չափ: Օդիդեյը նավի վրա ապրած ժամանակամիջոցում յուրացրել էր քաղաքակիրթ վարք ու բարքի որոշ կանոնները և իրեն պահում էր ամեն մի յեվրոպացուց ոչ պակաս պարկեշտությամբ: Բացի այդ, նա ընդունակություններ էր ցույց տալիս անգլիական լեզուն և հաշիվը յուրացնելու նկատմամբ և հետաքրքրասիրություն էր ցուցաբերում ամեն բանի վերաբերյալ, որ կատարվում էր և կար նավում,—մինչև իսկ աստղաբաշխական գործիքներն ու քարտեզները,—աշխուժորեն հետաքրքրվում էր բնության անծանոթ յերևույթներով, կենդանիներով և մարդկանցով: Կուկին նա վերաբերվում էր նույնիսկ որոշ ակնածությամբ, քանի որ հասկացել էր նրա, որպես նավի ղեկավարողի ու պետի դերը: Իր ըմբռնելու կարողությամբ և բարեսրտությամբ նա գրավել էր բոլորի համակրանքը և իր հերթին, կարծես, բարեկամացել էր Կուկի ու նրա ուղեկիցների հետ: Սակայն բնությունն այնուամենայնիվ հաղթանակում է. հենց որ «Վճռականություն» նավը կանգ է առնում Տահիտիի ծովեզերքին, Օդիդեյն իսկույն նավից ափ է իջնում և գնում իր հարազատների և բարեկամների մոտ. ոտարեկրացիների բոլոր միջոցներն անզոր են լինում կրկին հրապուրելու նրան, որպեսզի այնուհետև էլ ուղեկցի նրանց հետ ծովագնացությանը: Հիրավի, այդ բնիկը մասնակցել էր ծովագնացության աննպաստ ժամանակամիջոցում, ուստի և հարավային լայնության խիստ յեղանակները շատ ուժեղ էին ազդել նրա յերևակայության վրա: Յե՛վ սառնամանիքը, և՛ սառցե ահռելի ու անհրապույր լեռները կարող էին այդ տահիտցու հոգու մեջ առաջացնել մռայլ և անհույս տպավորություններ, մինչդեռ փոքրուց նա ընտելացել էր տաքին ու իրենց բնության բարխո-զորմ փարթամությանը: Սակայն տահիտցին շատ սրտաշարժ կերպով է հրաժեշտ տալիս անգլիացիներին: «Յերբ մենք պետք է բաժանվեյինք նրանից, նա վազում էր նավասենյակից նավասենյակ, որպեսզի բոլորի հետ էլ դրկախառնվի. իսկ յերբ «Վճռականություն» նավը խարիսխը հանում է շարժվելու, նա աղիողորմ լաց էր լինում»: Խութերի մոտով անցնելուց հետո, մենք դեռ տեսնում էինք, թե նա ինչպես է ձեռքերը պարզում դեպի

մեզ»։ Տեղական թագավորիկների հետ հարաբերություններ հաստատելուց հետո, Կուկը կարգադրում է նորոգել նավը, կարկատել առագաստները, նորոգել նավի սարքավորումը։ Թարմ սնընդի և վոչ-այնքան տաք օդի շնորհիվ արագորեն վերականգնվում է առողջությունը։ Այս անգամ բնիկները ցուցաբերում են կատարյալ վստահություն, հայթայթում են ինչ վոր անհրաժեշտ եր և ուրախություն պատճառում Կուկին, քանի վոր յուրացրել եյին նրա պատգամները՝ այսինքն մշակել եյին բանջարանոցներ և բազմացրել ընտանի կենդանիներ։ Մի տարի առաջ այդտեղ թողնված այծերը գիրացել եյին։ Նա վճռում է նրանց նվիրել մի չափ արտասովոր ընծա՝ ափ իջեցնել նավային կատվի ամբողջ սերունդը—քսան ձագերին։ Կուկը, թեպետ և զգում եր բնիկների խավար կենցաղի նկատմամբ մեծ դժվարությամբ տարած հաղթանակը, այնուամենայնիվ զգաստ եր։ Նա նավաստիներից ավելի մեծ խստությամբ է պահանջում կատարել կարգապահության կանոնները. սպաներին պահանջ եր դնում՝ անպայման մեղմ վարվել տահիտցիների հետ, և արգելել եր, առանց իր գիտության և դատի, վորևե պատժի գործադրում։ Նա միշտ ել աշխատում եր տեղական թագավորիկի առաջ ընդգծել հրազեն գործիքի առավելությունը, թնդանոթներից կրակել եր տալիս անգնդակ լիցքեր, արձակում եր հրթիռներ։ Այդ բոլորը արվում եր, վորպեսզի կանխվի բնիկների կողմից հարձակման վորևե փորձը։ «Նրանք շատ լավ եյին զգում իրենց քանակական գերազանցությունը, և վոչ վոք չի կարող գիտենալ մասսայի ուժը զայրույթի միջոցին»։ Իրոք, տահիտցիներն այս անգամ ցույց տվին իրենց ուժը, բայց անգլիացիների նկատմամբ խաղաղ ձևով։ Նրանք չվախեցան առաջ դուրս բերել իրենց ամբողջ նավատորմը. դրանով մեծ զարմանք պատճառեցին Կուկին։ Այդ նավատորմը բաղկացած եր մեծ պիրոգներից, վորոնք շինված եյին պինդ, զարդարված եյին տարօրինակ և խայտաբղետ սարքով, ծածանվող դրոշներով. զինվորները հագել եյին ալ կարմիր և սպիտակ հագուստ, գլխներին—բարձր ու հյուսված սաղավարտներ, կանաչ և կապույտ փետուրներով։ Հազարավոր նիզակներով զինված մակույկների ահագին քանակությունը պատկառելի տեսարան եր ներկայացնում։ Կուկի հաշվով այդտեղ

կար մոտ յերեք հարյուր յերեսուն պիրոգ՝ յոթ հազար յոթ հարյուր վաթսուն զինված մարդկանցով։ Բնիկների թագավորիկը հանդստացնում է Կուկին, վստահելով, վոր այդ նավատորմն ուղղված չե նրա դեմ, այլ պատրաստվում է արշավելու մի այլ կղզու վրա։ Կուկը ցանկանում եր ոգտվել դեպքից և ներկա գտնվել ծովային արտասովոր ճակատամարտին, վորպեսզի այդպիսով ե՛լ ավելի ճիշտ վորոշի կղզիաբնակների ուժը և ուսումնասիրի նրանց ռազմական ընդունակությունները։ Բայց տահիտցիները Կուկից ավելի խորամանկ գտնվեցին։ Նրանք տեղից չեն շարժվում, մինչև վոր «Վճռականություն» նավը չի մեկնում այդտեղից։ Նրանք հավատացնում եյին, վոր միայն պատրաստություններ են տեսնում, վոր արշավանքն ուշ է սկսվելու. Պարզ եր, բնիկները չեյին կամենում, վոր ոտարերկրյա նավը ներկա գտնվեր իրենց ընտանեկան վեճերի ժամանակ։ Ո՞վ կարող եր յերաշխավորել, թե ում կողմը կլինի այդ կանաչ հագուստով և յեռանկյունաձև գլխարկով նավապետը, ո՞ւմ վրա հուր և ծուխ կթափի նա իր ահագին թևավոր պիրոգից։ Հեռավոր վայրից յեկած այդ «բարեկամի» գնահատման մեջ տահիտցիները իմաստուն են յեղել։ Ընդհանրապես Կուկին չի հաջողվել խոր ըմբռնել բնիկների սոցիալական կարգերի բուն եյությունը և լրիվ չափով ուսումնասիրել նրանց քաղաքական կարգերը։ «Ցավալի յե,—գրում է նա,—վոր մենք այդչափ մակերեսորեն ենք ծանոթ նրանց պետական կառուցվածքին. մենք չգիտենք, թե ինչ կապակցության ու հարաբերության շնորհիվ և վորքան տարբեր դասակարգեր, աստիճաններ, պաշտոններ ու պարտականություններ են կազմում մի ամբողջություն։ Այնուամենայնիվ յես վստահ եմ, վոր այդ ֆեոդալական տեսակի կառավարչություն է և, յեթե կարելի յե դատել այն բոլորի հիման վրա, ինչ մենք տեսել ենք, այդ կարգերը հաստատուն են և նրա ձևերի մեջ չկա վոչ մի արատավոր բան»։

Հաջորդ չորս ամիսը, վորի ընթացքում Խաղաղ ովկիանոսում կատարված եր նավագնացության յերկրորդ շրջանը և արշավախումբը կրկին հասել եր Նոր Զելանդիայի ափերը, կազմում է Կուկի կյանքի ամենաբախտավոր ժամանակաշրջաններից մեկը։ Այդ կարճ ժամանակամիջոցում նա հայտնագործել է բազ-

մաթիվ նոր յերկրներ, նոր ժողովուրդներ, գտել է բնության մի շարք հազվագյուտ յերևույթներ, ժողովել է գիտական խիստ արժեքավոր նյութեր: Իրեն հայտնի Գուաենե և Ուլիետեյե կղզիներում մնալուց հետո, նա անցել է Միության կղզիները. Տասմանի հայտնագործած Ռոտերդում կղզին, այդտեղից՝ Անգլիայից մեկնելու յերկրորդ տարեդարձի օրն անցել էր կղզիների ընդարձակ արշիպելագը, վորն անվանել է Նոր Հեբրիդներ: Տաննինը կղզի յեր, ծածկած փարթամ բուսականությամբ, գեղեցիկ ու աղմկող ջրվեժներով, բազմապիսի խայտաբղետ ու գեղուն թռչուններով, շաքարեղեգնի պլանտացիաներով և կոկոսի արմավենու անտառներով: Դրանք ունեյին բնիկների խիտ բնակչություն, վորը տահիտցիներից տարբերվում էր մուգ մորթով և կարճ հասակով: Մարդկանց մի նոր տեսակն էր դա, վորին չեյին հանդիպել ովկիանոսի այլ կղզիներում: Ուրախությունից հուզված Կուկը կանաչ ճյուղով դուրս է գալիս անծանոթ կղզու ափը՝ նոր մարդկանց մոտ: Այդ րոպեներին Կուկը լիառատ ու սրտաչարժ անկեղծությամբ գրկում էր սևամորթ բնիկին և հազիվ էր կարողանում պահել իր արտասուքները: Մալիկոլո կղզու ծուռոտանի և կարճահասակ բնիկն իր նկարազարդած դեմքը չանգռտում է, քսելով նավապետի բաճկոնի պղնձե կոճակներին և այդ ամբողջ գործողությունն ըմբռնում է ըստ իր հասկացողության, այսինքն՝ սպիտակամորթ պետը վոչ վոքի չի սպանի և շահավետ կլինի ջուրն ու սովորական պտուղները փոխանակել փայլուն ուլունքներով և գունավոր կտորեղենով:

Կուկը տարված էր իր վսեմ հովանավորողների շնորհապարտությամբ. կղզիներին, ծովախորշերին և նավահանգիստներին նա տալիս էր Ծովակալության լորդերի և Քեմբրիջի գիտնականների անուններ: Մալիկոլոյի մի նավահանգիստը և կղզիներից մեկն ստանում են կոմս Սենդվիչի մեծաղղորդ անունը: Այդ անվանը Կուկը շատ էր պարտական: Վերջին անգամը չէր, վոր նա այդ անունով կոչում էր նոր հայտնագործած յերկիրը. բախտի տարօրինակությամբ ճակատագրական կապերով իրար են կապվում անվանի արիստոկրատի տոհմն ու Յորքշիրի բատրակի վորդու կյանքն ու մահը:

Ի տարբերություն այլ յեվրոպացիներից, Կուկը հիշաչար

չէր, ներում էր կղզիների բնիկներին նրանց թշնամական վարմունքը: Նա վրիժառու չէր: Նույնիսկ յերբ կղզիներից մեկում բնիկները վիրավորում են նրա պարանոցը, իսկ պրոֆեսոր Ֆորստերի վոտը, նա պարզապես գերադասում է թողնել և հեռանալ այդ կղզուց: Ճիշտ է, ընդհարումների մեծ մասին տեղիք եյին տալիս անգլիացիները: Գեորգ Ֆորստերը, վորը կաշկանդված չէր պաշտոնական դիրքով, չի վախենում անկեղծորեն հայտնել ճշմարտությունը. «Ընթերցողը կնկատի, վոր այդ հնդիկները շատ ավելի հիմք ունեյին գանգատվելու մեր մարդկանց ապորինի և անարդար վերաբերմունքի վրա, և զինված եյին վրիժառության զգացմունքով ու զայրույթով»: Հայտնագործությունների հաջողությունը մթագնել էր ամեն ինչ: Չնայած ամեն րոպե նավին սպառնում էր կործանում, Կուկը համառորեն շրջագայում էր խութերի միջև և նավը դիտմամբ դուրս չէր բերում այդ արշիպելագից: Մի քանի գիշեր շարունակ նա չէր քնում և անձամբ ղեկավարում էր ամենավտանգավոր նավարկությունը: Տաննա կղզին հարուստ նյութ է տալիս հրաբխային գործունեյությունը դիտելու համար: Լեռը ժայթքում էր կրակ, լավա, մոխիր և քարեր: Գետնի և ջրի ջերմությունը հասնում է յերկու հարյուր աստիճանի և ավելի: Յեռացող աղբյուրի մեջ գցած արծաթե դրամը դառնում է փայլուն և նոր: Հայր և վորդի Ֆորստերները բարձրանում են հրաբխի վրա, կամ ժողովում են բույսեր և բնիկների բառեր: Տաննայի բնակիչների հետ ծանոթությունն ստեղծվել էր վոչ սովորական կարգով: Բնիկներն հենց սկզբից ցուցաբերում են անբարյացակամության բոլոր նշանները՝ մեջքը դարձնում են մակույկով մոտեցող ոտարերկրացիներին և կրունկով խփում իրենց յետևին. այդ կռվի կոչ անելու ավանդական ձևն էր: Այս անգամ Կուկը չափազանց սրամիտ է վարվում: Նախ նա հրամայում է բոլոր հրանոթներից կրակ բացել անգնդակ լիցքով. դրանով նա ցրում է ամբոխը. ապա գետնի վրա գծում է մի գիծ և բնիկներին հասկացնել տալիս, վոր արգելում է անցնել այդ գիծը: Այդ յուրատեսակ սահմանագիծը անգլիացիներին հնարավորություն է տալիս ափ իջնել աստիճանաբար և խաղաղ առևտուր սկսել: Նավապետի հաջող գյուտն ստանում է լայն գործադրություն: Լեյտենանտներն

սկսում են հաջողությամբ գործադրել այդ մոգական գիծը, երբ անհրաժեշտ է լինում կանխել բնիկների հարձակողական տրամադրությունը: Բայց կղզու բնակիչները եվրոպացիներից ավելի խորամանկ հանդիսացան. լեյտենանտներից մեկը բնիկից պահանջում է կոկոսի ընկույզ, մինչդեռ նա համառորեն մերժում է: Սպան գծում է գիծ և խստիվ պահանջում է փոխանակություն կատարել: Այն ժամանակ բնիկը նստում է գետնին և իր շուրջը գծում շրջանագիծ, կամենալով ասել, որ արգելվում է անցնել այդ գիծը: Շփոթված եվրոպացին ստիպված տեղի է տալիս:

Վերջապես, երբ Կուկը հեռանում է Նոր Հեբրիդներ արշիպելագից և ուղղակի ընթանում դեպի Նոր Զելանդիա, միանգամայն անսպասելի կերպով պատահում է մի նոր երկրի: Նրա տեսքը հիշեցնում է Շոտլանդիայի մռայլ ափերը, ուստի և նա այդ կղզուն տալիս է Հյուսիսային Անգլիայի հին անունը՝ Կալեդոնիա: Ահագին լերկ լեռնաշղթան ձգվում էր ամբողջ երկրի երկարությամբ: Խարիսխ են ձգում. արշավախումբը պատրաստվում է դիտել արեգակի խավարումը: Կուկը ղեկավարում է աստղադիտարան հաստատելու գործը: Բնիկները բարյացակամ և հյուրասեր էին. բայց տարվա եղանակն աննպաստ էր փոխանակության համար. ուստի բնիկները դժկամությամբ են փոխանակում պտուղներ: Կուկը, ձկից թունավորվելով, նորից հիվանդանում է: Ձկան թույնը ծյուրում է նրա հոտառությունը և տենդ առաջացնում: Բարեբախտաբար, հիվանդությունը շուտով անցնում է. առաջացած հուզումն անտեղի է լինում: Աստղաբաշխական դիտողությունները հիանալի արդյունք են տալիս: Իսկ երբ Կուկը նավն ուղղում է ծովափով, որպեսզի ե՛լ ավելի մանրամասնորեն ուսումնասիրի այդ երկիրը, նավն ընկնում է բազմաթիվ կղզիների և վտանգավոր խութերի խառն ու փնթոր լաբյուրինթոսը՝ նավապետը կրկին ստիպված է լինում լարել իր բոլոր ուժերը, հրաժարվել քնից, որպեսզի նավն այդտեղից հաջողությամբ դուրս բերի: Ցանկությունը առաջացնում է երկվություն՝ նա կամենում էր ե՛լ ավելի լավ հետազոտել Նոր Կալեդոնիայի ափերը, որ այնքան անսպասելի կերպով հարստացնում են գիտական պաշարը. բայց միաժամանակ պետք

էր շտապել դեպի Նոր Զելանդիա՝ մթերքների պաշարը լրացնելու և ամռանը նպատակադրած խնդիրների լուծումն ավարտելու: Այդպիսի դեպքերում Կուկը միշտ դիմում էր ընդհանուրի խորհրդին և ձայների մեծամասնությամբ վճռում բոլոր կասկածանքները: Սպաներն արտահայտվում են՝ անմիջապես դեպի Նոր Զելանդիա գնալու օգտին: Կուկն անկեղծորեն ցավում էր հեռանալ այդտեղի ափերից. պետք էր անցնել երկրի խորքերը, ուսումնասիրել նոր ցեղերի կենցաղը: Սակայն խոհեմությունը դրդում էր հետևել մեծամասնության խորհրդին. ասենք, արշավանքի գլխավոր նպատակը դեռևս տանջում էր իր անկատար վիճակով. ովկիանոսի ահագին տարածությունը՝ մինչև Ամերիկայի Հարավային հրվանդանը և այդտեղից մինչև Բարեհուսո հրվանդանը՝ մնում էր չհետազոտված: Հարավային Ցամաքի գաղտնիքը շարունակում էր զբաղեցնել երևակայությունը. եթե այդ երկրի հյուսիսային ծայրամասերը երբեք չեն հասնում աշխ. միջին լայնությանը, ապա պետք է համոզվել, որ այդ այդպես է, և վերջ դնել ֆանտաստիկ հեքիաթներին ու քարտեզի անճշտություններին: «Վճռականություն» նավը դուրս է գալիս վտանգավոր լաբյուրինթոսից և ընթանում դեպի հարավ-արևելք:

Մոտ մի ամիս նորոգումներ են կատարում, մթերքներ են բարձում Շառլոտա թագուհու նեղուցի նավահանգստում: Նոր զելանդացիների հակասական զրույցներից տեղեկանում են, որ «Ձեռնարկություն» նման մի նավ անցյալ տարվա դեկտեմբերին եկել է այդտեղ և ապա, զարնվելով ժայռերին, իբր թե կործանվել: Դժվար էր պարզել այդ պատմությունների ճշտությունը: Կուկի թողած շիշն անհետացել էր. իսկ բնիկները չէին կարող գտնել այն: Արդյո՞ք նավապետ Ֆյուրնոն իջել է Նոր Զելանդիայի ափը, թե նրա նավը կործանվել է, գուցե ապահով հասել է Անգլիա, թերևս այդ մի ուրիշ նավ է եղել: Կղզու բնակիչների ժլատ ու հակասական խոսքերից ինչպե՞ս պարզել ճշմարտությունը: Կուկը հուզվել էր, չէր կամենում հավատալ, թե ընկերները կործանվել են: Նշագծվում էր ճանապարհորդության վերջին էտապը: Նավում բոլորն էլ առողջ էին: Մի՞թե «Ձեռնարկության» նավի դժբախտությունը կմթագնի հաջողու-

թյան ուրախությունը։ Կուկն աշխատում էր յետ մղել այդ մտքերը և բոլորին այն միտքը ներշնչել, թե առաջինն ինքը չի հավատում ընկների հեքիաթներին, որ շուտով կհասնեն Բարեհուսո հրվանդան և այնտեղ հաստատ կիմանան «Ձեռնարկության» հաջողակ Անգլիա հասնելու մասին. չէ՞ որ Ֆյուրնոն շատ փորձված նավապետ է. բայց այդ բոլորը շրջապատողների, նավաստիների համար էր արվում։ Սրտաքուստ հանգիստ Կուկը ամենևին իսկ վստահ չէր «Ձեռնարկություն» նավի բարեհաջողությանը։

Հետագա ուղին բոլորին թվում էր ճանապարհորդության ավարտումն։ Հոգնածություն կար, ապա անհամբեր բաղձանք հասնելու նախ Հարավային Ամերիկայի ափերը, ապա Բարեհուսո հրվանդանը, որը թեպետ և շատ էր հեռու հայրենիքից, բայց հաստատուն ազդանշան էր Անգլիա վերադառնալու, իսկ գլխավորը՝ կհանդիպեն վերջին լուրեր բերող նավերի։ Ուրախ, թե տխուր կլինեն այդ լուրերը, միևնույն է, դրանք են, որ կրկին իսկական կյանք կտան և ուժ կտան անցնելու մնացած ուղին։ Բոլորն էլ հիշում և յերևակայում էին հյուրասեր Բրանդտի տունը. նա պահած կլինի հարազատներից և բարեկամներից ստացած նամակները։ Մի յեվրոպացու տեսնելը, մայրենի լեզվով խոսակցություն լսելը գերբախտավորություն էր թվում։

Ահա թե ինչո՛ւ, յերբ քառասուն օրվա նավագնացությունից հետո «Վճռականություն» նավից տեսնում են Հրո յերկրի գրանիտե մռայլ ափերը, ձյունապատ լեռները, շատ ավելի յեն ուրախանում, քան ծաղկած Տահիտիի հյուրասիրությունը. իսկ այդտեղի կարմրամորթ, լռակյաց, փոկի կաշի հագած, կեղտոտ բնիկներն ավելի էին սիրելի, քան Խաղաղականի կենսուրախ բնակիչները։ Հրո Յերկրի մոտ կանգ առնելը տեղի յե ունենում ծննդյան տոնին. մեծ էր ուրախությունը մոտալուտ վերադարձի պատճառով. մոտալուտ, որովհետև հաջորդ կայանը պետք է լիներ Բարեհուսո հրվանդանը. ուրախությունը վերածվում է մոլեգին հարբեցողության, որի ժամանակ սպառվում է ողու և գինու մնացորդը։ Բադերի և քառասուն փթանոց սխալչների որսը հագեցնում է նրանց ախորժակը։ Կուկի վճիռը՝ ընթանալ Լեմերի նեղուցով (Շտատ Յերկրի և Հրո յերկրի միջև) «Ձեռ-

նարկություն» նավը փնտռելու համար, ընդունված էր համակրությամբ։ Ընկերներին գտնելու հնարավորության միտքն ուժ էր տալիս բոլորին։

Սակայն փնտռումները մնում են անհետևանք և տրամադրությունը կրկին ընկնում է։ Կուկը կարողանում էր կարդալ սպաների և նավաստիների միտքը. նա գիտեր, որ միայն ինքը կարող է շարունակել ճանապարհորդությունը մեկ կամ յերկու տարի ևս։ Նրա առաջ տարածվում էր ծովի ահագին, չհետազոտված տարածությունը, որը գայթակղեցուցիչ էր իր գաղտնիքներով։ Նա գիտեր, որ կարող է մի անգամ ևս դառնալ դեպի հարավ և կրկին նետվել անհայտության գիրկը։ Հրո Յերկրում պաշարած մթերքը և նավաստիների կատարյալ առողջությունը թույլ էին տալիս այդպիսի քայլ անել։ Ո՛վ գիտե, յերբևէ հնարավորություն կստեղծվի՞ աշխ. այս լայնություններում լինելու, այն էլ նման բարենպաստ հանգամանքներում։ Ամռան սկիզբն ընձեռում էր բոլոր հնարավորությունները, նավը կկարողանար շատ ամիսներ տոկունությամբ դիմանալ ծովագնացության։ Հիշելով անձնակազմի տրամադրությունը, Կուկը խոհեմությամբ յետ էր մղում իրեն հետապնդող այդ միտքը։ Հրո Յերկրում ստացած հանգիստը, «Ձեռնարկություն» նավի փնտռումները և դեպի Ատլանտյան ովկիանոս կատարած հաջողակ մուտքը մի կողմ են գրավում ընդհանուրի ուշադրությունը։ Նավաստիները դառել էին լռակյաց, հույս ունենալով հասնել Աֆրիկային։ Կուկն ոգտագործում է այդ տրամադրությունները և Շտատի Յերկրից ուղղությունը փոխում դեպի հարավ-արևելք, վերջին անգամ փորձելով մտնել հարավ. բևեռային շրջանագծին։ Նույնիսկ իր գիտնական ուղեկիցներին նա չի հաղորդում իր թաքցրած միտքը. նա հայտնում է, որ կամենում է ոգտվել դեպքից ճանապարհին ստուգելու այն հողերի գոյությունը, որ քարտեզում հար. լայն 53°-ի վրա նշել էր Դելրիմպլը։

Անսանձ ծովագնացին հաջողվում է այս անգամ ևս։ Մի քանի որից հետո ովկիանոսի մեջ հեռվում յերևում են սառցապատ ափեր։ Առաջին պահին այդ սպիտակ ցամաքի անսպասելի յերևալը մեծ ուրախություն պատճառեց բոլորին։ Մի՞թե ճանապարհորդության վերջում, վաղուց ի վեր հայտնի ճանապարհի

թուն սահմանի մոտ է գտնվում անհայտ Հարավային Ցամաքի հյուսիսային վերջավորությունը: Կուկը, իջնելով այդ անհրապույր ափը, պարզում է բրիտանական դրոշակ և երկիրն էլ կոչում Հարավային Ջորջիա: Քարտեզի տեսքը փոխվում է, Դելրիմպլի նշագծած երկրները չէին գտնված, դրանց փոխարեն ձգվում էր լեռնային նոր ծովեզերք, որը տարածվում էր դեպի հարավ և կորչում մառախուղի մեջ, գուցե հար. բևեռային շրջանագծից դենը, մինչև հար. բևեռ: Այդտեղ երկար մտածելու բան չկար. վճիռը մեկն էր՝ ընթանալ դեպի հարավ, այդ երկրի ափերով:

Ցուրտ մառախուղի մեջ ծովախորշերն ու հրվանդանները ձըգվում էին դեպի արևելք: Այդ երկիրը, կարծես, մեծ կղզի լինի: Վաթսուներորդ զուգահեռականի մոտ առաջանում են լողացող սառույցներ: Սառցե լեռները շարժվում էին անցած ծանր օրերի ստվերների նման և վերջին անգամ արդելք հարուցում կրկին թևավորված հույսերին: Բնությունը հաղթահարում է մարդու համառ կամքին: Կուկն անձնատուր է լինում առանց ամոթխածության, լավ գիտակցելով, որ կատարել է իր պարտքը և ճիշտ են եղել իր պնդումները: Նա վերջնականապես նավի ուղղությունը փոխում է դեպի հյուսիս. նա, առանց կանգ առնելու, անցնում է բազմաթիվ փոքր կղզիների մոտով, որոնց կրկին տալիս է Սենդվիչ անունը. նա հաճույքով քարտեզի վրա ջնջում է Ամերիկայից մինչև Աֆրիկա տարածվող ենթադրական ալիտակ ափերը, որ գծել էր Դելրիմպլն իր երևակայությամբ: Խնդիրը լուծված էր. գոյություն ունի Հարավային Ցամաքը, բայց նրա մուտքը փակված է սառույցներով:

Փետրվարի 14-ին «Վճռականություն» նավն անցնում է Գրինիչի միջօրեականը, բոլորելով երկրի շուրջը կատարած իր ճանապարհորդությունը:

Սկսվում է սովորական կյանքը: Կուկը կատարում է Ծովակալությունից ստացած գաղտնի հրահանգները. սպաներից վերցնում է նրանց օրագրերը, աստղաբաշխներից՝ նրանց գրի առած դիտողությունները. այդ բոլորը նավային ժուռնալի հետ միասին կնքում է, շտապ կարգով Անգլիա ուղարկելու համար: Հայր ու որդի Ֆորստերներին և դոկտոր Սպարմանին արգելված էր

Տաննա կղզու մոտ ափհանում

պատմել և գրել կատարած հայտնագործությունների մասին մինչև վոր Ծովակալությունից կստացվի հատուկ թույլտվություն: Նավապետը դառել եր պետական սովորական պաշտոնյա: Ճանապարհորդությունը դառնում ե տաղտկալի: Աֆրիկայի ափերի մոտ հանդիպում ե հոլանդական Օստ-ինդիական ընկերության մի նավ, վորը վերադառնում եր Բենգալիայից[1]: Այդ նավի անգլիացի նավաստիները պատմում են, վոր «Ձեռնարկություն» նավը նրանք տեսել են անցյալ տարի Բարեհուսո հրվանդանի նավահանգստում, վոր նավապետ Ֆյուրնոյի անձնակազմում պակասում եյին մի քանի հոգի, վորոնց սպանել և կերել եյին Նոր Զելանդիայի մարդակերները:

Կուկն հիշում ե այդ բնիկների հակասական ցուցումները: Հոլանդացիներից բաժանվում են, թույլ հույսով, թե առաջին լուրերը սուտ կլինեն: Հաջորդը, վորին հանդիպում են, «Թրյու Բրայթոն» անգլիական նավն ե: Նրա Բրոդլի նավապետը բարձրանում ե «Վճռականություն» նավի տախտակամածի վրա և հաստատում տխուր լուրի ճշտությունը: Նա պատմում ե, վոր «Ձեռնարկություն» նավը հիվանդ մարդկանցով և ջրի սակավ պաշարով գալիս ե Շառլոտա Թագուհու նեղուցը, վորտեղից հինգ որ առաջ մեկնել եր «Վճռականություն» նավը. Նավապետ Ֆյուրնոն գտել ե շիշը Կուկի գրությամբ. Նա բոցման Ռոուլին մի քանի մարդկանց հետ ուղարկում ե անտառ ջուր և կենսամթերք բերելու: Բոցմանը չի վերադառնում: Նրան փնտռելու համար ուղարկված զինյալ ջոկատը գտնում ե նավաստիների կոշիկները և քսան զամբյուղ՝ մարդկային մսով: Զամբյուղներից մեկում ճանաչում են նավաստի Թոմաս Հիլլի ձեռքը, վորի վրա կային նկարահանված տառեր: Այնուհետև գտնում են տասը մարդու գլուխն ու սիրտը: Ապրիլ ամսին «Ձեռնարկություն» նավը մեկնում ե դեպի Անգլիա և անցնում Հրո Ցերկրի մոտով:

Կուկը լռությամբ լսում ե այդ սարսափելի պատմությունը: «Մի՞թե ծովագնացը կարող ե իմանալ, թե վորտեղ ե նա իր մահը գտնելու»: Նավապետ Բրոդլին նա տալիս ե մի ծրար, մեջը հաղորդագրություն ու որագրեր, Ծովակալությանը հանձնելու համար: «Թրյու Բրայթոնը» ուղղակի մեկնում եր դեպի Անգլիա:

[1] Հնդկաստանից: Ծ. Թ.

Բրոդլից ստացած լրագրերը կարդում եյին բարձր ձայնով և ագահաբար:— Ցերևում եր, վոր Լոնդոնում շարունակվում եյին մանր գործերի յեռուզեռը, քաղաքական ինտրիգներն ու խմբակայնությունը: Բարեհուսո հրվանդանի Սեղանաձև սարի տեսքը հիշեցնում ե նամակները պահող Բրանդտի մասին: «Ձեռնարկություն» նավի տխուր վախճանը ծածկվում ե սեփական հաջողության յեսասիրական փայլով և անձնական քաղքենական բախտավորության սենտիմենտալ շղարշով: Որագրով մարտի 21-ին, իսկ որացույցով մարտի 20-ին խարիսխ են ձգում Կապշտադտի նավահանգստում: Ժամանակը բախտավոր ծովագնացներին նվիրել եր մեկ որ՝ «Վճռականություն» նավն ընթացել եր արեգակին ընդառաջ[1]:

Սրտառուչ Բրանդտը դիմավորում ե Կուկին մի քանի ծրարով, նամակներով, վորոնք վկայում եյին կնոջ սիրո և անհանգստության, յերեխաների առողջության, բարեկամների հավատարմության մասին: Մեկ ամիսը Կապշտադտում աննկատելի յե անցնում, նավի նորոգման և կենսամթերքներ գնելու հոգսերով:

Դոկտոր Սպարմանին աֆրիկական ափին թողնելով, արշավախումբը շարժվում ե դեպի Անգլիա, «Դյուտոն» անգլիական նավի հետ, և հասնում ս. Ելենա կղզին, վորտեղ պատիվների, ճաշկերույթների և ընթրիքների արտասովոր պայմաններում անցնում ե մի շաբաթ:

Կուկը հանդիստ եր և կայտառ: Բոլորն ել, թվում եր, թե կատարված ե հաջողությամբ. տնից ստացված հաղորդագրությունները վկայում եյին ընտանիքի բարեկեցության մասին. անձնակազմն ու ինքն առողջ եյին. մաշված նավը կարող եր դիմանալ դեռևս մի քանի փոթորիկների: Ինչո՞ւ այդչափ շտապել, յերբ ժամանակը կարելի յեր ոգտագործել նոր դիտողություններ և հետազոտություններ կատարելու համար: Նա վճռում ե վերադարձին կանգ առնել Ասցենսիոն (Համբարձման) կղզու մոտ, ապա այդտեղից անցնել Ֆեռնանդո Նորոնյա կղզին[2]: Քարտեզի

[1] Այն ճանապարհորդները, վորոնք յերկրի շուրջը պտտում են, ընթանալով դեպի արևելք, յերկրագնդի պտտվելու ուղղությամբ, շահում են մի որ, իսկ հակառակ ուղղությամբ ընթացողները՝ կորցնում են մի որ: Ծ. Թ.

[2] Հար. Ամերիկայի (Բրազիլիայի) հս.-արևել. ափերի մոտ: Ծ. Թ.

անճշտությունը պետք էր ուղղել: Ո՞վ կարող է խանգարել նրան այդ բանում:

Ո՛չ ոք: Գոնե այդպես թվում էր: Պաշտոնական հաղորդագրությունների մեջ ասված է այդ կղզիները և Ազորյան արշիպելագից Ֆայալ կղզին այցելելու մասին: Քամու բացակայության պատճառով նավը հասարակածում մնում է ամբողջ վեց օր: Սակայն Ֆորստերի «նենգ» գրություններում արտացոլվում է այն դժգոհությունը, որ տիրել էր յոթամյա ծովագնացությամբ հոգնած ու չարչարված նավաստիներին. վերջիններս սկսել էին քրթմնջալ անսանձ նավապետի վրա, որին անվերջ ձգձգում էր ճանապարհորդությունը: Աստղաբաշխական դիտողությունները և աղի ջուրը անուշ դարձնելու փորձի օգտակարությունը նրան չէին կարող արդարացնել ստորադրյալների աչքում: Կուկն այդ մասին ոչ մի բառ չի ասում. սակայն Ազորյան կղզիներում կարճատև մնալը կասկածանքների տեղիք չի տալիս: Այսպես թե այնպես, այնուամենայնիվ, 1775 թվի հուլիսի 30-ին Կուկը ոտք դրավ Պորթսմութի ծովափին որպես հաղթող և հերոս:

Ճանապարհորդության հսկայական հաջողությունը և Կուկի մատուցած ծառայություններն անտարակույս էին: Ինքն այդ մասին համեստորեն խոստովանվում է թագավորական ընկերությանը գրած հաղորդագրության մեջ. «Հասարակությունն ինչ կերպ էլ դատելու լինի մեր աշխատանքների և հաջողությունների մասին, ես վերջացնում եմ այս հաղորդագրությունը, իսկական գոհունակությամբ նշելով այն իմ առավելությունները, որոնց շնորհիվ ես հնարավորություն եմ ունեցել այդչափ երկար ժամանակամիջոցում պահպանել բազմանդամ անձնակազմի առողջությունը՝ զանազան կլիմայական գոտիներում, հոգնածության և վտանգների պայմաններում. այդպիսով, հենց միայն այդ հանգամանքը իմ ճանապարհորդությունն արժեքավոր կդարձնի բարեմիտ մարդկանց աչքերում և միաժամանակ Հարավային Ցամաքի մասին վեճերը կդադարեն գրավել ընդհանրության ուշադրությունը և բաժանել փիլիսոփաներին»:

ՎՈԿԵ ՆԱՎԸ

Անգլիայում ամեն ինչ ընթանում էր հին ձևով. «բախտավոր» թագավոր Գեորգ III, որ չէր կամենում «շղթայված կառավարել», ավելի ու ավելի համարձակ էր խախտում սահմանադրական ավանդությունները: Ֆրանսիական միապետության վերականգնման համար կռվող հակահեղափոխական բանակների ապագա ղեկավարը, հեղափոխության այդ առաջին թշնամին համառորեն միջամտում էր Եվրոպական մայր ցամաքի քաղաքական կյանքին, ձգելով իր պետությունը խելակորույս արկածների ցանցի մեջ: Լորդ-Նորթն օգնում էր իր մեծ հովանավորին, պայքարելով աճող օպոզիցիայի դեմ. նա բոլոր միջոցներով ճնշում էր ապստամբությունները. զենքով հանգցնում էր ժողովրդական բողոքները, հենվում էր հողատիրական արիստոկրատիայի պառլամենտական մեծամասնության վրա: «Թագավորի բարեկամները» չարաչար էին վարվում քրթմնջացող ինտելիգենցիայի դեմ, խիստ միջոցներով էին կառավարում անգլիական ժողովուրդը, որ ճնշված էր տուրքերով, կալվածատիրոջ համար աշխատանք կատարելով և թագավորական պատժիչ ջոկատների վախից:

Անգլիական առևտրական կապիտալը, որն ամրապնդվել էր գաղութային նվաճումների շնորհիվ, աճում էր տարեցտարի ընդարձակելով իր ազդեցության շրջանն Աֆրիկայում, Հնդկաստանում, Ամերիկայում, նոր հայտնագործած կղզիներում: Արդյունաբերությունը հարստանում էր ի հաշիվ էժան բանվորական ուժի, ճարպկորեն առևտուր կազմակերպելով ստրուկների հետ, ձեռնտու հաշիվ անելով շահավետ փոխանակության վերաբերյալ: Անգլիական վաճառականների առևտրական գործառնությունների նպատակներից մեկն էր Աֆրիկայում գնել նեգրեր, կամ Մադագասկարում մալայեցիներ, Ամերիկայում նրանց փոխանակել արծաթով, այդ շահույթով գնել հնդկական կտորներ և վերջիններս Մոլուքյան կղզիներում փոխանակել համեմներով: Օստ-ինդիական ընկերությունը՝ անգլիական ամբողջ առևտրի այդ իսկական տերն անսահմանափակ կառավարում էր Բենգալիան. 1765 թվից իրավունք է ստանում գանձել տուրքերը և մետրոպոլիայի բարձր հովանավորության ներքո կազմակերպում է Նոր հնդկական թագավորությունը: 1773 թվին հրատարակվում է մի օրենք, որով սահմանվում է գլխավորական նահանգապետի պաշտոնը և Հնդկաստանի գործերի խորհուրդը.

այդ խորհրդի անդամները նշանակվում էին անգլիական թագավորի կողմից։

Այլ էր դրությունն Ամերիկայում։ Խոշոր արդյունաբերողներ և ագարակատերեր դարած գաղթականները չէին կամենում հաշտվել անգլիական կապիտալիստների մոնոպոլիստական քաղաքականության հետ։ Նոր Ալբիոնն[1] ավելի ու ավելի հաճախ է հայտնում իր դժգոհությունը կառավարության ձեռնարկումների դեմ։ Ցերկաթագործական արդյունաբերության և նավաշինության նորածին աքսերն ամեն կերպ ընդդիմանում էին Նորթի մինիստրության օրենքների դեմ, քանի որ նրանց շահագործում էր ֆինանսական և առևտրական տեսակետներից։ Տեղական կապիտալը կամենում էր լինել ինքնուրույն։ Պենսիլվանիայի վաճառականները տրտնջում էին. իսկ տուրքերի և հարկերի բարձրացման մասին մեկը մյուսին հաջորդող օրենքները գայրույթի փոթորիկ են առաջացնում։

Դարի վերջում տեղի յե ունենում ամերիկական գաղթականների ապստամբությունը և Միացյալ Նահանգների անկախության համար հուշակավոր պատերազմը։ Յոթ տարվա ընթացքում Անգլիան անդադար կռվում է ամերիկացիների դեմ, մի նոր կոնֆլիկտի մասնակից անում ամբողջ Եվրոպան և վերջապես կորցնում իր ամերիկական գաղութները, այսինքն՝ Տաբագո, Սեն-Պյեր և Միքելոն կղզիները, որ անցնում է Ֆրանսիային և Ֆլորիդան ու Մինորկան, որ անցնում են Իսպանիային։ Անհեթեթ արտաքին քաղաքականությունը պսակվում է Վերսալի 1783 թվի հաշտությամբ. իսկ ապստամբությունը—Իռլանդիայում 1779 թվին, Լոնդոնում—1778 թվին—բնորոշ եր ներքին քաղաքական տրամադրությունների համար։ Նախ փրկություն սպասելով Ֆոքսի և Նորթի կոալիցիոն մինիստրությունից, թագավորը վարչապետ է նշանակում Վիլյամ Պիթտ կրտսերին, որը դառել էր «Հնդկական բիլլի» հուշակավոր հեղինակ և հեղափոխական Ֆրանսիայի դեմ կռվելու համար յեռյակ համաձայնության ստեղծողը. վերջին պատերազմն անգլիական ժողովրդին

---

[1] Այդպես էին անվանում Անգլիայի գաղութն Ամերիկայում՝ Նոր-Անգլիան։ Իսկ Ալբիոնը՝ հին Անգլիան եր։ Ծ. Թ.

քայքայել եր յեվրոպական պատերազմի աջակցության համար կատարված ծախսերով և յերկրին սարսափելի ճգնաժամ պատճառել։

Մինչ այդ դեպքերը, Լոնդոնի հասարակությունը տարված եր զվարճություններով, արտաքին բարեկեցության խաբուսիկ փայլով։ Լեդիներն ու ջենտլմենները, ֆինանսական ջոջերն ու մոդայասեր կնամոլները, արիստոկրատներն ու կարյերիստ-քաղաքագետները, ավանտյուրիստներն ու մութ գործարարները, վորոնք առևտրական չարաշահությունների պղտոր ջրում ձուկ եյին վորսում, շարունակում եյին իրենց անհոգ գոյությունը, առանց նախազգալու գալիք դժբախտությունները։ Լոնդոնի արվարձանների ծանոթ պուրակներում և պարտեզներում տիրող խաղաղ կյանքը և ընտանեկան կյանքի ջերմությունը խախտվում եր միայն յերբեմն, ինչ-վոր քաղաքական բամբասանքների կամ պառլամենտում կատարված խայտառակ իրադարձությունների պատճառով։ Ֆելդինգի՝ կյանքի նման ջերմ վեպերը լրացնում եյին նիրհուն ու պարապ ժամերը։ Դեռևս թնդում եր Դիդրոյի սիրելի Սամուել Ռիչարդսոնի գրական փառքը. իսկ որինակելի ջենտլմեն կոմս Չեստերֆիլդը, վոր յեղել եր դեսպան, փիլիսոփա, Վոլտերի և Մոնտեսկյոյի բարեկամ, իր վորդուն գրած նամակներում ուսուցանում եր վայելչության կանոններ։ Հին Լոնդոնը զվարճանում եր, դիտելով «Դրյուրի-Լենա» բեմադրությունը, վորտեղ Բրինդսլեյ Թատրոնի տաղանդավոր դիրեկտոր Շերիդանը իռլանդական հումորի ամբողջ փայլով իր կատակերգություններում ծաղրում եր լոնդոնցիներին՝ իրենց յերեսին. մինչդեռ լոնդոնցիները չեյին շփոթվում, ինչպես և հետագայում նրանց չեն շփոթեցնի Տեքքերեյի վեպերն ու Ոսկար Ուայլդի և Շոուի կոմեդիաները։ Տնարույս փիլիսոփաների պուդրոտ պարիկները խորիմաստորեն թեքվում եյին Դավիդ Յումի «Անգլիայի պատմության» կաշվե կազմի վրա. Դավիդ Յումն եր նրանց ծանոթացրել Ժան-Ժակ Ռուսոյի հետ. վերջինս փախել եր Շվեյցարիայից, իր հայրենակիցներից, վորոնց դրդմամբ դահճի ձեռքով այրում են նրա փիլիսոփայական վեպը։ Ընտիր սալոններն

կլավեսինների[1] վրա դեռևս ընկած էին «անգլիական Ռաբլե»-ի հատորները՝ Թզուկների յերկրի մասին պատմվածքները. իսկ անգլիական յեկեղեցին յերբեմնի ծաղրող մսագործի հանդուգն տղան դեռևս գրավում էր զգայուն լեդիների մտքերը Ռոբինզոնի և Ուրբաթի սրտաշարժ բարեկամությամբ:

Անգլիայում ամեն ինչ ընթանում էր հին ձևով: Բանից յերևում է, վոր «գերապատիվ» դոկտոր Դեյրիմպլը չէր դադարում Հաուքսվորթի դեմ կռվելուց. նա շարունակում էր համառել Հարավային Ցամաքի մասին արտահայտած յեզրակացություններում. պնդում էր, վոր այնտեղ հնարավոր է կազմակերպել որինակելի պետություն. մեղադրում էր Կուկին, վոր նրա դիտողությունները անճիշտ են և վատ է ղեկավարել նավը: Գիտական աշխարհը շարունակում էր իր բզզոցը Թագավորական ընկերության ապարանքներում, պարծենալով, վոր ստեղծել է հայրենական հանրագիտարան, բրիտանական Թանգարանի փայլուն կոլեկցիաներ, արվեստի և գիտության իսկական գնահատողներին մատչելի գաղտնի գանձարաններ: Լիբերալները կուրծք էին ծեծում պաշտպանելու պառլամենտի սահմանադրական արտոնությունները, քաղվածքներ էին բերում Ֆրանսիական լուսավորականներից, վորոնք մի դար առաջ գերազանցել էին անգլիական կաղ ազատությունից. բարեսիրտ քաղաքագետներն արվարձանների պանդոկներում գարեջուր էին խմում, ծխամորճ ծխում, Թանգության վրա քրթմնջում և բանիմաց կերպով լրագրեր թերթում:

Միայն չկար մառախուղ, վորը ցրված էր ամռան արևի ուժով. անգլիական շոյող ու մեղմ արևը վո՛չ մի բանով նման չէ արևադարձային չար ու հրեշ արևին, վորն այրում է իր ճառագայթներով, մարդկանց գլխին Թափում հեղձուցիչ տոթ ու հիվանդություններ:

Թփերն ու վոլորվող վարդերը այնպես, ինչպես յերեք տարի առաջ շրջապատում էին նստարանը, այգու խորքում պահպանվել էին սիրալիր կնոջ՝ հավատարիմ Պենելոպայի[2] զգույշ հոգացողությամբ. չէ՞ վոր նա քանի՛ տարիներ դողդոջուն համբերությամբ սպասել է իր ամուսնու վերադարձին:

[1] Դաշնամուրի հին տեսակ: Ծ. Թ.

[2] Հոմերոսի «Վոդիսական» վեպի հերոս Վոդիսեսի կինը. առաքինի կնոջ տիպար: Ծ. Թ.

Առաջին օրերն անցնում են, ըստ սովորականի, ընտանիքի նեղ շրջանակներում: Տարորինակ ու նորոգված էր թվում շրջապատը: Սենյակները, իրերը, ամենամանր կահույքը թվում էր ավելի լավ և հարմար: Հին գիրքը, տետրը, քարտեզը, կամզոլը[1], պղնձե լվացարանը, մոխրամանը, գրչածայրերի կապոցը, մոմե մկրատը,—այդ բոլորը՝ վաղուց ի վեր ծանոթ առարկաները դարեկան էին և վկայում էին տնային օջախի անսասանությունը: Առավոտները Կուկը դուրս էր գալիս պարտեզ, կտրատում էր ծառերի չոր ճյուղերը, կապում թեք ընկած վարդերը, փորում հողը, քաղհանում բանջարանոցի մոլախոտերը, աշխատում փոցխով ու թիակով, ցնծուղով ջուր բերում տակառից, վորը ծածկվել էր աղյուսե պատից կախված վոլորվող բույսերով: Յերեխաները թռչկոտում էին նրա շուրջը և ուրախանում: Կուկը նրանց նստեցնում էր իր ուսերին, վազում ծառուղիների մեջ, մերթ խրխնջում ձիու նման, մերթ գոռում փոստային հանրակառքի կառապանի պես: Ամեն յերեկո հավաքվում էին բարեկամները և խոսում վաղուց ծանոթ բաների և մարդկանց մասին: Այդ միջոցին թրխկում էին ծխատուփերը, ճարճատում էին մոմերը, խշշում էր տնտեսությամբ տարված կնոջ մետաքսե զգեստը. խորամանկ ժամանակը համաչափ տարուբերվելով փայտե բարձր ժամացույցի ապակու տակ չարժվող ճոճանակով, խաբում էր անշարժության մասին:

Իշխանությունն այս անգամ ավելի բարյացակամ է վերաբերվում դեպի Կուկը: Կոմս Սենդվիչը, վորից, վերջիվերջո կախված էին բոլոր այդ պարգևները, բայց իբր թե բղխում էին անմիջականորեն թագավորից, չափազանց հիացած էր: Նրա փառավոր անունը Կուկը տարածել էր աշխարհի բոլոր ծովերում. նա աչքի էր ընկնում քարտեզներում, գրքերում, բոլոր լեզուներով բարձր հնչում էր Յեվրոպայի գիտական ընկերությունների դահլիճներում, պալատներում, ընտիր սալոններում: Մեծ Բրիտանիայի փառքը, վոր մթագնել էր այլ պետությունների փառքը, Ծովակալությանը նստել էր ընդամենը քսանհինգ հազար Ֆունտ ստերլինգ[2]. այդ փաստը վկայում էր առաջին

[1] Կարճ վերնազգեստ: Ծ. Թ.

[2] Մոտ 250 հազար ռուբլի: Ծ. Թ.

լորդի տնտեսավարության և ճարպկության մասին: Կուկի հաղորդագրության ծրարը, քարտեզները, նկարները և որագրերը բաց անելուց հետո, կոմսն շտապում է զեկուցել թագավորին. նա հիացած պետից թույլտվություն է ստանում ժլատ չլինել խիզախ ծովագնացին շնորհներ տալու համար: Օգոստոսի 9-ին Կուկն ստանում է թագավորական նավատորմի կապիտանի կոչում, իսկ 12-ին պատվավոր տեղ Գրինիչի հոսպիտալի[1] վարչության կազմում: Լորդը գործում եր օրինականության խիստ շրջանակներում և չեր անցնում բյուրոկրատական ավանդության սահմանները: Նա անում եր Կուկի համար «Վորչափ ներում եյին իր ուժերը». զուր չեր, վոր նա կոչվում եր Կուկի բարերար և գիտությունների մեկենաս[2]:

Թագավորական ընկերությունը դեպի ճանապարհորդը վերաբերվում է անկեղծ ուշադրությամբ: Այդ ընկերության նախագահ Ջոն Պրինգլը բարեկամաբար է վերաբերվում դեպի Կուկը, նպաստում է, վոր նա ընդունվի Ընկերության անդամ, յերբ աշնանը կապիտանն առաջարկում է իր թեկնածությունը: Կուկի զեկուցումն Ընկերության նիստում և Պրինգլի միջնորդությունը նպաստում են Կուկի միաձայն ընտրությանը: Հանդիսավոր ընդունելությունը կատարվում է 1776 թ. մարտի 7-ին, յերբ Կուկը ներկայացնում է իր աշխատությունը նավային անձնակազմի առողջությունը պահպանելու յեղանակների մասին: Իսկ ապրիլին Պրինգլը նրան առաջարկում է կազմել մի գրություն Հարավային ծովի մակընթացությունների ու տեղատվությունների, նաև Նոր Հոլանդիայի ափերում կատարած դիտողությունների մասին: Ընկերության խորհուրդն այդ աշխատությունը պարգևատրում է վոսկե մեդալով, վորն ըստ ավանդության հանձընվում է ս. Անդրեասի տոնին: Այդ տեղի յե ունենում այն ժամանակ, յերբ Կուկը նորից մեկնել եր Անգլիայից, և թագավորական ընկերության հանդիսավոր նիստում նրան պատվում են հանձինս միստրիս Կուկի, վորը արտասվալից աչքերով է լսում

[1] Թագավորական հիվանդանոց: Ծ. Թ.

[2] Հովանավորող: Ծ. Թ.

նախագահի ճառը: «Մենք չենք տեսնում,— ասում է Պրինգլը,— ունայն իշխանություն, վորով պարծենում է եմպիրիզմը, չենք տեսնում հորինված ու սխալական թեորիայի սկզբունքներ, այլ համառոտ, անվիճելի, կոնկրետ միջոցներ, վոր կապիտան Կուկը սուրբ նախախնամությամբ ոգտագործել է կատարելու համար իր ճանապարհորդությունը, վորը տևել է յերեք տարի և ութ որ, անցել է բոլոր կլիմայական գոտիները, հյուսիսային լայն. 52°-ից մինչև հարավ. լայն 71°-ը, և այդ ժամանակամիջոցում նավում յեղած հարյուր տասնութ մարդուց կորցրել է միայն մի նավաստի»:

Հին բարեկամ Հյուդ Պալիսերի միջնորդությամբ Ծովակալությունը համաձայնվում է իր հաշվին տպագրել տալ ճանապարհորդության մասին պրոֆ. Ֆորստերի նկարագրությունը, սակայն այն պայմանով, վոր գրաքննությունն ստուգի բոլոր գրությունները և կրճատի այն ամենը, ինչ ավելորդ կհամարի: Հրատարակության յեկամուտը հավասար չափով բաժանվելու յե Ֆորստերի և Կուկի միջև: Շքեղ հրատարակությունը, զարդարված նկարիչ Հոջսի նկարներով, վորոնց փորագրման համար ծախսված եր յերկու հազար ֆունտ ստերլինգ, նաև քարտեզներով և աղյուսակներով,— հետագայում 1778 թվին լրիվ վերհրատարակված ֆրանսերեն լեզվով,— վավերացրել եյին պայմանագրով, վորը կոմս Սենդվիչի ներկայությամբ ստորագրել եյին Կուկը և Ֆորստերը[1]:

Գրական չարաշահներից ճարպիկ գրչակները կարողանում են մինչ այդ լույս ընծայել ճանապարհորդության յերկու անանուն որագրերը, վորոնք կազմված եյին անգրագետ և խառնափնթոր: Գեորգ Ֆորստերը,— վրդովված այն սահմանափակող պայմաններից, վորոնց մեջ դրված եր իր հայրը և արժանավոր կերպով գնահատելով այդ ստահոդ որագրերը («Յեվրոպան շատ է կրթված, վորպեսզի բավարարվի այդ խայտառակ անհեթեթություններով»),— վճռում է հրատարակել իր սեփական նկարագրու-

[1] Այդ հրատարակությունից մի օրինակ կա Մոսկվայում, Լենինյան հանրային գրադարանում: Կուկի յերիտասարդական նկարը և ճանապարհորդության արկածները,— վոր նկարել է Հոջսը, այդ հրատարակության փորագրություններից տրված են այս գրքում: Ծ. Հ.

թյունը, վորտեղ (առանց վախենալու ճշմարտությունն ասելուց, մի բան, վոր կապիտան Կուկը և իր հայրը չեյին կարող անել իրենց գրքի պատճառով), ինքը չի ծածկում վոչինչ: Կատարելով իր մտադրությունը, նա իր աշխատանքի նախաբանում գրում է, վոր Կուկի առաջին ճանապարհորդության նկարագրության մեջ վոչինչ չի ասված, թե ինչպես բրիտանական դրոշակն անպատվելու պատճառով «Յեռանդ» նավը ռմբակոծել է պորտուգալական նավահանգիստը Մադեյրա կղզում, նաև մի շարք այնպիսի բաների մասին, վորոնց հրապարակումը ցանկալի չեր Ծովակալության համար: «Յես իմ գրությունների մեջ հետապնդել եմ,— վերջացնում է նա,—ավելի բարոյական և ճիշտ նպատակներ»:

Ֆրանսիայում, վորտեղ չեյին տարածվում անգլիական Ծովակալության խստությունները, մեկը մյուսի յետևից հաջորդաբար լույս եյին տեսնում առաջին և յերկրորդ ճանապարհորդությունների թարգմանությունները, արտատպվում եյին նկարագրումներն ու քարտեզները, հրատարակությունների մեջ տրվում եյին ընդարձակ առաջաբաններ և ծանոթագրություններ: Կուկի ճանապարհորդությունների նկատմամբ յեղած այդ հետաքրքրությունը բացատրվում է նրանով, վոր այն ժամանակվա կրթված հասարակությունը հակումն ուներ դեպի բնագիտությունը: Ազնվականների սիրած նրբաբարո պատմվածքների նուրբ անպարկեշտություն պարունակող գրականության և բուրժուական կենցաղային վեպերի կողքին բազմանում եյին աշխարհագրական, բուսաբանական և այլ հետազոտությունների հատորները, վորոնց մեջ մանրամասն նկարագրված եյին նոր հայտնագործած յերկրները, բնիկների կենցաղը, տեղական բանվածքի անվանացանկը և մթերքների գները: Ամերիկան, Ճապոնիան, Չինաստանը, Հնդկաստանը, Աֆրիկան, Ռուսաստանը, Սկանդինավիան ունեյին իրենց հետազոտողներն ու կենցաղագիրները: Կային հրատարակչություններ, վորոնք աշխատում եյին գրականության միայն այդ բնագավառում և կատարելագործության եյին հասել քարտեզների, բուսաբանական և կենդանաբանական ատլասների տպագրության և քանդակելու արվեստում:

Այն վեպը, վորն ստիպում եր զգայուն մարկիզուհուն արտասուք թափել զարդանկարի վարդի վրա, այն նրբաբարո պատմվածքը, վորն անամոթ քանդականկարով հուզում եր ժամանակից շուտ թառամող արիստոկրատին, և in quarto[1] հրատարակած «Ճանապարհորդությունները» վաճառականի աչքը շոյող յելևմուտից մատյանների եջերով,— լայն սպառվող ապրանքներ եյին, վոր բավարարում եյին ընթերցողների ճաշակը և գրավաճառների գրպանը:

Կուկին դուր չեր գալիս իր օրագրերի հրատարակության շուրջն առաջացած շփոթը. նա դրդվում եր, տեսնելով, թե ինչպես թեթևամտորեն կեղծում են իր օրագրերը, դրանով նվազեցնում եյին նրա աշխատանքների լուրջ ու գիտական նշանակությունը: Նա բարկանում եր և խիստ կերպով մերժում ձոնձրացնող հրատարակիչներին. նա միայն իր մոտիկ բարեկամներ՝ դոկտոր Հաուքսվորթին և Դուգլասին եր վստահում իր ձեռագրերի խմբագրումը:

Դեռևս չեյին սևացել այն խաչերը, վոր Մագելլանը, հանուն քրիստոնեյական հավատի, կանգնեցրել եր Ֆիլիպիններում՝ բնիկների այրված գյուղերի մոխրակույտերի վրա, դեռևս իսպանական ու պորտուգալական նավերը չեյին դտել Խաղաղ ովկիանոսում իրենց հայտնագործած կղզիները, իսկ առևտրական ընկերությունները չեյին ավարտել Մալաբարյան ծովեզերքին[2] և Բատավիայում իրենց գրասենյակների կառուցումը, յերբ առևտրական կապիտալն իր շոշափուկներն ագահաբար տարածեց դեպի հյուսիս, ամենակարճ ճանապարհներ փնտրելով դեպի Հնդկաստան և Չինաստան: XVI դարի յերկրորդ կեսը՝ Սպիտակ, Կարայի, Բարենցի ծովերի հայտնագործության ժամանակն եր: Ջենսլերը, Բերրոուն և Բարենցը մեկը մյուսի յետևից հետապնդում են Յեվրասիայի[3] հյուսիսային ափերի մոտով անցնելու, հյուսիս-արևելյան անցքով Յեվրոպան Ամերիկայի հետ կապելու հնարավորությունը: Իր հետախուզումների ժամանակ Բարենցը հայտնագործում է Շպիցբերգենն ու Նոր Յերկիրը:

[1] Թերթի մեկ քառորդի չափ:

[2] Հնդկաստանում: Ծ. Թ.

[3] Յեվրոպական և Ասիական միացած մայր ցամաքը: Ծ. Թ.

Սառույցներից վախեցած նավերը յետ են դառնում: Ուրիշ ծովագնացներ շտապում են փնտռելու Հյուսիսային Ամերիկայի ափերի մոտ հյուսիս–արևմտյան նեղուցը: Ֆրոբիշերը և Դևիսը նույն դարի վերջում, իսկ Բաֆինն ու Հուդսոնը հաջորդ դարի սկզբին ապարդյուն կերպով փորձում են գտնել այն նեղուցը, վորն իբր թե հատում է Հյուսիսային Ամերիկան: XVII դարի ընթացքում հոլանդական և անգլիական նավապետները զուր ջանքեր եյին թափում գտնելու այդ յերևակայական նեղուցը, հետազոտելով Հյուսիսային Ամերիկան արևմտյան ափերի կողմից:

1676 թվին Վուդը վերջափակում է անհաջող ճանապարհորդությունների յերկար շարանը. այդպիսով, հյուսիս–արևմտյան նեղուցի վերաբերյալ հարցը մոռացության է տրվում մի քանի տասնյակ տարիներ: XVIII դարի կեսին Դոբսը, վորը պնդում եր, թե այդ նեղուցը կարելի կլինի գտնել Հուդսոնի ծոցում, ստիպում է անգլիական կառավարությանը մտածել ըստ հնարավորին շուտ լուծել այդ հարցը, վորից անհաշիվ ոգուտներ եյին սպասվում: 1741 թվին ուղարկվում է նավապետ Միդլթոնը, վորին վիճակվում է նույնն, ինչ վոր նախորդներին: Սկսում են շարժվել առևտրական ընկերությունները, վորոնք խրախուսված լինելով նեղուց հայտնագործելու համար մասնավոր նավերին դրամական նվեր տալու վերաբերյալ պառլամենտական ակտով[1], 1746 թվին կազմակերպում են արշավանք նավապետ Սմիթի և Մուրի հրամանատարությամբ: Սակայն այդ ել վոչ մի արդյունք չի տալիս:

Գեորգ III շատ եր հպարտացել Խաղաղ ովկիանոսում բրիտանական դրոշակի տարած հաղթանակներով, վոր ձեռք եյին բերվել Հարավային Ցամաքը Կուկի կողմից հետախուզելու ժամանակ: Կոմս Սենդվիչի դրդմամբ նա վճռում է վերսկսել Ատլանտյան ովկիանոսից դեպի Խաղաղ ովկիանոսը տանող հյուսիսային նեղուցի փնտռումները. նա հրաման է տալիս արշավանք կազմակերպել, վորպեսզի վճռվի, թե հյուսիսային բևեռի ուղղությամբ ծովագնացությունը մինչև ո՞ւր կարող է տարածվել: Նավապետ Ֆիլիպսը յերկու նավով հասնում է մինչև հյուսիսա-

[1] Վորոշումով, որենքով: Ծ. Թ.

յին լայնության սառույցները և վերադառնում ձեռնունայն: Ծովակալությունը դադար չուներ և 1776 թվի սկզբին պառլամենտում անց է կացնում մի ակտ, վորն ընդլայնում և լրացնում եր 1745 թվի ակտը:

«... Քանի վոր կարելի յե շատ ոգուտներ հուսալ առևտրի և գիտության համար՝ Ատլանտյան ովկիանոսի և Խաղաղ ծովի[1] միջև դեպի հյուսիս նեղուց հայտնագործելուց, վորոշվում է՝ յեթե նորին մեծությանը կամ նրա ստորադրյալներին պատկանող նավերից վորևե մեկը հայտնագործի ծովային ուղին և Ատլանտյան ովկիանոսից անցնի Խաղաղ ծովը, հյուսիսային լայնության 52°–ից դեպի հյուսիս, միևնույն է թե ինչ ուղղությամբ, ապա նորին մեծության ստորադրյալներին պատկանող նավերի տերերը կամ նորին մեծությանը պատկանող նավերի հրամանատարները, սպաները և նավաստիները կստանան վորպես պարգև քսան հազար ֆունտ ստերլինգ...»:

Մինչև Կուկի ճանապարհորդությունը Ամերիկայի և Ասիայի միջև նեղուցի հարցը նույնչափ մութ եր, ինչպես և Հարավային Ցամաքի հարցը: Շատ ականավոր գիտնականներ չեյին ընդունում այդ նեղուցի գոյությունը և մեծ կասկածանքով եյին վերաբերվում Բերինգի հայտնագործություններին: Ինչպես ֆրանսիական հռչակավոր յերկրաչափ Մոպերտյուին հավատացնում եր Ֆրիդրիխ II–ին[2], վոր կա Հարավային Ցամաք տասը միլիոն քառակուսի լյո տարածությամբ, վորտեղ ապրում են մարդիկ և կենդանիներ, այնպես ել դոկտոր Քեմփերը, խոսելով Բերինգի 1741 թ. ճանապարհորդությունների մասին, պնդում եր, վոր «... անկասկած Բերինգի հայտնագործությունը թույլ չի տալիս կարծելու, թե այն ափը, վորին նա հասել է, կարող է լինել Ամերիկայի մայր ցամաքի արևմտյան մասը»:

Սակայն XVIII դարի վերջում յեվրոպական գիտնականները շատ լավ տեղյակ եյին, վոր ռուսները ճանապարհորդություններ և առևտուր են արել Սիբիրում, Ամուրի հովտում և Կամչատկա-

[1] Խոսքը Խաղաղ ովկիանոսի մասին է: Ծ. Թ.
[2] Պրուսիայի թագավոր: Ծ. Թ.

յում: Այդ հարցի մասին մի շարք գրքեր են հրատարակվել Ամստերդամում, Փարիզում և Լոնդոնում: «Ասիայի և Ամերիկայի միջև ռուսների կատարած նոր հայտնագործությունների մասին» Կոքսի գիրքը մանրամասնորեն թվարկում է ռուս որսորդներին, զինվորականներին և վաճառականներին, վորոնք անցել են Կամչատկա, հայտնագործել Ալեուտյան կղզիները և նավարկել Բերինգի նեղուցում: Նեվոդչիկովի, Սերեբրյանիկովի, Տրապեզնիկովի, Գլոտովի, Սոլովյովի, Կրենիցինի, Լևաշովի և շատ ուրիշների մոռացված անունները հիշատակված են Դեժնևի, Բերինգի, Չիրիկովի անունների շարքում: Կոքսն իր գրքի հատուկ բաժնում ապացուցում է, վոր Բերինգը յեղել է ամերիկական ափին: Կոքսի հեղինակությունը, աշխատանքի պատկառելիությունը և հրատարակչի անունը բավականին մեծարկելի են: Բայց, այնուամենայնիվ, համառորեն հնչում եյին ձայներ, վորոնք չեյին ընդունում այդ ապացույցները: Վոմանք ուղղակի պնդում եյին, թե՝ ասիական ցամաքը միացած է ամերիկականի հետ. ուրիշները՝ թե ութսուն լյո յերկարության ծովային ահագին տարածություն է բաժանում նրանց:

Ռուսական հրատարակությունների մեջ բերված եյին մեր ճանապարհորդների բավականին պարզ գրությունները Ամերիկայի ափի մասին:

«... Չուկոտյան ծայրի դիմաց յերկու կողմից՝ և՛ Կոլըմի, և՛ Անադըրի ծովից յերևում է ցամաք, վորին չուքչաները անվանում են Մեծ յերկիր. նրանք ասում են, վոր այնտեղ ապրում են մարդիկ, վորոնք իրենցից տարբերվում են սովորություններով, ամեն տեսակի վարք ու բարքով և խոսում են տարբեր լեզվով: Շատ հին ժամանակներից այդ չուքչաները և այն մեծ յերկրում ապրող մարդիկ անհաշտ են. իրար դեմ են յելնում պատերազմով. նրանք կռիվ են անում աղեղներով և նիզակներով, վոր նետերից ել սուր են. նիզակի ծայրին բյուրեղ եր, ծայրին քսում են թունավոր խոտի հյութ, վոր անվանում են լյուտիկա. մեկին վիրավորելու դեպքում, յեթե նույն ժամին չծծեն արյունը, վիրավորը չի կարող մի որից ավելի ապրել և կմահանա:

Չուկոտյան ծայրից ամառ ժամանակ մինչև այն մեծ յերկիրը բայդարներով[1] թիավարում հասնում են մեկ որում: Չուկոտյան ծայրում, բացի գայլերից և կարմիր աղվեսներից, վոչ մի այլ գազան չկա. յեղածն էլ քիչ է, քանի վոր այդտեղ անտառներ չկան. մինչդեռ, ընդհակառակը, այն մեծ յերկրում կան ամեն տեսակի գազաններ՝ սամույրներ, կզաքիսներ, սպիտակ և կապտագույն աղվեսներ, կուղբեր, արջեր, ծովային շնձրիներ. այնտեղի բնակիչները ունեն յեղջերուների շատ մեծ յերամակներ. նրանք կերակրվում են ծովային գազաններով և բանջարեղենով. այնտեղ կան ամեն տեսակի յեղևնու, սոճու, խեժափիճի և այլ անտառներ. այն յերկրի անտառները յերևում են նրանց՝ չուքչաների մոտ և՛ բայդարներից և՛ յուրտերից[2]. այն յերկրից ծովն են թափվում մեծ գետեր. այնտեղի ժողովուրդն իր տները ամրացրել է հողաթմբերով և աշտարակներով, ունեն պահապաններ, վոր զինված են նիզակներով. այդպիսի ամրություններում նրանք պաշտպանվում են թշնամիներից»:

Բայց ի՞նչ արժեք ունեյին «լուսավոր» յեվրոպացիների համար այդ վկայությունները, վոր տալիս են քիչ գրագետ կիսաասիացի բարբարոսները, վորոնք նոր են ստացել մարդկային կերպարանք: Յեթե ընտրյալները կարդում եյին «Санктпетербургские Ведомости» լրագիրը, մեր գիտնականների ու ճանապարհորդների աշխատությունները ու հաղորդագրությունները, հաշվի եյին առնում Պետերբուրգի ակադեմիան, ապա անգլիական գիտնականների մեծամասնության համար նեղուցի գոյության հարցը և Բերինգի տեղեկությունների լրջությունը մնում եյին բաց և շատ դեպքերում վիճելի: Այդպես եր մեծամասնության տեսակետը, մինչդեռ կառավարության շահերը պահանջում եյին հարցի ճիշտ լուծումն. այդ է, վոր ստիպում է հրատարակել պաշտոնական ակտը և կատարել կոմս Սենդվիչի ձեռնարկած քայլերը, այն է՝ կազմակերպել նոր արշավանք, այս անգամ դեպի Հյուսիսային Ամերիկայի արևմտյան ափերի կողմերը:

Ձմռան կարճ օրերն ե՛լ ավելի եյին կարճ՝ մառախուղներից

[1] Բնիկների մակույկներ: Ծ. Թ.

[2] Բնիկների տներից: Ծ. Թ.

պատճառով: Թաց ձյունը ծանր փաթիլներով ծածկում էր տանիքները, մերկ ծառերը, մայթի վրա դառնալով մոխրագույն փխրուն ցեխ: Յերբեմն յերևում էր կարմիր, անդորր արևը, նա շատ ցածր էր լինում և ծածկվում էր տների տանիքների յետևը: Սենյակներում շուտ եյին վառում մոմեր. բուխարու մեջ վառվող փայտը ճարճատում էր առավոտից յերեկո և տաքությամբ քուն բերում մարդկանց աչքերին, որոք ասում իր տատանվող լույսով:

Կուկը նստել էր բազկաթոռի մեջ և վոտքերը մեկնել դեպի բուխարու ցանցը: Ձեռքից գիրքն ընկնում է ծնկների վրա. աչքերն հետևում եյին ծղանների մեջ առաջացող բոցերին: Կինը յերեխաներին տանում է քնացնելու: Սենյակը խաղաղվում է. լսելի յե դառնում ժամացույցի ճոճանակի ու ծղրիդի ձենը. դրանցից յուրաքանչյուրն իր ձևով համաչափ կերպով չափում էր ժամանակը: Պատին տատանվում էր սենյակի սարքի համար տարօրինակ տահիտական վահանի գզգզված փետուրների ստվերը: Հեռավոր կղզիների պատկերները սահում եյին կիսաքնի անորոշության մեջ: Ստվերները տատանվում եյին տահիտական աղջիկների պարի համաչափությամբ: Պարին ներդաշնակ տխուր հնչում էր յերգը. «Լուսնկա մշուշ. այդ մշուշը յես սիրում եմ...» Գիրքը ծնկներից ծանր ընկնում է հատակի վրա և արթնացնում: Կուկն սկսում է բարկանալ, քայլում է սենյակում յետ ու առաջ, կանչում կնոջը և ասում, վոր գնում է Հաուքսվորտի կամ Պալլիսերի մոտ:

Ամուսնու այդ տրամադրությունը վախ է առաջացնում միստրիս Կուկի մեջ. Նա զգում է, վոր մոտենում է ճակատագրական ժամը: Կուկը դառնում է լռակյաց և դյուրագրգիռ. ներքին վեճ է բռնկվում նրա մեջ: Ծովագնացն սկսում է ձանձրանալ ընտանիքի միակերպ խաղաղությունից, ինչպես այդ խաղաղ կյանքի մասին յերազում էր հեռավոր ծովերում, աշխատանքից հոգնած: Նրա միտքն անհանգիստ կերպով ծրագրում էր նոր նավագնացության պլանը: Գրքերն ու քարտեզները աստիճանաբար դարակներից իջնում են սեղանի և աթոռների վրա, մտցնելով սենյակում կատարյալ խառնակություն: Ծովագնացը հրամայորեն պահանջում էր աշխատանք, յետ էր մղում սրտաշարժ և

ծույլ ընտանիքավորին, վոր կուչ էր գալիս տան մութ անկյուններում և վախ զգում իրենից ահեղ ախոյանից, վորը միշտ էլ հաղթանակ էր տանում այդ անհավասար կռվում:

Յերբ Ծովակալության մեջ խոսակցություններ են ծագում հյուսիսային արշավանքի մասին, և Պալլիսերը Սենդվիչի հետ զրույցի ժամանակ ասում է Կուկի տրամադրության մասին, խորամանկ աստիճանավորը իսկույն բռնում է այդ միտքը, վորը վաղուց նրան անհանգստացնում էր և հարկավոր արդարացում չեր գտնում: Նա, իհարկե, կարող էր պարզ առաջարկ անել Կուկին՝ ստանձնել արշավանքի ղեկավարությունը, բայց վախենում էր մերժում ստանալուց: Նրան թվում էր, թե չափից դուրս պարգևատրված, թագավորի և բարձր հասարակության կողմից սիրաշահված այդ «մութ ծագումով» մարդը, վորն ականավոր էր դառել, վերջիվերջո, վոչ այնքան իր տաղանդի, վորչափ իրերի հաջող բերման, ծովակալների, գիտնականների և առաջին հերթին իրեն՝ Ծովակալության առաջին լորդի շնորհիվ,—այդ մարդը, վոր հասել է խաղաղ, շահավետ, պատվավոր պաշտոնի, վորին կնախանձեր ամեն մի ջենտլմեն, չի կարող կրկին ձգել ամեն ինչ և որինապես ձեռք բերած բարեկեցությունը փոխել անհաստատ ու անհայտ բախտի անկայուն դրության հետ: Բացի այդ, նա վախենում էր հասարակության կարծիքից՝ Կուկի մերժումը կարող էր առաջ բերել անցանկալի բամբասանքներ և հարձակումներ առաջին լորդի հասցեյին. դրանից կշահեյին իր քաղաքական թշնամիները, վորոնք կկարողանան ոգտագործել հայրենասիրական զգացմունքները և իր դեմ դարձնել հասարակական կարծիքը, վորն առանց այն էլ բավականին անկայուն էր վերջին ժամանակներս: Կար մի այլ միջոց ևս—թագավորի հրամանը: Բայց ծիծաղելի յե ջայլամի դեր խաղալ, գլուխը սեփական թևի տակ թաքցնելով: Խաբել կարելի յե միայն հասարակ ժողովրդին: Բոլորն էլ գիտեյին, թե ինչպես են գրվում թագավորական հրամանները: Ահա թե ինչո՛ւ նա խիստ ոգտվում է Պալլիսերի խոսքերից և, լավ հիշելով դիվանագետի փորձված միջոցները, սկսում է մի նուրբ խաղ:

Հնուց դիվանագիտական քայլը, ինչպես և առևտրական գործարքը, հաջողություն էր ունենում ճաշի, կամ ընթրիքի ժամա-

նակ, քան վեհաժողովի սեղանի շուրջը: Լավ դիվանագետը չի խնայում իր ստամոքսը, գործերի պատճառով խախտելով կերակրվելու կարգը: Զուր չեն ֆրանսիացիք ասում. «նա ուտում է դիվանագետի նման»:

Ստանալով իր օգնականի համաձայնությունը՝ պահպանել այդ գաղտնիքը, կոմսը հանձնարարում է նրան մի մոտիկ օր իր անունից Կուկին ճաշի հրավիրել և գալ նրա հետ միասին: Պալիսերը համաձայնվում է մեծ ուրախությամբ: Եթե Սենդվիչը վախենում էր վիրավորել Կուկին իր առաջարկությամբ, Պալիսերն, ընդհակառակը, վախենում էր խիստ վիրավորել նրան, եթե արշավանքի պետ նշանակվի մի ուրիշ կապիտան: Պալիսերը շատ լավ էր հիշում Ջեմս Կուկի դեմքը, երբ նա մի քանի օր առաջ վերհիշում էր իր վերջին ճանապարհորդությունը, աչքերը վառվում էին. այդ ահագին մարդը, տարվելով իր պատմություններով, անհանգիստ քայլում էր սենյակի մի անկյունից մյուս անկյունը, կարծես, վանդակում փակված առյուծ լիներ:

Մի քանի օրից հետո Կուկը, Պալիսերը և Ծովակալության քարտուղար Ստեֆենսը նստած էին կոմս Սենդվիչի տանը, ճաշի սեղանի շուրջը: Տանտերը չափազանց սիրալիր էր: Նա հյուրասիրում էր ընտիր կերակուրներով, սիրալիր հանաքներ էր անում, պատմում էր պալատական վերջին բամբասանքները: Հանդիսավոր ծառաները շպարված պարիկներով և ոսկեկար ու կարմիր կամզոլներով անաղմուկ գալիս ու գնում էին պարկետի վրա, չքանում ոսկով ու մետաքսով սարքված սենեկաշարքում: Պատին ահագին գոմբելենի[1] ֆոնի վրա նկարված էին փետրազարդ սաղավարթներով հնադարյան հերոսներ, թռչող հրեշտակներ և պարող նազուհիներ. իսկ նույն պատի մոտ ապակե թասի տակ մարգարտազույն առագաստներով շողշողում էր ոսկե նավը: Նրա դիմացը մեծ շրջանակի մեջ էր դրված իր նախապապը՝ Կրոմվելի սիրելի ծովակալը:

Կուկը միշտ էլ իրեն անհարմար էր զգում այդպիսի սեղանի շուրջը. կարծես այդ ճոխությունը կաշկանդում էր նրա շարժումները, արգելում թեք ընկնել բազկաթոռի վրա, դնել ոտը ոտի վրա, ստիպված էր մտածել, թե ինչպես շարժի ձեռքերը և դեպի որ կողմը դարձնի իր երեսը:

Խոսակցության ժամանակ բնականաբար շոշափվում էին ծովակալության գործերը, նավաշինության հարցերը. կոմսը գանգատվում էր, որ կապալառուները անճշտապահ են, հայրենասիրական ոգուց իսպառ զուրկ, վաճառականներն ագահ են. ի միջի այլոց շոշափում է նաև հյուսիսային արշավանքների անհաջողությունները. երբ Ստեֆենսը, օգտվելով այդ խոսքերից, սկսում է այն միտքը զարգացնել, թե անհրաժեշտ է շուտափույթ կերպով նոր արշավանք կազմակերպել, նա վարպետորեն այդ խոսակցությունից անցնում է մի այլ խոսակցության: Դիվանագետն սպասում էր ավելի հարմար րոպեի: Երբ ճաշը վերջանալու վրա էր, սեղանի վրա երևում է պտուղներով վազը, բյուրեղե ընտիր բաժակների մեջ, հալած զմրուխտի նման, փայլում է անուշահոտ լիկյորը, երբ խոսակիցների նկատելի կերպով կարմրած երեսները վկայում են թեթև ու բարերար արբենալու մասին, Սենդվիչը, իբր պատահաբար, հիշում է Ստեֆենսի խոսքերը և, դիմելով Կուկին, խնդրում է խորհուրդ տալ, թե լավ կլիներ ի՞նչ ուղղություն տալ այդ արշավանքին: Եվ ով կարող էր ավելի լավ իմանալ ինչպես հասնել հյուսիսային հեռավոր լայնություններին և ստուգել Ասիայի ու Ամերիկայի միջև նեղուցի գոյության վերաբերյալ հակասական տեղեկությունները, եթե ոչ ինքը, նավերի այնքան փորձված ղեկավարը, համաշխարհային հռչակ ստացած ծովագնացն ու հետազոտողը: Կոմսն զգուշությամբ ակնարկում է այն պարգևի մասին, որը խոստացված էր պառլամենտական ակտով. նա սկսում է խոսել այն ահագին գիտական նշանակության մասին, որ կարող էր ունենալ այդ հայտնագործությունը, և այն լայն հնարավորությունների մասին, որ դրա շնորհիվ կբացվեին ռազմական և առևտրական նավագնացության առաջ: Այս անգամ Պալիսերը և Ստեֆենսը, մեկը մյուսին ընդհատելով, սկսում են ջերմ կերպով ապացուցել արշավանքի անհրաժեշտությունը: Կուկն աստիճանաբար տարվում է խոսակցությամբ, ավելի ու ավելի է ոգևորվում և, վերջապես, մոռանալով բարձր հասա-

[1] Բրդե և մետաքսե նուրբ գործած գորգեր Լյուդովիկոս XIV-ի ժամանակ Ֆրանսիայում: Ծ. Թ.

բակության մեջ ընդունված ետիկետը, վեր է թռչում բազկաթոռից, քայլում սենյակի մեջտեղում, թափահարում ձեռքերը և համոզում, վոր իր կարծիքը ճիշտ է, թեպետ ներկաներից վոչ վոք մտադիր չէր ժխտելու այն: Այդ բոլորը վերջանում է նրանով, վոր ինքն է առաջարկում կոմսին իր ծառայությունները, վորպես արշավանքի հրամանատարի: Դիվանագետը շարունակում էր իր գիծը: Նա ձևացնում է զարմացած. «Ներողությո՛ւն, չէ վոր կապիտանը նոր է վերադարձել յերկարատև ու ծանր ճանապարհորդությունից»: Կուկը շարունակում էր պնդել իր ասածի վրա: Ստեֆենսն անցնում է նրա կողմը: Պալիսերը հայտնում է, վոր ուրիշին ուղարկելը միևնույն է թե վոչ մի արշավանք չի կատարվում: Կոմսը տեղի յէ տալիս:

Այդ յերեկո Կուկը վերադառնում է տուն հիանալի տրամադրությամբ: Նա կնոջ առաջ գովաբանում է առաջին լորդի խոհարարին. իսկ այն հարցին, թե ինչ նպատակով էր նա հրավիրված, Կուկը պատասխանում է, վոր կոմսը հետաքրքրվում էր Գրինիչի հոսպիտալի գործերով:

Սակայն միստրիս Կուկը չհավատաց իր ամուսնուն:

Հաջորդ օրը Սենդվիչը գալիս է Սեն-Ջեմսի պալատը և թագավորին զեկուցում, վոր Կուկը համաձայն է իր վրա վերցնել արշավանքի հրամանատարությունը: Հրամանը պատրաստված էր վաղօրոք. Գեորգը, առանց յերկար մտածելու, ստորագրում է այն թուղթը, վոր ճարպկորեն դրված էր իր ձեռքի տակ: Այդ «սուրբ» գրերը վոսկու ավազով ծածկելով, կոմսն իր կառեթով շտապում է Ծովակալություն, վորտեղ այդ գրությունը ձգելով քարտուղարի սեղանի վրա, կարգադրում է անմիջապես կատարել բոլոր ձևականությունները: 1776 թվի փետրվարի 9-ին Կուկը նշանակվում է « Resolution»[1] թագավորական կորվետի հրամանատար և հյուսիսային արշավանքի պետ:

Ծովակալությունը վորոշում է այս անգամ արշավանքը կազմակերպել վորքան կարելի յէ լավ, նախատեսելով բոլոր հնարավորությունները: Մայիսին նա թագավորական բրիգ «Առ-

[1] «Վճռականություն» նավ: Ծ. Թ.

յուծ»-ը լեյտենանտ Պիկերսհիլի հրամանատարությամբ ուղարկել էր դեպի Դևիսի նեղուցը, իբր թե անգլիական կետորս նավերի պաշտպանության համար: Գաղտնի հրամանի մեջ ասված էր այն մասին, վոր անհրաժեշտ է Բաֆֆինի ծոցում ըստ հնարավորին ել ավելի առաջ շարժվել, հետախուզել ափերը և վերադառնալ տարվա վերջը: Այդպիսով, Կուկը, վորն ընթանալու յեր Ամերիկայի մյուս կողմից, միաժամանակ կկարողանա հետազոտել արևմտյան ափերը և, գնալով դեպի հյուսիս, միացնել այդ յերկու ուղիները:

Արշավանքին մասնակցելու եյին յերկու նավ՝ «Վճռականություն» և յերեքհարյուր տոննանոց «Հայտնագործություն»-ը, վորն այդ նպատակի համար Ծովակալությունը գնել էր Դեպթֆորդի նավաշինարանում: «Հայտնագործության» նավապետ էր նշանակված Կլարկը, դեպի հարավային բևեռը կատարած ճանապարհորդության ժամանակ Կուկի յերկրորդ լեյտենանտը:

Պատրաստությունները տևում են հինգ ամիս. Կուկն ապրում էր մերթ Լոնդոնում, մերթ Դեպթֆորդում, նավում: Յերիտասարդական վոգևորությամբ էր սկսել նա այդ աշխատանքները: Տանը, վորտեղ առաջիկա հրաժեշտի պատճառով անհանգստություն էր տիրում, ինքն ուրախ էր և ամեն կերպ աշխատում էր հանգստացնել կնոջը, հավատացնելով, վոր ճանապարհորդությունը լինելու յէ կարճատև, գովում էր նավերի ամրությունը, սպաների և նավաստիների փորձառությունը, լավորակ կենսամթերքների առատությունը: Մարտի սկզբին «Վճռականություն» նավն անցնում է Թեմզա գետը և սկսում բեռնավորվել:

Ընտանեկան կյանքի վերջին օրերը լուսավորվում են տղայի ծննդյան փաստով: Կուկն ի պատիվ Պալիսերի, տղային անվանում է Հյուգ: Դուրեկան մայիսը կատարյալ ծաղկման օրերում էր: Ծաղկել էր այգին: Արևը կանչում էր քաղաքից դեպի դաշտ: Ծովեզերքից փչում էր աղով հագեցած տաք քամին, վորի հետ խառնվում էր հողի, ջրաբույսերի, փայտի և կուպրի բուրմունքը:

Այդ ամսի վերջին «Վճռականություն» նավն անցնում է Լոնգ-Ռիչ, վորտեղ բառնում են մի յեզ, յերկու կով հորթերով,

վոչխարներ Տահիտիի համար, բանջարեղենի սերմեր, գյուղատնտեսական գործիքներ և մանր-մունր բաներ՝ փոխանակության համար։ Նավաստիներին տվել եյին տաք շորեր։ Ծովակալությունն աշխատել եր արշավախմբին տալ աստղաբաշխական և նավագնացության լավագույն գործիքներ. հրաժարվում են մասնագետ-ագրոնոմ ուղարկելուց. Նման դիտողությունները հանձնարարում են կատարել Կուկին և նրա ոգնական լեյտենանտ Գրինին։ «Հայտնագործություն» նավում այդ գործը հանձնում են Վիլյամ Բեյլիին, վորը նավարկել եր «Ձեռնարկություն» նավում։ Բուսաբանության, հանքաբանության և կենդանաբանության վերաբերյալ աշխատանքները հանձնարարում են «Վճռականություն» նավի վիրաբույժ Անդերսոնին, վորը Կուկի յերկրորդ ճանապարհորդության ժամանակ զբաղված եր տահիտական բառարան կազմելով։ Նկարիչ Վեբերը նույնպես մեկնելու յեր «Վճռականություն» նավով։ Կուկին հանձնարարված եր նաև իր հետ յետ տանել հայրենիք տահիտցի Ո-Մաիին։

Լոնգ-Ռիչը դառնում ե Լոնդոնի հասարակության համար մի ուխտատեղի։ Լեդիներն ու ջենտլմենները խումբ-խումբ այցելում եյին «Վճռականություն» նավը, ծանոթանում Կուկի հետ, դիտում նավը, անվերջ հարցեր տալիս նավաստիներին, խանգարում աշխատանքները։ Կոմս Սենդվիչը քաջալերում եր այդ ուրախ զբոսանքները, պարծենում «իր» նավապետով, և «իր» նավով։ Ինքը գալիս եր Լոնգ-Ռիչ, շրջապատված լորդերով, Ծովակալության աստիճանավորներով և նրանց կանանց ու յերեխաների հետ։ Կուկն ստիպված եր, ի պատիվ իր հովանավորողների, ճաշկերույթներ սարքել. հուզված ամբոխն աղմկում եր նավում մինչև ուշ գիշեր, նավի դահլիճը բարձր հասարակության սալոն դարձնելով։ Հյուրասիրությունն ու քաղաքավարությունը ծովագնացի առաջին պարտականությունն ե։ Կուկը հյուրասիրում ե ուրախ արիստոկրատներին և ճանապարհ դնում, թնդանոթներից տասնյոթ անգամ կրակելով. Նավաստիներին կարգադրում ե բղավել «ուռա՜»։ Նրա ինքնագոհ պետերը սեղմում են նավապետի ձեռքը և ամենալավ տրամադրությամբ վերադառնում։

Յերբ «Վճռականություն» նավը թնդանոթներ, հրացաններ և

վառոդ բառնալով «Հայտնագործություն» նավի հետ մեկնում ե Պլիմութ, Կուկը մի շաբթով գնում ե Լոնդոն։ Վերջին որերն ընտանիքի և բարեկամների շրջանում, թվում եր, ընթանում եյին տոնական խաղաղությամբ։ Նավն ու նավապետը պատրաստ եյին հեռավոր ճանապարհորդություն կատարելու։ Կարճ ժամանակով Կուկը կրկին նվիրվել եր ընտանիքին։ Ամբողջ որերով նա զբաղվում եր յերեխաների հետ, մանր տախտակներից կառուցում նավեր, քարտեզը փռում նրանց առաջ, աշխատելով հասկանալի լեզվով բացատրել նրանց աշխարհագրական նշանների իմաստը։ Խաղաղ զրույցները կնոջ և բարեկամների հետ — վերջին հանգիստն եր. այդպիսի ժամանակ մարդ աշխատում ե խոսել դատարկ բաների վերաբերյալ, մինչդեռ միշտ մտածում ե առաջիկա հրաժեշտի, ապագա բախտի մասին. մարդ գիտե, վոր բոլորն ել մտածում են այդ մասին, բայց ձևացնում ե, թե հավատում ե նրանց խոսքերի անկեղծությանը։ Զգացմունքների այդ աչքակապուկ խաղը միշտ ել այն վերջն ե ունենում, վոր միշտ բռնում ե մեկին, միշտ մեկն ու մեկը խախտում ե լռության կարգը։ Հեռու և վտանգավոր ճանապարհորդության մեկնողի մասին չեն խոսում, ինչպես ննջեցյալի մասին. բայց հանկարծ պոռթկում են լացն ու արտասուքները, վորով անկասկած բացվում ե խարուսիկ դրությունը։ Կուկը չեր սիրում, յերբ կինը լալիս եր։ Այդ հեզ եյակը դիմանում ե մինչև վերջին րոպեն։

Այդ կնոջ բախտը սրտաշարժ եր։ Նախապաշարումների, կրոնի, դասակարգային ավանդությունների կապանքները փակել եյին նրան տան սենյակների չոր պատերում, անթափանցելի պարիսպով շրջապատել ընտանեկան կյանքը։ Յեվ նա, այդ անձնվեր ու հավատարիմ մայրը և կինը, իր յերիտասարդ կյանքը նվիրել եր ընտանիքին։ Տարիներ շարունակ անհանգիստ ու սրտաշարժ նա սպասել ե իր ամուսնուն, վորպեսզի նորից ճանապարհ դնի և նորից սպասի, տենչացել ե բախտ, վորպեսզի նորից լաց լինի դատարկ սենյակում, ինքն իրեն գանգատվի իր բախտի վրա և կրկին սպասի։ Այդպես ել այս վերջին, վաղ, պարզ ամռան առավոտյան նա գրկում ե իր հսկա Ջեմսին և ծիծաղում արտա-

սուքներն աչքերին, չիմանալով, թե ինչ ասի. կրկին յերկար նայում եր դատարկ հեռուն, իր մեծ վշտի արևոտ ոլին:

Յերբ Կուկը Ո–Մայի ուղեկցությամբ թողեց Լոնդոնը և Նոր–ում բարձրացավ «Վճռականություն» նավը, ապա Ջրանցքով անցնելով հասավ Դյունամ և մի քանի որից հետո խարիսխ գցեց Պլիմութում, վորտեղ նրան սպասում եր «Հայտնագործություն» նավը, Ջրանցքի մուտքի մոտ խռնվել եյին մի շարք ռազմանավեր՝ «Ովկիանոսը», վորի վրա բարձրացված եր ծովակալի դրոշակը, «Բրիլլիանտը», «Դարանր», «Մինեղջյուրը» և վաթսուն յերկու բեռնատար նավեր՝ հեծելազորով ու հեսսենյան հետևաներով: Հյուսիս–արևմտյան ուժեղ քամու պատճառով, նրանք չեյին կարողանում դուրս գալ բաց ծով, ուստի խմբվել եյին անկանոն կերպով և փակել նավահանգիստը:

Հողից անջատված անգլիական գյուղացիները,— վորոնց բռնի հավաքագրել, խաբել ու հարբեցրել եյին թագավորական հավաքագրողները և կաշառել չտեսնված ռոճիկի և պարգևների անհավատալի խոստումներով,— վոչխարների նման խռնվել եյին ռազմանավերի մութ ու գարշահոտ նկուղներում. այդ ռազմանավերը նրանց պետք է տանեյին ինչ վոր ոտար, անհայտ յերկրներ, ովկիանոսի մյուս ափը, հայտնի չե թե ինչու անհայտ մարդկանց սպանելու: «Կեցցե՛ Բրիտանիան, կեցցե՛ թագավորը» խռպոտ ձայնով գոռում եյին ճանապարհային պանդոկներում հավաքագրողները: «Կեցցե՛...» բղավում եյին հարբած նորակոչիկները, քանի դեռ նրանց չեյին կապել զորանոցներ ուղարկելու:

«Այն ժամանակ, յերբ մենք սկսում եյինք մեր ճանապարհորդությունը, վորը նպատակ ուներ նոր հայտնագործություններ կատարել Հյուսիսային Ամերիկայի արևմտյան ծովեզերքի մոտ, Անգլիան չարաբաստիկ անհրաժեշտություն ուներ իր նավատորմը և ցամաքային բազմաթիվ զորքերն ուղարկելու ընդդեմ նույն այդ մայր ցամաքի արևելյան մասի, վորը հայտնագործել և վորտեղ անցյալ դարում բնակություն եյին հաստատել մեր հայրենակիցները: Այդ բավականին տարօրինակ հանգամանքն իմ մեջ առաջացրեց ծանր խոհեր»:

Այժմ մեզ չափազանց հասկանալի յեն թվում այդ մտքերը,

վոր ծագել եյին Կուկի գլխում, յերբ նա տեսնում է ռազմածովային տրանսպորտը, վորն ուղարկվում եր «ապստամբ» ամերիկացիներին ճնշելու: Բայց այն մարդու համար, վորն ապրում եր XVIII դարում, վորը հայրենասիրությամբ տարված անգլիական սպա յեր, վորը թագավորական դրոշակն եր պարզում իր հայտնագործած յերկրներում, նման մտքեր արտահայտելը կատարյալ ընդվզումն եր, բողոք, ուղղված գոյություն ունեցող կարգերի դեմ:

Այդ տեղի ուներ հուլիսի 6–ին, մինչդեռ 4–ին ամերիկյան գաղթականներն ապստամբել եյին և թոթափել անգլիական թագավորների լուծը: Անգլիայում այդ մասին քիչ բան գիտեյին, կառավարությունը փութաջան ծածկում եր ստացվող տեղեկությունները. բուն մետրոպոլիայում էլ տիրում եր խիստ անհանգիստ դրություն: Իռլանդիայում հասունանում եր նոր խռովություն, Լոնդոնում շրջում եյին չարագուշակ լուրեր, վորոնք սպառնում եյին կաթոլիկներին: Ամրացած Ռուսաստանը հյուսում եր Հյուսիսային Միության տերությունների նենգ ցանցը: Ֆրանսիան անշեղորեն դեպի հեղափոխություն եր ընթանում: Դեպի ովկիանոսի մյուս ափը զորքեր ուղարկելը թուլացնում եր Անգլիայի ուժերը: Նա գտնվում եր լուրջ ցնցումների նախօրյակին: Կիսախելագար և անողնական թագավորը մերթ փրկություն եր փնտրում, հաշտեցնելով կուսակցությունները և կազմելով նրանցից կոալիցիոն մինիստրություն, մերթ նշանակում եր այնպիսի մարդ, վորը իր թիկունքում կկարողանար անսահմանափակ իշխանությամբ կառավարել պետությունը:

Գաղութների գիշատիչ շահագործումն ունենում է իր անխուսափելի հետևանքը: Ջորջ Վաշինգթոնն[1] իր միլիցիական բանակով ջախջախում եր բրիտանական վարձու զորքերին: Անգլիական ապրանքների բոյկոտը խախտում է անգլիական ընկերությունների առևտրական հաշվեկշիռները: Դրոշմային տուրքը, վոր անգլիական պառլամենտը 1765 թվին մտցրել եր խախտված գործերը կանոնավորելու համար, կրկնապատկում է դժգո-

[1] Ամերիկյան ապստամբ գաղթականների ղեկավարը և Հյուս. Ամեր. Միացյալ Նահանգների առաջին նախագահը: Ծ. Թ.

հուլթյունը և ապստամբության գլխավոր առիթը դառնում: Ամերիկյան մամուլն աղաղակում էր «գաղթականների իրավունքների մասին»: Օրենսդրական ժողովներում և կոնգրեսներում հայտարարում էին գաղութների իրավունքը: Մի տարի հետո, «դրոշմային ակտի» վերացումը վոչ մի բանով չօգնեց, և առավել, վոր անգլիական պառլամենտը պահպանել էր իրեն վերապահված իրավունքը, այն է՝ կարգավորել գաղութների կյանքը ըստ իր հայեցողության: 1775 թվից ռազմական ընդհարումներն սկսվել էին Լեքսինգթոնում, Բոսթոնում, Կվեբեկում: Մեկ տարի հետո, Վիրջինիայի օրենսդրական ժողովը մշակում է «Իրավունքների բիլը»: Վերջինիայի պատգամավորները կոնգրեսին առաջարկում են հրապարակել Ամերիկայի Միացյալ Նահանգների անկախության դեկլարացիան: Անգլիայի կողմնակից հարավային շրջանների ստրկատեր լոյալիստների թույլ փորձերը պարտություն են կրում: Մեծ Բրիտանիայի հետ կապերը խզված էին անդառնալիորեն:

Կուկը Ծովակալությունից ստանում է մի ծրար հատուկ հրահանգներով և հրաման՝ անմիջապես ճանապարհ ընկնել: Նավապետ Կլարկը հապաղել էր Լոնդոնում: «Վճռականություն» նավի անձնակազմը լրացվել էր ծովային հետևակի զինվորներով, հասցնելով իր կազմը հարյուր տասներկու հոգու («Հայտնագործություն» նավի վրա կար յոթանասունյերկու հոգի): Նավի կոմիսարն ու գանձապահը բաժանում են ռոճիկները, իսկ նավաստիներին առաջուց վճարում են յերկու ամսվա ռոճիկը: Կուկը նավապետին հայտնում է ստացած հրամանը՝ անմիջապես դուրս գալ ծով և հետևել իրեն: Պատճենը հանձնված էր նավատորմի հրամանատարին Պլիմութում:

Հուլիսի տասներկուսին յերեկոյան դուրս են գալիս Ջրանցքից, թնդանոթային վողջույն տալով ծովակալի դրոշակին: Յերբ Եդիսթոնի փարոսը ծածկվում է հորիզոնում, և «Վճռականություն» նավը դուրս է գալիս բաց ծով, պարզում իր առագաստները, Կուկը մտնում է իր նավասենյակը, վառում լապտերը և, նստելով սեղանի մոտ, բացում է զմուռի կնիքով փակված՝ ծովակալության ծրարը:

Մեծ Բրիտանիայի, Իռլանդիայի և այլն Ծովակալության
լորդ կոմիսարների անունից․

Գաղտնի հրահանգներ նորին մեծության «Վճռականություն» նավի հրամանատար կապիտան Ջեմս Կուկին:

Յերբ Կոմս Սենդվիչը հայտնեց մեզ նորին մեծության վորոշումը, վորով հրամայվում է արշավախումբ ուղարկել հետախուզելու հյուսիսի ծովում կա արդյոք անցք, վոր տանում է Խաղաղ ծովից դեպի Ատլանտյան ովկիանոսը, մենք, ի կատարումն այդ հրամանի, պատշաճ ձևով սպառազինեցինք և սարքավորեցինք «Վճռականություն» և «Հայտնագործություն» նավերը և, վերջին ճանապարհորդության շնորհիվ իմանալով ձեր ընդունակությունները և լավ վարքը, անհրաժեշտ համարեցինք այդ գործը հանձնել ձեզ:

Յերբ դուք կհասնեք Տահիտի կղզին կամ Ընկերության կղզիներից մեկը, ապա կիջեցնենք Օ-Մաին այդ յերկրներից մեկում, վորն ինքը կընտրի, և նրան կթողնեք այնտեղ:

Անգլիական ռազմական նավատորմը Պորտսմութի նավահանգստում

Ձեզ խստիվ հրահանգվում է դեպի Նոր Ալբիոնի ափերն ընթանալու ժամանակ կանգ չառնել իսպանական գաղութների որևէ մասում, որոնք գտնվում են Ամերիկայի արևելյան ափերին, յեթե միայն դուք չեք ընկնի այնտեղ որևէ անխուսափելի պատահարի հետևանքով: Այդպիսի դեպքում դուք կանգ չեք առնի անհրաժեշտ ժամանակից ավելի և կխուսափեք տեղիք տալ թեկուզ գանգատի առիթի կամ գանգատի պատրվակի կաթոլիկական մեծության[1] պատկանող յերկրի բնակիչների կամ նրա հպատակների կողմից: Յեթե դեպի հյուսիս ընթանալիս ձեր հետագա ճանապարհին, որը ձեզ կմատնանշվի ստորև, դուք կպատահեք յեվրոպական պետության կամ թագավորի հպատակների՝ այն ծովափերին, որ կայցելեք, դուք նրանց չանհանգստացնեք կամ առիթ չտաք գանգատի, այլ, ընդհակառակը, կվարվեք նրանց հետ վայելուչ և բարեկամաբար...

Յեթե դուք կկարողանաք համոզվել, որ անհնարին է ջրով անցնել Հուդսոնի կամ Բաֆֆինի ծոցը, կամ այդ անցքն անբավարար է նավագնացության համար, ապա դուք կգնաք դրա համար նպաստավոր ս. Պետրոսի և ս. Պողոսի[2] նավահանգիստը Կամչատկայում, կամ մի այլ տեղ, որը դուք բարվոք կհամարեք նավի անձնակազմի համար թարմ սնունդ հայթայթելու և ձմեռելու համար: Դուք այդտեղից կհեռանաք 1778 թվի գարնանը, կընթանաք դեպի հյուսիս, այնքան հեռու, որքան ձեզ կթելադրի ձեր խոհեմությունը, որպեսզի նորից հյուսիսում դեպի արևմուտք կամ դեպի արևելք փնտռել այն նեղուցը, որ Խաղաղ ծովից տանում է դեպի Ատլանտյան օվկիանոսը կամ Հյուսիսային ծովը[3]. և յեթե, համաձայն ձեր անձնական դիտողությունների ու տեղեկությունների, որ դուք կկարողանաք ստանալ, հնարավոր կհամարեք այդ նեղուցի գոյությունը, ապա դուք կհետևեք նախորդ կետի հրահանգին: Կհայտնագործեք այդ նեղուցը, թե ապարդյուն կանցնեն այդ առթիվ ձեր փորձերը, դուք կշտապեք Անգլիա վերադառնալ այն ճանապարհով,

[1] Իսպանական թագավորին: Ծ. Թ.

[2] Պետրոպավլովսկը: Ծ. Թ.

[3] Հյուսիսային բևեռային ծով: Ծ. Թ.

որը դուք օգտակար կհամարեք աշխարհագրության և նավագնացության համար, և յերկու նավն էլ հետ կբերեք Սպիթհեդ, որտեղ կսպասեն մինչ հետագա կարգադրություն...

Բոլոր վայրերում, որտեղ դուք առիթ կունենաք ձեր ճանապարհորդության ժամանակ ուսումնասիրություններ կատարելու և որտեղ նման դիտողություններ, որ ձեզ կմատնանշվեն, դեռևս կատարված չեն լինի, դուք, որչափ թույլ կտա ժամանակը, կուսումնասիրեք այդ վայրերի իսկական (աշխ.) լայնությունն ու յերկայնությունը, մագնիսային սլաքի շեղումները, հրվանդանների ու ցամաքալեզվակների տեղադրությունը և ուղղությունը, մակընթացության ու տեղատվության և հոսանքների բարձրությունը, ուղղությունը և ուժը, ծովերի խորությունը, ծանծաղուտները, ժայռերը. քարտեզի վրա կնշանակեք ծոցերի, նավահանգստների և ծովափի այլ մասերի տեղադրությունն ու տեսքը. բացի այդ, կտաք բոլոր այն ծանոթությունները, որ կարող են օգտակար լինել նավագնացությանը և առևտրին: Դուք ուշադրությամբ կդիտեք այդտեղի բնությունն ու հողի արտադրանքը, չորքոտանիները, միջատները, թռչունները, որ լինում են կամ այցելում են այդ տեղերը, ձկները, որ կան գետերում և ծովերում. կմատնանշեք, թե շա՞տ են, արդյոք, այդ կենդանիները և, յեթե կհայտնագործեք առանձնահատուկ տեսակներ, կնկարագրեք և կնկարեք նրանց ըստ հնարավորին ճիշտ. յեթե կհայտնագործեք մետաղներ, հանքեր կամ նոր հանածոներ, կբերեք ձեզ հետ դրանցից յուրաքանչյուրի նմուշը, ինչպես նաև ծառերի և թփուտների ճղները, բույսերի և պտուղների սերմերը, որոնք առանձնահատուկ են այդ վայրերի համար. ձեռք կբերեք այդ և կհանձնեք մեր քարտուղարին, որպեսզի կատարվեն այն փորձերը, որ անհրաժեշտ կհամարվեն: Դուք, բացի այդ, կդիտեք բնակելի յերկրների բնիկների և օտարերկրացիների ընդունակությունները, մարմնի կազմությունը, բնավորությունը և թիվը. կաշխատեք բոլոր հնարավոր միջոցներով պահպանել նրանց հետ բարեկամություն. դուք կբաժանեք նրանց հասարակ իրեր, որ կունենաք նավում, ընտրելով այն, որը կհամապատասխանի նրանց ճաշակին, կառաջարկեք փոխանակություն կատարել ձեր մարդ-

կանց հետ և նրանց հետ կվարվեք մեծ ուշադրությամբ և քաղաքավարությամբ։ Այնուամենայնիվ, դուք կհսկեք, վոր նրանք ձեզ հանկարծակիի չբերեն և չեք զլանա զգաստ լինել ամեն տեսակի պատահարների դեպքում։

Բնիկների համաձայնությամբ և Մեծ Բրիտանիայի թագավորի անունից դուք կտիրեք նաև մի քանի շահավետ շրջաններ այն յերկրներում, վորոնք չեն հայտնագործված կամ ուր չեն այցելել յեվրոպական այլ տերությունների նավեր. կթողնեք այդտեղի բնիկներին իրեր, վորոնք կվկայեն ձեր այցելության մասին։ Բայց յեթե հայտնագործելու լինեք անբնակելի յերկրներ, ապա նրանց կտիրանաք նորին մեծության անունից, կդնեք հուշարձաններ և գրություններ, վոր դուք առաջինն եք հայտնագործել այդ յերկրները և տիրացել նրանց։

Քանի վոր նման ձեռնարկություններում կատարվում են շատ անակնկալ դեպքեր, վորոնց մասին անհնարին է տալ հատուկ հրահանգներ, ուստի դուք կվարվեք այնպես, վորը կհամարեք լավագույնը՝ ձեր վրա դրված պարտականությունը կատարելու համար։

Դուք կոգտագործեք այն բոլոր առիթները, վոր ձեզ կներկայանան, վորպեսզի մեզ ուղարկեք մեր քարտուղարի միջոցով ձեր գործողությունների մասին մանրամասն տեղեկություններ, ձեր պատրաստած քարտեզների և նկարների պատճենները, և անմիջապես Անգլիա վերադառնալուց հետո, կներկայանաք սույն վարչությանը և մեր քննությանը կհանձնեք ձեր ճանապարհորդության մանրամասն որագիրը։ Նախքան նավից հեռանալը, դուք հոգ կտանեք սպաներից և յենթասպաներից վերցնելու նրանց գրի առած նավային ժուռնալներն ու որագրերը. դուք կհրահանգեք նրանց, ինչպես և նավի ամբողջ անձնակազմին, չպատմել, թե վորտեղ են յեղել, մինչև վոր համապատասխան կարգադրություն կարվի. դուք կհրամայեք նավապետ Կլարկին նման կարգադրություն անել «Հայտնագործություն» նավի սպաներին, յենթասպաներին և անձնակազմին։

Յեթե «Վճռականություն» նավի հետ արշավանքի ընթացքում վորևէ դժբախտություն տեղի ունենա, վորը հնարավորություն չի տա նրան առաջ ընթանալու, դուք ձեր անձնակազմով

կանցնեք «Հայտնագործություն» նավը և կշարունակեք ճանապարհն այդ նավի վրա։ Մենք այսու հրահանգում ենք այն հրամանատարին ընդունել ձեզ իր նավի վրա և յենթարկվել ձեր հրամաններին, վորպես թե դուք «Վճռականություն» նավի վրա լինեք։ Յեթե հիվանդությունը կամ մի այլ հանգամանք հնարավորություն չի տա ձեզ կատարելու այս հրահանգները, դուք հոգ կտանեք այն հանձնարարելու մի սպայի, վորը հրամանատարություն կանի ձեզանից հետո, և վորին մենք հրամայում ենք կատարել բոլորը, վորչափ ավելի լավ հնարավորություն կունենա նա կատարելու այն։

1776 թվի հուլիսի 6. Ստորագրել են՝

Սենդվիչ
Սպենսեր
Հ. Պալիսեր
Նրանց վողորմածությունների հրամանով՝
Ֆ. Ստեփենս

ՅԵՐՐՈՐԴ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ

«1776 թվի սկզբին բրիտանական թագավորը հրամայեց պատրաստել յերկու ռազմանավ նոր հայտնագործություններ կատարելու համար. այդ նավերը կարճ ժամանակում եյին պատրաստված. դրանցից մեկը անվանել եյին «Րեզոլյուշն» կամ «Խիզախություն»—տասնվեց թնդանոթով, իսկ մյուսը՝ «Դիսկովըրի» կամ «Հայտնագործություն»—տասներկու թնդանոթով։ Առաջին նավում, վորտեղ կար հարյուր տասներկու հոգի ծառայող, ծովակալության պետ է նշանակվում հռչակավոր ծովագնաց կապիտան Ջեմս Կուկը, իսկ յերկրորդում, վորտեղ կար յոթանասուն յերկու մարդ,—Կառլ Կլարկը։

Մայիսի 12-ին այդ յերկու նավն էլ ծով են դուրս գալիս Դեպֆորդից. Վուլվիչում վերցնում ռազմանյութերի պաշար, իսկ Պլիմութում՝ կենսամթերքներ, և հաջողությամբ անցնում են նշանակված ուղին։ Ռեզոլյուշն նավը շուտով հասնում է Բարեհուսո հրվանդանը։ Դիսկովրին, վորտեղ յես ծառայության մեջ եյի, վոչ առաջ քան ոգոստոս ամսվա 1-ին նույնպես հասնում է

այդտեղ: Սույն ուղևորության գլխավոր առարկան այն էր, որ փնտրեն Ասիայի և Ամերիկայի միջև նեղուցը, հյուսիս-արևելյան կամ հյուսիս-արևմտյան կողմից: Որպես պարգև մեզ խոստացել էին հազար ֆունտ ստերլինգ և, բացի այդ, 5.000 ֆ. ս. էլ, եթե հինգ աստիճան մոտենանք Արկտիկայի[1] բևեռին: Դրա ընթացքում մենք պետք է հնդիկ Ո–Մաիին վերադարձնեինք իր հայրենիքը»:

Այսպես է սկսվում «Կապիտան Կուկի վերջին ճանապարհորդությունն աշխարհի շուրջը, նրա կյանքի և մահվան վերաբերյալ մանրամասնություններով» գիրքը, որը հրատարակվել է «Սանկտ-Պետերբուրգում, իշխանության թույլտվությամբ 1778 թվին»:

Կուկի ճանապարհորդություններով հետաքրքրվում են նաև ռուս ընթերցողները և ճարպկորեն գրքեր «պատրաստողները» հրատարակում են կրճատ, անճիշտ, ֆրանսիականի նման հրատարակություններից քաղված նկարագրություններ, որտեղ խորհրդավոր, անհայտ, իբր թե կուկյան նավերում ծառայած անձանց գրչի տակից տրվում էին հռչակավոր նավապետի մասին հակասական ու շփոթ տեղեկություններ, որոնք ամենևին չէին նպաստում «նրա կյանքի և մահվան մանրամասնությունների» լուսաբանմանը: Դեռևս Կուկի կենդանության ժամանակ լույս տեսած նման «Նկարագրությունները» շատ էին բարկացնում բարեխիղճ ճանապարհորդին, որը խիստ ու խնամքով էր վերաբերվում իր օրագրերին, իր կյանքի ճիշտ և կանոնավոր գրություններին, նվիրված գիտություններին ու ծովագնացներին, որոնք իրենց նավերը կտանեն «Եռանդ» և «Վճռականություն» նավերի ուղիներով:

Երրորդ ճանապարհորդության մեծածավալ օրագիրը նույնպես մանրամասն, ժամ առ ժամ նկարագրում է նավի ընթացքը, գիտական դիտողությունները, ծովերն ու ցամաքները, կենդանիներն ու մարդկանց, նավաստիների ու սպաների կյանքը, լրացնում է աշխ. լայնության աստիճանների, բարեխառնության

1 Հյուսիսային: Ծ. Թ.

վերաբերյալ տեղեկություններով, աստղաբաշխական աղյուսակներով և բնիկների բարբառների բառարաններով:

Հայր ու որդի Ֆորստերին փոխարինում է վիրաբույժ Անդերսոնը: Լինելով բազմակողմանի զարգացած, նա զբաղվում է բուսաբանական և այլ դիտողություններով, կազմում է բառարաններ: Կուկն օգտվում է նրա ցուցումներից և նրա գրությունների մի մասը զետեղում իր օրագրի մեջ: Առաջին իսկ կայանում, Տեներիֆայում Անդերսոնը գնում է էքսկուրսիայի. այդ ժամանակ Կուկը հոգ է տանում կեր պատրաստելու անասունների համար, գինի գնելու, նավաստիների և հետևակների հետ զբաղվում է վարժական հրաձգությամբ, իսկ Անդերսոնը կղզու բուսական ու կենդանական աշխարհի մասին ժողովում է մանրամասն տեղեկություններ:

Կուկն ընթանում է դեպի Պորտո-Պրայա[1]: Գուցե, արդեն այնտեղ է հասել «Հայտնագործություն» նավը: Սակայն այնտեղ իրար չեն հանդիպում, և «Վճռականություն» նավը գնում է դեպի հասարակած: Անձրևներից ու տաքից նավում առաջանում է վատառողջ խոնավություն: Կուկը կարգադրում էր ամեն օր ծխել տալ և հովահարել նավի ներսը՝ սենյակները, պահեստները և այլն:

Հասարակածն անցնելու ժամանակ, ըստ ավանդական սովորության, նավաստիները հագնում են Նեպտունի[2] և այլ առասպելական էակների զգեստը, նորեկներին ջուրն են սուզում, փրկություն են ձեռք բերում օղիով. մի անմիտ ծես, որը պահպանվել է Վասկո-դա-Գամայի ժամանակվանից: Կուկն անտարբեր էր դեպի նման նախապաշարմունքները, լռությամբ թողնում էր, որ նավաստիները կատարեն այդ անվնասակար զվարճությունները: Նա անհրաժեշտ չի համարում այդ մասին նույնիսկ հիշատակել նավային օրագրում:

Կապշտադտում նրանց կրկին դիմավորում է նույն հյուրասեր և ճարպիկ Բրանդտը, որն իսկույն զբաղվում է երկու նավերին կենսամթերք մատակարարելու գործով: Գալիս է նաև

1 Քաղաք է Կանաչ հրվանդանի կղզիներից մեկում: Ծ. Թ.

2 Հին հռոմայեցիների ծովային աստվածը: Ծ. Թ.

«Հայտնագործություն» նավը: Ցեյլոնյա գնացող մի ֆրանսիական նավ նամակներ է տանում Անգլիա: Կուկը, պաշտոնական անձերին այցելելուց հետո, զբաղվում է տնտեսությամբ: Նա ափ է դուրս բերում կովերն ու վոչխարները և Բրանդտի աջակցությամբ ձեռք է բերում ձիեր, վոչխարներ, այծեր, ճագարներ և հավեր: Վոչխարների հետ տեղի յե ունենում տրագիկոմիկ մի դեպք, վորը տիպիկ եր այդ «բախտավոր» գաղութի համար: Շները նրանց դուրս են քշում ցանկապատից, և շների ատամներից ազատված վոչխարները կորչում են: Կուկը դիմում է տեղական վոստիկանապետին: Նա վստահում է, վոր իր մարդիկ շատ շուտով կգտնեն վոչխարներին, թե տեղական ճանապարհները լավ իմացող ամենաճարպիկ փախստական ստրուկն անգամ չի կարող ծածկվել վոստիկանության փորձված աչքերից: Այնուամենայնիվ, վոչխարները չեն գտնում, նրանք ստրուկներից կամ վոստիկանական սպաներից ել ավելի յեն ճարպիկ լինում: Կուկը մի այլ միջոց է գտնում. նա դիմում է Թափթփուկներին, քաղաքի փողոցներում ընկած աղքատ դողերին և վարձու մարդասպաններին, «գաղութի առելլի սրիկաներին», և մի քանի որից հետո, վոչխարները գտնվում են: Ամոթահար փոխ-նահանգապետը հազար ու մի ներողություն է խնդրում:

Կուկը Ծովակալության գաղտնի հրահանգների պատճենը հանձնում է Կլարկին, և դեկտեմբերի 3-ին յերկու նավն ել մեկնում են Բարեհուսո հրվանդանից:

Վրա յե տալիս ցուրտ փոթորիկը, տեղում է սառցակալող անձրևը, փչում է վայնասուն քամին: Անասունները սատկում եյին ցրտից ու նավի որորվելուց: Հար. լայն. 48°-ի վրա մոտենում են ֆրանսիացի Կերգելենի հայտնագործած կղզիներին: Կուկն ափ է իջնում, վորտեղ կային թևատներ, մրրկահավեր և բազմաթիվ այլ թռչուններ: Սկսում են փոկեր վորսալ: Նրանց ճարպով ճրագ եյին վառում: Ծննդյան տոնին Կուկն ազատ է արձակում նավաստիներին, և նրանք ցրվում են կղզու ափերին: Նրանցից մեկը, վերադառնալով, իր հետ բերում է մի շիշ, վորը յերկաթալարով ամրացված եր ժայռից: Կուկը բացում է շիշը և նրա միջից հանում մագաղաթի գլանը: Բաց անելով այն, կարդում է.

«Ludovico XV Galliarum Rege et D. de Boynes, Regi a secretis ad Res Maritimas annis 1772 et 1773»:[1]

Այդպիսի դեպքերում Կուկը յերբեք պարտքի տակ չեր մնում: Նա սիրում եր վարել ծովագնացների այդ ավանդական նամակագրությունը:

Մագաղաթի մյուս կողմում Կուկը գրում է՝

«Naves «Resolution» et «Discovery» de Rege Magnae Britanniae. Decembris 1776»:[2]

Ծալած մագաղաթն ու մի հատ արծաթե դրամ դնելով շշի մեջ Կուկը հրամայում է քարերից բլուր սարքել և շիշը մեջը թաղել: Բլուրի վրա բրիտանական դրոշակ է տնկում և այդ վայրն ել անվանում է Ծննդյան նավահանգիստ:

Սովորական ճշտությամբ Կուկն ուսումնասիրում է ափերի գծագիրը, ուղղում քարտեզը, նշանակում նոր ծովախորշերը: Շրջագայելով կղզին, ստուգում է յոթանասուն յերք թվին այդտեղով անցած նավապետ Ֆյուրնոյի նավային որագրի տվյալները և տալիս նոր անուններ՝ նավահանգիստներից մեկն անվանում է Պալիսեր: Այդ յերկիրը հայտնագործող ֆրանսիացիները կարծում են, թե դա Հարավային Ցամաքի ծայրամասերից մեկն է. սակայն Կուկը չի կամենում զրկել նրանց առաջնության իրավունքից. «Անպտղաբերության պատճառով, յես կարող եյի նրան տալ շատ հարմար անուն՝ «Ամայության կղզի». բայց պարոն դե-Կերգելենին հայտնագործության փառքից չզրկելու համար, յես այն անվանեցի Կերգելենի յերկիր»:

Դատարկ կղզին ստիպում է նրան շուտափույթ հեռանալ՝ Նոր Զելանդիա հասնելու: Շտապ պետք եր դուրս գալ խիտ մառախուղից, քանի վոր անասունները մթության մեջ սատկում եյին խոնավությունից: Ցեղանակը հնարավորություն չեր տալիս հասնել Նոր Զելանդիա. վրա տված փոթորկից կոտրվում են

---

[1] «Ֆրանսիացիների միապետ Լյուդովիկոս XV-ի թագավորության ժամանակ ծովային գործերի թագավորական քարտուղար Դե-Բուանը 1772 և 1773 թվականներին» Ծ. Հ.

[2] «Մեծ Բրիտանիայի թագավորի «Վճռականություն» և «Հայտնագործություն» նավեր: 1776 թ. դեկտեմբեր»: Ծ. Հ.

կայմահարթակն ու բրամաձողը: Պահունի կայմեր չկային և ստիպված խարիսխ են ձգում Վան-Դիեմեն յերկրի մոտ: Կուկն ափ է իջնում և հսկում հյուսների աշխատանքի վրա:

Վան-Դիյեմեն յերկրում հարկադրված կանգ առնելը վարձատու էր: Կայմի նորոգումը և անասունների համար խոտի պաշար վերցնելը—ահա այն բոլորը, վորի պատճառով հապաղում է հետագա ճանապարհը: Կուկը չեր հեռանում հյուսներից և խարապաններից (փուրաժիր), շտապեցնում եր աշխատանքը: Ազատ ժամերին նա զբաղվում է կոորդինատների աղյուսակներ կազմելով: Վան-Դիյեմենի յերկրի հինգ կետերը ճշտիվ վորոշվում են քարտեզի վրա: Վորոշվում է նաև մակընթացության բարձրությունը:

Կերգելենի յերկրից հետո, ճանապարհորդության յերկրորդ նպատակը Տահիտին եր, իսկ Նոր Զելանդիան յերկարատև ու դժվարին ճանապարհի կարճատև ետապներից մեկն եր միայն: Մարդիկ և անասունները հյուծվում են թարմ սննդի բացակայությունից: Կուկն ազնվաբար խոստովանում է, վոր հենց իր «Վճռականության» նավում կար յերկու հիվանդ, իսկ յերրորդին նա Կապշտադտից յետ եր ուղարկել Անգլիա:

Նոր Զելանդիայում տեղավորվում են, ինչպես տանը: Շառլոտա թագուհու նեղուցում սովորական կայանին ծանոթ եյին, ինչպես Պլիմութի նավահանգստին: Իսկույն ափ են իջեցնում աստղադիտարանի վրանները, անասունները, սարքում են ճամբար՝ առագաստները նորոգելու և այլ աշխատանքներ կատարելու համար:

Բնիկները, ճանաչելով Ո-Մաիին, դիտում են հեռվից, վախենալով «Ձեռնարկության» ծովագնացներին սպանելու վրեժխնդրությունից: Կուկն այլ կերպ է վարվում:

Նա ամեն կերպ բնիկներին հասկացնել է տալիս իր խաղաղ մտադրությունները և, յերբ նրանցից մի քանիսը համարձակ մոտենում են, նա զգուշաբար սկսում է հարց ու փորձ անել սպանության և մեղավորների մասին: Հասկանալով, վոր իրենց վո՛չ մի պատիժ չի սպառնում, նորզելանդացիները պատմում են բոլոր մանրամասնությունները, անվանում են գլխավոր սպանողին և շատ են խնդրում սպանել նրան: Ստուգելով ցուցմունքները, Կուկը համոզվում է, վոր այդ սոսկալի դեպքը տեղի յեր

ունեցել Ֆյուրնոյի մարդկանց անզգուշությունից և, ինչպես միշտ, այդ անգամ էլ յեվրոպացիները տուժել եյին իրենց անհոգության պատճառով: Այն վեճը, վոր անտեղի առաջացրել եր բոցմանը, պատճառ եր դարձել իր և ընկերների մահվան: Հանդըստացած բնիկները, ստանալով ապակու կտորտանք ու կացիններ, ամբողջ գյուղով տեղավորվում են ափին, մի վայրկյանում արմատահանում են թփուտները և խրճիթներ սարքում: Սկսվում է սովորական փոխանակությունը և ափը կատարյալ տոնավաճառի յե վերածվում: Վաճառում եյին ձուկ, պտուղ, ամեն տեսակի բանվածք:

Սակայն «սպիտակ պետը» գործադրել եր բոլոր նախազգուշացումները և, ըստ իր ըմբռնման, գնահատել եր նորզելանդացիների բարյացակամությունը: Նա ափ եր իջնում միշտ մի քանի զինված զինվորներով շրջապատված և սպաներին հրամայել եր նույնն անել:

Բնիկներն, ըստ յերևույթին, դժվարությամբ եյին յուրացնում քաղաքակրթությունը: Կուկի դցած բանջարանոցները վոչնչացել եյին, մնալով անխնամ: Յերեք տարի առաջ այդտեղ թողած անասունները չկային. հավանորեն մորթել եյին: Կղզիների բնակիչները համառորեն պահպանում եյին իրենց սովորությունններն ու սովորույթները, հյուրացնելով յեվրոպացիների դասերը: Կուկի որագիրը լիքն է դատողություններով մարդակերության, նրա պատճառների և նորզելանդացիների մտածողության անհուսալի վիճակի մասին. Նրանք, կարծես, զուրկ եյին հարցասիրությունից և ցանկություն չեյին ցուցաբերում «իրենց գիտելիքներն ընդարձակելու»:

«Նրանց կրոնական ուսմունքի համաձայն, այն մարդու հոգին, վորի մարմինը կերել են թշնամիները, մատնվում է հավիտյան տանջանքի. մինչդեռ այն մարդկանց հոգին, վորոնց մարմինները խլվել են մարդասպանների ձեռքից, նաև այն, վոր վախճանվել են բնական մահով, գնում են ապրելու աստվածների հետ: Յես հարցրել եմ նրանց, ուտում են նրանք, արդյոք, իրենց ընկերներին, վորոնք սպանվել են կռվում, բայց մարմինները չեն ընկել թշնամիների ձեռքը: Նրանք, կարծես, զարմացած եյին այդ հարցից, պատասխանում են, վոր չեն ուտում,

նույնիսկ մի տեսակ սարսափ են զգում այդ մաքից։ Նրանք սովորաբար թաղում են իրենց ննջեցյալներին. բայց, յեթե սպանել են թվով ավելի թշնամի, քան կարող են ուտել, նրանց գցում են ծովը»։ Նավ բարձրացող բնիկները վոչնչով չեյին տարբերվում նախկին ծանոթ բնիկներից և վարվում եյին այնպես, ինչպես յերեք տարի առաջ։ Շարունակում եյին գողանալ այն բոլորը, ինչ վոր նկատում եր աչքը, և խմում եյին լապտերներից փոկի ճարպը և ախորժակով ուտում ֆիտելը։

Նոր Զելանդիայում անցկացրած յերկու շաբաթը զուր չի անցնում. աստղաբաշխական և ծովագնացության դրությունները հարստանում են հարյուրից ավելի դիտողություններով։ Անդերսոնը և նկարիչ Վեբերը տասնապատկում են իրենց «ավարը»։

Անդերսոնը Ֆորստերից ավելի համեստ է և ավելի ճշտիվ. նրա վոճը չի փայլում լիրիկական շեղումներով, նա քաղվածքներ չի բերում հնադարյան բանաստեղծներից և չի խորանում սոցիալական կնճռոտ հարցեր լուծելու կամ Կուկի ձեռնարկումները քննադատելու մեջ, սակայն մանրամասն ու խնամքով նկարագրում է մարդկանց և բնությունը, յերբեմն ծանր, բայց հասարակ և հասկանալի խոսքերով։

Թարմ սննդի մասին մշտական հոգսն ստիպում է հաճախակի կանգ առնել զանազան կղզիների մոտ, խուսանավել ժայռերի ու կորալային խութերի միջև, իսկ քամու բացակայությունը և հակառակ քամիներն ստիպում են որեր կորցնել. ուստի ճանապարհը մինչև Տահիտի ինքնըստինքյան յերկարում է։ Կուկը տեսնում է, վոր այս տարի նա չի կարող հասնել իր ճանապարհորդության գլխավոր նպատակին։ Անմտություն եր վտանգի յենթարկել մարդկանց առողջությունը, և, բացի այդ, հարկավոր եր կատարել հրահանգները և անպայման այցելել Տահիտին։ Այդ պատճառով, արշավախումբը հասնելով Միության կղզիների արշիպելագը, այնտեղ մնում է յերեք ամիս, անցնում է կղզուց կղզի, ոգտվում է ամեն մի դեպքից, վորպեսզի ձեռք բերի փայտի, ջրի և կենսամթերքի պաշար, նաև նոր տեղեկություններ այդ յերկրների մասին։

Կուկն ոգտվում եր Ո-Մայի ծառայությունից, վորպես թարգմանչի։ Տահիտցին այդտեղ գտնում է հայրենակիցներ, վո-

րոնք փոթորկի հետևանքով ընկել եյին այդտեղ և մշտապես բնակություն հաստատել, ծանոթ եյին տեղական բարքերին ու սովորություններին. Նրանք ցույց եյին տալիս նրան, թե վորտեղ և ինչպես կարելի կլինի ձեռք բերել կենսամթերք և խմելու ջուր, բնիկներից վորն է առաջնորդ կամ ցեղերի ամենահարգելի անձը։ Կղզու բնակիչները, իրենց հերթին, մեծ վստահությամբ եյին վերաբերվում դեպի Ո-Մային, համարելով նրան հարազատ մարդ. Նրանք հարց ու փորձ եյին անում անգլիացիների մասին, իսկ գլխավորը, հավատում եյին այն անհեթեթություններին, վոր դուրս եր տալիս բախտով հպարտ տահիտցին։ Կուկը գնահատում եր տահիտցու դատարկախոսությունը, վորը մատչելի յեր վայրենիների պրիմիտիվ ըմբռնմանը։ Հզոր ոտարերկրացիները նրանց աչքին դառնում եյին աստվածներին հավասար։ «Նա նրանց պատմում եր, թե, որինակ, մեր հայրենիքում կան իրենց կղզու մեծության նավեր, թե այդ նավերում կան պատերազմական հրանոթներ (խոսքը մեր թնդանոթների մասին եր) այնպիսի չափի, վոր նրանց մեջ կարող է տեղավորվել մի քանի մարդ, թե մի այդպիսի հրանոթ բավական է, վորպեսզի ոդ ցնդեցնի մի ամբողջ կղզի։ Այդ ազդու նկարագրությունից հետո, նրանք ցանկանում են իմանալ, թե ի՛նչպիսի թնդանոթներ կան մեր նավում։ Ո-Մային պատասխանում է, վոր դրանք նրանց համեմատ փոքր են, բայց ելի մեզանից եր կախված նավից կրակել, վոչնչացնել կղզին և սպանել նրա բոլոր բնակիչներին։ Այնուհետև նրանք հարցնում են այն միջոցների մասին, վորոնց շնորհիվ տեղի յե ունենում այդպիսի սարսափելի գործողությունը. և նա փորձում է բացատրել այդ։ Բարեբախտաբար նա իր գրպանում հրացանի մի քանի փամփուշտ ուներ. նա տալիս է բնիկներին նայելու փամփուշտներն ու վառոդը. նրանց է՛լ ավելի զարմացնելու համար, նա նրանց վկա յե դարձնում պայթյունին։ Նա գետնին շրջանագծի մեջտեղում է դնում վառոդի այն չնչին քանակը, վոր թափել եր փամփուշտներից և վառում է ճաշ պատրաստելու վառարանից վերցրած խանձողով։ Գործողության արագությունը, ուժեղ ձայնը, բոցը և ծուխը զարմացնում են բոլոր հանդիսատեսներին. Նրանք այլևս կասկածանք չունեյին մեր զենքի անհաղթահարելի ուժի մասին.

նրանք կատարելապես վստահացել էյին այն բոլոր բաներին, ինչ նրանց պատմել էր Ռ–Մաին:

Դժվար չէր խաբել վստահող բնիկներին, վորոնք այծն ու վոչխարը համարում էյին չտեսնված թռչուններ: Կուկը, ըստ յերևույթին, այս անգամ իր ֆիլանտրոպիկ փորձերը մի կողմ է թողնում ընդմիշտ հիասթափվելով նրանց նկատմամբ: Ամեն մի նոր ճանապարհորդությունից հետո համոզվում էր, վոր այդ մարդկանց մեջ քաղաքակրթության լույս տարածելն այնքան էլ հասարակ խնդիր չէ. ըստ յերևույթին, անհրաժեշտ են լուսավորության միանգամայն այլ յեղանակներ, վոր դեռևս չեն իմանում յեվրոպացիները: Ամենամեծ չարիքը, վորի համար ցավում էր Կուկը, բնիկների մեջ նկատված գողության հակումն էր: Նա փորձում էր պատժել մտրակելով, կրակել աղին փամփուշտներով, փակել նավի նկուղում—բայց վոչինչ չէր ոգնում: Միայն կապիտան Կլարկի սրամիտ միջոցը մասամբ չափավորում է գողերի հանդգնությունը. Նա առաջարկում է հանցագործության տեղում բռնվածի գլուխն ածիլել. բնիկների տեսակետից այդ խայտառակություն էր և դրա շնորհիվ ամբոխի մեջ հեշտ էր նկատվելը. դա շատ ավելի մեծ ներգործություն է ունենում, քան Կուկի բոլոր հակամիջոցները:

Միության արշիպելագի մոտ հարյուրի չափ կղզիները շրջապատված էյին կորալային խութերի, ժայռերի և ավազուտ ծանծաղուտների լաբյուրինթոսով: Բամու հաճախակի դադարումը կամ վրա հասնող փոթորիկները կրկնապատկում էյին ծովագնացության դժվարությունները: Մանգեա կղզուց հետո, նավերը խարսխում են Ապաե մեծ կղզու մոտ, վորտեղ տեսնում են խոտի և ջրի պաշար, ափ են իջեցնում ձիերին ու հիվանդ կենդանիներին:

Կուկը համբերությամբ յենթարկվում էր տեղական թագավորիկների ընդունելության ձանձրալի ծեսերին. Նրանք անվերջ ցանկություն էյին հայտնում նրան այցելելու կամ թե նրան էյին հրավիրում իրենց մոտ ճաշի և տոնակատարության: Ըմբշամարտն ու պարերը և ինչ–վոր յերգի նման բան,—ահա սրանցով էր սպառվում բնիկների ամբողջ ռեպերտուարը: Ճիշտ է, տղամարդ ու կին ըմբիշների հմտությունը, յուրատեսակ բալետների

Անփխանում Եռամանեցա կղզում (Նոր Հեբրիդներ)

հիանալի ռիթմին, այն ել լուսնի ու ջահերի լույսի տակ, Խաղաղականի ծովեզերքին կատարվող այդ հանդեսներին՝ կնախանձեյին Լոնդոնի թատրոնները, բայց յերբ այդ ներկայացումները տևում եյին ժամեր և կրկնվում համարյա ամեն որ, սկսում են ձանձրացնել և նույնիսկ դառնում պարտականություն, վորն ստիպված պետք եր կատարել դիվանագիտական նկատառումներով:

Կուկը չեր մնում պարտքի տակ: Նա թագավորիկներին ցույց եր տալիս զինվորների քայլելը, հրացաններից ու թնդանոթներից կրակելը, վառում եր հրձիգներ, վորով ապշեցնում եր բնիկներին: Նա թագավորիկներին և նրանց մերձավորներին նվիրում եր ապակե ուլունքներ, կացիններ, կտորեղեն. իսկ Աննամոժում թողնում ե յեզ, կով, հովատակ, մատակ, եգ և արու վոչխար: Ո—Մաին մի կերպ բացատրում ե հաստափոր թագավորիկին, թե ինչի՛ յեն պետք այդ կենդանիները և ի՛նչպես պետք ե հոգալ նրանց մասին, իսկ նա ննջում եր, ծառաներն ել շրջապատել եյին նրան և բանանի լայն տերևներով քշում եյին ճանճերը:

Գիտական աշխատանքներն ընթանում եյին հաջող, և Միության կղզիների մասին տեղեկությունները ժողովված եյին ամենաճշտիվ և մանրամասն կերպով: Բացի այդ, նավերը լիքն եյին կենսապաշարով, իսկ մարդիկ ու կենդանիները լավ եյին հանգստացել:

Կուկը գոհ եր, վոր հարկադրված ուշացումն այնուամենայնիվ փոխհատուցվում ե վորոշ հաջողությամբ և հնարավորություն տալիս առաջ ընթանալ... «Մի խոսքով, Միության կղզիներում յեղած ժամանակ մենք բազմաթիվ ոգուտներ քաղեցինք...»:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ

Ընկերության կղզիներին հասնում են ոգոստոսի առաջին որերին և խարսխում Տահիտի կղզու Մատավայի ծովախորշում:

Կուկը գտնում ե այն տունը, վոր շինել եյին իսպանացիները: Տան մոտ տնկված եր մի փայտե խաչ: Լայնակի փայտի վրա

գրված եր՝ «CRISTUS VINCIT»[1]. իսկ յերկայնակի վրա՝ «Carolus III, imperator 1774»[2]: Կուկը հակառակ կողմի վրա գրում ե՝ «Georgius tertius, Rex, annis 1767, 1769, 1773, 1774, et 1777»[3]:

Իսպանական յերկու քահանա, նրանց ծառան և ելի մի մարդ ապրել են այդտեղ տասն ամիս. հետո յեկել ե մի նավ և տարել նրանց: Դատելով բնիկների խոսքերով քահանաները չեն փորձել իրենց հավատի դարձնելու նրանց: Իսկ այն մարդը շրջագայել ե կղզին և պատմել, թե Պրետանեն (տահիտցիներն այդպես եյին անվանում Բրիտանիան) մի փոքրիկ կղզի յե, վոր նվաճել են իսպանացիները և հիմա վոչ մի սեփական կառավարություն չունի. թե Կուկի նավը բոլոր մարդկանցով խորտակվել ե իսպանական թնդանոթների շնորհիվ: Հեռանալուց ասել ե, թե շուտով վերադառնալու յե իր հայրենակիցներով, նրանց կանանցով ու յերեխաներով, զանազան անասուններով, այդտեղ տներ են կառուցելու՝ կղզում մշտապես ապրելու համար:

Կուկը չեր հավատում, թե հնարավոր կլինի Տահիտի կղզում գաղութ հիմնել: Նա շատ լավ գիտեր, թե յեվրոպական կառավարությունները գաղութներ հիմնելիս ինչով են ղեկավարվում, և իսպանացու պատմությունը մտացածին եր: «Յես չեյի կարող հավատալ, թե յեվրոպական ազգերը լրջորեն կմտածեն այդտեղ գաղութ հիմնել, քանի վոր Տահիտի կղզին վոչ մի հետաքրքրություն չի ներկայացնում պետությունների փառասիրության և մասնավոր անձանց շահամոլության համար. և յես համարձակվում եմ նախագուշակել, վոր առանց այդ դրդիչ հանգամանքների, նրանք այդ չեն ձեռնարկի»: Նա չգիտեր, թե իսպանացիներն ինչ են կամենում նախաձեռնել, բայց կղզիների բնիկների համար կործանարար եր համարում ամեն տեսակի գաղութացումը: «Մեր կարճատև կանգառումները գուցե վորոշ տեսակետից բարելավել են բնակիչների վիճակը, բայց նրանց մեջ գաղութ հիմնելը, վորը կառավարվելու յե պլանով և վորին, դժբախտաբար,

---

1 «Քրիստոսը հաղթանակել ե»: Ծ. Հ.

2 Կառլ III, կայսր, 1774 թ.: Ծ. Հ.

3 Գեորգ յերրորդ, թագավոր, տարիներ 1769 և... Ծ. Հ.

մեծ մասամբ հետևել են յեվրոպական հիմնարկները, ավելի շուտ ուխտ կտար ցավելու, վոր նրանք ճանաչել են մեզ»: Կուկը չեր կարող հաշտվել անգլիական առևտրական ընկերությունների գաղութային քաղաքականության և «խաղաղ նվաճման» բարբարոս յեղանակների հետ: Նա շատ մեծ իդեալիստ եր, վորպեսզի գիտակցեր, վոր ինքն ուղիներ ե հարթում այդ քաղաքականության համար և վոր իր գիտական ու ազատամիտ գաղափարները ժամանակի ընթացքում կմարմնանան, վորպես առևտրական ընկերություններ ու ռազմական բազաներ, վորոնք դաժանաբար և արյունով յերկար ժամանակով կստրկացնեն հայտնագործած ժողովուրդներին:

Թարմ մթերքների և կոկոսի ընկույզի հյութի առատությունն ստիպում ե Կուկին մտածել կրճատելու սննդի նավային սովորական բաժինը. տնտեսելու աղ դրած միսն ու թունդ խմիչքները, վորոնք պետք կգային հյուսիսում նավարկելու ժամանակ: Այդ միջոցի գործադրությունը զգուշություն եր պահանջում. զրկել նավաստիներին իրենց սիրելի գրոգի[1] սովորական բաժնից, նշանակում եր անպայման դժգոհություն առաջացնել: Այդպիսի հարցերի միանձնյա լուծումը նա համարում եր անզգուշություն: Նա ժողովում ե նավաստիներին և հիշեցնում առաջիկա ճանապարհորդության մասին, բացատրում իրենց արշավանքի նպատակը, յերկարատևությունը և հյուսիսային լայնությունների կլիմայական պայմանները: Նա չի մոռանում հիշատակել պառլամենտի խոստացած պարգևները, յեթե հայտնագործեն հյուսիսային նեղուցը կամ հասնեն հյուս. լայն. 89°-ին: Հայտնում ե, վոր չի կասկածում նրանց պատրաստակամությանը արժանանալ այդ յերկու պարգևին, վոր դրա համար հարկավոր ե կենսական և այլ տեսակի պաշար տնտեսել, քանի վոր Ընկերության կղզիներից հետո, այլևս վոչ մի տեղ հնարավոր չի լինի այդ ձեռք բերել: Հայտնում ե, վոր այս տարվա ընթացքում ուշ ե դեպի ծայր հյուսիս գնալը, ուստի ճանապարհորդությունը կձգձգվի և անհրաժեշտ ե մտածել, թե ինչպես նրանց համար ծանր կլինի, յեթե սննդի բաժինը կրճատվի ցուրտ կլիմայում: Լավ չեր լինի

[1] Անգլիական թունդ խմիչք ե: Ծ. Թ.

արդյո՞ք, յեթե առաջուց զգուշություն բանեցնեն, քան թե վտանգի յենթարկվեն, առանց թունդ խմիչքների, յերբ դրանք իրոք անհրաժեշտ են լինելու հետո: Կուկը խնդրում ե նրանց այդ բանի մասին լավ մտածել և ապա կարծիքներ արտահայտել. նա կատարյալ իրավունք ե վերապահում նրանց, լուծել այդ հարցն ըստ իրենց հայեցողության:

Նավաստիներն, ըստ յերևույթին, կարիք չեյին զգում, վոր իրենց այդքան յերկարորեն համոզեն. նրանք շատ լավ եյին հասկանում այդպիսի միջոցների արդարացի անհրաժեշտությունը, ուստի միաձայն հավանություն են տալիս նավապետին: Ընդհանրապես, գանգատվելու հիմք չունեյին: Կուկի նավերում նավարկելը շատ ավելի դուրեկան եր, քան ռազմական կամ առևտրական նավերում, վորտեղ քեզ հայտնի չե, թե ինչո՞ւ կխորտակի թշնամու հրազանը, կամ ագահ նավատերը ռոճիկ չի տա և, մի լավ ծեծելուց հետո, սովամահ կանի:

Կուկն ուրախ եր նավաստիների համաձայնության համար. այդ շոյում եր իր, վորպես նավապետի, ինքնասիրությունը: «... Նրանք միաձայն հավանություն տվին իմ պլանին, և վո՛չ մի առարկություն չարին»: Այդ որվանից գրոգը տալիս եյին միայն շաբաթ որերը:

Տահիտիյում սկսվում ե սովորական կյանքը՝ նավերի նորոգում, առևտուր, այցելությունների փոխանակություն, թագավորիկին կով, ձի, վոչխար նվիրելը, բանջարանոցների մշակում, պտղատու ծառերի տնկում: «Միլորդ Բեսբորոու-ի վողորմածաբար նվիրած» սիրամարգը զարդարում ե տեղական թագավորիկի տնտեսությունը:

Ծովակալության հրահանգներով առաջադրված յերկրորդ խնդիրը լուծված կլիներ, յեթե Ո–Մաին չընդդիմանար. նա չեր կամենում այդքան շուտ բաժանվել անգլիացիներից և Կուկին չեր հաջողվում համոզել, վոր Ո–Մաին հաստատվի Տահիտիյում: Ըստ յերևույթին նրան դուր եր գալիս «Վճռականություն» նավի անհոգ կյանքը. նավից ափ եր իջնում, վորպես Կուկի ներկայացուցիչ, և հեռավոր յերկրից բերած անհամար հարստությամբ պաշտպանված եր զգում իր գող հայրենակիցների ամեն տեսակի փորձերից: Հանաք բան չի: Մի արկղ խաղալիքը կամ յերաժըշ-

տական տուփը կարող էր նրա մահվան պատճառը լինել․ դեռ չհաշված կարմիր փետուրները, վոր ձեռք էյին բերված Նոր Զելանդիայում․ այդ մի հարստություն էր, վորի մասին չէր կարող յերազել նույնիսկ Տահիտիի Թագավորը՝ ինքը Ո–Տուն։

Այդտեղ է լինում և Ոգիդեյը, վորը չէր մոռացել «Yes sir», «if you plise, sir»[1] խոսքերը և խոսելուց տեղից վեր կենալը։ Մնացած բանով նա վոչնչով չէր տարբերվում իր հայրենակիցներից, իսկ նրա յեվրոպական հագուստից հետք էլ չէր մնացել։

Կուկը և Կլարկը ձի յեն հեծնում և քշում հիացած ամբոխի ներկայությամբ։ Տահիտցիները իսկի չէյին կարող կարծել, թե հնարավոր է հեծնել այդ զարմանալի կենդանիները։ «Այդ տեսարանը նրանց ավելի բարձր գաղափար է տալիս այլ ազգերի մեծության մասին, քան մնացած բոլոր նորություններն ի մի առած, վոր նրանց ցույց էյին տալիս յեվրոպական ծովագնացները։

Այդ խաղաղ զբաղմունքը խախտվում է այն հուզումով, վոր տիրել էր բնիկներին․ այդ բանը Կուկին դրել էր վոչ այնքան թեթև խնդրի առաջ, վորի լուծումից սերտ կախված էր բնիկների վերաբերմունքը դեպի իրեն, դեպի իր մարդիկը և Տահիտիյում հետագայում իրենց մնալը։ Բանն այն է, վոր տահիտցիները Եիմեո[2] կղզու բնակիչների հետ գտնվում էյին պատերազմական դրության մեջ, մի պատերազմ, վորն սկսվել էր Ընկերության կղզիներում Կուկի վերջին այցելության ժամանակ։ Եիմեո–ի զորքը հաղթանակում էր և այժմ սպառնում էր տահիտցիների նավատորմին և կղզուն։ Առաջնորդների ժողով է գումարվում Թագավորիկի մոտ․ Կուկը հրավիրված էր ներկա լինելու այդ ժողովին․ Միանգամայն պարզ էր, վոր տահիտական առաջնորդները, հրավիրելով Կուկին, կամենում էյին ոգտագործել նրա բարեկամությունը և համոզել նրան, վոր իր նավերով պաշտպանի տահիտցիների սպառազինված պիրոգները։ Կուկն իրեն չատ անհարմար դրության մեջ է զգում․ Նրա ծրագրի մեջ

---

1. «Այո, պարոն...». «Խնդրեմ, պարոն...»։ Ծ. Հ.
2. Տահիտիի հարևան ավելի փոքր կղզին։ Ծ. Թ.

չէր մտնում բնիկների քաղաքական գործերին միջամտելը․ սակայն միաժամանակ անհրաժեշտ էր ամեն կերպ պահպանել այդչափ դժվարությամբ կանոնավորած հարաբերությունները։ Յեվ Կուկն առաջին անգամ պետք է հանդես գա դիվանագետի բարդ դերում։

Խորհուրդն իրոք ոգնություն է խնդրում։ «Լիագոր մինիստրը» Ո–Մային չքացել էր․ Կուկն ստիպված էր առանց թարգմանչի գործ տեսնել։ Նա պատասխանում է խորհրդին, վոր իրեն ճշտիվ հայտնի չեն պատերազմի պատճառները, և իրավունք չունի վորևե բան ձեռնարկել ընդդեմ Եիմեո–ի բնակիչների, վորոնք իրեն վոչ մի վնաս չեն պատճառել։ Խորհրդի անդամները, կարծես թե, բավարարվել էյին այդ հայտարարությամբ․ բայց հաջորդ որը Ո–Տուն Կուկին հրավիրում է իր մոտ և խնդրում իր հետ բերել նաև Ո–Մային։ Այնտեղ Թագավորիկը կրկին պնդում և խնդրում է ոգնության մասին․ սակայն Կուկը մնում է անհողդողդ և հայտնում է, վոր ինքը վոչ մի մասնակցություն չի ունենալու այդ պատերազմին։

Կուկի այդ հաստատակամությունից չեն փչանում լավ հարաբերությունները․ ընդհակառակը, քաղաքականության մեջ անփորձ տահիտցիներին հասկանալի յեր այդ անկեղծ պատասխանը, վոր բացատրված էր պարզ և բնական պատճառով։ Մի ամիս հետո, յերբ նրանց նավատորմը կազմ ու պատրաստ է լինում, Կուկին հրավիրում են դիտելու իրենց զորաշարժերը․ Կուկը Թագավորիկի հետ միասին մի պիրոգում մոտավորապես գաղափար է կազմում թշնամու մակույկի դրոհի մասին։ Իսկ յերբ Եիմեո–ի առաջնորդը հաղորդում է, թե ժամանակավոր հաշտություն է կնքում, Կուկը հանդիսավորապես հայտնում է բանագնացին, վոր ինքը պաշտպանում է իր բարեկամ Ո–Տուի–ի շահերը և ոգնելու յե նրան, յեթե հարձակում կատարվի, վոր ինքը կրկին վերադառնալու յե և անխնա կերպով վրեժ է լուծելու նրանցից, ովքեր կհամարձակվեն մասնակցել այդ հարձակմանը։ Այդ հայտարարությունը ներգործություն է ունենում։ Գեթ մինչ այն, յերբ դեռ Կուկը Ընկերության կղզիներում էր, նա այլևս վոչ մի խոսք չի լսել պատերազմի մասին․ Իսկ Ո–Տուն է

նրա մերձակիցները զոհաբանական աղոթքներ են հղում իրենց աստծուն՝ հաշտություն պարգևելու համար:

Պատերազմի տենդագին պատրաստությունների ժամանակ Կուկը տեղեկանում է, վոր տաճարներից մեկում մարդկային զոհաբերություն է պատրաստվում աստծու գթությունն ապերսելու և Եիմեո-ի վրա հաղթանակ տանելու համար: Նա վճռում է անձամբ համոզվել այդ սարսափելի սովորույթի իրական գոյությանը և «իր բոլոր կասկածները ցրելու համար»: Ինքը, Ո-Տուն, Անդերսոնը և Վեբերը մեկնում են զոհաբերության վայրը:

Բանից յերևում է, վոր վոչ միայն այնպես եր, ինչպես պատմել եյին, այլ դեռ շատ ավելի վատթար: Ավագ առաջնորդի ցուցումով սպանված մարդու դիակն ընկած եր ծովափին և բանանի տերևներով ծածկված: Զորս խումբ նստել եյին շուրջը և աղոթքներ եյին ասում: Բնիկ տղամարդկանց մի խումբ բավականին սառնասիրտ կերպով դիտում եր այդ տեսարանը: Ապա քուրմերն, ընդհատելով աղոթքը, սպանվածի գլխից պոկում են մի քանի փունջ մազ և հանում նրա ձախ աչքը, փաթաթում բանանի տերևի մեջ և հրամցնում Ո-Տուին: Գլխավոր քուրմը վերցնում է հանած աչքը և մոտեցնում Թագավորի բերանին: «Ծիսակատարության այդ մասը նրանք անվանում են «մարդ ուտել» կամ «առաջնորդի հյուրասիրություն»: Այդ դուցե այն ժամանակվա սովորության մնացորդն է, յերբ թագավորը իրոք ուտում եր զոհի մարմինը»: Դրանից հետո սկսում են դիակն անվերջ տեղից տեղ փոխադրել, աղոթքներ ասել, զանազան կտորների մեջ փաթաթել և բաց անել. այդ բոլորն իրենց մեջ պարունակում եյին վայրենի պաշտամունքի ինչ վոր անհասկանալի գործողություններ. վերջապես, մի քանի անգամ մազերը պոկելուց հետո, դիակը քաշ են տալիս տաճար, վորտեղ ձգում են մի փոսի մեջ և քարեր լցնում: Դրանով բանը չի վերջանում: Պաշտոնյաները կրակ են անում և մի շուն խեղդում. խանձելով շան մորթին, դուրս են հանում փորոտիքը և գցում կրակի մեջ. սիրտը, յերիկամունքը և թոքերը խորովում են տաք քարերի վրա. շան մարմնին քսում են արյուն, վորը պահել եյին կոկոսի ընկույզի կլեպի մեջ. այնուհետև այդ բոլորը դնում են քուրմերի առաջ, վորոնք շարունակում են աղոթել յերկու թմբկահարի

նվագակցությամբ: Կողքին կանգնած մի տղա ժամանակ առ ժամանակ աղաղակում եր. նա հրավիրում եր աստծուն փորձել թարմ կերակուրը: Ապա շան լեշը դնում են բարձր տախտակամածի վրա, վորտեղ դրված եյին առաջվա զոհաբերությունից մնացած սպանված խոզն ու խոճկորները. դրանցից փչում եր նեխվածության անտանելի հոտ: Ծիսակատարությունը վերջանում է քուրմերի ընդհանուր վողբով: Հաջորդ որն անվերջ շարունակվում եյին աղոթքները և խոզերի ու խոճկորների զոհաբերությունները:

Կուկն այդ բոլորից ցնցված եր: Զսպելով իր վրդովմունքը, նա փորձում է նախ համոզել, վոր թողնեն իրենց վայրենի հավատը. Նա ասում է նրանց, վոր նրանց աստվածը չի ուտում զոհերին, քանի վոր նրան յերբեք չեն տեսնում, վոր կենդանիների դիակները յերկար ժամանակ մնում են ձեռ չտված, վոր մարդկանց դիակները հողի տակ դնելով, հնարավորություն չեն տալիս աստծուն ուտելու այն: Քուրմերը պատասխանում են, վոր իրենց աստվածը գալիս է գիշերները, անտեսանելի կերպով կերակրվում է զոհերի հոգիներով, վորոնք մնում են տաճարի շուրջը մինչև վոր մարմինները կատարյալ կնեխվեն: Սակայն, յերբ նրանք պատերազմում ոգնության կարիք են ունենում, նրանց առաջնորդները հարցնում են Կուկին, թե նա ի՞նչ է մտածում զոհաբերության մասին և կոգնի արդյո՞ք այդ միջոցը Թը-Նամու վրա հաղթանակ տանելու համար: Կուկը չի կարողանում իրեն զսպել և, խիստ բորբոքվելով, արտահայտում է այն բոլորը, վոր նա մտածում եր նրանց զզվելի և սարսափելի սովորության մասին: Նա բղավում է Ո-Տուի և նրա մերձակիցների վրա, մեղադրում է նրանց դաժանության և վայրենության առթիվ, հավատում է, վոր աղոթելու այդպիսի յեղանակը միանգամայն հակառակ ներգործություն կունենա, կառաջացնի աստծու վրեժը, իսկ պատերազմում կատարյալ պարտություն կկրեն: Ո-Մաին պաշտպանում է Կուկին և ուշադրությամբ թարգմանում նրա ջերմ ճառը: «Ասա նրան,—գոռում է Կուկը, մատը խփելով ավագ առաջնորդի աչքը,— վոր յեթե նա այդպես մարդ սպաներ Անգլիայում, ապա նրա արժանապատիվ դիրքը չեր կարող փրկել նրան կախաղանից»: Վիրավորված առաջնորդը պոկում է

գլխի մազերը, անեծքներ կարդում և շտապ հեռանում, վոր չլսի այդպիսի սրբապիղծ մեղադրանքներ: Կուկն էլ է հեռանում, վրդովված և բարկացած: «Լիագոր մինիստրը», տարվելով իր պերճախոսությամբ, շարունակում է գոռալ առաջնորդի ծառաների և մերձականների վրա, վորոնք շրջապատել եյին իրեն: Նա բղավում է, վոր Անգլիայում կախում են ամենաազնվական և ամենածանրակշիռ մարդկանց, յեթե նրանք սպանում են իրենց ամենավերջին ծառային: Ամբոխն ուշադրությամբ լսում է Ո–Մային, և թվում եր, թե նրանց սրտովն եյին այդ խոսքերը: «Կարծես, նրանք այդ մասին իրոք այլ կարծիքի եյին, քան իրենց տերերը»:

Այնուամենայնիվ այդ դեպքը չի խախտում բնիկների հետ հաստատած լավ հարաբերությունները: Կուկի աղաղակն այնքան նման եր իրենց սեփական վեճերին, վոր նրանք, հավանորեն, համարեցին այն միանգամայն բնական. ըստ իրենց պարզամտության վո՛չ մի նշանակություն չեն տալիս այդ բանին. բայց և նրանք անխախտ են մնում իրենց կրոնական հավատալիքների խնդիրներում:

Նույն օրը յերեկոյան Կուկը, վորպես հյուր, հանդիստ զրուցում եր Ո–Տուի հետ. թագավորը նրան բավականություն ե պատճառում ներկայացումով, վորին մասնակցում եյին իր աղջիկները: Նրանք պարում եյին խայտաբղետ հագուստով ու փետուրներով: Տահիտական աղջիկների այդ պարը պանտոմիմայի բնույթ եր կրում, շարժումներն ու դիմախաղությունները ցույց եյին տալիս սիրային կիրքն ամենաբաց անամոթությամբ: Դրանից բնավ չեր նվազում «բալետ–պանտոմիմայի» յուրատեսակ պլաստիկ գեղեցկությունը և ռիթմի զուսպ ու շատ հաջող կարգը:

Տահիտցիների հետ բարեկամությունը վոչնչով չի խախտվում և շարունակվում է մինչև վերջին օրը: Սեպտեմբերի վերջերին Կուկը հիվանդանում է նյարդախտով և վոտքի ուժեղ ցավն ստիպում է նրան, մնալ նավում: Ո–Տուի մայրը, մոր յերեք քույրերը և ութ ուրիշ կանայք հայտնում են, վոր գիշերը կմնան Կուկի մոտ, նրան առողջացնելու համար: Կուկը համաձայնվում է և կարգադրում, վորպեսզի իր նավասենյակի հատակին նրանց

համար անկողիններ պատրաստեն: «Նրանք շրջապատում են ինձ և սկսում յերկու ձեռքով ճմլել ինձ վոտից գլուխ և, առանձնապես, մարմնիս ցավող մասերը. նրանք ինձ այնպես եյին հունցում, վոր վոսկորներս եյին ճարճատում և հոգնածություն եր տիրում ինձ, կարծես ինձ մի լավ ծեծել եյին. քառորդ ժամ այդպիսի փորձության յենթարկվելուց հետո, յես մեծ հաճույք զգացի, ազատվելով դրանից: Այնուամենայնիվ այդ գործողությունն անմիջապես թեթևացրեց ցավերս, և յես համաձայնվեցի, վոր շարունակեն այն նաև քնից առաջ: Յերկրորդ անգամ նա այնպիսի հաջողություն ե ունենում, վոր յես շատ լավ անցկացրի գիշերը»: Հաջորդ օրը քսան մաժուհիներ շարունակեցին այդ բուժիչ միջոցը, ապա մի անգամ էլ կրկնեցին յերեկոյան, և մի օրից հետո, Կուկը կատարյալ առողջ եր: Բուժելու այդ յեղանակը, վոր գործադրում են Ընկերության կղզիների վրա, Կուկի կարծիքով, շատ ավելի ներգործական նշանակություն ունի, քան յեվրոպական բժիշկների բոլոր քսուքներն ու դեղերը:

Տահիտին արդարացրել եր իրեն: Նավաստիներն այդտեղ հանգստացել եյին, նավի նորոգումն ավարտված եր, անհրաժեշտ բաների պաշար եր պատրաստված: Սրտաշարժ հրաժեշտից հետո, յերբ «Վճռականություն» նավն սկսում է հեռանալ կղզուց, Կուկը հրամայում է թնդանոթից յոթ անգամ կրակել ի պատիվ Ո–Տուի: Թագավորիկը կամենում է տեսնել նավի մանյովրը, ուստի Կուկը նախ նավը յետ–յետ է տանում, ապա վերադառնում և, պտույտ անելուց հետո, ուղղում է դեպի Եիմեո կղզին. այնտեղ լավ նավահանգիստ կար և նավերը կարող եյին ընդհուպ մոտենալ ծովափին. այնտեղ պարզ ջրերով առվակներ էլ շատ կային:

Սկզբում բնիկները անվստահությամբ են վերաբերվում անգլիացիներին, գիտենալով, վոր նրանք տահիտցիների բարեկամն են. բայց տեղական թագավորիկն այնուամենայնիվ վճռում է բարձրանալ «Վճռականություն» նավը. Կուկի վերաբերմունքը իսկույն հանգստացնում է նրան և սկսվում է կանոնավոր առևտուրը: Նավերը փայտի և ջրի պաշար են վերցնում: Նավից ծովափի են իջեցնում այծերին:

Կուկի բարեսիրտ տրամադրությունն անսպասելի փչանում

է ամենաանախորժ կերպով։ Բնիկները ճարպկաբար գողանում են մի քանի այծ, վորոնց պահպանում եյին «Վճռականություն» նավի մարդիկ։ Կուկն ստիպված ե լինում պատժել նավաստիներին, իսկ գլխավորը, փնտռել կորած կենդանիներին․ Դժբախտաբար, բնիկները վոչ միայն թաղնվում են յերկրի խորքերում, վոչ միայն ամեն կերպ խաբում են, ուղարկված մարդկանց ցույց տալով կեղծ հետքեր, ասում են, վոր վոչ մի տեղ չեն տեսել վորևե այծ՝ այլև քարկոծում են զինվորներին։ Այդպիսի դեպքերում Կուկը համբերությունը կորցնում եր։ Զինված ջոկատով ինքն անձամբ գնում և ծովեզերքի բլուրների մյուս լանջերի վրա գտնվող գյուղերը․ համոզվելով, վոր բնիկները չեն ցանկանում հանձնել գողերին և վերադարձնել գողացածը, հավատացած լինելով, վոր նրանք անամոթաբար խաբել են իրեն, հրդեհում են միքանի գյուղ և պիրոգ։

«Այդպես վերջացավ այդ ծանր և տհաճ գործը․ դրա հետևանքներն ինձ պակաս տրտմություն չպատճառեցին, քան իրենց բնիկներին։ Զենթարկվելով Տահիտի կղզու մեր բարեկամների թախանձանքներին, նրանց հորդորներին՝ հարձակվել Եիմեո-ի վրա, յես չատ տխրեցի, վոր այդպես չուտ յես ստիպված յեղա այդ կղզու բնիկներին հայտարարել պատերազմի նման մի բան, վորը նրանց վնասեց, դուցե, չատ ավելի, քան տահիտցիների արչավանքը»։

Մեկ որից հետո, նավերը մոտենում են Գուաեն կղզուն, վորտեղ Կուկը պետք ե, վերջապես, տեղավորեր Ո-Մաիին։ Կուկը հրամայում ե կառուցել մի տուն, ցանկապատել, այգի և բանջարանոց գցել։ Այնուհետև Ո-Մաիին տալիս ե զենքեր և․ ատրճանակներ, թողնում ե նրա համար ձիեր, այծեր, խոզեր։ Տան ճակատին գրում և՝

«Georgius tertius, Rex, 2 Novembris, 1777·

Naves «Resolution»· J. Cook, pr·
«Discovery»· G· Clerke· pr·

---

[1] Գեորգ յերրորդ, թագավոր․ 1777․ նոյեմբերի 2․
Նավեր

«Վճռականություն»․ հրաման․ Ջ․ Կուկ․

«Հայտնագործություն»․ հրաման․ Ն․ Կլարկ․

Ծ․ Հ․



Տահիտցիների ռազմական նավատորմը

Ռ—Մալն սարքում է բնակարանամուտի խնճույք, իսկ մի քանի օրից հետո, լացով գրկում է մեկնող Կուկին և նրա ուղեկիցներին: Կուկը գիտեր այն կեղծ դրությունը, որին ստեղծվելու յեր Ռ—Մաիի համար իր հայրենակիցների շրջապատում, յերբ ինքը մեկնի այդտեղից: Ստորին դասակարգից ծագում առած մարդու ձեռքին չտեսնված հարստության կուտակումը բնիկներին չափազանց անսովոր և նույնիսկ անարդար բան կթվա: Բնիկների կենցաղի տոհմային կարգերը կխախտվեն ամենախիստ կերպով: Կոտանվեն թագավորական ընտանիքների հին արտոնությունները: Այսպես կամ այնպես, Ռ—Մաիի վիճակը բնիկների մեջ պետք է նախանձ առաջացնի և իրեն պատճառի շատ անախորժություններ: Ռ—Մաիի ճանապարհորդությունը դեպի Անգլիա և վերադարձը սկզբից մինչև վերջ սխալ բան եր:

Կուկն իրեն մխիթարում եր նրանով, որ Ռ—Մաին ձիեր և այլ կենդանիներ կպահի, դրանով կբարձրացնի Ընկերության կղզիների բարեկեցությունը և կարդարացնի դեպի Անգլիա կատարած իր ճանապարհորդության իմաստը:

Հաջորդ կայանը Ուլիտեա կղզին եր, որտեղ Կուկին դիմավորում է հին ծանոթ Ո—Ռեոն, որին իսկույն ընդառաջ է ուղարկում միքանի պիրոգ՝ լիքը կենսամթերքներով: Ինչպես միշտ, ծովափին սարքում են աստղաբաշխական դիտարաններ և նոյեմբերի ութից լույս իննի գիշերը Կուկը և նրա ուղեկիցները դիտում են լուսնի յետևից անցնող Այծեղջեր համաստեղության մի աստղ: Ուլիետեյում անցկացրած մի ամիսը մթագնվում է դասալքության յերկու դեպքով: Նախ փախուստի յե դիմում «Վճռականություն» նավի մի զինվոր: Կուկը նրան գտնում է ինքը, զինված ջոկատով ներխուժելով կղզու խորքը: Զինվորը մեղքը գցում է յերկու կնոջ վրա, որոնք իբր թե գայթակղեցրել են իրեն: Կուկը վստահում է նրան: Այնուհետև «Հայտնագործություն» նավից փախչում է միչմանը[1] և մի նավաստի. ցավն այն եր, որ միչմանը Կուկի ընկերոջ տղան եր: Հետապնդումը չի հաջողվում. Կուկն ստիպված է լինում ձեռք առնել ավելի կտրուկ միջոցներ. նա «Վճռականություն» նավում արգելափակում է Ո—Ռեո—ի տղային, աղջկանը և փեսային, հայ-

1 Ծովային սպա: Ծ. Թ.

տարարելով, որ չի արձակելու սրանց, մինչև որ դասալիքները չգտնվեն: «Մեր նավերի անձնակազմում միայն այդ յերկուսը չեյին, որ կամենում եյին բնակություն հաստատել այդ բախտավոր կղզիներում. նման դասալքությունը կանխելու համար, անհրաժեշտ է լինում գործադրել բոլոր հնարավոր միջոցները»:

Այդ կտրուկ միջոցը քիչ եր մնացել մի նոր խոշոր թյուրիմացության ակիզբ դառնար, քանի որ բնիկները դավադրություն եյին նյութել անգլիացիների դեմ: Նրանք նախ կալանավորում են Կլարկին և «Վճռականություն» նավի ավագ լեյտենանտ Հոր—ին: Սակայն նախազգուշացված Կուկն ուղարկում է լեյտենանտ Քինգին ուժեղ ջոկատով, իսկ Կլարկը կրակում է ատրճանակից. դրանից հետո բնիկները փախչում են: Դավադրությունն ուղղված եր նաև Կուկի դեմ: Նրանք մտածում են դարան մտնել, յերբ Կուկը կգնա գետում լողանալու, ուր նա միշտ գնում եր միայնակ և անզեն: Այդ բոլորի մասին պատմում է մի աղջիկ, որին Գուաեն կղզուց բերում է մի սպա. բարեբախտաբար, դավադրությունը բացվում է: Դրանից հետո Ո—Ռեոն ինքն է գնում փնտռելու դասալիքներին, որոնք անցել եյին մի այլ կղզի, և յետ է բերում իր հետ: Թե ինչպես է վարվել Կուկը մեղավորների հետ, հայտնի չե: Որագիրը լռում է այդ մասին: Հապա ինչպե՞ս եյին թագավորական նավատորմում ծառայության պայմանները, յեթե միչմանը գերադասում է ապրել վայրենի բնիկների մեջ, քան քաղաքակրթված Անգլիայում: Նավաստիների դասալքությունն այն ժամանակ մի շատ սովորական յերևույթ եր յեվրոպական պետություններին պատկանող ռազմական և առևտրական նավատորմիղներում: Ծառայության անասելի ծանր պայմանները, մարմնային դաժան պատիժը, վատ սնունդը և չնչին ռոճիկն ստիպում են նավաստիներին փախչել անդառնալի, թաղվել լեռների և անտառների անհայտ խորքերում, անծանոթ կղզիներում, յեվրոպական ափերից հազարավոր կիլոմետր հեռու, հաշտվելով ամեն մի վիճակի հետ, միայն թե չմնան նավային ծառայության անտանելի պայմաններում, հայրենիքում տիրող աղքատիկ գոյության ճնշող մթնոլորտում:

Ընկերության կղզիների շրջագայումը վերջանալու վրա յեր: Կուկը մտածում եր առաջիկայում դեպի հյուսիս մեկնելու և ձմե-

ռային ծովագնացության դժվարությունների մասին: Փոթորիկն ու մառախուղը կարող են նավերն իրարից անջատել, ինչպես մի ժամանակ այդ տեղի ունեցավ հարավային ձմեռային շրջանագծի մոտ: Նա նավապետ Կլարկի համար գրում է մանրամասն հրահանգ, վորի մեջ նշում է սպասելու վայրերը, թվականը, աշխ. լայնության աստիճանները, և թե ինչ պետք է աներ «Հայտնագործության» նավապետը, յեթե անջատվեր «Վճռականության» նավից, թե ինչպես ընթանալ մինչև «ս. Պետրոսի և ս. Պողոսի նավահանգիստը Կամչատկայում և սպասել այնտեղ մինչև 1779 թվի գարունը:

Դեկտեմբերի 9-ին «Վճռականություն» և «Հայտնագործություն» նավերն ուղղվում են դեպի հյուսիս: Արևոտ ովկիանոսում աստիճանաբար չքանում էին կորալային խութերը, կանաչազարդ հացի ծառերն ու կոկոսի արմավենիները, աստիճանաբար հեռանում էր «բախտավոր» կղզիներից վերջինը իր յերկկատար լեռնագագաթով, ցամաքի վերջին ծանոթ տարածությունը: Սկսվում էր նոր, միանգամայն անհայտ ուղին, գուցե, յերկարատև ջրային անապատը:

Կուկը հեռանում էր Ընկերության կղզիներից անկեղծ ցավակցության զգացմունքով:

ԲԵՐԻՆԳԻ ՀԵՏՔԵՐՈՎ

«... Մենք անցանք հասարակածը 22-ի լույս 23-ի գիշերը 203°15′-ի վրա...»

Լրանում էր տասնյոթերորդ ամիսը, ինչ նավերը մեկնել էին Անգլիայի ափերից, մինչդեռ արշավանքի գլխավոր նպատակը դեռևս իրականացված չէր: Ճանապարհորդության ամենադժվարին ու ծանր մասը միայն նոր էր սկսվում... «Ես իմ պարտքս համարեցի կրկնապատկել ուժերս և ուշադրությունս այն ամենի նկատմամբ, վոր կարող էր ապահովել մեր անվտանգությունը և մեր ձեռնարկության հաջողությունը: Կուկը մանրամասն և ուշադիր ստուգում է պաշարի դրությունը, նավի ինվենտարը, պահանջելով, վոր յուրաքանչյուրը խնայողաբար և

պատասխանատվության զգացումով վերաբերվի իրեն հոգացողության հանձնված մասը:

Հարթ կղզիներում ձեռք են բերում ձկան և կրիայի պաշար: Կուկն ինքն է վորսում դրանք, ափ մեկնելով մակույկով: Այնտեղ իր լեյտենանտ Քինգի և աստղագետ Բեյլիի հետ դիտում է արևի խավարումը: Անտանելի շոգը և ամպամածությունը խանգարում են դիտողներին, վորոնց հաջողվում է գրի առնել միայն խավարման վերջը: Այդ փոքրիկ անբնակ կղզում Կուկը տնկում է կոկոսի արմավենու, սեխի սերմեր և թողնում է մի շիշ, սովորական գրությամբ՝ թագավորի, նավի և նավապետների անուններով և 1777 դեկտ. 31 թվականով: Բարձում են մոտ յերեքհարյուր կրիա և շատ ձուկ, տոնում են Ծննդյան տոնը և նոր տարին, ապա ընթանում առաջ: Կուկը քարտեզի վրա նշանակում է այդ կղզյակը Ծննդյան կղզի անունով[1]:

Օրագրի գրանցումներն ընդհատվում են տասնյոթ օրով: Ժամանակի միապաղաղության մեջ սուր է զգացվում աշխարհից կտրված լինելը, միևնույն մարդկանց հետ նույն զրույցների կրկնությունը շատ է ձանձրացնում: Նավաստիներն սկսում են անընդհատ փնթփնթալ, ճանապարհորդությունը նրանց աչքին շատ է ձգձգվում, հաճախ են սկսում հիշել հարազատ յերկրի ափերը և դժկամությամբ են աշխատում: Նավանկուղի ծանր ու նեխված մթնոլորտում լսվում է մկների ծվծվոցը. Նրանք լրբաբար վազվզում են տակառների և հակերի վրա: Արևից շիկացած պատերի վրա խժժում են միջատները: Նավանկուղների հեղձուցիչ օդից, վոր հագեցած էր ծխախոտի ծխով, ճարպի ճրագների մրով և կեղտոտ շորերի թթու հոտով, նավաստիները բարձրանում էին տախտակամած, վորն անտանելի կուրացնող արևի շնորհիվ դառել էր վառարան և դաղում էր տաք քամու պես ու մթագնում գիտակցությունը:

Կուկը վախենում էր այդ միապաղաղ, շոգ ու խաղաղ օրերից: Ինչո՞վ զբաղեցնել նավաստիներին: Շոգից հյուծված նրանց դեմքերը, թուլացած քայլվածքը, հանգած աչքերը վկայում էին հոգնածության, դեռևս իր համար անհրաժեշտ ուժի գերածախ-

[1] Անգլ. Christmas. Ծ. Թ.

ձի մասին։ Այդ մարդկանցից էր կախված ճանապարհորդության հաջողությունը։ Ինչո՞վ զբաղեցնել, ինչպե՞ս արթնացնել այդ կիսաքաղց ամբոխին, որն անգործ թափառում էր նավի մի ծայրից մյուս ծայրը։ Կրկին նա կարգադրում է տախտակամած դուրս բերել անկողինը, օդափոխություն անել նավասենյակներում և նկուղներում, աշխատում էր իրեն ձևացնել կայտառ, կարծես, ամեն ինչ բարեհաջող է։

Բայց որքան է նա ուրախանում, երբ այդ ահագին անհուսալի, չիկացած ովկիանոսի հեռվում նկատում է հազիվ նշմարելի մի մութ շերտ. այդ շերտն աճում էր ժամեժամ, ձգվում էր երկարությամբ, կլորանում բլուրներով, կանաչ հագնում, և ծովում դուրս ընկած ժայռոտ հրվանդաններով ու ծանծաղուտներով կտրատվում կղզիների։ «Այդ երկրի ընդհանուր տեսքն ամենևին նման չէ այն կղզիներին, որ մենք տեսել ենք արևադարձի մոտ, հասարակածից դեպի հարավ...» Կղզիների գծագիրը թեպետև հիշեցնում էր Տահիտի կղզին, բայց ափերը ժայռոտ էին, կոկոսի արմավենիներ և հացի ծառեր քիչ կային, որոնք տիպիկ էին Ընկերության կղզիների համար։

Նավերը խարսխում են կղզիներից մեկի մոտ և իսկույն շրջապատում բնիկների պիրոգներով. Նրանք մեծ հետաքրքրությամբ դիտում էին չտեսնված նավերը։ «Իմ ճանապարհորդությունների ժամանակ ես երբեք չեմ պատահել մարդկանց, որոնք այդչափ զարմացած լինեին նավ տեսնելուց. Նրանց հայացքն անընդհատ անցնում էր մի առարկայից մի այլ առարկայի»։ Այդ առաջին տպավորությունն ուրախացնում է Կուկին՝ հաճելի էր գիտակցել հայտնագործության առաջնությունը։ Ատուի կղզու բնիկները հիշեցնում էին Նոր զելանդացիներին և տահիտցիներին։ Նրանց լեզուն նման էր Ընկերության կղզիների բնակչության լեզվին։

Այդտեղ անցկացրած երկու շաբաթվա ընթացքում ջրի, խոզի և այլ կենսամթերքների պաշար են պատրաստում։ Կուկն ամեն օր ափ էր իջնում, ղեկավարում աշխատանքները, ուսումնասիրում երկիրը, դիտում բնիկների գյուղերն ու գերեզմանոցը, կատարում մակընթացության դիտողություններ։

Քարտեզի վրա նշանակում էր հայտնագործած երկրները՝

Կուկը գրում է. «Սենդվիչի կղզիներ»։ Այս անգամ ճակատագրական կապերով ընդմիշտ կապվում են Կուկի և Ծովակալության առաջին լորդի անունները։

Ճանապարհը Սենդվիչի կղզիներից մինչև Ամերիկա տևում է մեկ ամսից ավելի։ Հազվագյուտ տաք ձմեռը փրկում է տաքից ցուրտ խիստ փոփոխություններից։ Մարտի 7-ին հյուսիս-արևելքում երևում են Նոր Ալբիոնի անտառոտ ափերը։ Վրա հասնող անձրևախառն ու ձյունախառն փոթորիկները երկու շաբաթվա ընթացքում խանգարում էին ափին մոտենալ։ Նավերը դանդաղորեն շարժվում էին դեպի հյուսիս։ Կուկն աշխատում էր քարտեզի վրա. մանրամասն նշանակում էր բոլոր ծովախորշերը և հրվանդանները, տալիս էր նրանց անուններ, ուղղում էր իր նախորդների բազմաթիվ անճշտությունները միայն մարտի 29-ին, երբ խաղաղվում է փոթորիկը, հնարավորություն են ստանում գտնել մի հարմար ծովախորշ և խարիսխ ձգել։

Ծովափին բնակչություն կար։ «Նոր Աշխարհի» մարդիկ ոչ մի բանով նման չէին Խաղաղականի կղզիների բնակչությանը։ Սրանք բարձրահասակ էին, կանոնավոր դիմագծերով, երեսին քսած կարմիր, սև և սպիտակ ներկեր, մազերի հետ հյուսած ունեին փետուրներ։ Մութ, կարմրավուն մարմինը ծածկված էր մորթիներով։ Նրանք չէին վախենում օտարերկրացիներից և իսկույն բանակցություն են վարում ու փոխանակություն սկսում։ Բերում էին արջի, գայլի, աղվեսի, յեղջերվի, ճագարի, ջրաքիսի մորթիներ և այդ բոլորը փոխանակում էին երկաթի ու պղնձի հետ, որ նրանք գերադասում էին ամենից շատ։ Դրանց պաշարը նավում շատ չէր։ Ստիպված նրանց տալիս են հագուստի կոճակներ, սեղանի զարդամասեր, ամաններ, թեյաման, մոմակալներ։ Մեծ քանակությամբ որսած սարդինը նրանք ուրախությամբ փոխանակում էին պղնձե իրերով։ «Նրանց առաջարկած իրերի մեջ մեզ ամենից շատ զարմացնում էին մարդկային գանգերն ու ձեռքերը, որոնց վրա դեռ միս կար։ Այդպիսով մենք շատ լավ հասկացանք, որ դրանք կերել են մարդկանց, և մենք իրոք համոզվեցինք, որ այդ գանգերն ու ձեռքերը խորովվել են կրակի վրա։ Տարաբախտաբար, շատ պատճառներ կային կարծելու, որ այդ ցեղերը ուտում են իրենց թշնամիներին Նոր Զե-

ձի մասին: Այդ մարդկանցից էր կախված ճանապարհորդության հաջողությունը: Ինչո՞վ զբաղեցնել, ինչպե՞ս արթնացնել այդ կիսաքուն ամբոխին, որն անգործ թափառում էր նավի մի ծայրից մյուս ծայրը: Կրկին նա կարգադրում է տախտակամած դուրս բերել անկողինը, օդափոխություն անել նավասենյակներում և նկուղներում, աշխատում էր իրեն ձևացնել կայտառ, կարծես, ամեն ինչ բարեհաջող է:

Բայց որքան է նա ուրախանում, յերբ այդ ահագին անհուսալի, շեկացած ովկիանոսի հեռվում նկատում է հազիվ նշմարելի մի մութ շերտ. այդ շերտն աճում էր ժամեժամ, ձգվում էր յերկարությամբ, կլորանում բլուրներով, կանաչ հագնում, և ծովում դուրս ընկած ժայռոտ հրվանդաններով ու ծանծաղուտներով կտրատվում կղզիների:. «Այդ յերկրի ընդհանուր տեսքն ամենևին նման չէ այն կղզիներին, որ մենք տեսել ենք արևադարձի մոտ, հասարակածից դեպի հարավ...» Կղզիների գծագիրը թեպետև հիշեցնում էր Տահիտի կղզին, բայց ափերը ժայռոտ էին, կոկոսի արմավենիներ և հացի ծառեր քիչ կային, որոնք տիպիկ էին Ընկերության կղզիների համար:

Նավերը խարսխում են կղզիներից մեկի մոտ և իսկույն շրջապատում բնիկների պիրոգներով. նրանք մեծ հետաքրքրությամբ դիտում էին չտեսնված նավերը: «Իմ ճանապարհորդությունների ժամանակ յես յերբեք չեմ պատահել մարդկանց, որոնք այդչափ զարմացած լինեյին նավ տեսնելուց. նրանց հայացքն անընդհատ անցնում էր մի առարկայից մի այլ առարկային»: Այդ առաջին տպավորությունն ուրախացնում է Կուկին՝ հաճելի յեր գիտակցել հայտնագործության առաջնությունը: Ատուի կղզու բնիկները հիշեցնում էին Նոր Զելանդացիներին և տահիտցիներին: Նրանց լեզուն նման էր Ընկերության կղզիների բնակչության լեզվին:

Այդտեղ անցկացրած յերկու շաբաթվա ընթացքում ջրի, խոզի և այլ կենսամթերքների պաշար են պատրաստում: Կուկն ամեն օր ափ էր իջնում, ղեկավարում աշխատանքները, ուսումնասիրում յերկիրը, դիտում բնիկների գյուղերն ու գերեզմանոցը, կատարում մակընթացության դիտողություններ:

Քարտեզի վրա նշանակում էր հայտնագործած յերկրները՝

Կուկը գրում է. «Սենդվիչի կղզիներ»: Այս անգամ ճակատագրական կապերով ընդմիշտ կապվում են Կուկի և Ծովակալության առաջին լորդի անունները:

Ճանապարհը Սենդվիչի կղզիներից մինչև Ամերիկա տևում է մեկ ամսից ավելի: Հազվագյուտ տաք ձմեռը փրկում է տաքից ցուրտ խիստ փոփոխություններից: Մարտի 7-ին հյուսիս-արևելքում յերևում են Նոր Ալբիոնի անտառոտ ափերը: Վրա հասնող անձրևախառն ու ձյունախառն փոթորիկները յերկու շաբաթվա ընթացքում խանգարում էին ափին մոտենալ: Նավերը դանդաղորեն շարժվում էին դեպի հյուսիս: Կուկն աշխատում էր քարտեզի վրա. մանրամասն նշանակում էր բոլոր ծովախորշերը և հրվանդանները, տալիս էր նրանց անուններ, ուղղում էր իր նախորդների բազմաթիվ անճշտությունները միայն մարտի 29-ին, յերբ խաղաղվում է փոթորիկը, հնարավորություն են ստանում գտնել մի հարմար ծովախորշ և խարիսխ ձգել:

Ծովափին բնակչություն կար: «Նոր Աշխարհի» մարդիկ վոչ մի բանով նման չեյին Խաղաղականի կղզիների բնակչությանը: Նրանք բարձրահասակ էին, կանոնավոր դիմագծերով, յերեսին քսած կարմիր, սև և սպիտակ ներկեր, մազերի հետ հյուսած ունեյին փետուրներ: Մութ, կարմրավուն մարմինը ծածկված էր մորթիներով: Նրանք չեն վախենում օտարերկրացիներից և իսկույն բանակցություն են վարում ու փոխանակություն սկսում: Բերում էին արջի, գայլի, աղվեսի, յեղջերվի, ճագարի, ջրաքիսի մորթիներ և այդ բոլորը փոխանակում էին յերկաթի ու պղնձի հետ, որ նրանք գերադասում էին ամենից շատ: Դրանց պաշարը նավում շատ չէր: Ստիպված նրանց տալիս են հագուստի կոճակներ, սեղանի զարդամասեր, ամաններ, թեյաման, մոմակալներ: Մեծ քանակությամբ վորսած սարդինը նրանք ուրախությամբ փոխանակում էին պղնձե իրերով: «Նրանց առաջարկած իրերի մեջ մեզ ամենից շատ զարմացնում էին մարդկային գանգերն ու ձեռքերը, որոնց վրա դեռ միս կար: Այդպիսով մենք շատ լավ հասկացանք, որ դրանք կերել են մարդկանց, և մենք իրոք համոզվեցինք, որ այդ գանգերն ու ձեռքերը խորովվել են կրակի վրա: Տարաբախտաբար, շատ պատճառներ կային կարծելու, որ այդ ցեղերը ուտում են իրենց թշնամիներին Նոր Զե-

լանդիայի և Հարավային ծովի մի քանի այլ կղզիների բնակչության սովորության նման»:

Կուկը կարգադրում է ափ դուրս բերել վնասված կայմերը, դարբնոցը, սարքում է ատաղձագործական գործիքների վրանը, ջոկատներ է ուղարկում նոր կայմերի համար ծառեր կտրտելու, ջրի պաշար տեսնելու, փայտ և խոտ հավաքելու:

Ուսումնասիրելով բնիկների կենցաղը, Կուկը նկատի ուներ վոչ միայն նատուրալիստի տեսակետը: Նա ավելի խորն էր թափանցում, աշխատելով դրսևորել այդ կենցաղի սոցիալական կառուցվածքը, բարձր ու ստորին դասակարգերի բարդ փոխհարաբերությունները, աշխատում էր պարզել ցեղերի նվիրապետական սիստեմը, յեվրոպական քաղաքակրթության կողմից նրանց կրած ազդեցությունները: Օրագրում հաճախ պատահում ենք քաղաքական հարցերի վերաբերյալ դիտողություններ, նախնական սոցիալական ձևերի զարգացման մասին նշումներ: «Յես պետք է նշեմ, վոր բոլոր քիչ քաղաքակրթված ժողովուրդներից ու ցեղերից, վորոնց մեջ յես մնացել եմ իմ ճանապարհորդությունների ընթացքում, միայն այս ծոցի մերձափնյա բնակիչները, թվում է ինձ, ավելի ճիշտ և վորոշակի գաղափար ունեն սեփականության իրավունքի մասին իրենց յերկրի բոլոր արտադրանքների նկատմամբ...»:

Կուկը շտապում էր հասնելու իր ճանապարհորդության գլխավոր նպատակին, յերբեմն արհամարհելով բացահայտ վտանգը:

«... Ծանրաչափի սնդիկը խիստ իջնում էր. բացի այդ, ամեն ինչ նախագուշակում էր փոթորիկ, վորը, թվում էր, թե պատրաստվում է հարավում: Քանի վոր մութն ընկնում էր, յես մի վայրկյան մտածեցի, արդյոք համարձակություն կունենա՞մ բացել առագաստները և շարժվել, թե կսպասեմ հաջորդ որվան. ճանապարհորդությունը շարունակելու անհամբերությունը և այն վախը, թե բաց կթողնեմ այդ ծոցից դուրս գալու հարմար առիթը, ինձ վրա ավելի տպավորություն գործեցին, քան ինքը վտանգը, և յես վճռեցի ծով դուրս գալ, ինչ գնով էլ լինի»:

Գիշերը սարսափելի յեր: Փոթորիկն ալեկոծության և վորոտի դղրդոցի մեջ, քամու սուլոցի և կատարյալ խավարի մեջ թա-

փահարում էր նավը: Նավապետը չէր տեսնում ամբողջ նավը, յերբ խարխափելով գրոհի յեր տանում ծովի դեմ: Հաջորդ որն ընթանում եյին մառախուղի մեջ, շարունակելով վրա տվող փոթորիկների դեմ պայքարը: «Վճռականություն» նավը ծակվում է: Մինչև ուշ գիշեր ջուրը դուրս եյին թափում, ծակն եյին կալնում: Կուկը ցավում էր, վոր չէր կարողանում մոտենալ տեսանելի ափին և ճշտիվ ուղղել քարտեզը. «... Մենք անցնում եյինք այն տեղով, վորտեղ աշխարհագրագետները նշանակել եյին ծովակալ դե-Ֆոնտեյի կարծեցյալ նեղուցը»:

«Հյուս. լայն. 57°-ի վրա մենք կրկին մոտեցանք ծովեղերքին: Բարձր լեռներն ու բլուրները ծածկված եյին ձյունով, ծովեղերքին աճում եյին կանաչ անտառներ»:

Կուկը ճանաչում է այդ ափերի գծագրությունը. Նա այդ տեսել էր ռուս ծովագնացի քարտեզում: Կոորդինատների հաշվումները ճիշտ եյին: Վոչ մի կասկած չկար, վոր այդ հենց այն տեղն էր, վորտեղ ափ էր իջել Բերինգը: Այդ ծոցը իր քարտեզում նշանակելով, Կուկը նրան տալիս է Բերինգի անունը: Նավերի շարժման զուգընթաց Կուկն ուղղում էր քարտեզը և նոր անուններ տալիս հրվանդաններին, ծովախորշերին, բարձրություններին: Յերբ նավը մոտենում է կղզուն, Կուկն իջնում է ափ, այնտեղ թողնում է սովորական մի գրություն յերկու դրամով, վոր ստացել էր թագավորական կապելլան[1] դոկտոր Կոյից: Նրա անունով էլ նա կոչում է այդ կղզին:

Դեպի հյուսիս ընթանալիս, Կուկը ղեկավարվում է Բերինգի քարտեզներով, վորոնք ուրիշ քարտեզներից ավելի ճիշտ եյին: Ծովեղերքի և բնիկների նկարագրությունները համապատասխանում եյին իր դիտողություններին: Սակայն Մյուլերի գրքի[2] անգլիական հրատարակությունն այնքան կրճատված էր, քարտեզներն այն աստիճանի անխնամ եյին պատրաստված, վոր նրանց լրիվ վստահելն անհնարին էր. ուստի ստիպված պետք էր առաջ ընթանալ յենթադրաբար: Այդ բոլորը վկայում էր ժամանակակից աշխարհագրագետների կատարյալ անգիտության, խիստ

1 Քահանա: Ծ. Թ.

2 Մյուլերը գերմանական գիտնական էր, վորն առաջինն էր կազմել ռուս ծովագնացների հայտնաբերությունների նկարագրությունը: Ծ. Հ.

կողմի սխալանքների և Ամերիկայի հյուսիս-արևմտյան ափերի գծագրությունը միանգամայն սխալ պատկերացնելու մասին։ «Մենք համոզվեցինք, որ Հյուսիսային Ամերիկայի մայր ցամաքը շատ ավելի է տարածվում դեպի արևմուտք, քան այդ ցույց է տրված այժմյան ամենաընդունված քարտեզներում։ Այդ ամենը նվազեցնում եր դեպի Բաֆֆինի կամ Հուդսոնի ծոցը գոյություն ունեցող նեղուցի հնարավորությունը»։

Հետազոտելով հայտնագործած գետը[1], Կուկը հիշում է յեվրոպական գիտնականներին, որոնք իրենց գիտական տեսությունները թեթևակի կերպով կառուցում եյին չստուգված տվյալների վրա. «Ես այնուամենայնիվ գոհունակությամբ եմ մտածում, որ յեթե մանրամասնորեն չհետազոտեցի այդ նշանավոր «անցքը», ապա իրենց կաբինետներում աշխարհագրությամբ զբաղվողները կհաստատեյին, որպես ճշմարտություն, որ այդ անցքը հյուսիսում միացած է Հյուսիսային ծովի[2] հետ կամ արևելքում՝ Բաֆֆինի կամ Հուդսոնի ծոցի հետ, և թերևս մի որ այն կնշանակեյին քարտեզի վրա ավելի մեծ ճշտությամբ և ավելի իրական ցուցումներով, քան դե-Ֆուկայի և դե-Ֆոնտեյի նեղուցները, որոնք անտեսանելի են այն պատճառով, որ յերևակայական են»։ Հայտնագործած գետի ափին բրիտանական դրոշակ պարզելուց հետո, նավերն առաջ են շարժվում և մուտք գործում կղզիների արշիպելագը։ Ստիպված եյին անցնել նեղուցով, որը նավերին մղում եր ծանծաղ տեղերից։ Անցնելով մայր ցամաքի և Կոդյակ կղզու միջով, մտնում են Ալյասկա թերակղզուն։

Կղզիների մոտով անցնելիս, «Հայտնագործություն» նավը թնդանոթից կրակում է յերեք անգամ, կանգ առնում և բանակցության ազդանշան տալիս։ Կուկն ուղարկում է մի մակույկ։ Նա վախենում է, թե մի գուցե դժբախտ պատահար է յեղել կամ նավն է վնասվել։ Կլարկը գալիս է և վախը ցրում։ Բանից պարզվում է, որ բնիկները, պիրոգով մոտեցել են «Հայտնագործություն» նավին և հանձնել մի տուփ, որի մեջ խնամքով ծալված է

[1] Այդ գետը հետագայում կոչվել է Կուկի անունով։ Ծ. Հ.
[2] Հյուսիսային բևեռային ծովի։ Ծ. Թ.

մի թերթ թուղթ, գրված անհասկանալի տառերով։ Առաջին յերեսին գրված եր 1778, իսկ մյուս յերեսին՝ 1776։ Կուկը և Կլարկը վճռում են, որ թուղթը գրված է ռուսերեն և որ իրենք յերևի շուտով կհանդիպեն ռուս արդյունաբերողներին, որոնք գալիս են այստեղ մորթիներ ձեռք բերելու։ Այդ մասին եր վկայում նաև այն հանգամանքը, որ տուփ հանձնող բնիկը գլխարկը հանել և բարևել եր յեվրոպական ձևով. ըստ յերևույթին, շփվելով ռուսների հետ, տեղական բնիկները յուրացրել եյին նրանց ձևերը։ Թերևս, ռուս ծովագնացների նավը խորտակվել եր և ոգնություն եյին խնդրում։ Կլարկը յետ է դարձնում բնիկին, առանց հարց ու փորձ անելու՝ ինչպես հարկն է։ Ահա թե ինչո՛ւ է նավապետը վճռում ազդանշան տալ Կուկին և խորհրդակցել նրա հետ։ Կուկը չեր հավատում նավի խորտակմանը. այդ դեպքում ռուսները կուղարկեյին իրենցից մեկն ու մեկին։ Պարզապես, արդյունաբերողները նամակը թողել են ուրիշ ռուսների հանձնելու համար, իսկ բնիկներն անգլիական նավերն ընդունել են ռուսականի տեղ. այլ կերպ ասած՝ անհաջող են կատարել հանձնարարությունը։ Կանգ առնելու կարիք չկար։ Այն բնիկը, որին հանդիպում են հաջորդ կայանում, բարևում է նույն կերպ՝ հանում է գլխարկը. բացի այդ, նրա հագին կար կանաչ մահուդի վարտիք։ Այդ բոլորը վկայում եր այն մասին, որ ռուսներ յեղել են այստեղ։ Բնիկը նստած եր փոքրիկ մակույկում և թիավարում եր յերկու թիաբերան ունեցող մի թիակով։ Նրա դեմքը տափակաձև եր, աչքերը նեղ, այտի ոսկորները դուրս ցցված. դեմքը ներկված չեր, ինչպես Հյուս. Ամերիկայի արևմտյան ափերի բնակիչներինը. նա չեր հասկանում մեր ասած խոսքերը։ Կուկը զգուշանում է հապճեպ յեզրակացություններ անելուց...։ «Գուցե, այդ պետք է վերագրել մեր վատ արտասանությանը, և ոչ թե այն բանին, որ նրանք չգիտեն այդ բարբառը»։

Անցնում է մի շաբաթ, նավերը դեռևս խուսանավում եյին խիտ մառախուղի մեջ։ Յերբ մթագնածությունը ցրվում է, աչքերի առաջ բացվում են նոր կղզիներ, լեռների մի ամբողջ շղթա։ Բնիկները քարշ եյին տալիս մի սպանած կետ։ Կղզիների միջև յերևում եր մի նեղուց, որը ճանապարհ եր բացում դեպի

հյուսիս: Նավերը խարսխում են Ունալաշկա կղզու մոտ: Բնիկներից մեկը բերում ե մի նամակ, վորը, ըստ յերևույթին, գըրված եր ելի ռուսերեն լեզվով: Կուկը վերադարձնում ե նամակը:

Անցնելով Ալեուտյան կղզիների արշիպելագը, նավերը մուտք են գործում մի մեծ ծոց, վորը Կուկն անվանում ե Բրիստոլ:

Ունալաշկայից հեռանալուց հետո, մի ամիս որագրում միակերպ նշվում եյին նավի փոփոխական ընթացքը և աստղաբաշխական դիտողությունները: Իր անձի և անձնական կյանքի մասին Կուկի սովորական լռությունն այնպիսի տպավորություն ե ստեղծում, թե ամեն ինչ կատարյալ հաջողակ եր և ժամանակն արագ անցած ե թվում: Իրականում այլ եր: «Վճռականություն» նավում ծանր հիվանդ եր Կուկի ամենամոտ մարդը: Յերկու ամիս ե, ինչ Անդերսոնը հիվանդ պառկած եր: Թոքախտը դանդաղորեն դեպի մահվան գիրկն եր տանում այդ յերիտասարդին: Մի տարի յե, ինչ նա գանգատվում եր իր տկարության վրա, վորը նրան խնայել եր հազվադյուտ որերին: Արևադարձային կլիման առանձնապես բացասաբար ե ներգործում հիվանդի դրության վրա: Յերբ նավերը մոտենում են Ամերիկայի ափերին, Անդերսոնն իրեն ավելի լավ ե զգում, նախկին վոգևորությամբ սկսում ե կատարել բուսաբանական հետազոտություններ և ժողովել կոլեկցիաներ: Կուկին թվում եր, թե վիրաբուժն սկսում ե կազդուրվել: Անդերսոնը, ինչպես մի ժամանակ Գեորգ Ֆորստերը, մյուս ուղեկիցներից ավելի յեր մոտ Կուկին: Տաղանդավոր բժիշկ, լավ բուսաբան Անդերսոնը հրաշալի մարդ եր և ընկեր: Նա զուրկ եր Ֆորստերի յերիտասարդական վոգևորությունից, բայց հավասարակշռված եր և համեստ: Միասին անցկացրած կյանքում և աշխատանքների ընթացքում Կուկն զգում եր, վոր իր մոտ կա մի հավատարիմ ոգնական և, թերևս, նավում միակ մարդը, վորն ամբողջովին համակարծիք եր իր հետ: Բաց ծովում միապաղաղ նավագնացության ժամանակ Անդերսոնի հետ զրույցները կրճատում եյին ժամանակը և չեյին ձանձրացնում միակերպությամբ: Հիվանդությունն իր ճակատագրական կնիքն ե դնում նրա նիհար և խաղաղ դեմքին, կապտում ե աչքերի շուրջը, կարմրին են տալիս այտերը, խուլ հազը խեղդում եր ձայնը: Յեվ ահա յերկու ամիս ե, ինչ Անդերսոնի առողջական դրությունը վատթարանում ե.

նա տենդ ուներ, հազում եր և արյուն թքում: Նա հետզհետե ավելի ու ավելի յե հաճախ մնում իր նավասենյակում, քանի վոր դժվարանում եր դուրս գալ տախտակամած: Կուկն այցելում եր նրան որական մի քանի անգամ, պատմում եր նավային նորությունները, հաղորդում եր ծովեզերքին տեսածն ու լսածը: Յերբ կղզիների մոտ մառախուղը քիչ ե մնում կործանի «Վճռականությանը», Կուկը թաքցնում ե այդ: Նրա հիվանդության մասին ասում եր, թե շուտով կանցնի, և, վորպես բարի դայակ, խառնում եր դեղը, ուղղում եր բարձը, այլևս չհավատալով դեղի բուժիչ ուժին: Արևոտ և խաղաղ որերին հիվանդ Անդերսոնին դուրս եյին բերում տախտակամած, և նա իր մոմաթեք յերեսը դարձնում եր դեպի արևը, նայում յերկինքին, ալիքներին. Նա կենդանանում եր և կրկին ծրագիր կազմում ապագայի նկատմամբ:

Սակայն հիվանդությունը հասնում ե հոգևարքին: Անդերսոնը պառկում ե վերջնականապես: Նա ասում ե Կուկին. «Դժվարանում եմ գրել... ահա իմ որագիրը... գուցե, յես չապաքինվեմ... ահա ուրիշ գրություններ... դուք, կապիտան, վերցրեք այդ բոլորը... յերբ կվերադառնաք Անգլիա, կհանձնեք սեր Ջոզեֆ Բենքսին... գուցե, թագավորական ընկերությանը պետք կգա իմ այդ փոքր աշխատությունը... յես շատ եմ հոգնում... ահա այստեղ յես գրել եմ...» Նա մեկնում ե Կուկին մի թերթ— իր կտակը: Կուկը խոստանում ե կատարել խնդիրը և լռում ե: Ինչո՞վ կարող եր մխիթարել մեռնողին: Ստելը, ինչպես ասում են միշտ այդպիսի դեպքերում, նա համարում ե անմիտ և վիրավորական: Նման րոպեներում պետք ե լռել: Հիվանդի նիհար ձեռքն ընկնում ե նրա ձեռքի վրա:

«Իմ վիրաբույժ պարոն Անդերսոնը տառապում եր թոքախտով մի տարուց ավելի, մահանում ե յերեկոյան դեմ, ժամը յերեքի և չորսի միջև: Այդ մի յերիտասարդ եր, վորը լի յեր ազնիվ զգացումներով, խելոք եր և հաճելի ընկերակից: Նա լավ գիտեր իր արվեստը և շատ գիտելիքներ եր ձեռք բերել նաև այլ բնագավառներում: Ընթերցողն, անկասկած, կնկատի, թե վորչա՛փ նա ոգտակար եր ինձ ճանապարհորդության ընթացքում, յեթե միայն մահը չխլեր նրան. իսկ հասարակությունը, վստահ

եմ, նրանից կստանար մեր այցելած յերկրների բնական պատմության վերաբերյալ գրություններ. դրանց մեջ ակնառու կերպով ապացուցված կլիներ, թե վորչա՛փ նա արժանի յե իմ արտահայտած գովասանքներին: Շուտով, յերբ նա արձակեց իր վերջին շունչը, արևմուտքում, մենք տասներկու լյո յերկարությամբ մի յերկիր տեսանք. մենք կարծում եյինք, թե կղզի յե և յես անվանեցի Անդերսոնի կղզի, նպատակ ունենալով հավերժացնել այն մարդու հիշատակը, վորին յես սիրում եյի և շատ հարգում»:

Կուկին վիճակված չեր կատարել իր ընկերոջ վերջին կամքը. Անդերսոնի թղթերը, վոր գրքերի և այլ փաստաթղթերի հետ հանձնված եյին ծովակալությանը, բոլորը լրիվ չեն ընկնում Բենքսի ձեռքը: Լորդերը քաղաքական կարգի դիտավորություններով անհրաժեշտ են համարում թղթերի մեծ մասը պահել մինիստրության մեջ, տալով միայն այն, վորը վերաբերում եր բնական պատմությանը:

Այդ օրերին նավերը հասնում են Հյուս. Ամերիկայի արևմտյան հրվանդանին՝ հյուս. լայն. 65°-ին, ուր չեր հասել յեվրոպական ծովագնացներից դեռևս վոչ մեկը: Կուկը առաջինն ե լինում, վոր ճիշտ վորոշում ե Ասիական և Ամերիկական մայր ցամաքների մոտիկության չափը: Մինչ այդ ժամանակ կարելի յեր հենվել ռուս ծովագնացների հակասական ցուցումների վրա: Ցամաքի հակառակ ափին[1] Կուկը տեսնում ե բնիկներ, վորոնք խիստ տարբերվում են Ամերիկայի բնիկներից՝ բարձր հասակով, յերկարավուն դեմքով, զարդարանքների սակավությամբ, մորթե հագուստով, վոր ծածկում ե գլուխը, և փոկերի մորթուց պատրաստած կլորաձև սրածայր խրճիթներով:

«Մենք նախ յենթադրում եյինք, թե այդ յերկիրը կազմում ե Ալյասկա կղզու մի մասը. Ալյասկան քարտեզի վրա նշանակել ե պարոն Շտելինը[2], վորի մասին յես ասել եմ վերը: Սակայն,

[1] Ասիական ափին: Ծ. Թ.

[2] Շտելինն ակադեմիկոս ե, Յեկատերինա II-ի խորհրդատու. մի փոքր գիրք ե գրել ռուսների ճանապարհորդության մասին դեպի Կամչատկա և Բերինգի ծովի կղզիները: Այդ աշխատությունը չափազանց մակերեսային ե.

դատելով ըստ ափերի գծագրության, Ամերիկայի հակառակ ծովեզերքի տեղադրության, աշխ. յերկայնության, մենք իսկույն մտածեցինք, վոր այդ «Զուտսկի յերկիրն ե» կամ Ասիայի արևելյան ծայրամասը, վոր 1728 թվին տեսել ե Բերինգը»:

Բերինգի նեղուցով ընթանում ենք դեպի հյուսիս: Հյուս. լայն. 70° 44′-ի վրա սառցե դաշտը կանգնեցնում ե նավերը: Կուկը փորձում ե սառույցի շուրջն անցնել հարավ-արևմուտքից, ապա կրկին ուղղությունը փոխում ե դեպի հյուսիս և հասնում 70°-ին: Սառցե արգելքը յերեք կողմից պատել եր նավը. միակ յելքը բաց եր հարավից: «Յես մտածում եյի մի տեղ գտնել, վորտեղ կարողանայինք փայտի և ջրի պաշար վերցնել. ինձ առանձնապես հոգս եր պատճառում այն, թե ինչպես անցկացնենք ձմեռը, օգուտներ տալով աշխարհագրությանն ու ծովագնացությանը և կազմ ու պատրաստ լինելով հաջորդ ամռանը կրկին դեպի հյուսիս գնալու, կրկին անցքի փնտռումներ կատարելու համար»: Սեպտեմբերի սկզբին նավերը խարսխում են ս. Լավրենտիոսի ծովախորշում:

«Յես պետք ե արդարամիտ լինեմ Բերինգի հիշատակի նկատմամբ և վկայեմ, վոր նա հիանալի կերպով հանել ե ափի գծագիրը և վորոշել լայնության ու յերկայնության կետերը շատ ավելի լավ, քան կարելի յեր սպասել նրա գործադրած յեղանակներից»:

Կուկն անում ե այն բոլորը, ինչ կարելի յեր անել մինչև ձմեռնամուտ: Նա չեր կամենում գնալ Կամչատկայի Պետրոպավլովսկը վոչ միայն այն պատճառով, վոր այդ նավահանգիստն անհարմար եր, այլև այն պատճառով, վոր չեր կամենում մնալ առանց գործի: «Յես կմատնանշեմ, վոր ինձ համար ծայր աստիճան ատելի յեր վեց կամ յոթ ամիս մնալ անգործ վիճակում. յես չեյի կարող կատարել վորևե օգտակար գործ, յեթե ձմեռն անցկացնեյի այդ հյուսիսային յերկրում»: Նա վճռում ե յետ դառնալ դեպի Սենդվիչի կղզիները, այցելելով Ունալաշկան,

նա իր մեջ չի պարունակում վո՛չ քաղվածքներ նավային ժուռնալից, վո՛չ ել ուղևորության մանրամասնություններ: Գրքին կցված քարտեզը շատ անճշտություններ ունի: Հրատարակված ե գերման. լեզվով: Ծ. Հ.

այնտեղ ջրի պաշար վերցնելու համար:

Կարդալով «Փիլիսոփայական նամակները» և Մյուլլերի ու Ռոբերտսոնի գրքերը, վոր վերաբերում են ռուս ծովագնացների կատարած ճանապարհորդություններին դեպի Ամերիկայի ափերը, Կուկը ռուսների մասին իմանում ե շատ ավելի բան, քան նրա հայրենակիցներից շատերը, վորոնք մեծ մասամբ արհամարհում եյին այդ հեռավոր «կիսաբարբարոս» յերկիրը: Ասիայի և Ամերիկայի միջև յեղած տարածությունների հայտնագործությունների նկատմամբ լայն հասարակության հետաքրքրությունը ծագում ե միայն XVIII դարի վերջում, յերբ Կուկի վերջին ճանապարհորդությունն առաջացնում ե անթիվ խոսակցություններ: Հենց այդ ժամանակ են սկսում լույս տեսնել, գլխավորապես գերմաներեն լեզվով, ռուսների հայտնագործությունների մասին ավելի մանրամասն նկարագրություններ և ծանրակշիռ աշխատություններ: Կուկը բարձր եր դասում Բերինգի և Չիրիկովի ծառայությունները, և այժմ, համոզվելով նրանց տեղեկությունների ճշտությանը, ե՛լ ավելի յե հետաքրքրվում այն ամենով, ինչ վերաբերում եր ռուս ծովագնացներին: Ռուսների մասին ընդհանրապես այնքան քիչ գիտեյին, վոր նրանց գրեթե հաշվում եյին այնպիսի հազվադյուտ բան, ինչպես «հնդիկներն» եյին:

Յերբ հոկտեմբերի 3-ին նավերը խարսխում են Սամհանութկի ծովախորշում, և բանվորներն սկսում են նորոգել ու կարկատել առագաստները, իսկ նավաստիները ցրվում են ջուր և կենսամթերք փնտրելու, այդ ժամանակ բնիկներն սկսում են վաճառել տափակաձուկ և առավոտից մինչև յերեկո իրենց մակույկներով պտտում են նավի շուրջը: Հինգ որից հետո նրանցից մեկը պահանջում ե տեսակցություն ունենալ «Վճռականության» նավապետի հետ: «... Ունալաշկայի բնիկներից մեկը, վորի անունը Դեռամուշկ եր, ամսի 8-ին ինձ մատուցեց մի շատ տարորինակ նվեր, իհարկե, նկատի ունենալով այն վայրը, վորտեղ յես գտնվում եյի: Այդ՝ հաճարի հաց եր կամ, ավելի ճիշտը, գաթա, վորը հացի ձև ուներ, մեջն ել ձուկ, վրան պղպեղ արած: Այդ մարդը նույնպիսի նվեր և մի նամակ մատուցում ե կապիտան Կլարկին, յերկրորդ նամակն ել ինձ: Յերկու նամակն

ել գրված եյին այնպիսի լեզվով, վոր նավի անձնակազմից վոչ վոք չեր կարողանում հասկանալ: Մենք իրավացիորեն յենթադրում եյինք, վոր այդ նվերներն ուղարկել են վորևե ռուսներ, վորոնք հարևան են մեզ. մենք նույն բանագնացի միջոցով ուղարկեցինք մի քանի շիշ ռոմ, գինի և գարեջրի նման խմիչք, վոր անվանում են պորտեր: Մենք կարծում եյինք, վոր դրանից ավելի լավ բան չեյինք կարող առաջարկել նրանց, և մենք շուտով իմացանք, վոր սխալված չենք յեղել...»

Նվերները տանող կապրալը[1] յերկու որից հետո վերադառնում ե յերեք ռուս արդյունաբերողների հետ, վորոնք մորթիներ եյին գնում և Ունալաշկայում ունեյին տուն, պահեստ և յերեսուն տոննանոց նավակ: Ռուսները գրագետ եյին և ճանաչում եյին արաբական թվերը. Կուկին պատել եր հաճելի զարմանք, վոր նրանք վոչ միայն խելացի եյին, այլև գիտեյին իրենց վայելուչ պահել: Ցավն այն եր, վոր նրանք չեյին իմանում անգլերեն լեզուն, և համապատասխան թարգմանիչ ել չկար: Այնուամենայնիվ Կուկին հաջողվում ե հասկանալ, վոր նրանք տեղյակ են Բերինգի և այլ ծովագնացների մասին, ինչպես նաև ռուս ծովագնաց լեյտենանտ Սինդի մասին, վորը 1766 թվին Ոխոտսկից հասել եր մինչև Ամերիկայի ափը, հյուս. լայն. 66°-ը: Տարորինակն այն եր, վոր բացի Կամչատկայից և Ամերիկայի ափերից, վոր իրենց յերկրին հակադիր եր, նրանց հայտնի չեյին այլ յերկրներ. դիտելով Կուկի քարտեզը, նրանք ասում եյին, թե իրենք չեն կարողացել գտնել քարտեզի վրա նշանակված այդ կղզիները: Կուկը շատ գոհ եր, վոր ռուսները մեծ հարգանքով են վերաբերվում Բերինգի հիշատակին և լավ եյին գիտակցում, վոր իրենց հարստությամբ պարտական են իր կյանքը զոհած այդ խիզախ ծովագնացին: «Վճռականություն» նավում գիշերելուց հետո, ռուսները մեկնում են, խոստանալով բերել իրենց քարտեզները:

«Տասնչորսի յերեկոյան, յերբ պարոն Վեբերը և յես գտնըվում եյինք Սամհանութկիի մոտ մի գյուղում, տեսանք ափ իջնող

[1] Կրտսեր յենթասպա. Ծ. Թ.

ռուսին: Ինչպես հետո յես իմացա, դա գլխավոր անձն եր այս և հարևան կղզիներում: Նրան անվանում եյին Սերաֆիմ Գրիգորիեվ Մին Իսմիլով»[1]:

Ռուսն իր մի քանի ընկերների հետ ճամփար է սարքում անգլիացիների կայանից վոչ-հեռու. յերկու կողմերի այցելությունները ամրապնդում են ծանոթությունը: Իզմայլովը Կուկին հյուրասիրում է սալմոնով և պտուղներով, իսկ կապիտանը ռուսներին հյուրասիրում է ռոմով և պորտերով: Համր զրույցները բավարարում եյին 2 կողմերին էլ. Կուկը իմանում է, վոր Իզմայլովը գիտե աշխարհագրություն, տեղյակ է ռուսների բոլոր ճանապարհորդություններին և Սինդի հետ միասին յեղել է Չուկոտյան հրվանդանում: Բացի այդ, նա ասում եր, վոր ռուսներից վոչ-վոք դեռևս չի յեղել Չուկոտյան հրվանդանի դիմաց ամերիկական ափին. ասում եր, վոր այդ յերկիրը կոչվում է Ալյասկա, և վոչ թե «Ստաշտան Նիտադա», ինչպես այդ գրված եր անգլիական քարտեզներում: Նա պատմում եր նաև ռուսների արշավանքի մասին, նրանք 1773 թվին սահնակներով անցել են Սառուցյալ ովկիանոսը[2], սառույցների վրայով մինչև այն կղզիները, վորոնք գտնվում են Կոլըմայի գետաբերանի մոտ: Ինքը Իզմայլովը 1771 թվին Բոլշերեցկից անցել է Կուրիլյան կղզիները, այնտեղից Ճապոնիա, այնուհետև Կանտոն, վերջապես Ֆրանսիա և Պետերբուրգ: Կուկը վոչ մի կերպ չի կարողանում իմանալ, թե ո՞ւր է մնացել ռուսական այն նավը, վոր այդ ճանապարհորդությունն է կատարել և ի՞նչ նպատակ է հետապնդել այդ արշավանքը:

Իր մի այցելության ժամանակ Իզմայլովը Կուկին ցույց է տալիս յերկու ձեռագիր քարտեզ: Մեկի վրա գծված եր Կամչատկան և ծովեզերքը՝ Օխոտսկից մինչև Ճապոնիա: Քարտեզն ուղղել եր Իզմայլովը. Կուկը հասկանում է, վոր ռուսը չափումների ժամանակ ոգտագործել է տեոդոլիտը: Կամչատկան նրան հայտնի յեր շատ մանրամասն. այնտեղ կային շատ ռուս արդյունաբերողներ, վորոնք վաճառում եյին մորթիներ: Յերկրորդ քարտեզը Կուկի համար ավելի յեր հետաքրքիր: Այնտեղ նշանակ-

[1] Սերաֆիմ Գրիգորյեվիչ սըն Իզմայլով: Ծ. Հ.

[2] Հյուսիսային բևեռային ծովում: Ծ. Թ.

ված եյին այն կղզիները, վոր գտնվում են Ասիայի և Ամերիկայի միջև, նաև Հյուսիսային Ամերիկայի մայր ցամաքի արևմտյան ծայրերը: Կուկն այդ քարտեզի վրա շատ սխալներ և անճշտություններ է գտնում, բայց, համեմատելով այն քարտեզի հետ, վորը կցված եր Մյուլլերի գրքին, դժվարանում է վորոշել, թե նրանցից վո՞րն է ավելի ճիշտ: Իզմայլովն ապացուցում եր իր չափումների ճշտությունը, վորով կարելի յեր ուղղել յերկու քարտեզներն էլ. այս հարցում Կուկը յենթադրություններ եր անում և ստիպված եր խոստովանել, վոր իր հաշվումները դուցե դեռևս կատարելապես ճիշտ չեն. կասկածանք չեր հարուցում միայն Ունալաշկայի տեղադրությունը. դրա կոորդինատները Կուկը հաշվել եր կատարյալ ճշտությամբ:

«Ահա այն բոլորը, ինչ յես կարողացա ռուսներից տեղեկանալ յերկրագնդի այս մասի աշխարհագրության վերաբերյալ. յես համարձակվում եմ կարծել, վոր դրանից ավելի նրանք վոչինչ չգիտեյին. նրանք մի քանի անգամ ինձ վստահացրել են, թե չգիտեն այլ կղզիներ, քան այն, վոր նշանակված են իրենց քարտեզներում, վոր իրենց ազգի նավերից վոչ մեկը չի յեղել Ամերիկական մայր ցամաքի հյուսիսային յեզերքներին, բացի այն յեզերքներից, վոր գտնվում է Չուկոտյան յերկրի դիմացը»:

Կուկը Իզմայլովից բաժանվում է իբրև բարեկամ, հանձնում է նրան Ծովակալության լորդերին հասցեագրված իր մի նամակը, վորին կցում է Ամերիկայի ափերի և հայտնագործած կղզիների քարտեզը: Իզմայլովը խոստանում է դարնանը ուղարկել Օխոտսկ, վստահ լինելով, վոր մի տարուց հետո կլինի Պետերբուրգում: Իր հերթին նա Կուկին նամակներ է տալիս՝ հանձնելու Կամչատկայի նահանգապետ մայոր Բեմին և Պետրոպավլովսկի նավահանգստի պետին: Կուկը նվիրում է Իզմայլովին մի հատ Օկտանտ[1] և բացատրում է նրա գործադրության յեղանակը:

Մի ուրիշ ռուս, վորի հետ ծանոթանում է Կուկը, Յակով Իվանովիչ Սապոժնիկովն եր. դա այն փոքր նավի պետն եր, վորը կանգ եր առել Ումանոկա կղզու ծովախորշում: «Նա շատ հա-

[1] Օկտանտն անկյունաչափ գործիք է, վորն ունի շրջանի ութերորդական մասը: Ծ. Հ.

մեստ եր, չկամեցավ փորձել մեր Թունդ խմիչքները, վոր խիստ սիրում եյին այդտեղ պատահած նրա հայրենակիցներից շատերը»:

Անգլիացիք իրենց հերթին այցելում եյին ռուսների տները։ Կուկը հարկ է համարում մանրամասնորեն նկարագրել այդ չտեսնված մարդկանց կերակուրներն ու հագուստը: «Ռուսները կարողանում են համեղ դարձնել ամենասովորական կերակուրները։ Յես կերել եմ կետի միս, վոր պատրաստել եյին նրանք, և գտել, վոր շատ համեղ է: Նրանք սալմոնի խավյարից պատրաստում են պուդինգի նման մի բան, վոր տորորում են և տապակում. այդ փոխարինում է նրանց հացին և այնքան էլ վատ չե... Նրանք հագնում են վարտիկ, մորթե գլխարկ, ճթկավոր բարձր կոշիկներ, վորի ներբանն ու վերի կաշին ռուսական են, իսկ ճիտքը՝ շատ պինդ աղիքներից: Յերկու պետն էլ, և՛ Իսմիլովը, և՛ Իվանովիչը հագած են միտկալի բաճկոն և ուրիչների նման մետաքսե պատմուճան... Մորթու առևտրականները ժամանակ առ ժամանակ հերթափոխվում են: Նրանք, վորոնց մենք տեսանք, յեկել եյին 1776 թվին Ոխոտսկից և պետք է վերադառնային 1781 թվին...»:

Կուկը պարզապես համակրում եր ռուս արդյունաբերողներին և արդարացնում «Պետերբուրգի կաբինետի[1]» կարգադրությունները, վորով հրահանգվում եր խիստ միջոցներ գործադրել բնիկների նկատմամբ: Այդ վաճառականների սանձարձակությունը, վորոնք ցարական հրամանները բացատրում եյին ըստ իրենց հասկացողության, դաժանորեն թափվում եր ստրկացվածների գլխին: Մայրաքաղաքից յոթը սար ու յոթը ձորի յետև գտնվող ծայրամասերի կառավարիչները ծածկում եյին արդյունաբերողների մեղքերը, քանի վոր վերջիններիս այդ բարեհաճության համար խոշոր տուրք եյին վճարում: Կուկն արդարացնում եր նաև վաճառականներին, համարելով նրանց վարմունքը միակ միջոցը՝ բնիկների վատ հակումներն ուղղելու համար: Դժվար եր ճանաչել նախկին ազատամիտին, վորը յերազում եր մի ժամանակ ազատության և յեղբայրության մասին, մարդասերին, վորը քա-

[1] Ցարական կայսերական կառավարությունը: Ծ. Թ.

րոզում եր մեղմ և խնամքով վերաբերմունք ունենալ «վայրենիների» նկատմամբ: Ըստ յերևույթին, իր սեփական փորձերի անհաջողությունները հիասթափություն եյին առաջ բերել և տարիների ընթացքում այդ տեսակետները տեղի եյին տվել, յեթե վոչ այլ «հայտնագործողների» սովորական, կոպիտ քմահաճույքին, ապա, համենայն դեպս, ներգործության ավելի սովորական և հեշտ յեղանակներին, վոր ընդունված եյին յեվրոպացիների կողմից և թույլատրում եյին ուժ գործադրել, ազդել նախնական մարդու կիսաանասնական բնազդի թույլ կողմերի վրա:

Դեռևս այս վերջին ճանապարհորդության սկզբից Կուկը նկատելի կերպով փոխում է իր գործելակերպը բնիկների հետ շփվելիս. Նա ավելի սակավ է զսպում իրեն և նրա վարմունքի մեծ մասը չեր կարելի վերագրել բացառապես դյուրաբորբոքությանը. Նա կատարում եր այն մտածված կերպով, առանց նախկին դյուրաբորբոքության և կրում է սիստեմի բնույթ: Վո՛չ խելքը, վո՛չ էլ բարությունը չօգնեցին նրան՝ հաղթահարելու իր շրջապատի բազմաթիվ ազդեցությունները, տեսակետները և ավանդությունները: Բոլոր տեսակետներից շատ ավելի բարձր կանգնած լինելով իր բազմաթիվ ժամանակակիցներից, նա չի կարողանում հարթել մի այլ ճանապարհ և վերջնականապես ազատագրվել իրեն կաշկանդող կապանքներից: Այդ պատճառով, գուցե, այդ ակամա սխալը, այն, վոր չի կամեցել զսպել իրեն, փնտռել այլ, ավելի բարեհաջող ուղիներ՝ ծագող բախումները լուծելու համար, պատճառ է հանդիսացել նրա բախտավոր կյանքի վողբերգական վերջավորությանը:

Վճռված եր Ունալաշկայից ուղղակի գնալ դեպի Սենդվիչի կղզիները, վորտեղ պետք է մնային ձմռան մի քանի ամիսները, բոլոր անհրաժեշտ բաների պաշար պատրաստեյին և ապա յետ դառնային դեպի Կամչատկա, այն հաշվով, վոր այդտեղ հասնեյին մայիսի կեսերին:

Նոր՝ 1779 տարվա առաջին որն սկսվում է Սենդվիչի կղզիներից մեկի մոտ, խիստ մառախուղով և անձրևով: Փոթորիկների պատճառով քայքայված նավերը, իրար կորցնելով, յերկու շաբաթվա ընթացքում խուսանավում են մառախուղի մեջ ափերի մոտ, փնտռում են հարմար ծովախորշ, զգուշաբար իրենց հե-

ռու չեն պահում խութերից, վորոնք փրփրում եյին ուժեղ ալեկոծությունից:

Վերջապես 1779 թ. հունվարի 16-ի լուսաբացին յերևում ե մի ծովախորշ, վորը տեսքով հարմար ե թվում կանգ առնելու համար: Հետախուզելու համար Կուկն ուղարկում ե լեյտենանտին. Այդ ժամանակ նավերին շրջապատում են բազմաթիվ պիրոգներ, լիքը մարդկանցով, խոզերով և պտուղներով: Նավատորմիղը բաղկացած եր հազարավոր մակույկներից: Բնիկներից վոչ վոք զինված չեր. ուստի նրանց տրամադրությունը պարզ եր Կուկին: Ինչպես միշտ, այդպիսի ամբոխում գտնվում ե մեկը, վորը գողանալով «Վճռականություն» նավի մի մակույկի ղեկը, դիմում ե փախուստի. Կուկը վճռում ե ոգտվել այդ հանգամանքից և բնիկներին ցույց տալ հրազենի ուժը: Նա հրամայում ե փախչող պիրոգից վերև յերեք անգամ կրակել հրացանից և հրասանդից: Դրանից վոչ վոք չի տուժում, բայց շշմած բնիկները փախչում են դեպի ափ. Նրանց խաղաղ տրամադրությունը փոխվում ե տագնապալի աչալրջության: Նրանք չեն հասկանում կրակոցի նշանակությունը, քանի վոր վոչ մի սպանված և վիրավոր չի լինում: Շուտով հանգստանում են և հաջորդ որը, յերբ նավերը մտնում են ծովախորշ, խաղաղ հետաքրքրասեր ահագին ամբոխ դիմավորում ե ոտարերկրացիներին:

Կուկը գոհ եր այդպիսի ընդունելությունից. Նրան թվում եր, թե վերջապես հասել ե ցանկալի ճանաչմանը: Այդ որը նա գրում ե իր որագրի վերջին եջը, վորտեղ վերջին անգամ գեղեցիկ կերպով գրի յե առնված նրա կյանքը, վորը նա ամբողջովին զոհեց նվիրական նպատակին.—

«Առավոտյան ժամը տասնմեկին մենք խարսխեցինք ծովախորշում (վորին բնիկները անվանում են Կարակակուա) [1] տասներեք սաժեն[2] յերկարության, ավազոտ հատակով, հյուսիս-արևմտյան ափից մեկ քառորդ մղոն հեռու... Իմ ճանապարհորդությունների ընթացքում յես յերբեք չեմ տեսել այդքան բազմամարդ ամբոխ հավաքված մի տեղում, վորովհետև բացի նրանից,

---

[1] Ճիշտը—Կյալակյակուա: Ծ. Թ.

[2] 2,134 մետր: Ծ. Թ.

վոր մոտեցել եյին մեզ մակույկներով, ծովախորշի ամբողջ ափը ծածկված եր հանդիսատեսներով, մյուսները լողում եյին մեր շուրջը խմբերով, յուրաքանչյուրում մի քանի հարյուրական մարդ և նրանց կարելի յեր ընդունել ձկների գոյացրած լաստերի տեղ: Այդ արտասովոր տեսարանը մեզ շատ ապշեցրեց: Նավում քիչ եյին այնպիսի մարդիկ, վոր ցավ զգային դեպի հյուսիս անցք վորոնելու իմ կրած անհաջողության առթիվ. յեթե այն հաջողվեր, հազիվ թե մենք առիթ ունենայինք յերկրորդ անգամ կանգ առնելու Սենդվիչի կղզիներում և հարստացնեյինք մեր ճանապարհորդությունն այնպիսի հայտնագործությամբ, վորը, ըստ յերևույթին, շատ տեսակետներից պետք ե ամենանշանակալիցը լինի Խաղաղ ովկիանոսի ընդարձակ տարածության վրա յեվրոպացիների կողմից մինչ այժմ կատարածներից»:

ՓԵՏՐՎԱՐԻ ՏԱՍՆՉՈՐՍԸ

Ռուհիհեե—դա Սենդվիչի արշիպելագի ամենամեծ կղզին ե: Կյալակյակուա ծովախորշը ձգվում ե խորը կիսաշրջանով: Յերկու կողմից ցածրադիր հրվանդաններ են: Հյուսիսայինը դա փակ ե և լերկ: Այդտեղ են բնիկների խրճիթները: Գյուղի անունն ե Կոուրոուա: Դրանից դենը, ժայռերի յետևը, վոր անմատչելի յե ծովից, կոկոսի արմավենու անտառ ե. դրա կողքին մի այլ մեծ գյուղ ե Կակուա անունով: Հարավային հրվանդանի լանջերում մշակված դաշտեր են և արմավենու անտառներ, վորոնք ձգվում են դեպի կղզու խորքերը: Անտառներում բնիկների խրճիթներն են: Սև կորալի խութերը ձգվում են ծովախորշի ամբողջ յերկարությամբ: Ուժեղ ալեկոծության ժամանակ անհնարին ե մոտենալ ափին: Ափը միայն Կակուա գյուղի մոտ ե հարթ և ավազուտ: Այդտեղ, մի կողմից, Մորաիի գերեզմանոցն ե, իսկ մյուս կողմից՝ ջրհորը:

Նավերը կանգ են առնում հյուսիսային հրվանդանի մոտ: Բնիկների առաջնորդները գալիս են «Վճռականություն» նավը և, ներկայանալով Կուկին, արտահայտում են հարգանքի ամեն տեսակի նշաններ: Նրանք իրենց հետ բերել եյին հին քուրմ Կոաա-ին, վորը կարճահասակ եր և նիհար, արտասվալի հիվանդ

աչքերով, կնճռոտ մարմնով, ծածկված թարախապալար վերքերով: Մեռուկը, հարգանքի բարև տալով, կռացած մոտենում է Կուկին, ապա նրա ուսերի վրա գցում կարմիր թիկնոց և, աղոթք փնթփնթալով, վոտքերի առաջ դնում է մորթած խոճկորը: Այդ ծիսակատարությունը զարմացնում է Կուկին. կարմիր թիկնոցն ու խոճկորը բնիկները մատուցում եյին միայն աստվածների կուռքերին: Յերբ յերեկոյան Կուկը Քինգի և Բեյլի հետ դուրս են գալիս ափ, նրանց առջևից քայլում են չորս հոգի, վորոնք ձեռքում բռնած եյին ձողեր շան մազի փնջերով և աղաղակում եյին միևնույն նախադասությունը. այդ խոսքերի մեջ ամենից բարձր հնչում եր «Որոնո» բառը: Բնիկների ամբոխն իսկույն ցրվում եր. մի քանի բնիկ խրճիթների մոտ ընկնում եյին յերեսի վրա, մնում եյին անշարժ պառկած: Հին քուրմի այդ հնարքը, վորի շնորհիվ ինչ-վոր անհասկանալի դիտավորությամբ աստվածացվում է Կուկը և նրան աստծու անուն է տրվում, բնիկների կողմից ընդունվում է լրջությամբ: Որոնո.—այդ այն բարձր եյակն է, վորը խորհրդավոր ու թևավոր սլրողներով յեկել է աստվածների յերկրից, հանդիսավորությամբ քայլում է գետնի վրա և առաջնորդվում մորաի-ի ծառաներով: Սրբազան ձողերը, տաբու նշանը վկայում եյին աստվածների խիստ արգելքի մասին, վորի խախտողն անպայման կմեռնի: Տաբուն փակում է մորաիի տաճարների մուտքը, արգելում է սնունդ ընդունել, պատում է ծովն ու ցամաքը. այդ դեպքում վոչ մի մարդ չի կարող մնալ այդ տեղում: Տաբու—աստվածների հին որենքն է, վորին միայն տեղյակ են աստվածների հետ խոսող քուրմերը:

Կոաա-ն գլխավորում է Կուկին և նրան տանում մորաիի ներսը: Այնտեղ այլ քուրմեր շրջապատում են նրանց և խմբովին յերգում: Տաճարի ներսում կիսաշրջանաձև դրված եյին փայտե տասներկու կուռքեր: Կոպիտ ձևով քանդակած մարդկային այդ դեմքերը ծամածռված ժպտում եյին: Նրանց առջև կար բարձր պատվանդան, ինչպես տահիտական տաճարներում: Այստեղ ել, այնտեղի նման, խոզի նեխվող դիակը ծածկված եր շաքարեղեգնի տերևներով. այդտեղ դրված եյին նաև կոկոսի ընկույզներ, բանաններ և հացի ծառի պտուղներ: Կոաան Կուկին մոտեցնում է պատվանդանին և իր անատամ բերանով կրկին փնթփնթում

անհասկանալի աղոթքի յերկարաձիգ խոսքեր: Այնուհետև Կուկին առաջարկում է իր և այլ քուրմերի հետ միասին բարձրանալ պատվանդանի վրա: Այդտեղ քուրմերը յերկար ու ձիգ յերգում են մերթ միասին, մերթ առանձին:

Տարորինակ եր Կուկի ուղեկիցների համար դիտել, թե ինչպես իրենց պետը կարմիր թիկնոցն ուսերին կանգնած եր կիսախարխուլ պատվանդանի վրա յերկու կիսամերկ վայրենի մարդկանց միջև, վորոնք խռպոտ ձայնով, կարծես թաղման յերգ եյին յերգում: Կուկը համբերությամբ և ուշադիր կատարում եր այդ ծեսերը և, Կոաաի ցուցմունքով իջնելով պատվանդանից, յերեսի վրա պառկում գետնին մեջտեղի կուռքի առաջ, այնուհետև բարձրանում տեղից և համբուրում նրան: Սկսվում է հյուրասիրությունը: Կուկը նույն հնազանդությամբ թողնում է, վոր իր դեմքին, ծոծրակին, ձեռքերին և ուսերին քուրմը քսի կոկոսի ընկույզի կորիզը, վոր ծերուկը ծամել եր և փաթաթել լաթի մեջ: Յեվ յերբ, Կոաան մեկնում է իր կեղտոտ, վերքերով ծածկված ձեռքը Կուկի բերանը՝ տապակած խոզի միս դնելու, նա չի կարողանում հաղթահարել իր զզվանքը: Նայելով դեպի իրեն մեկնած յուղոտ մատները, վորոնք մի կես ժամ առաջ շոշափում եյին կեղտոտ պատվանդանն ու նեխված դիակը, Կուկը հրաժարվում է ուտելուց: Կոաան այդ հասկանում է իր ձևով. այդ մսից մի կտոր դնում է իր բերանը, ծամում և ապա կրկին առաջարկում: Կուկը այլևս չի համբերում. նա ամեն կերպ հասկացնել է տալիս, վոր շուտով պետք է վերադառնա նավ: Նույն պատիվներով նրան ճանապարհ են գցում մինչև մակույկը: Այդ տարորինակ և ծանր զբոսանքը Կուկին ուրախացնում եր մի բանով՝ բնիկները բարյացակամ եյին տրամադրված:

Անկասկած է, վոր քուրմերը և առաջնորդները,—վորոնք Կուկին գլխավորել եյին այդպիսի պատվով, յեթե նույնիսկ վորևե քաղաքական գաղտնի նպատակ ունենային տեղական գործերի կամ ինչ-վոր շահերի կապակցությամբ, ապա միևնույն է, թե Կուկը լիներ նրանց ավանդության խոստացած իսկական կիսաստվածը կամ պարզապես մի հարմար անձ՝ ամբոխին խաբելու համար, մի բան, վոր նա նրանց հարկավոր եր յերկու դեպքում ել,—անձնապես Կուկի դեմ վոչինչ չեյին կարող ունենալ և

չունեյին, ինչպես այդ ցույց տվեց նրանց հետագա ամբողջ վարմունքը։

Ընդունելությամբ գոհ «աստվածը» զբաղվում է իր սովորական գործերով, կայմերի և առագաստների նորոգությամբ, խոզի միսը աղ դնելու նոր յեղանակով։

Բնիկները առավոտից յերեկո պտտում եյին նավերի շուրջը, առևտուր և թամաշա անում. նրանք քանիցս տեսել են Կուկին ամենասովորական աշխատանքներ կատարելիս. բայց այդ չեր խանգարում, վոր նրանք յերկյուղածությամբ ծղեն թևերը և յերեսի վրա պառկեն պիրոգում, յերբ Կուկը նավում եր մակույկի մեջ քուրմի ուղեկցությամբ, կամ ընկնեն նրա վոտքերի տակ, յերբ նա անցնում եր ծովափով։ Քուրմերը տաբու յեն հայտարարում անգլիացիների ճամբարի վրա, վորը տեղավորված եր գերեզմանոցի և քուրմերի տան կողքին. հետաքրքրասերները սրբազան ձողերից շարված ցանկապատի յետևից եյին դիտում աստղաբաշխական գործիքները, զինվորների վրանները և աշխատող հյուսներին։ Քուրմերը Կուկին հրավիրում եյին իրենց տուն և հյուրասիրում. առաջնորդները մատուցում եյին խոզ, կոկոսի ընկույզ, բանան... «Այդպիսի դեպքերում,—սրադրում գրում է Քինգը, Կուկի մահից հետո,—կրտսեր առաջնորդները հաճախ մեզանից թույլտվություն եյին հարցնում ընծաներ բերելու Որոնոյին. յերբ նրանք ստանում եյին այդ թույլտվությունը, այնպիսի տեսքով եյին խոզեր բերում, վոր կարծես ամոթանք կամ վախ եյին զգում...»։

Մի քանի որից հետո, ծովախորշը հանկարծ դատարկվում է, և նավերը մնում են առանց սովորական կենսամթերքի։ Բանից պարզվում է, վոր նրա վրա տաբու յե սահմանված, թագավորի գալստյան պատճառով։ Բնիկներից վոմանք փորձում են խախտել արգելքը։ «Վճռականություն» նավից տեսնում են, թե ինչպես առաջնորդներից մեկը յետ եր տալիս նավարկողներին։ Նավից կրակում են և դրությունն իսկույն վերականգնվում է. բնիկները բերում են կենսամթերքներ։ Նրանցից հետո գալիս է ինքը Տեռեոբու թագավորը, վորը պիրոգի մեջ իր կնոջ և յերեխաների հետ մոտենում է նավին։ Նավերը դիտելուց հետո, վերադառնում է դեպի ափ, Կոուրոուա գյուղը։

Հաջորդ որն սկսվում են հերթական հանդեսները։ Տեռեոբուն շրջագայում է զարդարված պիրոգների հանդիսավոր ուղեկցությամբ։ Առաջին նավում ինքն եր և մյուս առաջնորդները։ Նրանց վրա բարձր սաղավարտներ և թիկնոցներ եյին փետուրներով զարդարված. ձեռքերին—յերկար նիզակներ և դաշույններ։ Յերկրորդ նավում քուրմերն եյին, շրջապատված հսկայական կուռքերով, վորոնք պատված եյին ճյուղերով, փաթաթված կարմիր կտորների մեջ և զարդարված բազմագույն փետուրներով։ Արևի տակ փայլում եյին կուռքերի աչքերը՝ մեջտեղը սև ընկույզ, շուրջը սադափ, կարծես ծամածռություններ եյին անում յերկու շարք շան ատամներով լի բերաններով։ Յերրորդ նավը լիքն եր պտուղներով, մորթած խոզերով։ Քուրմերը հանդիսավորությամբ յերգում եյին։ Շքերթը, պտտելով նավերի շուրջը, գնում է դեպի ափ, վորտեղ անգլիացիների ճամբարն եր։

Կուկը գնում և անձամբ թագավորին հրավիրում է իր վրանը։ Այնտեղ սկսվում է հանդիպման ծիսակատարությունը և Կուկը նորից ստիպված է լինում կատարել յերկար ու ձիգ ծեսեր։ Տեռեոբուն իր թիկնոցը գցում է Կուկի վրա, գլխին դնում է փետուրներով սաղավարտ, ձեռքն է տալիս խայտաբղետ և տարորինակ հովհար։ Գետնին, կապիտանի վոտքերի տակ գցում են թանկարժեք թիկնոցներ, այդտեղ են դնում չորս հատ մորթած խոզ, շաքարեղեգն, կոկոսի ընկույզ և հացի ծառի պտուղ։ Թագավորը Կուկի հետ փոխանակվում է անունով—այդ Խաղաղականի բնակիչների համար ամենահավատարիմ բարեկամության նշանն է։ Այնուհետև յերկար շարքերով շարժվում են քուրմերը։ Նրանց յետևից ծառաները տանում եյին կենդանի խոզերին, բանան և այլ պտուղներ։ Գլխավոր քուրմը պատում է Կուկի մարմինը կտորով և մատուցում խոզի միս։ Սկսում են աղոթել, նախ առանձին, հետո խմբովին, յերկար ու ձանձրալի։

Կուկը գոհունակությամբ ավելորդ անգամ համոզվում է, վոր բնիկները դեպի իրեն լավ են տրամադրված։ Ճանապարհորդությունների շատ տարիների ընթացքում այս առաջին անգամն եր, վոր Կուկը հանդիստ ու վստահ եր բնիկների խաղաղ տրամադրությունների նկատմամբ։

Կուկը պետք է անմիջապես վճռեր յերկուսից մեկը՝ կամ շարունակել ճանապարհը, հույս չունենալով ծովախորշ գտնել, կամ թե վերադառնալ Կյալակյակուա:

Ամեն ինչ վերադառնալու օգտին եր խոսում. Կուկին չեր մնում վոչինչ այլ բան, քան նավերը կրկին տանել Կյալակյակուա: Ուժեղ հոսանքը մղում եր դեպի հյուսիս:

Յերկու օր շարունակ «Վճռականությունը» խուսանավում եր, զգուշանալով խութերից. Նա մերթ մոտենում, մերթ հեռանում եր ծովափից: Փոթորիկը փախցնում է «Հայտնագործություն» նավը: Վորոտի դղրդյունն ու փոթորկի ձայնը խլացնում եյին թնդանոթների կրակոցները: Միայն յերրորդ որն է յերկինքը բացվում, քամին դադարում, և նավերը, գտնելով իրար, մտնում են Կյալակյակուայի ծովախորշը և խարսխում համարյա նախկին տեղում:

Վնասված կայմը և առագաստները դուրս են բերում ափ, վորտեղ նույն մոգական գավազաններով քրմերի օգնությամբ արգելում են մուտք գործել ճամբարի ցանկապատը. Լեյտենանտ Քինգը կրտսեր յենթասպայի և վեց զինվորների հետ ճամբար է սարքում և պահպանում բանվորներին:

Առաջինը, վոր անգլիացիների աչքին է ընկնում, այդ՝ ծովախորշի կատարյալ դատարկությունն եր: Յերբեմն ծովափի մոտով մեկ կամ յերկու պիրոգ անցնում եյին մի գյուղից մյուս գյուղ: Տեղի չունեյին նախկին հանդիպումները, չկար նույն խանդավառ ամբոխը, վոչ մի ուրախություն վերադարձողներին տեսնելու համար: Քուրմերը բացատրում են, թե թագավորը մեկնել է և տաբու յե հայտարարել ծովախորշի վրա: Ինչո՞ւ: Վոչ Կուկը, վոչ ել նրա ուղեկիցները չեյին հավատում այդ բացատրությունների անկեղծությանը: Սպաներից միքանիսն առաջին իսկ որվանից կասկածանքով են վերաբերվում բնիկների այդպիսի վարմունքին: Կուկն անտեղի յեր համարում նրանց կասկածանքները, թեպետ և ինքն ել տեսնում եր, վոր ինչ-վոր փոփոխություն է կատարվել, բայց թե ինչ բան եր այդ և ինչո՞ւ բնիկներն իրեն չեն դիմավորել առաջվա նման, չեր կարողանում հասկանալ: Այն սակավաթիվ բնիկները, վորոնց հետ հաջողվում եր խոսակցել, զարմանք եյին հայտնում նավերի վերադառնալու

առթիվ. անգլիացիների բոլոր բացատրություններն անկարող եյին համոզել նրանց, վոր Կյալակյակուայում նորից կանգ առնելը յեղել է հարկադրական: Սակայն բոլոր այդ տագնապալից նշանները ցրվում են հաջորդ որը, յերբ վերադառնում է Տեռեոբուն և կրկին թույլատրում փոխանակությունը... «Վորչա՜փ դժվար է,—գրում է Քինգը,—անվիճելի յեզրակացություններ անել մի վորևե ցեղի գործողություններից, վորի սովորություններն ու բարբառը անկատար չափով են հայտնի... կարող է պատահել, վոր առաջին հայացքից քիչ նկատվեն դժվարությունները,—վոր հանդիպում են այն մարդկանց, վորոնք պետք է պարզեն իրենց կատարելիք քայլերը նման պարագաներում, ինչպիսին մերն եր,—յերբ ամենաչնչին սխալը կարող է առաջացնել ամենաճակատագրական հետևանքներ...»

Սպան, վորին մի ջոկատով ուղարկում են ջրի պաշար վերցնելու, վերադառնում է Քինգի մոտ, խնդրելով օգնություն. ջրհորի մոտ հավաքված միքանի առաջնորդներն արգելում եյին վարձված բնիկներին օգնել նավաստիներին տակառներով ջուր կրել: Սպան հավատացնում եր, վոր առաջնորդների վարմունքը խիստ կասածելի յե. Նա կարծում է, վոր նրանք բռնությամբ արգելելու յեն ջուր վերցնելը: Քինգը սպայի հետ ուղարկում է հրացանով և սուսերով զինված մի զինվոր: Շուտով սպան կրկին վերադառնում է և պատմում, վոր բնիկները զինվել են քարերով և խիստ գրգռված են: Այն ժամանակ Քինգն ինքն է գնում ջրհորի մոտ, իր հետ վերցնելով նաև մի զինվոր: Բնիկները, տեսնելով նրան, իսկույն վայր են գցում քարերը և, Քինգի ու մի առաջնորդի բանակցություններից հետո, ցրվում: Աշխատանքը վերսկսվում է:

Այդ ժամանակ Կուկը ափ է իջնում և, Քինգից իմանալով կատարված դեպքի մասին, հրամայում է կրակել ամեն մեկի վրա, ով արգելք կհարուցի աշխատել: Լեյտենանտ իսկույն կարգադրում է կապրալին պահակների զենքերը լցնել փամփուշտներով:

Մութն ընկնում է: Դատարկ ծովախորշն ու ափը տագնապալի լռություն են պահպանում: Թեթև ալեկոծությունը զարնում եր ալիքները ժայռերին: Նավերի ուրվանկարը տատանվում եր

Ջրի յերծուփն: Գերեզմանոցից լսվում եյին կացնի հարվածները: Կուկը և Ֆինգը լուռ քայլում եյին դեպի ճամբար: Լեյտենանտը լավ եր ճանաչում հրամանատարին: Նավաղնացության մի շարք տարիների ընթացքում նա ուսումնասիրել եր պետի դժգոհության, անհանգստության ամենափոքր նշանները, դյուրագրգռության պոռթկումները: Այդ լայնաթիկունք, միշտ հանգիստ մարդու հանկարծ կորացած մեջքից, կիտած խիտ ունքերից, առաջին հայացքից, աննկատելի խիստ շարժումներից նա զգում եր զսպած վրդովմունքը: Ամեն բանից յերևում եր, վոր կապիտանը խիստ մտահոգված է կատարված դեպքերով և ինչ վոր անհանգիստ միտք տանջում եր նրան, հանգիստը խլում: Կրակելու մասին խիստ հրամանը հաստատում եր այդ յենթադրությունները: Կուկն ստուգում է հյուսների աշխատանքը, ներս է մտնում այն տունը, վորտեղ նորոգում եյին առագաստները, կրկնում է հրացանները լցնելու մասին:

Կես ժամ չանցած, ծովից լսվում է մուսկետների տրաքտրաքոցը: Կրակում եյին «Հայտնագործություն» նավից: Նավից արագ հեռանում եր մի պիրոգ: Կրակում եյին նրա վրա: Պիրոգի յետևից ընթանում եր նավի մակույկը, վորը հետապնդում եր գողերին: Կուկը ծովափին արագացնում է իր քայլերը: Լեյտենանտին հրամայում է մակույկով զինված մարդիկ ուղարկել պիրոգի առաջը կտրելու: Կես րոպե անց Կուկը և Ֆինգը վազում են ծովափ, շտապելով հասնել բնիկների ափ իջնելու տեղը: Ստիպված եյին վազել, պտտելով ծովեզերյա քարերի շուրջը, ժամանակ կորցնելով: Բնիկները կարողանում են փախչել: Դատարկ պիրոգը տարուբերվում եր ափին: Կուկը, չիմանալով, վոր «Հայտնագործության» մակույկն արդեն յետ է խլել գողացված իրերը, հետապնդում է փախչողներին: Տարվելով հետապնդումով, նա մոտ յերեք մղոն հեռացել եր ճամբարից. այդ ժամանակ է գլխի ընկնում, վոր մութն ընկնում է և անզգուշություն կլինի շարունակել հետապնդումը: Պատահող բնիկները ցույց եյին տալիս փախչողների ուղին, բայց Կուկը գիտեր, վոր այդպիսի դեպքերում չեր կարելի հավատալ նրանց, ուստի վերադառնում է ծովափ:

Այնտեղ նրան մի նոր անախորժություն եր սպասում: Բանից

պարզվում է, վոր «Հայտնագործության» սպան, վորը յետ եր առել գողացված իրերը, նավ վերադառնալիս, տեսնում է վազող Կուկին և կարծում, թե պետք է գրավի փախչող պիրոգը: Յերբ նա կամենում է կատարել իր դիտավորությունը, գալիս է բնիկ առաջնորդներից մեկը և հայտնում, վոր պիրոգը պատկանում է իրեն և նա այն յերբեք չի տա: Այդ ժամանակ մոտենում է Ֆինգի ուղարկած մակույկը՝ զինվորներով, և վեճը կրկին բորբոքվում է: Զինվորներից մեկը թիով խփում է առաջնորդի գլխին և նրան վայր գցում: Բնիկներն իսկույն հավաքվում են և քարկոծում զինվորներին, վորոնք լողալով ծածկվում են ժայռի յետևը: Բնիկները թափվում են մակույկի մեջ և հափշտակում այն բոլորը, ինչ վոր կար նրա մեջ: Բարեբախտաբար, ուշքի յեկած առաջնորդը դադարեցնում է հափշտակությունը, վերադարձնում մակույկը, գողացած իրերի մի մասը և վստահեցնում իր խաղաղասիրության վերաբերյալ: Նա, կարծես, վշտացած եր կատարվածի պատճառով և վախից հարցնում եր՝ արդյո՞ք Որոնոն իրեն չի սպանի, արդյո՞ք կարող է ինքը վաղը նավ բարձրանալ: Աշխատում են նրան հանգստացնել, վոր կներեն. հանգստանալով նա իր քիթը քսում է սպայի քթին. կղզու բնակիչների սովորության համաձայն, այդ նշանակում եր կատարյալ հաշտություն և բարեկամություն: Այնուհետև նա վերադառնում է գյուղ:

Զեկուցումն էլ ավելի յե փչացնում Կուկի տրամադրությունը: Նա վոչինչ չի պատասխանում, բայց յերևում եր, վոր հազիվ եր զսպում իրեն: Զինվորների մոտ, վորոնք գրգռված եյին բնիկների վարմունքից, առավել ևս տեղին չեր նկատողություն անել չափից անցած սպային: Կուկն իր լեյտենանտի հետ մակույկ է նստում և մեկնում «Վճռականություն» նավը: Աստղալից վրանը ծածկում եր ծովախորշի ջրերը և արտացոլվում նրանց մեջ: Ջրի յերեսին ոձաձև փայլում եյին նավերի լույսերը: Հրեշների նման սևին եյին տալիս կղզու լանկյաց ժայռերը:

— Յես շատ եմ վախենում,—ցածր ձայնով ասում եր Կուկը, վոր բնիկներն ստիպեն ինձ խիստ միջոցներ գործադրել...— Նրա ձայնի մեջ զգացվում եր թախիծ և ցավ.—Բայց, գիտեք, Ֆինգ, չի կարելի թույլ տալ, վոր նրանք կարծեն, թե հաղթանակ են տարել մեզ վրա...

Ձայնը հնչում էր ավելի վստահ։

Նավ վերադառնալով, Կուկը հրամայում է քշել այդտեղից մնացած բոլոր բնիկներին։ Լեյտենանտ Քինգը ստուգում է ժամացույցը, կարգադրություններ անում կրտսեր սպաներին և վերադառնում ծովափ։ Ճամբարում նա կրկնապատկում է պահակների թիվը։ Այդ նախազգուշությունն ավելորդ չէր. ժամը տասնմեկին զինվորներից մեկը նկատում է հինգ բնիկի, որոնք գաղտագողի մոտենում էին դերեզմանոցի կողմից։ Լսելով զինվորների շարժումը, նրանք ծածկվում են մթության մեջ։ Կեսգիշերին նրանք յերևում են կրկին. Նրանցից մեկը սողում է շատ մոտ այն վրանին, որտեղ աստղաբաշխական գործիքներն էին տարքված։ Պահակը կրակում է։ Բնիկները փախչում են։

Հաջորդ օրը, փետրվարի 14-ը սկսվում է տագնապով։ «Հայտնագործություն» նավից տեղեկացնում են, որ գիշերը բնիկները խարսխանիշ լողանից արձակել են մակույկը և իրենց հետ տարել։ Այդ լուրը հատում է Կուկի համբերությունը։ Հարկավոր էր կտրուկ կերպով վերջ դնել կղզիբնակների ըմբոստությանը։ Եթե խելոք միջոցներ ձեռք չառնեն, թուլություն ցույց տան, ապա բնիկները, հաջողությամբ թևավորվելով, իրենց արարքները կհասցնեն զինված հարձակման և, առաջացնելով իսկական պատերազմ, կխանգարեն աշխատանքներին և կենսամթերքներ չեն տա։ Պետք էր անմիջապես վերադարձնել մակույկը և խիստ պատժել մեղավորներին։ Կուկը վճռում է գործադրել մի միջոց, որը քանիցս հաջողությամբ փորձել էր թե՛ Նոր Զելանդիայում և թե՛ Ընկերության կղզիներում, այն է՝ պատանդ վերցնել թագավորին և նրա տղաներին։ Եթե այդ հաջողվի, մակույկը կվերադարձնեն, գողերին կհանձնեն, և ամեն ինչ արագորեն կվերականգնվի։ Միայն թե Տեռեոբուն չփախչի, վախենալով կատարված դեպքերից։

Կլարկը դեռևս հիվանդ էր. Կուկն ստիպված միայնակ էր գլուխ բերում այդ գործը։ Նրա առաջին կարգադրությունն է լինում՝ գրավել այն բոլոր պիրոգները, որ կփորձեն փախուստի դիմել ծովախորշից։ Զինված զորախմբերը դիրք են բռնում յերկու նավերի մակույկների մեջ, որոնք շարվել էին ծովախորշի

յերկարությամբ։ Հրետանուն կարգադրված էր կրակել փախչողների վրա։

Առավոտյան ժամը ութի մոտ, Կուկը, ծովային հետևակի լեյտենանտ Ֆիլիպսը և ինը զինվոր մակույկ են նստում։ Կուկը ձեռքին բռնել էր փամփուշտով լցված հրացանը։ Մակույկում կանգնած, նա իր վերջին կարգադրություններն էր տալիս «Վճռականություն» նավի վրա մնացողներին և լեյտենանտ Քինգին, որ ափից յեկել էր առավոտը։ Անսովոր էր հնչում կապիտանի ձայնը, նրա փոքր աչքերն անհանգիստ փայլում էին, նրա բոլոր շարժումներում զգացվում էր վատ թաքցրած վրդովմունքը։ Շտապելու պատճառով, նա չէր թողնում, որ ուրիշը խոսի, ընդհատում էր... «Վերջին կարգադրությունները, որ յես ստացա նրանից՝ հանգստացնել բնիկներին, հավաստելով, որ նրանց ոչ մի չարիք չեն պատճառի. չլքատել իմ փոքրիկ ջոկատը, միշտ լինել պատրաստ...» Քինգը վերադառնում է ճամբար, իսկ մակույկն ընթանում է դեպի Կոուրոուա գյուղը, որտեղ ապրում էր Տեռեոբուն։

Կուկը ազդանշան է տալիս «Վճռականություն» նավի մակույկին, որ կանգ էր առել հյուսիսային հրվանդանի մոտ, հետևել իրեն։ Ափ իջնելով Ֆիլիպսի և զինվորների հետ, գնում է գյուղ։

Հանդիպումը, կարծես, սովորականի նման էր. բնիկները յերեսի վրա ընկնում էին գետնին, մատուցում էին խոզեր։ Ուրեմն, ոչ ոք չէր կասկածում Կուկի դիտավորությունները։ Կանչելով թագավորի տղաներին, Կուկը խնդրում է իրեն տանել Տեռեոբուի մոտ։ Ծերուկը ննջում էր խսիրի վրա։ Կուկը պատմում է նրան գողության մասին, դիվանագիտորեն ավելացնելով, որ նրան մեղավոր չի համարում, և հրավիրում է նրան իրեն հետ նավ գնալ։ Տեռեոբուն չի տատանվում ոչ մի րոպե։ Նրա տղաները նստում են մակույկ և սպասում հորը, որը քաշ էր գալիս Կուկի կողքին։ Միքանի մերձավորներ գալիս էին յետևից։ Այդ ժամանակ ծովախորշում լսվում են մուսկետի կրակոցներ՝ նավաստիները մակույկներից կրակում են հեռացող պիրոգի վրա։

Թագավորի յետևից յեկող պառավը ճչում է, կանչելով Տե-

ռեսրուժ կանանցից մեկին՝ յերկու տղաների մորը: Նա առաջ է վազում արտասուքն աչքերին, ընկնում է ծերունի ոտքերը, աղերսելով չգնալ օտարերկրացիների մոտ: Նրանից հետո գալիս են յերկու առաջնորդ, նույնպես հորդորում են չնստել մակույկ և ստիպում են նստել գետնին: Կրակոցներից և ծովախորշում շարված սպառազինված մակույկներից վախեցած բնիկները խումբ-խումբ հավաքվում են թագավորի մոտ և շրջապատում անգլիացիներին: Գործն ընդունում է անսպասելի ընթացք:

Լեյտենանտ Ֆիլիպսը հարցնում է Կուկին,—լավ չէր լինի արդյո՞ք դուրս բերել զինվորներին ամբոխի միջից և մարտական կարգով շարել նրանց յերեսուն քայլի վրա ծովափին՝ ժայռերի մոտ: Կուկը համաձայնվում է: Ամբոխը ճանապարհ է տալիս զինվորներին և նորից շրջապատում Կուկին: Կուկը ջերմ կերպով հորդորում է Տեռեոբուին իրեն հետ գնալ և նույնիսկ ստիպում է նրան գետնից բարձրանալ. սակայն կանանց սաստկացող վայնասունը, առաջնորդների աղաղակները ազդում են. նրանք ուժով յետ են պահում թագավորին: Կուկն ստիպված փոխում է իր վճիռը: Նա ասում է Ֆիլիպսին, վոր խաղաղարար վոչինչ չի լինի անել, սակայն չի էլ կամենում զուր տեղը արյուն թափել: Վախից դողացող ծերունին, լացող կանանց նա խղճում է. իսկ ամբոխի մեջ լսվող սպառնական աղաղակները վոչ մի լավ բան չէյին խոստանում: Նա վճռում է յետ դառնալ և Ֆիլիպսի հետ դանդաղորեն գնում է դեպի ափ: Դժգոհ ամբոխն աղմկում էր:

Կուկը յետ չի նայում: Նա չի տեսնում, թե ինչպես ծովեզերքի մյուս կողմից սրընթաց վազում է մի բնիկ, հրահրում ամբոխին, ընկնում թագավորի ոտքերի տակ և պատմում, վոր օտարերկրացիները մակույկից կրակել և սպանել են մի առաջնորդի, վոր նավում էր պիրոգի մեջ: Կուկը չի տեսնում, թե ինչպես են փախցնում Տեռեոբուին, իսկ տղամարդիկ մի վայրկյանում կանանց ու յերեխաներին տուն ուղարկելով, ծածկվում են ռազմական վահաններով և զինվում նիզակներով ու քարերով: Միայն իր յետևից վազողների ոտքի ձայնն է ստիպում նրան յետ նայել: Ահագին հասակի մի բնիկ կանգնած էր նրա առաջ, թափահարում էր նիզակն ու դաշույնը: Կուկը տեսնում է նրա արյունով լի աչքերը և կատաղի սպառնալիքներ թափող բե-

րանը: Կուկը բղավում է նրա վրա և կրակում կոտորակով, վորից չի վնասվում բնիկի վահանը: Քարեր են տեղում զինվորների վրա: Մի բնիկ դաշույն է բարձրացնում Ֆիլիպսի վրա, բայց սպանվում է հրացանի կոթի հարվածից: Կուկը կրակում է և գնդակով սպանում մի ուրիշին: Ամբոխն աղաղակելով վրա յե տալիս անգլիացիների վրա: Զինվորներն ու նավաստիները մակույկներից դիմավորում են նրանց մուսկետների համազարկով: Չվախենալով կրակից, գազանացած ամբոխը հարձակվում է զինվորների վրա, վորոնք չէյին կարողացել լցնել հրացանները: Սկսվում է ընդհանուր իրարանցում:

Կուկը տեսնում է, թե ինչպես իր զինվորներից մի քանիսն ընկնում են դաշույնների հարվածներից, մյուսներն արյունաթաթախ դեմքով վազում են դեպի մակույկները, մտնում ջուրը: Տեսնում է, թե ինչպես մի բնիկ դաշույնով հարվածում է Ֆիլիպսի թիկունքին, ինչպես լեյտենանտը, մինչև ծունկը ջրի մեջ, յետ է դառնում և կրակելով հրացանից սպանում հարձակվողին:

Կուկը վազում է ջրի մոտ, թափահարում ձեռքերը, գոռում նավաստիների վրա, աշխատելով վերջ տալ հրաձգությանը: Նույնիսկ այդ վերջին րոպեին Կուկը փորձում է արյունհեղության առաջն առնել: Նա կանգնած էր ծովեզերքին նավաստիների և բնիկների միջև միայնակ, անասելի փորձ անելով հաշտեցնել:

Մի հարված ծոծրակին, մյուսը՝ մեջքին, յերրորդը... Ձեռքից ընկնում է հրացանը... Լսվում է բնիկների վայրենի, ուրախ աղաղակը, սեպացած ատամներով քրքիջը... Մակույկներից համազարկը... Նավի թնդանոթային կրակոցի արձագանքը...

Մակույկներից տեսնում են, թե ինչպես մի բնիկ նիզակով խփում է Կուկի գլխին, ինչպես կապիտանը յերեսի վրա ընկնում է ջրի մեջ, ինչպես մյուսները բռնում են նրա ոտքերից և քաշում ծովափ, հարվածելով դաշույնով: Փամփուշտները սպառված էյին, ուստի մակույկները ստիպված յետ են նահանջում հրետանու պաշտպանության տակ, չկարողանալով հավաքել սպանվածներին:

Ճամբարում մնացած ջոկատը հազիվ հազ կարողանում է պաշտպանվել բնիկների հարձակումներից: Բինդի սահմանապա-

թյունը և հմուտ կարգադրությունները, դերեզմանոցի պատերով պաշտպանված լինելը, փրկում են զինվորներին: «Հայտնագործություն» նավի թնդանոթային կրակը և հրացանային համազարկերը ցրում են հարձակվողներին, վիրավորելով մի քանիսին:

Ժամը տասներկուսին կապիտան Կլարկի մոտ գումարվում է սպաների խորհուրդ: Կարծիքները բաժանվում են: Քինգը պահանջում է անմիջապես ամենախիստ միջոցներ գործադրել կղզիաբնակներին պատժելու համար: Նա ջերմ կերպով ապացուցում էր, վոր թուլություն ցուցաբերելու դեպքում ավելի վատթար հարձակումներ կլինեն և հնարավորություն չեն տա աշխատանքներն ավարտելու: Հրամանատարի և ընկերոջ սարսափելի մահվան վրեժը պետք է առնել անպայման: Նրան առարկում են: Ասում եյին, թե դաժանությունն ե՛լ ավելի կչարացնի բնիկներին, թե չի կարելի վտանգի յենթարկել մնացած սակավաթիվ զինվորների կյանքը, թե նավերը դեռևս յերկար ճանապարհորդություն ունեն կատարելու դեպի հյուսիս, ուստի անհրաժեշտ է բոլոր միջոցներով աշխատել վերականգնել բնիկների հետ խաղաղ հարաբերությունները՝ և՛ նորոգումներ ու պաշար անելու, և՛ կապիտանի դիակն ստանալու համար: Կլարկն անցնում է առարկողների կողմը: Վորոշվում է Քինգին ուղարկել առաջնորդների հետ բանակցելու համար:

Քինգը զինված զորախմբի հետ մեկնում է յերկու մակույկով: Բնիկները նախ ափ են վազում զենքերով և քարերով. բայց յերբ սպայի ձեռքին տեսնում են սպիտակ թաշկինակ, վայր են ձգում նիզակներն ու դաշույնները և սկսում բանակցել: Լեյտենանտը հայտարարում է, վոր նրանց վոչ մի վնաս չեն պատճառելու, յեթե նրանք անմիջապես վերադարձնեն Որոնոյի մարմինը: Առաջնորդներից մեկը պատասխանում է, վոր նրա մարմինը կտոր-կտոր են արել և բաժանել թագավորին ու բարձրաստիճան առաջնորդներին, բայց խոստանում է իսկույն գնալ և հայտնել այդ խնդիրը: Քինգը սպասում է մի ժամից ավելի և, վերջապես, մի սպա յե ուղարկում «Հայտնագործություն» նավը նոր կարգադրություններ ստանալու: Կլարկը կարգադրում է անմիջապես վերադառնալ: Քինգը, սպառնալով բնիկներին, վոր կվոչնչացնի նրանց գյուղերը, վերադառնում է «Վճռականու-

թյուն» նավը: Նույն որն այդ նավն է փոխադրվում կապիտան Կլարկը, վորը փոխարինում է Կուկին, իսկ «Հայտնագործություն» նավի հրամանատարությունը հանձնում է լեյտենանտ Հորին:

Հասնում է գիշերը: «Վճռականություն» նավում տիրում էր տրտմություն: Սպաներն ու նավաստիները վողբում եյին պետի և ընկերների մահը: Ո՞վ կարող էր փոխարինել Կուկին: Նավում կրկնապատկում են պահնորդությունը և նշանակում պահակներ: Կղզու խորքում բոցավառվում եյին խարույկները և լսվում կանանց ծանր հառաչանք: Ըստ յերևույթին, այրում եյին իրենց և ոտարերկրացի սպանվածների դիակները. աստվածներին վրիժառության եյին կանչում, նրանց համար համեղ պատառներ և խնճույք եյին պատրաստում: Կես գիշերին պահակը նավախելից կրակում է մոտեցող պիրոգին: Բանից պարզվում է, վոր նրա մեջ գալիս են քրմերը, վորոնք տեսակցություն են պահանջում Քինգից (բնիկները կարծում եյին, թե Քինգը Կուկի վորդին է): Նրանք ասում են, վոր գլխավոր քուրմն ուղարկել է այն բոլորը, ինչ մնացել է սպանված Որոնոյից: Մնացածը Տեռեոբուի և առաջնորդների մոտ է: Քուրմը զոհաբերության համար ստացել է մարմնի մի մասը և այդ էլ կարգադրել է վերադարձնել ոտարերկրացիներին: Ահա այդ:

Լապտերի աղոտ լույսի տակ քուրմը դողդոջուն ձեռքերով բաց է անում մի փոքր փաթեթ: Նրա մեջ կային տասը ֆունտ մարդկային մսի արյունաթաթախ կտորներ... Դիտողները սարսափահար յետ են քաշվում... «Վերցրու,—ասում է քուրմը, փաթեթը մեկնելով Քինգին: Նրա ձայնը դողում էր: Յերբ Որոնոն վերադառնա, ի՞նչ կանի նա մեզ հետ»:

Քուրմերը չեն կամենում մնալ նավում գիշերելու, ասելով, վոր յեկել են առաջնորդներից գաղտնի և պետք է վերադառնան քանի դեռ մութ է: Հաջողվում է հարց ու փորձ անել նրանց, թե ինչ է կատարվել ափին: Նրանք պատմում են, վոր առաջին ընդհարման ժամանակ բնիկներից սպանվել են քսան յերկու հոգի, վորից հինգը առաջնորդներ, իսկ ճամբարի մոտ՝ ութ բնիկ, վոր Տեռեոբուն ծածկվել էր բարձր ժայռի քարայրի մեջ, վոր առաջնորդները դավեր են նյութում ոտարերկրացիների դեմ:

Հաջորդ առավոտ անգլիացիներն ապարդյուն սպասում են փոստատարին: Վոչ վոք չի գալիս նավ. մոտեցող պիրոգներում բնիկներն իրենց պահում են գրգռիչ կերպով: Զենքերը թափահարելով, աղաղակում են ու սպառնում:

Յերբ նավաստիները նրանցից մեկի ձեռքին նկատում են Կուկի գլխարկը, վոր բնիկը ըկտխարար թափահարում եր և պարզապես ծաղր ու ծանակ անում, նրանք պահանջում են նավապետից անմիջապես կարգադրություն անել ծաղրողին պատժելու: Կլարկը տեղի չի տալիս. թնդանոթները վոչնչացնում են պիրոգը ու ցրում ծովափին հավաքված ամբոխը: Նավաստիներին զսպելու վոչ մի հնար չկար: Կուտակված վիրավորանքն ու վրեժառության զգացմունքը յելք եյին պահանջում. և յերբ ջրի գնացած ջոկատը նորից հարձակման է յենթարկվում, այդ ժամանակ նավաստիները հրդեհում են գյուղը, կողոպտում խրճիթները, գըլխատում յերկու բնիկի և նրանց գլուխները հանդիսավորությամբ ցցում կայմերի ծայրին: Կլարկը լուռ եր, քանի վոր անզոր եր: Սակայն հրդեհն անսպասելի կերպով իր ներգործությունն է ունենում. թագավորը բանագնացներ է ուղարկում և հաշտություն խնդրում: Նրան պատասխանում են, վոր խաղաղությունը կվերականգնվի, հենց վոր վերադարձնեն Կուկի աճյունը: Որվա վերջը հանդիսավոր շքերթը շարժվում է դեպի ծովափ: Նրա առաջից գալիս եր առաջնորդներից մեկը, յերկար թիկնոցով ու փետուրներով. նա բերում եր կտորների մեջ փաթաթված մի բան: Նա բարձրանում է ժայռի վրա և նշաններ անում, խնդրելով մակույկ ուղարկել: Բինգը մեկնում է նրա յետևից: Առաջնորդն իր հետ բերել եր մի փաթեթ՝ սև ու սպիտակ փետուրներից պատրաստած թիկնոցի մեջ:

«Մենք նրա մեջ գտանք պարոն Կուկի ձեռքի ամբողջ դաստակը. մենք ճանաչեցինք լայն սպիի շնորհիվ, վոր գտնվում եր նրա մեծ մատի և դաստակի միջև. այդտեղ կար նաև նրա գլուխը և յենթադաստակի վոսկորն, առանց մսի (գլխի մազերը կտրել եյին և փնջերով կապել ականջներից), ստորին ծնոտը չկար. այդտեղ կային նաև յերկու ձեռքի վոսկորները, ուսերի կաշիով, վոտքերի վոսկորները, բայց առանց ներբանների: Հոդերի կապերը ամբողջությամբ կային: Պարզ եր, վոր այդ բոլորը կրակի վրա յե յեղել, բացառությամբ ձեռքի վոսկորների, վորոնց վրա միսը մնացել եր, բայց տեղ-տեղ դանակով կտրտված և աղ եր ցանած. ըստ յերևույթին ավելի յերկար ժամանակ պահելու համար: Գլխի յետևից մազերի մի մասը պոկված եր, բայց նկատելի չեր, վոր գանգը ծակած լինեյին...»:

Հաջորդ որը գալիս է թագավորի վորդին և իր հետ բերում մնացած վոսկորները, հրացանի յերկու փողը, ճտքավոր կոշիկները և միքանի հատ մանր իրեր: Նա հավատացնում եր, վոր Տեռեոբուն խաղաղություն է կամենում, վոր այդ բոլորի մեղավորը այն մի քանի առաջնորդներն են, վորոնց մարդիկ փախցրել եյին մակույկը. նա ասում է, վոր չի կարող վերադարձնել սպանված զինվորների վոսկորները, քանի վոր բնիկներն այն տարել են յերկրի խորքերը: Կլարկը յետ է ուղարկում բանագնացներին և խնդրում ծովախորշի վրա մեկ որով դնել տաբու:

«Վճռականություն» նավի վրա լսվում է կացինների և մուրճերի թխթխկոցը: Հյուսները դագաղ եյին պատրաստում: Տախտակամածի վրա շարվում են յերկու նավերի նավաստիներն ու զինվորները: Սպաները դուրս են բերում սպանված պետի աճյունը, բրիտանական դրոշակի մեջ փաթաթված: Սահմանված աղոթքն ասելուց հետո, փակում և ամրացնում են դագաղը: Որվա կիզիչ պարզության մեջ լռած ծովախորշում լսվում է թնդանոթային համազարկի ուժեղ արձագանքը: Թմբկահարները թմբկահարում են: Ճոպանից կախված դագաղը ծանրությամբ յերերվելով իջնում է ջրի մեջ: Մի րոպե հետո, ծովը թաղում է թագավորական կապիտան Ջեմս Կուկին:

Նավում խոր լռություն է տիրում:

Նավաստիները ցրվում են լուռ, վշտացած իրենց պետի անմիտ ու ծանր մահով:

Սպայական խորհուրդը վորոշում է անմիջապես հեռանալ այդ կղզուց. նույն որը (փետրվարի 22-ին), յերեկոյան «Վճռականություն» և «Հայտնագործություն» նավերը դուրս են գալիս Կյալակյակուա ծովախորշից և ընթանում դեպի հյուսիս:

Հաջորդ առավոտ անգլիացիներն ապարդյուն սպասում են փոստատարին: Վոչ վոք չի գալիս նավ. մոտեցող պիրոգներում բնիկներն իրենց պահում են գրգռիչ կերպով: Զենքերը թափահարելով, աղաղակում են ու սպառնում:

Յերբ նավաստիները նրանցից մեկի ձեռքին նկատում են Կուկի գլխարկը, վոր բնիկը ըկտխարար թափահարում եր և պարզապես ծաղր ու ծանակ անում, նրանք պահանջում են նավապետից անմիջապես կարգադրություն անել ծաղրողին պատժելու: Կլարկը տեղի յե տալիս. թնդանոթները վոչնչացնում են պիրոգը ու ցրում ծովափին հավաքված ամբոխը: Նավաստիներին զսպելու վոչ մի հնար չկար: Կուտակված վիրավորանքն ու վրիժառության զգացմունքը յելք եյին պահանջում. և յերբ ջրի գնացած ջոկատը նորից հարձակման ե յենթարկվում, այդ ժամանակ նավաստիները հրդեհում են գյուղը, կողոպտում խրճիթները, գլխատում յերկու բնիկի և նրանց գլուխները հանդիսավորությամբ ցցում կայմերի ծայրին: Կլարկը լուռ եր, քանի վոր անզոր եր: Սակայն հրդեհն անսպասելի կերպով իր ներգործությունն ե ունենում. թագավորը բանագնացներ ե ուղարկում և հաշտություն խնդրում: Նրան պատասխանում են, վոր խաղաղությունը կվերականգնվի, հենց վոր վերադարձնեն Կուկի աճյունը: Որվա վերջը հանդիսավոր շքերթը շարժվում ե դեպի ծովափ: Նրա առաջից գալիս եր առաջնորդներից մեկը, յերկար թիկնոցով ու փետուրներով. նա բերում եր կտորների մեջ փաթաթած մի բան: Նա բարձրանում ե ժայռի վրա և նշաններ անում, խնդրելով մակույկ ուղարկել: Քինգը մեկնում ե նրա յետևից: Առաջնորդն իր հետ բերել եր մի փաթեթ՝ սև ու սպիտակ փետուրներից պատրաստած թիկնոցի մեջ:

«Մենք նրա մեջ գտանք պարոն Կուկի ձեռքի ամբողջ դաստակը. մենք ճանաչեցինք լայն սպիի շնորհիվ, վոր գտնվում եր նրա մեծ մատի և դաստակի միջև. այդտեղ կար նաև նրա գլուխը և յենթադաստակի վոսկորն, առանց մսի (գլխի մազերը կտրել եյին և փնջերով կապել ականջներից), ստորին ծնոտը չկար. այդտեղ կային նաև յերկու ձեռքի վոսկորները, ուսերի կաշիով, վոտքերի վոսկորները, բայց առանց ներբանների: Հոդերի կապերը ամբողջությամբ կային: Պարզ եր, վոր այդ բոլորը կրակի վրա յե յեղել, բացառությամբ ձեռքի վոսկորների, վորոնց վրա միսը մնացել եր, բայց տեղ-տեղ դանակով կտրտված և աղ եր ցանած. ըստ յերևույթին ավելի յերկար ժամանակ պահելու համար: Գլխի յետևից մազերի մի մասը պոկված եր, բայց նկատելի չեր, վոր գանգը ծակած լինեյին...»:

Հաջորդ որը գալիս ե թագավորի վորդին և իր հետ բերում մնացած վոսկորները, հրացանի յերկու փողը, ճտքավոր կոշիկները և միքանի հատ մանր իրեր: Նա հավատացնում եր, վոր Տեռեոբուն խաղաղություն ե կամենում, վոր այդ բոլորի մեղավորը այն մի քանի առաջնորդներն են, վորոնց մարդիկ փախցրել եյին մակույկը. նա ասում ե, վոր չի կարող վերադարձնել սպանված զինվորների վոսկորները, քանի վոր բնիկներն այն տարել են յերկրի խորքերը: Կլարկը յետ ե ուղարկում բանագնացներին և խնդրում ծովախորշի վրա մեկ որով դնել տաբու:

«Վճռականություն» նավի վրա լսվում ե կացինների և մուրճերի թխթխկոցը: Հյուսները դագաղ եյին պատրաստում: Տախտակամածի վրա շարվում են յերկու նավերի նավաստիներն ու զինվորները: Սպաները դուրս են բերում սպանված պետի աճյունը, բրիտանական դրոշակի մեջ փաթաթած: Սահմանված աղոթքն ասելուց հետո, փակում և ամրացնում են դագաղը: Որվա կեսին պարզության մեջ լուռ ծովախորշում լսվում ե թնդանոթային համազարկի ուժեղ արձագանքը: Թմբկահարները թմբկահարում են: Ճոպանից կախված դագաղը ծանրությամբ յերերվելով իջնում ե ջրի մեջ: Մի րոպե հետո, ծովը թաղում ե թագավորական կապիտան Ջեմս Կուկին:

Նավում խոր լռություն ե տիրում:

Նավաստիները ցրվում են լուռ, վշտացած իրենց պետի անմիտ ու ծանր մահով:

Սպայական խորհուրդը վորոշում ե անմիջապես հեռանալ այդ կղզուց. նույն որը (փետրվարի 22-ին), յերեկոյան «Վճռականություն» և «Հայտնագործություն» նավերը դուրս են գալիս Կյալակյակուա ծովախորշից և ընթանում դեպի հյուսիս:

ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Արշավախումբը շարունակում էր իր աշխատանքները: Հետազոտելով Սենդվիչի արշիպելագի այլ կղզիները, նա շարժվում է դեպի Կամչատկա: Պետրոպավլովսկում և Բոլշերեցկում արշավախումբը մանրամասնորեն ծանոթանում է յերկրի բնության, ռուս նորաբնակների և կամչադալների կենցաղի հետ: Անցնում է ս. Լավրենտիոս կղզու մոտով, ապա Բերինգի նեղուցով ընթանում դեպի հյուսիս: Սառույցները կրկին փակում են ուղին. նավերը հասնում են հյուս. լայն. 70 33′-ին և յետ դառնում: Օգոստոսի վերջերին, յերբ ընթանում էյին Կամչատկայի ափերով, մահանում է նավապետ Կլարկը, վորը հիվանդ եր թոքախտով:

Արշավախումբը, անցնելով Կուրիլյան կղզիների արշիպելագը և Ճապոնիան, կանգ է առնում Մակաո-ում[1]: Այդտեղից գնում են Կանտոն, վորտեղ ձեռք են բերում Չինաստանի վերաբերյալ մի շարք խիստ արժեքավոր տեղեկություններ: Այնուհետև, Զոնդյան կղզիներն[2] այցելելուց հետո, ընթանում են դեպի Բարեհուսո հրվանդանը և 1780 թվի հոկտեմբերի 4-ին հաջողակ վերադառնում Անգլիա: Արշավախումբը ճանապարհորդել է չորս տարի յերկու ամիս քսանյերկու որ:

Կուկի ձեռք բերած արդյունքները հսկայական էյին: Այն յերեք գլխավոր հարցերը, վորոնք յերկար տարիներ տաք վեճերի առարկա էյին բոլոր յերկրների գիտնական աշխարհագրագետների միջև, լուծված էյին վերջնականապես. իսկ ֆանտաստիկ սպիտակ տարածությունը, վորը քարտեզում բռնում եր գրեթե ամբողջ հարավային կիսագունդը, չքանում է ընդմիշտ: Անհայտ Հարավային Ցամաքի մասին յերևակայական միֆը ցրվում է անհետ. մինչդեռ, ըստ յենթադրության, այդ ցամաքն ուներ հարուստ բնություն, չտեսնված կենդանական աշխարհ և նոր պետության զարգացման համար անսահմանափակ հնարավորու-

[1] Պորտուգալիայի գաղութը Հարավ. Չինաստանում: Ծ. Թ.

[2] Մալայան արշիպելագը, Ասիայի և Ավստրալիայի միջև, նաև անվանվում է Ինդոնեզիա, Հոլանդական Հնդկաստան: Ծ. Թ.

թյուններ: Աշխարհագրության վազմողների համար ցնորք հանդիսացող նավարկելի լայն նեղուցը, վորն իբր թե զուգահեռականի ուղղությամբ անցնում է Հյուսիսային Ամերիկայով, նույնպիսի հեքիաթներից է, ինչպիսին են ասիական և ամերիկական մայր ցամաքների միացած լինելու վերաբերյալ կարծիքները, կամ թե նրանց բաժանող ջրային ահագին տարածության զրույցները:

Հայտնագործված էյին Ընկերության կղզիները, վորոշված եր Նոր Զելանդիայի կղզիական դիրքը, հետազոտված էյին Նոր Հոլանդիայի[1] արևելյան ափերը, հայտնագործված էյին Նոր Կալեդոնիա մեծ կղզին, Ջորջիա և Սենդվիչ կղզիները, չհաշված Խաղաղ և Ատլանտյան ովկիանոսներում հայտնագործած անթիվ մանր կղզիները. այդ բոլորի ժամանակ կատարվել են աշխ. կոորդինատների ամենաճիշտ չափումներ, կազմվել են քարտեզներ, ճշտվել և ուղղվել են նախորդ ծովագնացների և քարտեզագետների հաշվումները: Դրանց միացան բուսաբանական շատ հարուստ ժողովածուներ, վորոնք գիտությանը տվել են բույսերի մոտավորապես հազար հինգ հարյուր նոր տեսակներ. մարդակազմությունն ու կենդանաբանությունը ձեռք են բերում նոր հայտնագործած ժողովուրդների, նրանց ցեղերի, կենցաղի և լեզվի ամենամանրամասն նկարագրություններ. իսկ աստղաբաշխությունը—ահագին քանակությամբ դիտողություններ, հաշվումների հարուստ նյութ. նավագնացությունը—ծովերի խորության չափումներ, մակընթացության ու տեղատվության ժամանակի ու բարձրության վորոշումներ, ծովային հոսանքների և քամիների ուսումնասիրություն, ֆարվատերի[2] վերաբերյալ մատնանշումներ, աշխ. զանազան լայնություններում և տարվա զանազան ժամանակներում նավարկելու պայմանները:

Բացի այդ Կուկն առաջինն եր, վոր ուշադրություն է դարձրել պահպանելու ծովագնացների առողջությունը ծովագնացության բոլոր պայմաններում: Այն փայլուն արդյունքները, վոր նա ձեռք է բերել նավում հակալնդախտային միջոցներ գործադրելու

[1] Ավստրալիայի:

[2] Գետի, նեղուցի, ծոցի այն խոր մասերը, վորտեղ հնարավոր է նավարկելը Ծ. Թ.

փորձերից, նոր ուղիներ են բացել ծովային բժշկության[1] մեջ:

Գիտության բոլոր գլխավորագույն ճյուղերը ձեռք են բերել ընդարձակ և խիստ արժեքավոր նյութեր, ահագին ասպարեզ նոր հետազոտությունների համար: Ծովագնացության առաջ բացված էին նոր ուղիներ. ճանապարհորդությունների գիտական և քաղաքական հետաքրքրությունն աճել էր նոր հայտնագործությունների ու նվաճումների լույսի տակ: Ճանապարհ հարթելով հնացած տեսակետների և ավանդության միջով, պայքարելով գիտական կոնսերվատիզմի քարացած սկզբունքների դեմ, որ առաջ էին մղում հին ավանդության կողմնակիցները, և արհամարելով անձնական բարեկեցության շահերը, տարվելով ամբողջովին սիրած աշխատանքով, Կուկը մեծագույն հաղթանակ է տանում և կանգնում XVIII դարի նշանավոր մարդկանց պատվավոր շարքում:

Գրականությունը քիչ նյութ չէր քաղում հուշակավոր կապիտանի ճանապարհորդություններից: Չհաշված մի շարք պոեմները, վոտանավորները, գովասանական խոսքերը, որ գրված են անմիջապես նրա մահից հետո, յեվրոպական շատ լեզուներով լույս են տեսել նրա օրագրերի և կենսագրությունների թարգմանությունները:

Զարաշահ գրականությունը, վորը հեղեղել էր գրախանութները, առանձնապես նավապետի մահից հետո, ըստ իր քմահաճույքի փոփոխել էր օրագրերը, ըստ իր հայացքների ընտրել էր հետաքրքիր տեղերը, ավելացրել դրան անպատկառ սուտ, և, բացարձակապես զրկելով նրան գիտական արժեքից, ծածկել էր ամենագլխավորը՝ հեղինակի ճանապարհորդության իմաստը: Առանձնապես այդ վերաբերում է այն բազմաթիվ հրատարակություններին, վոր լույս էին տեսել արտասահմանում (Անգլիայում, ըստ յերևույթին վախեցել էին առաջին անհաջող փորձերից, վոր արգելել էր Ծովակալությունը):

Հետ չէյին մնում նաև մեր հայրենի[1] հրատարակիչները:

---

[1] Վերջին արշավանքի ամբողջ ժամանակամիջոցում յերկու նավի վրա հիվանդացել և մահացել է ընդամենը հինգ նավաստի: Ծ. Հ.

[2] Ռուսական: Ծ.Թ.

Ցեկատերինյան Ռուսաստանում նույնպես կարդում էին Կուկի մասին, գլխավորապես «արտասովոր վայրենի հնդիկների» մասին: «Նկարագրությունների» ճարպիկ կազմողները հաստ գրքերի մեջ տալիս էին այնպիսի անհեթեթություններ, վոր դուր էին գալիս Սանկտ-Պետերբուրգի և Մոսկվայի հասարակության ընտիր ընթերցողներին: Արշավանքների հետազոտությունները վեր էին ածվում ծիծաղաշարժ անեկդոտների, վորոնցից կեսը հորինել էին իրենք կազմողները:

Ցեվրոպական գրականությունը Կուկի պայծառ դեմքն օգտագործել է նաև իր հետագա յերկերում: XIX դարի վերջում Ժյուլ Վեռնը գրում է նրա անձի և ճանապարհորդությունների մասին վեպ, իսկ 1908 թվին Եդուարդ Փիլոնը նկարագրում է նրան իր « Muses et bourgeoises de jadis » գրքում:

Դասակարգային խմբավորումների կատաղի պայքարի, տընտեսական ամենաբարդ տեղաշարժերի, Ցեվրոպայի հսկայական դեպքերի և արմատական փոփոխման սկզբնավորության, հեղափոխական-ազգայնական հազվագյուտ պատերազմների բորբոքման ֆոնի վրա, միաժամանակ յերկու դարերի սահմանագծում գիտական ու փիլիսոփայական հոսանքների վճռական ֆոնի վրա,— Կուկի դեմքը, վորպես մի մարդու, վորը հին ավանդություններին լաբյուրինթոսից յելք էր փնտրում, անձնական շահերն է հաղթահարում, իր նմանների շարքից ականավոր մարդ դառնում,—ինհարկե չէր կարող չհետաքրքրել գրողներին: Մերվելով բուրժուական դասակարգի հետ, Կուկը բարեխղճորեն կատարում էր նրանց առաջադրանքները և, նշանավոր դառնալով իր ուժեղ կամքի և արտասովոր ընդունակությունների շնորհիվ, իր կամքն ու ընդունակությունները տրամադրում է նրանց և նոր ուղիներ բաց անում Անգլիայի գիշատիչ գաղութային քաղաքականության համար:

Նրա հայտնագործած հողերը դառնում են կապիտալիստական Անգլիայի հենակետերը (բազաները). Անգլիան զենքի ուժով ամրապնդում է նոր ժողովուրդների գաղութային ստրկությունը: 1788 թվին անգլիական նավատորմը Ավստրալիայի հարավ-արևելքում ափ է իջեցնում ութ հարյուր հանցագործներ: Նորֆոլկ և Տասմանիա կղզիները նույնպես դառնում են աքսո-

բավայր: Անգլիական միսիոնարները, բանտապետները և վաճառականները յեղել են նոր քաղաքների և գաղութների հիմնադիրները: Վոսկին, պղինձը և քարածուխը, բուրդն ու փայտը, վոր ձեռք եյին բերվում բնիկների հարկադիր աշխատանքով, մինչև XIX դարի վերջը տվել են մոտ հարյուր միլիոնի յեկամուտ:

Նոր Զելանդիայի վոսկեբեր հողերը, վոր յերեսնական թվականներին գրավված եյին առևտրական ընկերությունների կողմից, նվաճված եյին անհնազանդ բնիկներից քսան տարվա ընթացքում խաչով ու զենքով և դառնում են վոսկու ու բրդի հարուստ աղբյուրներ, վորտեղ կառուցվում են անգլիական կապիտալի ամրոցներն ու նավահանգիստները: Ավստրալիական հինգ ընդարձակ գաղութները և Ովկիանիայի կղզիները Հնդկաստանի հետ միասին դառնում են Անգլիայի խոշորագույն ռազմածովային և առևտրական բազան: Կուկի «խաղաղ» նվաճումները վեր են ածվում յեվրոպական արդյունաբերողների գիշատիչ քաղաքականության. այդ արդյունաբերողները «գործարար» կերպով սկսում են կառավարել և շահագործել նոր յերկրները և բնիկներին դարձնել հլու բանվորական ուժ: Նույնը վիճակվում է Նոր Գվինեային, վորը հարուստ եր վոսկով, մարգարիտների խեցիներով, կոկոսի կարմրափայտի արմավենիներով:

Կուկի հետքերով առևտրական ընկերությունները հասնում են նաև Նոր Կալեդոնիա, վորտեղ «խաղաղացնում են» վայրենի մարդակերներին, կառուցում են մատուռներ և դրասենյակներ, սկսում են մշակել նիկելի, քրոմի և կոբալտի հանքերը, ստեղծում են սուրճի և շաքարեղեգնի պլանտացիաներ, ցանում են չալթուկ, բանան և կոկոսի արմավենիներ: Անցնում է մի դար և կապիտալիստական Ֆրանսիան այդ կղզում կառուցում է տաժանակիրների բանտ, վորտեղ տանջանքներից մահանում են յոթանասուն մեկ թվի հերոսական կոմունարները, վորոնք հանդգնել եյին ապստամբել կապիտալի դեմ ի պաշտպանություն ճնշված պրոլետարիատի իրավունքների:

Ամերիկական տասներեք նահանգները, վորոնք 1774 թվին ապստամբել եյին անգլիական կապիտալի գիշատիչ քաղաքականության դեմ, հարկերով ու տուրքերով գաղութներին ճնշող Նոքսի տորիական մինիստրության դեմ, հաջողությամբ կռվում

են ընդդեմ բրիտանական զորքերի: Պատերազմը, հուզելով Յեվրոպային, առաջացնում է միջազգային բախումների փոթորիկ, խորտակում է քաղաքական կարգերի փխրուն հիմքերը. Բրիտանական զենքի սկզբնական հաղթանակները պարտության են վերածվում, վոր նա կրում է Ֆրանկո-ամերիկյան միության դրոհից. մինչդեռ այդ միությունը յոթանասուն իննը թվին ուժեղանում է Իսպանիայի մասնակցությամբ: Հյուսիսային ծովային տերությունները, Ռուսաստանի գլխավորությամբ կազմելով «Զինված չեզոքությունը», սպառնում եյին առաջացնել նոր բարդություններ: Գլուխը կորցրած անգլիական կառավարությունը պատերազմ է հայտարարում Հոլանդիային, վորը միացել եր Հյուսիսային Միությանը: Ամերիկայի դեմ պատերազմը կործանարար եր: Յերկրի ներսում անվերջ հուզումներ եյին տեղի ունենում: Իռլանդացիներն ու շոտլանդացիները բարձրացնում են ապստամբության դրոշը, պահանջելով ազատություններ, իրավունքներ, փոխարքայության վերացում, առևտրական արտոնություններ: Հնդկական գաղութներում պատերազմ է ծագում մահարաթի և մայսորի[1] իշխանների դեմ, վորոնք փորձում եյին թոթափել անգլիացիների անտանելի լուծը: Պառլամենտական ոպոզիցիան գոռում եր լիբերալ ռեֆորմների մասին, պահանջելով տորիական մինիստրության հրաժարականը: Կուսակցությունների պայքարը, առևտրական կապիտալի կրած ահագին կորուստները և հեղափոխության սպառնացող ուրվականը ստիպում են ինչ գնով ել լինի շուտափույթ կերպով հաշտություն կնքել:

Կուկի հայտնագործությունները մասամբ հավասարակշռություն են մտցնում Անգլիայի գաղութային տնտեսության հաշվեկշռի մեջ, հատուցելով Ամերիկայի կորուստը: Պատերազմի միջոցին հնչում են ձայներ, վորոնք հիշեցնում են հուշակավոր ճանապարհորդի մասին և փորձում արշավախումբը պաշտպանել տհաճ պատահարներից: Կուկի նավերի և ռազմական նավատորմիղների ուղիները տարամիտվում են: Հայտնի չե, ներգործություն կունենային արդյո՞ք գիտության բարձր ջատագովների պերճախոս կոչերը, վորոնք ազատամտորեն արհամարհում եյին դիվանագիտական պայմանականությունները, սակայն յերկու

1. Մահարաթ կամ մարատ— և մայսոր.— Հնդկաստանի լեռներում ապրող ժողովուրդներ: Ծ. Խ.

պաշտոնական գրություններ հիշեցնում են աշխարհին յերկրո վոչ-պատերազմող նավերի մասին:

Յեվրոպան դեռևս չգիտեր Կուկի մահվան մասին, յերբ Միացյալ Նահանգների առաջին դեսպանը Ֆրանսիայում, հռչակավոր գիտնական Բենջամին Ֆրանկլինը 1779 թվին գրում է Պասիից.—

«Բոլոր զինված նավերի նավապետներին և հրամանատարներին! Մեծ Բրիտանիայի դեմ այժմ պատերազմական վիճակում գտնվող Ամերիկայի Միացյալ Նահանգների կոնգրեսի հանձնարարությամբ:

Պարոնայք, Անգլիան այս պատերազմից առաջ հռչակավոր կապիտան Կուկի առաջնորդությամբ նավ է ուղարկել անհայտ ծովերում նոր յերկրներ հայտնագործելու համար. քանի վոր այդ ձեռնարկությունն ինքնըստինքյան գովելի յե, կարող է բազմացնել աշխարհագրական գիտելիքները, թեթևացնել հեռավոր ժողովուրդների փոխհարաբերությունները կենսական բախտավորությանը նպաստող, ապրանքներ, ինչպես և արվեստի արտադրանք փոխանակելու համար, վերջապես, տարածել մարդկության օգտակար գիտությունների նվաճումները, ուստի յես շատ եմ կամենում, վոր ձեզանից նա, ով կհանդիպի ներկայումս յեվրոպական ծովերում սպասող կապիտան Կուկի նավը, չհամարեն նրան թշնամի, չթալանեն փոխադրվող իրերը, չընդդիմանան Անգլիա վերադառնալուն, այլ, ընդհակառակը, վարվեն կապիտան Կուկի և նրա ուղեկիցների հետ վայելուչ կերպով ու բարյացակամ, ցույց տալով նրան, վորպես մարդկության բարեկամի, ձեզանից կախված ամեն տեսակի օգնություն: Յես վստահ եմ, վոր դուք այդպես վարվելով, կհետևեք վոչ միայն ձեր սեփական վեհանձնությանը, այլև կարժանանաք կոնգրեսի ու բոլոր ամերիկական նավատերերի հավանությանը:

Պարոնայք, պատիվ ունեմ լինել ձեր խոնարհ ծառան:

Ամերիկայի Միացյալ Նահանգների կոնգրեսի լիազոր մինիստր Ֆրանսիական արքունիքում՝ Բ. Ֆրանկլին»:

Ֆրանսիայի քրիստոնեասեր Թագավորի խելքի յեկած մինիստրները վորոշում են պաշտպանել ֆրանսիական լուսավորության փառքը և Ֆրանկլինից մեկ շաբաթ հետո, ծովային մինիստր Սարտինի ստորագրությամբ կազմում են նույնպիսի գրություն,

ուղղված բոլոր ֆրանսիական ռազմանավերի հրամանատարներին. այդ գրության մեջ ասված եր «Վճռականություն» և «Հայտնագործություն» նավերի մասին, վորոնք մեկնել են «Ճապոնիայի և Կալիֆորնիայի ծովերը, այնտեղի ափերի ու կղզիների մոտ» հայտնագործություններ անելու համար. ասված եր Թագավորի կամքի մասին, վորը հրահանգում է վարվել կապիտան Կուկի հետ, վորպես չեզոք և դաշնակից պետության հրամանատարի հետ, նրան հանդիպելուց հաղորդել նրան Թագավորի այդ հրամանի մասին, այն վերապահությամբ, վոր ինքն ել խուսափի ամեն կարգի թշնամական գործողություններից:

Ֆրանկլինը գործել եր իր կամքով: Նա չեր հիշատակել նույնիսկ կապիտան Կլարկի մասին: Մինչդեռ կոնգրեսը, տեղեկանալով այդ գրության բովանդակությանը, իր անբավականությունն ե հայտնում իր դեսպանին, վորը գիտության շահերը բարձր է դասել քաղաքականության շահերից: Ինքնագլուխ կարգադրությունն իսկույն վերացվում ե. կոնգրեսը հրաման է արձակում, վորով պարտավորեցնում է ամերիկական նավերի հրամանատարներին գրավել կապիտան Կուկի նավը: Անգլիացիների ճանապարհորդությունն Ամերիկայի արևմտյան ափերի մոտ դուր չեր գալիս Ա. Մ. Նահանգների կառավարությանը: Նույնպես է վարվում նաև Իսպանիան, վորը վախենում է, թե իրոք անգլիացիները կհայտնագործեն հյուսիսային անցքը և դրանով կսպառնան նրա ամերիկյան գաղութներին: Ծովային մինիստրը մերժում է գիտնականների բոլոր փորձերը Ֆրանկլինի վոգով նամակ գրելու առթիվ:

Յերբ, վերջապես, դժբախտ լուրը հասնում է Անգլիա, Լոնդոնի հասարակությունը շռայլում է գովաբանական խոսքեր, ճառեր, մահախոսականներ: Պառլամենտում և սալոններում խոսում են միայն Կուկի մասին: Անվանի լորդերն արտասանում են վսեմ ճառեր, քաղվածքներ են բերում աստվածաշնչից, խիզախ նավապետին համեմատում են գրեթե աստծու հետ. Նորաձև բանաստեղծները, գովք կարդալով Կուկի պատվին, անվանում են նրան «Նուրբ»: Աննա Մորը, Ֆից Ջերալդը, Գրեսինը, Ելեն Վիլյամսը, Սեվարդը նվիրում են նրան հարյուրավոր վոտանավորներ: Թագավորական ընկերությունը վոսկու և արծաթի մեդա-

ժիններ է կարում կապիտանի պատկերով: Այդ մեդալիոններից նվեր էյին ուղարկել ֆրանսիական ու լեհական թագավորներին և ռուսական կայսրուհուն[1]: Կուկի կինը և Ֆրանկլինը նույնպես ըստանում են այդ մեդալիոնից: Չեն մոռանում նաև Ծովակալության առաջին լորդին, վորն իր արժանապատվությունը գիտակցելով, վողորմածաբար ընդունում է այդ «արժանի» պարգևը: Կապիտանի ընտանիքն ապահովում են ցմահ կենսաթոշակով և վերջին ճանապարհորդության հրատարակությունից ստացած կեսով չափ յեկամուտով: Սեր Հյուգ Պալիսերը սրտաշարժ կերպով իր Բուկինգեմշիրի կալվածքի այգում կառուցում է մի կոթող, քանդակելով վրան բարեկամին ուղղված գովաբանական խոսքեր: Ֆրանսիական և իտալական ակադեմիկոսներն արտասանում են փայլուն ճառեր:

Պաշտոնական քաղաքավարության բոլոր կանոնները կատարված էյին: Լեդիների և ջենտլմենների ազգային հպարտությունը բավարարված էր: Պատերազմի ահեղ միջոցին և Ֆրանսիայից առաջացող չարագուշակ ամպերի տակ հասարակության ուշադրությունը չէր կարող յերկար զբաղվել Կուկի վիճակով: Այդպիսով, նա արել է այն բոլորը, ինչ կարող էր անել նրա հիշատակը հավերժացնելու համար: Չնայած նրա բոլոր ծառայություններին, կատարյալ ինքնազոհությանը բուրժուազիայի գործերի նկատմամբ, այդ հասարակությունը չի կարողանում մոռանալ Կուկի «մութ ծագումը» և պետության «լավագույն մարդիկ» ուշադիր էյին «բարակի զավակի» հանդեպ միայն այն պատճառով, վոր նա իր ամբողջ կյանքը նվիրել էր նրանց շահերին:

Ֆրանսիական հեղափոխության բռնկումը շատ լուրջ վախ է պատճառում անգլիական բուրժուազիային: Ռոզբերիայի լիբերալներն իսկույն թաքցնում են ռեֆորմների նախագծերը և ձեռք մեկնում «թագավորի կողմնակիցներին»: Արիստոկրատները և վաճառականները, ինտելիգենտները և չինովնիկները կազմում են պաշտպանողական միություն: Կուսակցությունների վեճերը մո-

[1] Յեկատերինա II-ն այդ մեդալիոնը հանձնել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թանգարանին: Ծ. Հ.

ռացության են տրվում առաջացող վտանգի վախից: Տորիներն ու վիգերը սրտաշարժ յեղբայրանում են: Հասունանում է Գեորգ թագավորի վաղուց սպասած ժամը.

Լյուդովիկոս XVI-ի[1] գլխատումը Անգլիային դուրս է բերում չեզոք դրությունից: Ֆրանսիական դեսպանը հեռացվում է Լոնդոնից: Փարիզի կոնվենտը[2] պատերազմ է հայտարարում Անգլիային:

Անգլիան հավատարիմ է մնում իրեն: Նա հաղթանակում է ծովի վրա, հարվածներն ուղղելով ֆրանսիական գաղութներ՝ Ոստ և Վեստ Ինդիաների դեմ: Յերկրի ներսում յեռում էր սովից ու թանկությունից տանջված ժողովրդի ատելությունը, վոր պոռթկում էր ապարդյուն ընդվզումներով և ճնշվում դաժան միջոցներով: Պառլամենտն բացառիկ օրենքներ էր ընդունում մեկը մյուսի յետևից: Իրերի փոփոխությունը Ֆրանսիայում, Բոնապարտի յեգիպտական արշավանքը վատթարացնում են դրությունը, իսկ «միացյալ իռլանդացիների» ապստամբությունը բորբոքում է քաղաքացիական կռիվները: Թագավորական կառավարությունն արյան մեջ է հանգցնում հեղափոխական բոցը և գնում իռլանդական բուրժուազիային, վորը մատնում է ժողովրդին:

Յեվրոպայի մայր ցամաքում թնդում էր Նապոլեոնի անունը: Անգլիան նոր դարն է թևակոխում թնդանոթային վորոտի տակ, վորն ընդգրկել էր ամբողջ Յեվրոպան: Անհաջող դաշնագրերի հետևանքով զրկվում է գաղութներից՝ հօգուտ Ֆրանսիայի, Իսպանիայի և Հոլանդիայի: Ֆրանսիական կայսրությունը սպառնում էր փակել յեվրոպական նավահանգիստները: 1803 թվին Անգլիան կրկին պատերազմ է հայտարարում Ֆրանսիային: Անհաջող վարչապետ Ադդինգթոնը տեղի յե տալիս Պիթտին, վորը հրաժարական էր տվել յերկու տարի առաջ: Բուրժուական Անգլիան ի դեմս նրա տեսնում էր իր փրկչին: Պիթտը պատերազմ է հայտարարում Իսպանիային և դաշն կնքում Ռուսաստանի հետ: Ծովակալ Նելսոնը Տրաֆալգարի մոտ խորտակում է իսպանական ու

[1] Ֆրանսիական թագավորը, վորին հրապարակորեն գլխատում են ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ: Ծ. Թ.

[2] Հանրապետական կառավարությունը: Ծ. Թ.

Ֆրանսիական միացյալ նավատորմը: Սակայն Բոնապարտը ջարդում է իր հակառակորդներին ցամաքում, յեվրոպական նավահանգիստները հայտարարում նախապաշարված, իսկ անգլիական բոլոր նավերն ու ապրանքները—ընդհանուրի ավար: Տիլզիտի հաշտությունը և Ռուսաստանի ու Ֆրանսիայի անսպասելի համերաշխությունը կրկին մեկուսացնում է Անգլիային. մահացած Պիտտին փոխարինած Ֆոքսի և Գրենվիլլի մինիստրությունն անհաջող կերպով տարուբերվում եր քաղաքականության կործանարար խութերի միջև:

Անգլիական կապիտալն ահագին կորուստներ է կրում. կառավարությունը մասնակցում է պատերազմին, վորպեսզի դեմ այդ միջոցով պաշտպանի մաքսանենգ առևտուրը: Ծովի վրա իր տիրապետությունը պահպանելու համար, նա քամում եր յերկրի վերջին հյութերը, ճնշում ժողովրդին ամեն տեսակի հարկերով ու տուրքերով:

Վիեննայի հաշտությունը հաղթանակի սկիզբն եր: Ծովերն ու նավահանգիստները բացվում են: Անգլիան կրկին նշանավոր տեղ է բռնում յեվրոպական պետությունների առաջին շարքում: Գաղութային ահագին նվաճումները, վոր ամրապնդվում են Ֆրանսիայի վերջնական ջախջախումով Վատերլոո-ի մոտ, և կնքած ընդհանուր հաշտությունը վերականգնում են Մեծ Բրիտանիայի հզորությունը: Գլխավոր մրցակիցը պարտված եր: Կանադան, Հարավային Աֆրիկան, Հնդկաստանը և Ավստրալիան դառնում են անգլիական արդյունաբերական կապիտալի ամենահարուստ բազաները: Այլ յերկրների հանդեպ տեխնիկական գերազանցության հետևանքով յետ են մղվում մրցակիցները: Անգլիական ապրանքները հեղեղում են համաշխարհային շուկաները: XIX դարի կեսում Անգլիայի գաղութային առաջխաղացումը հասնում է իր գագաթնակետին: Արդյունաբերական կապիտալը գրավում է տիրող դիրք: Գաղութային հումույթի եժանությունը և կենսամթերքների եժանությունն զգալի չափով իջեցնում են գները:

ի հաշիվ արդյունաբերողների թալանչիական ահագին շահույթների և գաղութային հազարավոր ստրուկների բանվորական եժան ձեռքերի, մասամբ բարձրացնում է Անգլիայի բանվոր դասակարգի կենսական մակարդակը: Հեղափոխական շարժումները հանդչում են, տրորվելով կապիտալի կրունկների տակ:

Բրիտանական կուշտ ու փայլուն առյուծը, իր վերքերը լիզելով արյունաթաթախ լեզվով, սկսում է հանգիստ նիրհել:

ՑԱՆԿ

Եջ

1. Կյանքի իրավունքը 13
2. Առաջին ճանապարհորդությունը 28
3. Բարեկամներ և թշնամիներ 63
4. Երկրորդ ճանապարհորդությունը 85
5. Դեպի «Հարավային անհայտ ցամաքը» 96
6. Առաջին շրջան 108
7. Երկրորդ շրջան 119
8. Վոսկե նավը 150
9. Երրորդ ճանապարհորդությունը 179
10. Ընկերության կղզիները 190
11. Բերինգի հետքերով 204
12. Փետրվարի տասնչորսը 223
13. Ժառանգություն 242

Մատենագրություն . . . .

ՊԵՏ ԿՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



ՆԿԱՏՎԱԾ ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եջ	Տող	Տպված է	Պետք է լինի
8	7 ն.	թաղի	թաղի
44	10 վ.	առաջնորդին այդ դեպքում	առաջնորդին ազատեն, այդ դեպքում
69	2 վ.	յոթնասունական	յոթանասունական
66	4 ն.	մեթամետիկոսի	մաթեմատիկոսի
70	1 ն.	Գլխատման գործիք	Կառափնարան
140	5 վ.	Ռոտերդում	Ռոտերդամ
150	3 ն.	Վոկե	Վոսկե
179	ն.	Ծովակալության պետ	Ծովագնացության պետ

Հայաստանի Ազգային գրադարան
NL0420444

227

21938

ԳԻՆԸ 2 Ռ. 80 Կ.
ԿԱԶՄԸ 70 ԿՈՊ.

Н. В. ВЛАДИМИРОВ

Д Ж Е М С К У К

ГИЗ ССР Армении, Эривань 1936 г.

910.4
Կ-70